

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ
2008 թ.
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՎԵԼՎԱԾ՝
ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԵՐՈՎ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2008 թ. ԸՆԴՈՒՆԱԾ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



Հունվար 2009 թ., Երևան

ՀՏԴ- 34.25 (479.25)
ԳՄԴ- 67.99 (2Հ) 01
Հ-189

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանի որոշմամբ

Հ-189

«Հաղորդում 2008 թ. ընդունած որոշումների
կատարման վիճակի վերաբերյալ»
Եր.: «ՀՀ ՄԴ- աշխատակազմ», 2009, 280 էջ:

ԳՄԴ- 67.99 (2Հ) 01

ISBN 978-99930-66-48-4

© «ՀՀ ՄԴ- աշխատակազմ», 2009

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2009թ. ՀՈՒՆՎԱՐԻ 15-ի ՍԳԱՌ-2
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ

ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2008 ԹՎԱԿԱՆԻՆ

2008 թվականին սահմանադրական դատարանում մուտքագրվել են սահմանադրական դատարանի դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 244 դիմում, ինչպես նաև աշխարհի իրավասություն չունեցող անձանց 785 դիմում:

Սահմանադրական դատարանի դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների կողմից ներկայացված փաստացի դիմումների պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 44 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ - 0 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ – 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք - 185 դիմում,
7. իրավաբանական անձինք – 9 դիմում,
8. դատարաններ – 1 դիմում,
9. գլխավոր դատախազ - 0 դիմում,
10. մարդու իրավունքների պաշտպան – 1 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 4 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) եւ պատգամավորության թեկնածուներ – 0 դիմում:

Թվով 194 անհատական դիմումներից 155-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 և 22 հոդվածներով սահմանված` դիմումին ներկայացվող պահանջներին և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Դատական կազմերի կողմից քննության է առնվել 42 անհատական դիմում (39 անհատական դիմում մուտքագրվել է 2008 թվականին, **իսկ 3-ը` 2007 թվականի վերջերին, սակայն դատական կազմերի կողմից քննության են առնվել 2008 թվականին**): Դրանցից քննության է ընդունվել 29 դիմում, մերժվել` 13 դիմում:

Սահմանադրական դատարանի լիազույժար նիստի քննարկմանն է ներկայացվել 2 անհատական դիմում, որոնք սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ մերժվել են:

Լուրջ մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ ինչպես 2007, այնպես էլ 2008 թվականին ամբողջ տարվա ընթացքում ՀՀ Ազգային ժողովի, Ազգային ժողովի պատգամավորների 1/5-ի, ՀՀ կառավարության, տեղական

ինքնակառավարման մարմինների եւ գլխավոր դատախազի կողմից նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցով ոչ մի դիմում չի մուտքագրվել սահմանադրական դատարան:

Դատարանների կողմից ներկայացվել է ընդամենը 1 դիմում, որը սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ ընդունվել է քննության եւ գործի դատաքննությունը նշանակվել է 2009 թվականի փետրվարի 24-ին: Դատարանների նման պասիվությունը նույնպես լուրջ քննարկումների առարկա պետք է հանդիսանա:

Սահմանադրական դատարանի 2007 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ արդեն իսկ նշվել էր, որ առանձին երկրներում միայն դատարանների դիմումների հիման վրա սահմանադրական դատարանների կողմից քննության առնված գործերը կազմում են տարվա ընթացքում քննված գործերի կեսից ավելին: Նշվել էր նաև, որ գործերի դատաքննության ընթացքում, մասնավորապես, դատական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ հատկապես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված նորմակրոնքը, համաձայն որի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», շարունակում է վերացական բնույթ կրել:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը կրկին ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը դիմող սուբյեկտների համար ոչ միայն հայեցողական լիազորություն է, այլև ենթադրում է նաև որոշակի պարտավորություն՝ երկրում սահմանադրական օրինականություն հաստատելու եւ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու հարցում, առավել եւս այն իրավիճակում, երբ սահմանադրական փոփոխությունների արդյունքում դեռևս բազմաթիվ իրավական ակտեր չեն համապատասխանեցվել այդ փոփոխություններին: Իրավական ժողովրդավարության ամրապնդման առանցքային խնդիրը սահմանադրական նպատակների, սկզբունքների ու կոնկրետ իրավահարաբերություններ կանոնակարգող նորմերի երաշխավորումն է իրավական համակարգում եւ իրավակիրառական պրակտիկայում: Միայն այդ ճանապարհով է հնարավոր ապահովել երկրի դինամիկ ու կայուն զարգացումը: Պետական իշխանության մարմինները չեն կարող ամենօրյա առնչություն չունենալ Սահմանադրության հետ: Ու եթե այդ առնչությունը խորքային է, ապա կենսական ու առաջնային է դառնում ամենօրյա ուշադրությունը Սահմանադրության գերակայության ապահովմանը: Իսկ սահմանադրական բոլոր ինստիտուտները նաև սահմանադրական վերահսկողության կամ հսկողության առաքելություն ունեն:

Սահմանադրական դատարանը կրկին ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ միջազգային պրակտիկայում սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ակտիվությունը դիտարկվում է որպես իրավական պետության կայացման, սահմանադրական ժողովրդավարության ամրապնդման եւ սահմանադրական մշակույթի ձեւավորման կարեւոր չափանիշներից մեկը: Այս հանգամանքին անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնեն սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող բոլոր սուբյեկտները:

**ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումները
և դրանց կատարումը**

ՀՀ Նախագահի կողմից ներկայացված բոլոր 44 դիմումները սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Դրանք վերաբերել են միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը:

ՀՀ Նախագահի 38 դիմումներով սահմանադրական դատարանն ըստ էության որոշումներ է կայացրել, որոնցով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Վեց դիմում քննության է առնվելու 2009 թվականին:

Նշված 38 միջազգային պայմանագրերի թվում են 19 բազմակողմ (4 ունիվերսալ և 15 տարածաշրջանային) և 19 երկկողմ (6 օտարերկրյա պետությունների և 13 միջազգային կազմակերպությունների հետ) համաձայնագրեր: Զննության առարկա դարձած պայմանագրերից 29-ը՝ միջպետական, 8-ը՝ միջկառավարական և 1-ը միջգերատեսչական են:

Զննության առնված 38 պայմանագրերից 30-ը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, մնացած պայմանագրերը դեռ չեն ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81 հոդվածի երկրորդ կետին համապատասխան կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրության 62 հոդվածի առաջին մասի համաձայն, դեռևս որոշում չի կայացրել:

Զննության առնված միջազգային պայմանագրերի առնչությամբ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման վիճակի վերաբերյալ ներպետական հստակ մոնիտորինգի մեխանիզմն այդպես էլ չի ձևավորվել, իսկ ՀՀ սահմանադրական դատարանի նախորդ տարիների հաղորդումներում ՀՀ միջազգային պայմանագրերում առկա հիմնախնդիրների առնչությամբ բարձրացված հարցադրումների մեծ մասը՝ թարգմանության որակի բարձրացում, ՀՀ վերապահումների և հայտարարությունների բովանդակության նկատմամբ ցուցաբերվող ոչ միատեսակ վերաբերմունք, ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների կատարման ապահովմանն ուղղված որոշ միջազգային պայմանագրեր վավերացնելու կամ դրանց միանալու անհրաժեշտություն և այլն, մնում է անպատասխան:

Նախորդ տարիների նման, 2008թ. ընթացքում սահմանադրական դատարան ներկայացված առնվազն չորս միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական տարբերակներն էական բովանդակային շեղումներ են ունեցել բնագրերից: Սահմանադրական դատարանի պահանջով այդ թերացումները շտկվել են: Սակայն նման փաստերը վկայում են միջազգային պայմանագրե-

րի, հատկապես ֆինանսավարկային համաձայնագրերի, վավերացմանը նախապատրաստելու որակի բարձրացման անհրաժեշտության մասին:

2008թ. ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված միջազգային պայմանագրերի շարքում հատկապես խնդրահարույց էին ՀՀ կողմից կնքված երկկողմ միջազգային պայմանագրերը: Անհրաժեշտ է արձանագրել, որ միասնականություն չի ապահովվում այլ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ կնքվող՝ համանման հարաբերություններ կարգավորող պայմանագրերի առանձին դրույթների ձևակերպման հարցում: Այսպես, 2008թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև մաքսային գործերում վարչական փոխօգնության մասին համաձայնագրի հոդված 14-ի կետ 1-ի համաձայն՝ ...Համաձայնագրի շրջանակներում ...«Հարցումը պետք է ուղարկվի գրավոր կամ էլեկտրոնային ձևով **ռուսերեն** լեզվով և ուղեկցվի ցանկացած տեղեկատվությանը, որը կարող է համարվել անհրաժեշտ դրա կատարման համար», իսկ կետ 3-ի համաձայն՝ «Հարցումների շրջանակում գրագրությունը և տեղեկատվության փոխանակումը կատարվում են **ռուսերեն** լեզվով»: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության հոդված 12-ը միանշանակորեն սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է», իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 36-ի «Իրավական ակտերի լեզուն» կետ 1-ը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը շարադրվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով»: «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, իր հերթին, հոդված 4-ի՝ «Հասարակությունների լեզվական իրավունքները և պարտականությունները», մաս 2-ում ամրագրվում է, որ «Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են... ա) գործավարությունը կատարել հայերեն»:

Բնականաբար, հասկանալի է, որ միջպետական հարաբերություններում պետությունը՝ իր պաշտոնական լեզվից զատ, կարող է օգտագործել նաև այլ լեզուներ, այդ թվում նաև պաշտոնական գրագրության համար: Այդուհանդերձ, համաձայնագրի շրջանակներում հիշատակված հարցումները՝ ուղղված վրացական կողմին, նախևառաջ ձևակերպվում են ՀՀ իրավական ակտերի միջոցով և պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը և օրենսդրությանը դրանց ներկայացվող պահանջներին:

Նշված հիմնախնդիրը հնարավոր է լուծել կիրառելով այն կարգը, որը գործում է ՀՀ միջազգային պայմանագրեր կնքելու վերաբերյալ լիազորագիր տալու ժամանակ:

Անցած տարվա ընթացքում քննության առնված երկկողմ միջազգային պայմանագրերի դրույթների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ շատ հաճախ Հայաստանի Հանրապետությունը միջազգային պայմանագրեր կնքելիս բավարար չափով չի հստակեցնում դրանց դրույթների բովանդակությունը: Արդյունքում, տեխնիկական անկատարության հետևանքով առաջացած իրավական անորոշությունը կարող է հանգեցնել հակասահմանադրական իրավի-

ճակի առաջացման: Այսպես, օրինակ, Հայաստանի Հանրապետության կառավարության և Դանիայի Թագավորության կառավարության միջև զարգացման համագործակցության մասին համաձայնագրի հոդված 3-ի կետ 16-ի «ա» ենթակետում տեղ է գտել մի դրույթ, համաձայն որի՝ «Հայաստանը պարտավորվում է, որ օտարերկրյա աշխատակիցները, նրանց ամուսինները և խնամարկյալները... կազատվեն զինվորական ծառայությունից և զինվորական այլ պարտականություններից...»: Տվյալ դրույթն իր տեխնիկական թերությունների հետևանքով կարող է իրավական անորոշության իրավիճակ առաջացնել և հակասության մեջ մտնել ՀՀ Սահմանադրության հոդված 46-ի դրույթների հետ, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը», այն պարագայում, երբ համաձայնագրում նախատեսված օտարերկրյա աշխատակիցների ամուսինները կամ խնամարկյալները կհանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր կլինեն մասնակցել ՀՀ պաշտպանությանը, մասնավորապես, իսկական զինվորական ծառայություն անցնելու կամ զինվորական այլ պարտականություններ կատարելու միջոցով: Տվյալ համաձայնագիրը հիշատակված և այլ դրույթներում, չի հստակեցնում օտարերկրյա աշխատակիցների ամուսինների և խնամարկյալների քաղաքացիության հարցը, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ այդ կարգավիճակում կարող են հանդես գալ նաև ՀՀ քաղաքացիները, որոնց խնդրո առարկա արտոնություններ տրամադրելը կհակասի ՀՀ Սահմանադրության հոդված 46-ին:

Նման դեպքում հնարավոր հակասահմանադրական իրավիճակներից խուսափելու նպատակով ՀՀ Ազգային ժողովը պարտադրված է լինում, համաձայնագիրը վավերացնելիս, ելնելով «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ից, վերապահում կարտարելու վերաբերյալ հայտարարություն անել՝ հստակեցնելով, որ նշված դրույթը տարածվում է միայն օտարերկրյա աշխատակիցների՝ ՀՀ քաղաքացի չհանդիսացող ամուսինների և խնամարկյալների նկատմամբ: Թեպետ երկկողմ միջազգային պայմանագրերի պարագայում նման հայտարարություններ կամ վերապահումներ կատարելը դրական ազդեցություն չի կարող ունենալ և բացասաբար կարող է ազդել մյուս պայմանավորվող կողմի՝ տվյալ պայմանագիրը վավերացնելու կամ հաստատելու դիրքորոշման վրա:

Նման դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է առավել հստակեցնել ՀՀ երկկողմ համաձայնագրերի դրույթների բովանդակությունը՝ երաշխավորելով դրանց իրավական որոշակիությունը և բացառելով հակասահմանադրական իրավիճակների առաջացումը:

2008թ. ընթացքում քննության առնված երկկողմ միջազգային պայմանագրերի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ միասնականություն չի ապահովվում նաև ՀՀ կողմից կնքված համաձայնագրերը փոփոխող փաստաթղթերի հարցում, որոնք դիտվելով համապատասխան համաձայնագրերի բաղկացուցիչ մասեր, ամրագրում են ՀՀ միջազգային պարտավորություններ, ուստիև ՀՀ-ի համար պարտադիր դառնալու նպատակով պետք է անցնեն այն

նույն ընթացակարգերը, ինչը որ մայր պայմանագրերը: Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարության և Աբու Դ-աբիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման նախագծի ֆինանսավորման մասին վարկային համաձայնագրի Հոդված VII Բաժին 4-ում ամրագրված է մի դրույթ, ըստ որի՝ «Սույն Համաձայնագրի հետ կապված և դրան համապատասխան՝ Կողմերի միջև փոխանակված բոլոր կից նամակները Կողմերի միջև կունենան նույն ազդեցությունը, ինչ ազդեցություն, որ դրանք կունենային, եթե ընդգրկված լինեին սույն Համաձայնագրում»: Նշվածը, ըստ էության, ենթադրում էր, որ համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո համաձայնագրի հետ կապված և դրան համապատասխան՝ Կողմերի միջև փոխանակված բոլոր կից նամակները, առանց համապատասխան ներպետական ընթացակարգեր անցնելու, օժտվում են այն նույն իրավաբանական ուժով, ինչ ՀՀ կողմից վավերացված միջազգային համաձայնագրի նորմերը: Հաշվի առնելով, որ այդ նամակներով կարող են նախատեսվել ՀՀ լրացուցիչ պարտավորություններ, եւ դրանք, համաձայնագրի նշված դրույթի ուժով, սահմանադրական վերահսկողության առարկա չեն դառնալու, չի բացառվում, որ նամակների փոխանակման արդյունքում համաձայնագրում տեղ գտնեն ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող պարտավորություններ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանագրերը փոփոխող դրույթների վերաբերյալ դրսևորվող այս և համանման պրակտիկան, որի պարագայում դրա դրույթների փոփոխությունը կարող է իրականացվել ներպետական համապատասխան ընթացակարգերի անտեսմամբ, համահունչ չի կարող լինել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների ընդհանուր տրամաբանությանը՝ ըստ որոնց՝ «Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո... Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»:

Միջազգային պայմանագրերի նախնական սահմանադրական վերահսկողության ինստիտուտի առկայության պարագայում միջազգային պայմանագրի դրույթները լրացնող կամ փոփոխող ցանկացած դրույթի փոփոխությունը ՀՀ սահմանադրական դատարանի անտեսման պարագայում փաստորեն կարող է առաջացնել այնպիսի իրավիճակ, երբ այս կամ այն համաձայնագրի հետ կապված և դրան համապատասխան՝ Կողմերի միջև համաձայնեցված որևէ փաստաթուղթ, որը համաձայնագրի բաղկացուցիչ մաս է դիտվում (միջազգային պայմանագրի բաղկացուցիչ մաս կազմող և այն լրացնող, պարզաբանող կամ փոփոխող ցանկացած փաստաթուղթ ևս պետք է դիտել որպես միջազգային պայմանագիր) կարող է ուժի մեջ մտնել նույնիսկ առանց վավերացվելու կամ հաստատվելու: Նշված համատեքստում պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելուց հետո դրա հետ կապված և դրան համապատասխան՝ Կողմերի միջև համաձայնեցված ցանկացած փաստաթուղթ՝ իբրև ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագիր, ՀՀ Սահմանադրության նույն 6-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով գերակայություն է ունենում ներպետական օրենսդրության նկատմամբ՝ առանց համապատասխան ներպետական ընթացակարգեր անց-

նելու: Եվ, ի վերջո, եթե որևէ համաձայնագրի հետ կապված և դրան համապատասխան՝ Կողմերի միջև համաձայնեցված ցանկացած փաստաթղթում ամրագրվի ՀՀ Սահմանադրությանը հակասող կամ չհամապատասխանող նորմ, ապա կստացվի, որ ի խախտումն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասության՝ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագիր:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ այս կամ այն միջազգային համաձայնագիրստորագրելիս դրա բովանդակությունը պետք է գնահատվի ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և ՀՀ արտաքին քաղաքականության համատեքստում և ՀՀ Սահմանադրության հոդված 9-ի լույսի ներքո՝ բացառելու համար ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների միջև հակասությունների առաջացումը և չվտանգելու ՀՀ արտաքին հարաբերությունները: Նման խնդիր կարող էր առաջացնել, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության և Աբու Դ-աբիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման նախագծի ֆինանսավորման մասին վարկային համաձայնագրի VI Հոդվածի 4-րդ բաժին մաս «ա»-ի այն դրույթը, ըստ որի՝ համաձայնագրի Կողմերի միջև ծագած ցանկացած տարաձայնություն կամ դրանից բխող ցանկացած պահանջ բարեկամական համաձայնության միջոցով չլուծվելու դեպքում պետք է փոխանցվի միջնորդ դատարանին, որը «... պետք է բաղկացած լինի երեք դատավորից, որոնցից մեկը նշանակվում է Վարկառուի, մյուսը՝ Հիմնադրամի, իսկ երրորդը (այսուհետ՝ միջնորդ դատավոր)՝ Կողմերի համաձայնությամբ: Եթե նշանակման շուրջ Կողմերը համաձայնության չեն գալիս իրավարարության ընթացակարգի մեկնարկից 60 օրվա ընթացքում, վերջինս պետք է նշանակվի Իսլամական խորհրդաժողով կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից՝ Կողմերից մեկի խնդրանքով»: Ընդ որում, եթե Կողմերից մեկին չհաջողվի նշանակել իր դատավորին, ապա, Կողմերից մեկի խնդրանքով, նրա դատավորին եւս նշանակում է Իսլամական խորհրդաժողով կազմակերպության Գլխավոր քարտուղարը: Որպես կանոն, միջնորդ դատարանի ձևավորման կարգը սահմանելիս հետապնդվում է միջնորդ դատավորների չեզոքության ու անկողմնակալության ապահովման նպատակը, ինչը տվյալ պարագայում գրեթե անհնարին է: Ասվածի համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ երրորդ միջնորդ դատավորի (սուպերարբիտրի) նշանակման հարցում Կողմերի համաձայնության բացակայության պարագայում այդ դատավորին նշանակելու իրավունքը վերապահվում է **Իսլամական խորհրդաժողով կազմակերպության** Գլխավոր քարտուղարին՝ մի միջազգային կազմակերպության բարձրագույն պաշտոնատար անձի, որը Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո համառ պարբերականությամբ բանաձևեր և այլ փաստաթղթեր է ընդունում, որոնցում Հայաստանի Հանրապետությունը որակվում է որպես ագրեսոր և միջազգային իրավունքի նորմերը խախտող պետություն: Այս կապակցությամբ նպատակահարմար է հիշատակել տվյալ կազմակերպության շրջանակներում Հայաստանի Հանրապետության առնչությամբ ընդունված, մասնավորապես, հետևյալ փաստաթղթերը. 1997թ. դեկտեմբերի

9-11-ը Թեիրանում տեղի ունեցած Իսլամական գազաթնաժողովի խորհրդածո-
ղովի ութերորդ նստաշրջանում ընդունված 12/8-Ք (IS) բանաձևը, 1998թ. մարտի
15-17-ը Գոհայում տեղի ունեցած Արտաքին գործերի նախարարների իսլամա-
կան խորհրդածոլովի քսանհինգերորդ նստաշրջանում ընդունված 13/25-Ք բա-
նաձևը՝ «*Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ Հայաստանի Հանրա-
պետության ագրեսիայի մասին*», 1999թ. հունիսի 28-ից հուլիսի 1-ը Ուաշա-
րտոնում տեղի ունեցած՝ Արտաքին գործերի նախարարների իսլամական
խորհրդածոլովի քսանվեցերորդ նստաշրջանում ընդունված 14/26-Ք բանաձևը՝
«*Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ Հայաստանի Հանրապետության
ագրեսիայի մասին*», 2000թ. հունիսի 27-30-ը Կուալա Լումպուրում տեղի ունե-
ցած՝ Արտաքին գործերի նախարարների իսլամական խորհրդածոլովի քսան-
յոթերորդ նստաշրջանում ընդունված 17/27-Ք բանաձևը «*Ադրբեջանի Հան-
րապետության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ագրեսիայի մա-
սին*», 2003թ. մայիսի 28-30-ը Թեիրանում տեղի ունեցած Արտաքին գործերի
նախարարների իսլամական խորհրդածոլովի երեսուներորդ նստաշրջանում
ընդունված 13/30-Ք բանաձևը՝ «*Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ
Հայաստանի Հանրապետության ագրեսիայի մասին*» և այլն:

Կարելի է փաստել, որ Արտաքին գործերի նախարարների իսլամական
խորհրդածոլովը համառոտյամբ ընդունում է համանման վերտառությամբ և
բովանդակությամբ բանաձևեր իր յուրաքանչյուր նստաշրջանում:

Բացի նշվածից, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Ադրբեջանի Հանրա-
պետության դեմ Հայաստանի Հանրապետության «ագրեսիայի» վերաբերյալ
զեկույցներ՝ համանման բովանդակությամբ, պարբերաբար պատրաստվել են
նաև **Իսլամական խորհրդածոլով կազմակերպության Գլխավոր քարտու-
ղարի կողմից**¹:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ և համանման կառույց-
ների բարձրագույն պաշտոնատար անձանց կողմից նշանակված երրորդ միջնորդ
դատավորը չի կարող դիտվել որպես չեզոք և անկողմնակալ անձ, իսկ հավանա-
կան միջնորդ դատավարության արդյունքներով կայացված որոշման անաչառու-
թյունն ու անկողմնակալությունը չափազանց խիստ կասկածներ կհարուցեն:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյու-
նից ուշադրության է արժանի նաև ֆինանսավարկային պայմանագրերով ֆի-
նանսավորվող ծրագրերի մանրամասնվածության պատշաճ մակարդակի
հիմնախնդիրը: Անցած տարվա ընթացքում քննության առնված ֆինանսավար-
կային պայմանագրերում և դրանց հավելվածներում ներկայացված ֆինանսա-
վորման ծրագրերի նկարագրությունը վկայում է, որ անհրաժեշտ չափով
մանրամասնված չեն տրամադրվող վարկային միջոցներով ֆինանսավորվող
կոնկրետ ծախսերի ուղղությունները: Հաճախ համաձայնագրերում նկարագր-
ված ծրագրերը ձևակերպված են անորոշ և վերացական: Անցյալ տարվա ըն-
թացքում քննության առնված ֆինանսավարկային համաձայնագրերից
առնվազն երկուսը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Աբու

¹ See, Report of the Secretary General on the Aggression of the Republic of Armenian Against the Republic of Azer-
baijan (Document No. ICFM/25-98/PIL/D.6)

Դարիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման նախագծի ֆինանսավորման մասին և Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև գյուղական ճանապարհահատվածի ծրագիր (Հատուկ գործառնություններ) վարկային համաձայնագրերը բավարար հստակությամբ չէին նախանշում տրամադրվող վարկային միջոցներով ֆինանսավորվող կոնկրետ ծախսերը:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ֆինանսավարկային պայմանագրերով ստանձնված միջազգային իրավական պարտավորությունների բարեխիղճ կատարումը, վարկային միջոցների նպատակային օգտագործումը և դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտությունը պահանջում են նշված պայմանագրերի դրույթների որոշակիության և հստակության ապահովում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ սահմանադրական դատարանը ՀՀ Ազգային ժողովի ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ ֆինանսավարկային համաձայնագրերը վավերացնելու հարցը քննարկելիս հարկ է առավել հետևողականորեն անդրադառնալ դրանց կնքման նպատակահարմարության հարցին: Ուստի նման համաձայնագրերի վավերացման պարագայում հակասահմանադրական իրավիճակներից խուսափելու նպատակով ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Նախագահը և ՀՀ կառավարությունն իրենց սահմանադրական իրավասությունների շրջանակներում պետք է հատուկ վերահսկողություն իրականացնեն նման համաձայնագրերի շրջանակներում ստացված վարկային միջոցների օգտագործման նկատմամբ՝ կանխելով վարկային միջոցների ոչ նպատակային օգտագործման ռիսկը:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման համատեքստում կարևորվում է նաև ՀՀ կողմից կնքվող միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառման հիմնահարցը: «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ի կետ 2-ի առաջին պարբերությունը հստակորեն սահմանում է, որ «Եթե միջազգային պայմանագրով նախատեսվում է, որ դա ուժի (գործողության) մեջ է մտնում ստորագրման պահից, կամ մինչև ուժի մեջ մտնելը պայմանագիրը ամբողջությամբ կամ որոշակի մասով կարող է ժամանակավորապես կիրառվել, ապա հայկական կողմից այդ պայմանագիրն ստորագրելու իրավասություն կամ հատուկ լիազորություն ունեցող անձը պարտավոր է բանակցությունների ընթացքում՝ նախքան ստորագրելը, մյուս կողմի հետ հասնել այն բանին, որ տեքստի նման դրույթները փոխարինվեն այնպիսի դրույթներով, որոնք բացառեն հայկական կողմի համար պայմանագրի կիրառումը նախքան սույն օրենքով սահմանված կարգով դրա վավերացումը կամ հաստատումը»: Նույն կետի երկրորդ պարբերությունը, ի լրումն դրան, նախատեսում է, որ «Այդպիսի համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում հայկական կողմից իրավասու կամ հատուկ լիազորություններ ունեցող անձը նման դրույթներ պարունակող պայմանագիրն ստորագրելիս պետք է վերապահում կատարի՝ նշելով, որ այդ պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտնելու (կիրառվելու է) ներպետական ընթացակարգերով այն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո»:

Նման իրավակարգավորումը ՀՀ անունից ժամանակավոր կիրառման ինստիտուտ պարունակող միջազգային համաձայնագրերն ստորագրելու լիազորություն ունեցող անձանցից պահանջում է դրա տեքստից ժամանակավոր կիրառման վերաբերյալ դրույթը հանելու առաջարկը մերժվելու դեպքում կամ ստորագրել այն վերապահմամբ՝ համաձայն «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ի, կամ ընդհանրապես հրաժարվել նման համաձայնագիրն ստորագրելուց, քանզի տվյալ դրույթի առկայության պարագայում նման համաձայնագիրն ստորագրելու որևէ այլ հնարավորություն նշված օրենքը չի նախատեսում:

Նման դրույթի առկայությունն այս կամ այն համաձայնագրում որոշակի խնդիրներ կարող է նաև առաջացնել՝ կապված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի այն դրույթների հետ, համաձայն որոնց՝ «Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո» և «Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային պայմանագրի ժամանակավոր կիրառման ավարտի որևէ հնարավոր վերջնաժամկետ չի նախատեսվում, այն կարող է կիրառվել անվերջ՝ նույնիսկ առանց ՀՀ կողմից վավերացվելու:

Նմանատիպ դրույթներ պարունակող միջազգային համաձայնագրերն առանց համապատասխան վերապահման ստորագրելը կարող է բավականին անհեթեթ իրավիճակներ ստեղծել հատկապես այն պարագայում, երբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից դրանցով ստանձնված պարտավորությունները կճանաչվեն հակասահմանադրական, բայց գործնականում կշարունակեն կիրառվել ընդհուպ մինչև ՀՀ-ն պաշտոնապես չհրաժարվի իր ստորագրությունից:

Միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների նկատմամբ նախնական սահմանադրական վերահսկողության պայմաններում անթույլատրելի է ՀՀ ստորագրած միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառման հնարավորությունը, քանզի նման իրավիճակում ՀՀ միջազգային պայմանագրերի նախնական վերահսկողության ինստիտուտը կարող է ամբողջությամբ իմաստազրկվել, ինչը նաև բացասաբար կանդրադառնա ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման ընդհանուր վիճակի վրա:

Անհատական (ֆիզիկական և իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումներն ու դրանց կատարումը

Սահմանադրական դատարանում մուտքագրված անհատական դիմումների մոտ 81 տոկոսը (նախորդ տարվա համեմատությամբ այդ թիվը նվազել է մոտ 10 տոկոսով) չի ընդունվել սահմանադրական դատարանի կողմից, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 և 22 հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, և աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին: Անհատական դիմումների

ընդհանուր վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ դրանց շուրջ 11 տոկոսն է (նախորդ տարվա համեմատությամբ այդ թիվն աճել է մոտ 2 տոկոսով) օրենքի նորմի սահմանադրականության հարցերին առնչվում: Հիմնական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող տարբեր այլ հարցերի: Ջգալի թիվ են կազմում նաև այն դիմումները, որոնք վերաբերում են մարդկանց սահմանադրական այս կամ այն իրավունքի խախտմանը, սակայն որը չի առնչվում օրենքի նորմի սահմանադրականությանը եւ սահմանադրական դատարանի ներկա լիազորությունների շրջանակներում հնարավոր չէ այն ինքնուրույն դատաքննության առարկա դարձնել: Շարունակում է ցածր մակարդակի վրա մնալ դիմողների իրավական պատրաստվածության մակարդակը և այդ պայմաններում բավարար մասնագիտական հիմքի վրա դրված չէ նաև նրանց ցուցաբերվող փաստաբանական օգնությունը: Այսուհանդերձ, սահմանադրական եւ օրենսդրական ներկա փոփոխություններն ստեղծել են որոշակի հնարավորություններ անձանց սահմանադրական արդարադատության իրավունքը երաշխավորելու ու պաշտպանելու համար:

Սահմանադրական դատարանում 2008 թվականին մուտքագրված 39 անհատական դիմումներ /35-ը՝ ֆիզիկական անձանց, 4-ը՝ իրավաբանական անձանց կողմից ներկայացված/ ընդունվել են սահմանադրական դատարանի կողմից և ներկայացվել դատական կազմերին՝ դրանց հիման վրա գործը քննության ընդունելու հարցը լուծելու համար:

Այդ եւ նախորդ տարում ներկայացված դիմումներից 29-ն ընդունվել է քննության, ընդ որում, բոլորն էլ՝ դատական կազմերի որոշումներով: 15 դիմումների քննության ընդունումը մերժվել է՝ հիմնականում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի հիմքերով, ինչպես նաև նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանը տվյալ հարցով արդեն իսկ որոշում ընդունել է: Ընդ որում, նշված 15 դիմումներից 13-ի քննությունը մերժվել է դատական կազմերի կողմից, իսկ 2-ինը՝ սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ՝ հաշվի առնելով, որ դատական կազմերում որոշման ընդունման համար չի ապահովվել միաձայնություն:

Քննության ընդունված 29 դիմումներից 3-ով դեռևս գործով որոշում չի կայացվել: 26 դիմումներով, որոնցից ութը միավորվել են մեկ գործում, 4-ը՝ մեկ այլ գործում, սահմանադրական դատարանն ըստ էության որոշումներ է կայացրել: Դրանցից 18 դիմումի հիման վրա (10 գործով) իրավական ակտերի վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող, իսկ 4 գործով՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

2008 թվականի ընթացքում քննության առնված 10 գործերը, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, վերաբերում են հետևյալներին.

1. «Քաղաքացի Էմիլիյա Մելիքյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասի (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մաս)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանա-

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 27.05.2008թ. ՄԴՈ-754 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մասը)՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ նույն անձի կողմից նույն դատական ակտի դեմ մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոք բերելու արգելքի մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր»:

2. «Քաղաքացի Սերինե Ֆլջյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 09. 09. 2008 թվականի ՄԴՈ-758 որոշմամբ որոշել է.

«1. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել:

2. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 5-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 եւ 42 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնի 204.20 հոդվածի 2-րդ մասը եւ 204.26 հոդվածը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Վերոհիշյալ նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու արդյունքում օրենսդրական բացը բացառելու անհրաժեշտությունից ելնելով, նկատի ունենալով սույն որոշման 10-րդ կետում սահմանադրա-

կան դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասով, ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի՝ սույն որոշման 3-րդ եւ 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավադրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 72 եւ 76 հոդվածները»:

3. «Քաղաքացիներ Հովհաննես Ռուշանյանի, Գեորգ Գյոզալյանի, Խաչատուր Շահինյանի, Ռուբեն Մանուկյանի, Հրաչ Վարդանյանի, Միքայել, Մարիետտա եւ Մադենա Բարայանների, Հակոբ Ռաֆյանի, Հայկ Միքայելյանի եւ Սամվել Միքայելյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231 հոդվածի 2-րդ մասի, 233 հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ 3-րդ կետի (28.11.2007թ. խմբագրությամբ՝ 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի) եւ ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թվականի ՍԳՌ-765 որոշմամբ որոշել է.

«1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ 233 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի ՍԳՌ-754 որոշումը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իրավական որոշակիություն է ձեռք բերում միայն օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակցության մեջ:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40 հոդվածի 2-րդ մասը, 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 231 հոդվածի 2-րդ մասը՝ հավատարմագրված փաստաբանի ինստիտուտին առնչվող մասով, 233 հոդվածի 2-րդ մասը՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճարել բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ 28.11.2007թ. խմբագրությամբ, հավատարմագրված փաստաբանի միջոցով բողոք բերելու մասով, 426.2 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու կապակցությամբ դիմում ներկայացնելու՝ հավատարմագրված փաստաբանի իրավունքին, 426.5 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեւան եկած

հանգամանքների մասին հայտարարությունները եւ հաղորդումները հավատարմագրված փաստաբանին ուղարկելուն (1-ին մաս), ինչպես նաեւ նոր երեսան եկած հանգամանքներով վարույթ հարուցելու եւ ուսումնասիրություններ կատարելու խնդրում հավատարմագրված փաստաբանի իրավունքի մասով (4-րդ մաս), 426.6 հոդվածը՝ հավատարմագրված փաստաբանների գործողություններին վերաբերող մասով (2-րդ եւ 3-րդ մասեր), ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1., 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում:

6. ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

7. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմների վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեւով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին»:

4. «Քաղաքացի Միշա Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 21.10.2008թ. ՍԳՈ-767 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածը եւ 426.8 հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր՝ այնքանով, որքանով դրանք վերաբերում են նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավասությունը միայն առաջին ատյանի դատարաններին վերապահելուն եւ առնչվում են միայն վերջիններիս կողմից կայացրած դատական ակտերին»:

Վերոնշյալ 4 գործերն առավելապես կարեւորվում են այն հանգամանքով, որ վերջ դրեցին իրավունքների դատական պաշտպանության ոլորտում առկա և իրավական պետությանն անհարիր հետևյալ իրավակարգավորումներին.

- առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակում,
- նույն անձի կողմից նույն դատական ակտի դեմ մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոք բերելու արգելք,
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության ոչ պարտադիրություն,
- նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավասությունը միայն առաջին ատյանի դատարաններին վերապահում,
- բացառապես հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պարտադիրություն:

Համապատասխանաբար՝ ՍԳՈ-754, ՍԳՈ-758, ՍԳՈ-765 և ՍԳՈ-767 որոշումներում արտահայտած իր իրավական դիրքորոշումների մեջ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրեց, որ օրենսդիրը դեռևս չի սահմանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում (գործող օրենսգրքի 233 հոդվածի 3-րդ մաս) կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ըմբռնելի բովանդակությունը: Վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացման ապահովմանը միտված անհրաժեշտ իրավական երաշխիքներն օրենսդրորեն ոչ լիարժեքորեն ամրագրելու պայմաններում «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 21.02.2007թ. ՀՕ-98-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը (07.07.2006թ. խմբագրությամբ) լրացվել է վիճարկվող դրույթով: Փաստորեն, մի կողմից՝ չեն ստեղծվել վերոհիշյալ հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ, մյուս կողմից՝ վիճարկվող դրույթով բացառվել է կրկին վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը չի սահմանում բողոքի թերությունները շտկելու համար ժամկետ: Այսինքն՝ բացակայում են ինչպես հայեցողական լիազորության կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այնպես էլ այդ հայեցողական լիազորության ոչ իրավաչափ իրականացումը հաղթահարելու միջոցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով համապատասխանաբար հայցադիմումը, դիմումը, վերաքննիչ բողոքը, անհատական դիմումը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրեց, որ վճռաբեկ բողոքի պարագայում՝ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու հնարավորության օգտագործումը

կախվածության մեջ է դրված վճռաբեկ դատարանի հայեցողությունից, եւ այդ հայեցողության կամայական դրսեւորման դեմ բացակայում է արդյունավետ պաշտպանության որեւէ միջոց: Նման պայմաններում, ի խախտումն վերոհիշյալ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, վիճարկվող դրույթի կիրառումը թույլ է տալիս այնպիսի վիճակի առաջացման հնարավորություն, երբ բողոքի թերությունները կարող են խոչընդոտել անձին իրացնելու դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը եւ, հետեւաբար՝ նաեւ դատարանի մատչելիության իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության ոչ պարտադիրության առնչությամբ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումների մեջ, հղում կատարելով իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմանը, մասնավորապես, արձանագրել է, որ ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասը, այնպես էլ ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4-րդ մասը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չի տարածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը՝ նման բացառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կատարումը:

Վերոգրյալի կապակցությամբ սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետում սահմանադրական դատարանն ամբողջով է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) ... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին **որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու**, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավասությունը միայն առաջին ատյանի դատարաններին վերապահելու առնչությամբ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումների մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ տարբեր ատյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ

դատական ատյանի իրավասությունների եւ գործառույթների կրողը: Հետեւաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում: Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտել է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը շեղվել է վերոհիշյալ տրամաբանությունից՝ աղճատելով ստորադասության վրա հիմնված դատական եռաստիճան համակարգի էությունն ու բովանդակությունը, դատական երեք ատյանների միջեւ ֆունկցիոնալ կապը՝ հաշվի չառնելով դատական երեք ատյանների գործառույթների առանձնահատկությունները:

Արձանագրելով այն իրողությունը, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներկայումս սահմանված իրավակարգավորման արդյունք կարող է հանդիսանալ այն, որ անհնարին կդառնա վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելը, սահմանադրական դատարանը գտել է նաև, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ատյանների ակտերի վերանայման հնարավորությունը, բացառելով ստորադաս ատյանի դատարանի կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը:

Բացառապես հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պարտադիրության առնչությամբ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումների մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի եւ հավատարմագիր չունեցող փաստաբանի միջեւ մասնագիտական ունակություններով եւ փորձառությամբ պայմանավորված իրավաչափ տարբերության բացակայության հանգամանքը, վճռաբեկ դատարանում փաստաբանի հավատարմագրման կարգը, հավատարմագրված փաստաբանի կողմից իրականացվող փաստաբանական գործունեության խիստ սահմանափակ լինելու հանգամանքը, հավատարմագրված փաստաբանի եւ վճռաբեկ դատարանի փոխգործակցության բնույթը միանգամայն ավելորդ են դարձնում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի գոյությունը:

Հաշվի առնելով նշված ինստիտուտի գործունեության ձեռնարկատիրական, մենաշնորհային բնույթը, դրա վրա հիմնված՝ հավատարմագրված փաստաբանների կողմից ընդամենը վճռաբեկ բողոք կազմելու համար պահանջվող համեմատաբար բարձր վճարները, սահմանադրական դատարան, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունելու համար պաշտպանության միջոցներն սպառելու պարտադիր պահանջը, սահմանադրական դատարանը փաստել է, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտն իր գոյությամբ սահմանափակում է ոչ միայն վճռաբեկ դատարա-

նի, այլ նաեւ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մատչելիության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դեպքերի համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով:

Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծել է, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից:

Վերոնշյալ ՍԳՈ-754, ՍԳՈ-758, ՍԳՈ-765 և ՍԳՈ-767 որոշումներում արտահայտված՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման ուղղությամբ ՀՀ Ազգային ժողովը գործնական քայլեր է ձեռնարկել: Մասնավորապես, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրվեցին Պ-379-19.11.2008-ՄԻ-010/0, Պ-379²-19.11.2008-ՄԻ-010/0, Պ-379³-19.11.2008-ՄԻ-010/0, Պ-379⁴-19.11.2008-ՄԻ-010/0, Պ-379⁵-19.11.2008-ՄԻ-010/0 թվակիր օրենսդրական նախագծերը, որոնք վերաբերում էին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում, «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելուն:

Ըստ նշված օրինագծերի հիմնավորումների. «Սույն օրինագծերը նշակվել են ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հ. Աբրահամյանի՝ 29 հոկտեմբերի 2008թ. թիվ 67 կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից: Փաթեթում ներառված նախագծերում իրացվել են ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի ՍԳՈ-754, սեպտեմբերի 9-ի ՍԳՈ-758, հոկտեմբերի 8-ի ՍԳՈ-765 եւ հոկտեմբերի 21-ի ՍԳՈ-767 որոշումների եզրափակիչ մասերի դրույթները, որոնցով անվավեր (ուժը կորցրած) են ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2007թ. նոյեմբերի 28-ի օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ դատական օրենսգրքի մի շարք դրույթներ»: Հաշվի է առնվել նաեւ, որ նշված դրույթների եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված հարցերի համալիր իրավակարգավորման հնարավորություն ստեղծելու համար ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-765 որոշմամբ հետաձգել է հակասահմանադրական ճանաչված նորմերի իրավաբանական ուժը կորցնելը՝ վերջնական ժամկետ սահմանելով 2008թ. դեկտեմբերի 31-ը:

Նշվում է նաեւ, որ «Վերոնշյալ օրենսգրքերում եւ օրենքներում կատարված փոփոխություններն ուղղված են սահմանադրական դատարանի կողմից անվավեր ճանաչված դրույթները ՀՀ Սահմանադրության 14.1., 18, 19 եւ 42 հոդ-

վածներին, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2000թ. հունվարի 19-ի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման վարույթի նորոգման մասին» R (2000) 2 հանձնարարականին համապատասխանեցնելուն: Այն է՝ նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով գործերով օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարությունն ապահովելուն (դատական վերջնական ակտերը բողոքարկելու իրավունքի վերականգնմանը), նոր հանգամանքներով առաջացած գործերով մարդու իրավունքների պաշտպանություն իրականացնող եռաստիճան դատական համակարգի գործառնությունը վերականգնելուն, օրենքով սահմանված եռամսյա ժամկետում վճռաբեկ դատարան դիմելու խոչընդոտները (բողոքների վերադարձման անհիմն հիմքերը) վերացնելուն, փաստաբաններին տարբեր խմբերի բաժանելուց եւ քաղաքացիներին անտեղի ծախսեր կատարելուց ազատելուն, այսինքն՝ հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը վերացնելուն, անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին հետադարձ ուժ հաղորդելը կանխելուն եւ այլն:

Նշված բոլոր փոփոխություններն էլ ավելի մատչելի եւ լիարժեք կդարձնեն իրավունքների դատական պաշտպանությունը, կընդլայնեն քաղաքացիական իրավունքների եւ ազատությունների պաշտպանվածության երաշխիքները, կկանխեն հարյուրավոր քաղաքացիների կողմից սահմանադրական դատարանին եւ այլ պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու (եւ այն էլ՝ ոչ մեկ անգամ) դեպքերը»:

Բացի դրանից, չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական դատարանն իր ՍԳՈ-765 որոշմամբ նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից տվյալ գործով վեճի առարկա իրավանորմների վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն նշված որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ է սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեռով համապատասխանեցնելու նշված որոշման պահանջներին, ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համահունչ ձևավորել է դատական պրակտիկա, համաձայն որի՝ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումից հետո չի պահանջում, որպեսզի վճռաբեկ բողոքները ներկայացվեն հավատարմագրված փաստաբանի միջոցով:

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերի եւ ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի դրույթների վերաբերյալ իր իրավական դիրքորոշումների վրա: Նշված դրույթները սահմանադրական դատարանի ՍԳՈ-765 որոշմամբ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրա-

վական դիրքորոշումների շրջանակներում: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերի դրույթների առնչությամբ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-765 որոշման պատճառաբանական մասում ամրագրել է հետևյալը. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ժամկետի խախտումը չպետք է խոչընդոտ լինի վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելուն, եթե, այնուամենայնիվ, այն ներկայացվում է օրենքով սահմանված եռամսյա ժամկետում: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 5-րդ կետերին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ կետերում ամրագրված դրույթներն արդյունավետ վճռաբեկ վարույթ իրականացնելու անհրաժեշտ պայմաններ են»:

2008թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց եւ դեկտեմբերի 29-ին ՀՀ Նախագահի կողմից ստորագրվեցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՕ-233-Ն, ՀՕ-237-Ն եւ ՀՕ-235-Ն օրենքները, որոնք կարելու էր աշխիք հանդիսացան սահմանադրական դատարանի հիշյալ որոշումների կատարումն ապահովելու համար:

ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի դրույթների առնչությամբ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-765 որոշման պատճառաբանական մասում ամրագրել է հետևյալը. «Սահմանադրական դատարանը հատուկ կարեւորում է **վերադատության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի** անխախտելիության ապահովումն ինչպես ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի վիճարկվող նորմում, այնպես էլ օրենսդրության՝ այլ, այդ թվում նաեւ քրեաիրավական նորմերում, դիտարկելով այն որպես ՀՀ Սահմանադրության 5, 94 եւ 97 հոդվածներում ամրագրված **դատական իշխանության անկախության սկզբունքի** իրականացման կարեւոր երաշխիք: Դատական ակտի իրավական գնահատականը կարող է տրվել միմիայն արդարադատական ընթացակարգով այն քննության առարկա դարձնելու արդյունքում»:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտել է, որ այդ սկզբունքը չի ենթադրում, որ դատավորը ենթակա չէ պատասխանատվության, այդ թվում քրեորեն պատժելի արարքի համար: Այդ իրավահարաբերություններն օրենսդրորեն պետք է կանոնակարգվեն ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթների շրջանակներում: Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետն իրավակիրառական պրակտիկայում չի կարող մեկնաբանվել այն բովանդակությամբ, որ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով անհնարին դարձվի դատական ակտերի բողոքարկումը դատախազության կողմից՝ ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով վերապահված լիազորության շրջանակներում:

5. «Քաղաքացի Արամ Շնավոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի եւ 118-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 25.11.2008թ. ՄԴՈ-780 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը եւ 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմների վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեւով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին»:

Նշված գործն առավելապես կարևորվում է այն հանգամանքով, որ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի պարագայում պահանջ դրեց բարձրացնել դատական պաշտպանության արդյունավետության մակարդակը վարչական դատավարության ոլորտում:

Սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, այն իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի պարագայում, երբ վերաքննիչ վարույթը բացակայում է, այս գործոնն էլ ավելի որոշիչ եւ էական դերակատարում է ձեռք բերում ոչ միայն վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի, այլ նաեւ մասնագիտացված վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության եւ արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Անդրադառնալով վարչական արդարադատության երկաստիճան համակարգին՝ վճռաբեկ դատարանի մատչելիության տեսանկյունից, սահմանադրական դատարանն արձանագրել է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական

դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաև խախտում է իրավական որոշակիության եւ անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանը որպես վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության եւ արդյունավետության վրա ազդող գործոն է դիտարկել նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի որոշման, վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշումը բողոքարկելու հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ: Այսինքն՝ այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, անձը, զրկված լինելով այն բողոքարկելու հնարավորությունից, ըստ էության ոչ միայն զրկվում է նման որոշման դեմ պաշտպանության միջոցից, այլ նաև նրա գործի քննությունը փաստացիորեն սահմանափակվում է միայն առաջին ատյանի դատարանի շրջանակներում:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն դրույթները, որոնք թույլ էին տալիս վճռաբեկ բողոք ներկայացնել միայն վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված որոշման եզրափակիչ մասի 7-րդ կետի ուժով այդ դրույթները ժամանակավորապես պահպանում են իրենց ուժը, սահմանադրական դատարանը որպես վարչական գործերով վճռաբեկ ատյանի մատչելիությունը պայմանավորող գործոն է համարել նաև վարչական արդարադատության երկաստիճան համակարգում բողոքարկման միակ ատյան դիմելու համար հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելու պարտադիր պահանջը: Նման պահանջի առկայությունը երկաստիճան դատական համակարգում էլ ավելի է խաթարում դատական պաշտպանության արդյունավետ իրավունքի էությունը, քանզի, եթե եռաստիճան համակարգում անձը վերաքննիչ ատյանում օգտվում է անմիջական բողոքարկման հնարավորությունից, ապա վարչական արդարադատության ոլորտում անմիջական բողոքարկման հնարավորությունն ամբողջովին բացակայում է:

Անդրադառնալով վարչական արդարադատության երկաստիճան համակարգին՝ մասնագիտացված վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության եւ արդյունավետության ապահովման տեսանկյունից, սահմանադրական դատարանն արձանագրել է, որ մասնագիտացման գործոնը վճռաբեկ դատարանում կարող է ունենալ երկու հիմնական դրսեւորում, այն է՝ գործերի քննությունը մասնագիտացված առանձին միավորի կողմից, եւ երկրորդ՝ գործերի քննության կազմակերպումը վարչական արդարադատության առանձնահատկություններին համապատասխան: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության կապակցությամբ մասնագիտացման

գործոնի նշված երկու դրսետորումներն էլ որեւէ կերպ արտահայտված չեն:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ դատական օրենսգիրքը (հոդվածներ 18 եւ 53) վճռաբեկ դատարանի պալատների լիազորություններն ու գործառույթը սահմանափակել է միայն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցի լուծմամբ: Վճռաբեկ դատարանը բողոքի կապակցությամբ ըստ էության որոշում է կայացնում լիազուսար կազմով, որտեղ պալատը հանդէս չի գալիս որպէս մասնագիտացված միավոր. վարչական դատարանի ակտերի դէմ բերված բողոքների առնչությամբ ըստ էության որոշումներն ընդունվում են քրեական պալատի եւ քաղաքացիական ու վարչական պալատների դատավորների մասնակցությամբ: Նման պայմաններում, վճռաբեկ դատարանում վարչական գործերով արդարադատությունը զրկվում է իր առարկայական բնույթից:

Սահմանադրական դատարանը գտել է, որ մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ: Սահմանադրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն ունենա լիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող եւ լուծող մասնագիտացված համապատասխան պալատ: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ վարությամբ բացակայելու արդյունքում վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետեւաբար, նաեւ՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ խաթարվում է եւ զրկվում արդյունավետությունից:

Իր որոշման մեջ սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 135 հոդվածում դրսետրված համակարգային անկատարությանը, նշելով, որ ՀՀ Սահմանադրությունը տարբերակում է սահմանադրական եւ ընդհանուր արդարադատության գործառույթները՝ սահմանադրական արդարադատության գործառույթը 93-րդ հոդվածով ուղղակիորեն վերապահելով սահմանադրական դատարանին: Մինչդեռ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումից ակնհայտ է դառնում, որ ոչ միայն խնդիրներ են առաջացել վարչական արդարադատության վերահսկելի եւ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից արդյունավետ ընթացակարգ սահմանելու առումով, այլեւ, հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93 հոդվածի միանշանակ պահանջը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 135 հոդվածի 1-ին կետով վարչական արդարադատության ոլորտ է ներառվել սահմանադրական արդարադատության առարկան: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը գտել է, որ վարչական եւ սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման եւ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը

գտել է նաև, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 եւ 94-րդ հոդվածների պահանջներից եւ երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում, **և կարելու է համարել, որպեսզի ՀՀ Ազգային ժողովն ուշադրություն դարձնի այս հիմնախնդրին:**

Ինչպես նշվեց, վերոհիշյալ գործով սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ է սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձևով համապատասխանեցնելու սահմանադրական դատարանի որոշման պահանջներին:

ՀՀ Ազգային ժողովը դեռեւս սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ է տանում: Ծրջանառության մեջ է դրվել Պ-3795-19.11.2008-ՄԻ-010/0 օրինագիծը, որը վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելուն: Նշված օրինագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը, որը վերաբերում է հավատարմագրված փաստաբանին:

Միաժամանակ, ՀՀ Նախագահի 17.12.2008թ. թիվ ՆԿ-221-Ա կարգադրությամբ աշխատանքային խումբ է ստեղծվել՝ ՀՀ քաղաքացիական դատավարության եւ ՀՀ վարչական դատավարության օրենսդրության բարելավման հայեցակարգի եւ համապատասխան նախագծերի մշակման նպատակով:

6. «Քաղաքացի Արայիկ Չալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 02.12.2008թ. ՄԳ-Ո-782 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության շրջանակներում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի, 18 հոդվածի 1-ին մասի, 55 հոդվածի 11-րդ մասի եւ 95 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաև ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 5-րդ մասը:

3. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ դատական համակարգի հետագա բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների շրջանակներում նաև վեճի առարկա հիմնահարցերի վերաբերյալ նախապատրաստվում են օրենսդրական բարեփոխումներ, հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմների վերացումը կարող է առաջացնել իրավական բաց, սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին եւ 2-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր

ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 1-ը»:

Խնդիրը չափազանց հրատապ է, քանի որ իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել էր արդարադատության էությունն աղճատող աննախադեպ իրավիճակ: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ միայն 2008թ. փետրվար-սեպտեմբեր ամիսներին Հարավային քրեական դատարան են գործուղվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների 5, իսկ Հյուսիսային քրեական դատարան՝ 14 դատավոր: Վերջիններիս թիվն ավելի քան չորս անգամ գերազանցում է Հյուսիսային քրեական դատարանի դատավորների թիվը: Որպես կանոն, գործուղվել է երկուական դատավոր, եւ մասնագիտացված դատարանի մեկ դատավորի հետ ձեւավորվել է դատարան՝ դրան վերապահելով առանձնապես ծանր քրեական գործի քննության իրավասություն:

Սահմանադրական դատարանը գտել է, որ նման վիճակի պատճառը նաեւ ոչ հիմնավոր մոտեցումն է Հյուսիսային եւ Հարավային քրեական դատարանների կազմավորմանը: Մի դեպքում նախագահի եւ երեք դատավորի, մյուս դեպքում՝ նախագահի եւ երկու դատավորի կազմով ստեղծված դատարանները փաստորեն ի սկզբանե ձեւական բնույթ են կրել: Օրինակ, Հարավային քրեական դատարանը՝ նախագահի եւ երկու դատավորի կազմով, միայն դատավորների օրինական արձակուրդի դեպքում գրեթե չորս ամիս չէր կարող դատական կազմ ձեւավորել՝ ՀՀ դատական օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի հիմքով գործ քննելու համար: Իսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է երեք դատավորի կազմով գործ քննել, ապա 4-5 ամիս անհնարին կլինի որեւէ այլ գործ քննել: Դա այն դեպքում, երբ 2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին այդ դատարանում մուտքագրվել է 202 գործ, իսկ 2007թ. նույն ժամանակահատվածում այդ դատարանի սպասարկման դատական տարածքում մուտքագրված է եղել 227 գործ:

Դատարանակազմական ոչ հիմնավոր լուծումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճռաբեկ դատարանի նախագահը ձեւավորել է մասնագիտացված քրեական դատարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընտրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գտել է, որ նման իրավիճակը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից, իրավաչափ չէ ու նաեւ կոռուպցիոն ռիսկ է պարունակում:

Սահմանադրական դատարանն արտահայտել է հստակ իրավական դիրքորոշումներ դատավորների գործուղման ինստիտուտը ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքներին ու կոնկրետ նորմերին համապատասխան օրենսդրորեն կանոնակարգելու վերաբերյալ:

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում:

Սահմանադրական դատարանի 2007 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ նշվել էր, որ «Զննության ընդունված 43

դիմումներից 5-ով դեռևս գործով որոշում չի կայացվել»։ Սահմանադրական դատարանի 2007թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման նախագիծը պատրաստելուց հետո սահմանադրական դատարանում մուտքագրվել են ևս 3 անհատական դիմումներ, որոնք դատական կազմերի կողմից քննության են առնվել 2008 թվականին և որոնց վերաբերյալ վերը նշվել է։ Նշված 8 դիմումների վերաբերյալ որոշումները կայացվել են 2008 թվականին, ընդ որում, դրանցից մեկը միավորվել է համանման պահանջներ պարունակող մեկ այլ դիմումի հետ մեկ գործում, մյուսը՝ 2 այլ դիմումների հետ՝ մեկ գործում, իսկ մնացած երեքը քննվել են որպես առանձին գործեր։

Նշված 8 անհատական դիմումներից մեկով /մեկ գործով/ օրենքների վիճարկվող դրույթների մի մասով գործի վարույթը կարճվել է, իսկ վիճարկվող մեկ դրույթ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող։ Մնացած 7 անհատական դիմումներով /4 գործով/ օրենքների վիճարկվող դրույթներն ամբողջությամբ կամ մասամբ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր։ Դրանք են.

1. «Քաղաքացի Աշոտ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի եւ 2004 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունված՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 05.02.2008թ. ՍԴՈ-733 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

2. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

3. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասը՝ անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դատական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6, 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածներին հակասող եւ անվավեր»։

2. ««Անիվ» հիմնադրամի եւ «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, եւ 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 25. 02. 2008 թվականի ՍԴՈ-735 որոշմամբ որոշել է.

«1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի որոշումն ընդունելուց հետո տվյալ օրենքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել:

3. «Քաղաքացիներ Արմեն Համաձջյանի, Աիդա Քոչարյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի եւ Ազնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 15.04.2008 թվականի ՍԳՈ-751 որոշմամբ որոշել է.

«1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի դրույթները, որոնք համակարգային առումով փոխկապակցված են օրենքի վիճարկվող դրույթների հետ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը»:

ՀՀ Ազգային ժողովը դեռեւս սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման իրացման ուղղությամբ գործնական քայլեր չի ձեռնարկել:

4. ««Ռադիո Հայ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 13.05.2008թ. ՍԳՈ-753 որոշմամբ որոշել է.

«1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել Հայաստանի Հան-

րապետության Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքին, 45 հոդվածի եւ 83.5. հոդվածի 2-րդ կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով, որ, մի կողմից, եթերավճարի գանձումն առնչվում է բյուջետային հարաբերությունների կայունությանը, մյուս կողմից՝ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից հեռուստառադիոընկերությունների համար եթերավճար վճարելու պարտավորության անմիջական ընդհատումը կարող է անհավասար վիճակ ստեղծել ռադիոհաճախականություն օգտագործող տնտեսավարող սուբյեկտների միջեւ՝ խաթարելով սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահին վեճի առարկա դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանը հեռուստառադիոընկերություններից եթերավճարի գանձման օրենսդրական ներկա կարգավորումն անհարիր համարելով իրավական պետության սկզբունքներին՝ միաժամանակ ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց վճարելու պարտականությունն ինքնին իրավաչափ է համարում, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008թ. դեկտեմբերի 1-ը»:

ՀՀ Ազգային ժողովը դեռեւս սահմանադրական դատարանի որոշման հիման վրա օրենքում փոփոխություններ կատարելու հարցին չի անդրադարձել՝ արդյունքում առաջացնելով օրենքի բացի վտանգ:

Իրավակիրառական պրակտիկայում ստեղծվել է նաեւ անթույլատրելի մեկ այլ իրավիճակ: Արձանագրվել են դեպքեր, երբ սահմանադրական դատարանի կողմից օրենքի նորմը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր, սակայն օրենքի տեքստի հետագա պաշտոնական հրատարակման մեջ այդ նորմը պահպանվել է՝ առանց որեւէ նշում կատարելու դրա անվավերության վերաբերյալ: Այս առնչությամբ սահմանադրական դատարանի նախագահը 2008թ. ապրիլի 7-ին ՀՀ արդարադատության նախարարին է դիմել հետեւյալ գրությամբ.

«Քաղաքացի Գետրոգ Գզրարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 3-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007 թվականի հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի դրույթները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր ճանաչելով, միաժամանակ, նույն որոշման 3-րդ կետով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր է ճանաչել նաեւ Հայաստանի Հան-

րապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 394 հոդվածի 5-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները եւ 419 հոդվածի 2-րդ կետի՝ լրացուցիչ նախաքննություն նախատեսող դրույթը:

«Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը 2008 թվականին հրատարակել և շրջանառության մեջ է դրել Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական հրատարակություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի հատուկ թողարկումը: Նշված թողարկմամբ որպես **պաշտոնական վերահրատարակություն** վերահրատարակվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը՝ 2008 թվականի մարտի 5-ի դրությամբ փոփոխություններով և լրացումներով:

Նշված վերահրատարակությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի տեքստի ուսումնասիրությունից բխում է, որ 18.12.2007թ. ՀՕ-270-Ն օրենքով փոփոխվել և նոր խմբագրությամբ են շարադրվել օրենսգրքի 394 հոդվածի 5-րդ մասի և 419 հոդվածի 2-րդ կետի դրույթները, ինչի հետևանքով կարելի է փաստել, որ օրենսդիրը մասնակիորեն կատարել է ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման պահանջները: Ինչ վերաբերում է օրենսգրքի մյուս դրույթներին, որոնք ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի ՍԳՈ-710 որոշմամբ ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր, այն է՝ օրենսգրքի 311 հոդվածի, 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները, ապա կարելի է փաստել, որ առայսօր այդ հոդվածներում չեն կատարվել ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի ՍԳՈ-710 որոշմանը համահունչ փոփոխություններ:

Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի 2008թ. հատուկ թողարկմամբ վերահրատարակված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի, 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի և 421 հոդվածի 3-րդ մասի դրույթներից հետո չկա որևէ նշում այն մասին, որ նշված հոդվածները կամ դրանց համապատասխան դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի ՍԳՈ-710 որոշմամբ ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր: Մինչդեռ, այդպիսի նշումը հանդիսանում է ինկորպորացիայի դրսևորման ձևերից մեկը, և ՀՀ արդարադատության նախարարությունը, որպես իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիա իրականացնող, պետք է այդ հանգամանքին պատշաճ ուշադրություն դարձներ: Ի դեպ, օրենսգրքի էլեկտրոնային տարբերակի, օրինակ, 311 հոդվածում նշված է. «311-րդ հոդվածը ճանաչվել է անվավեր 24.07.07. ՍԳՈ-710 որոշում»: Համանման նշումներ կան նաև 297, 363, 398 եւ 421 հոդվածների դրույթների առնչությամբ:

Իրավական ակտերի պաշտոնական հրատարակության մեջ այդպիսի նշանն բացակայությունն իրավակիրառական պրակտիկայում առաջացնում է անորոշություն, իրավակիրառողների անիրագրելիություն և կարող է հանգեցնել հակասահմանադրական և անվավեր ճանաչված, հետևաբար՝ ուժը կորցրած իրավական դրույթների կիրառմանը, ինչը ոչ միայն վտանգում է քաղաքացիների իրավունքները և ազատությունները, իրավակիրառողների համար առաջացնում ընդհուպ մինչև քրեական պատասխանատվություն, այլև սպառնում է Հայաստանի Հանրապետության իրավական անվտանգությանը, կասկածի տակ է դնում սահմանադրական դատարանի որոշումների կատարումը. հանգամանքներ, որոնք անհարիր են իրավական պետությանը: Գտնում ենք, որ անթույլատրելի է պաշտոնապես հրատարակել կամ վերահրատարակել որևէ իրավական ակտ՝ առանց նշում կատարելու այն մասին, որ տվյալ իրավական ակտի համապատասխան դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Խնդրում են միջոցներ ձեռնարկել վիճակը շտկելու համար»:

ՀՀ արդարադատության նախարարը 11.04.2008թ. թիվ Ե1010 գրությամբ պատասխանել է, որ «... ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը իրավական ակտում փոփոխություն կամ լրացում նախատեսող իրավական ակտ չէ եւ որեւէ օրենքով չի նախատեսված, որ ՀՀ սահմանադրական դատարանի կամ այլ դատարանի կողմից իրավական ակտի կամ դրա մասի անվավեր ճանաչելու որոշման մասին պետք է հղում նախատեսվի վերահրատարակվող իրավական ակտում»: Ստացվում է, որ հակասահմանադրական ճանաչված ակտերն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ ուժը կորցրած ճանաչվելուց հետո էլ կրկին կարող են պաշտոնապես նույնությամբ, առանց որեւէ նշումի հրատարակվել եւ շրջանառության մեջ դրվել:

Վիճակը շտկելու համար սահմանադրական դատարանի նախագահի կողմից 15.04.2008թ. նամակ է հղվել նաեւ ՀՀ Ազգային ժողովի նախագահին, նշելով, որ «ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների պաշտոնական հրապարակման կամ վերահրատարակման հետ կապված մի խնդիր է առաջացել, որը, թերեւս, պահանջում է Ձեր միջամտությունը: Բանն այն է, որ ՀՀ պաշտոնական տեղեկագրում (որում նշված է «Հրատարակությունը եւ պաշտոնական ինկորպորացիան՝ ՀՀ արդարադատության նախարարության»), վերահրատարակվում են օրենքներ, որոնց առանձին դրույթներ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են Սահմանադրությանը հակասող ու անվավեր՝ այդ մասին չկատարելով որեւէ նշում: Նման մոտեցումն իրավակիրառողի մոտ լուրջ թյուրիմացություն կարող է առաջացնել, երբ օրենքը վերահրատարակվում է հակասահմանադրական նորմերով: Դրա լավագույն օրինակը «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերահրատարակումն է՝ 2008թ. մարտի 5-ի դրությամբ փոփոխություններով եւ լրացումներով: Այդ օրենսգրքի 311 հոդվածի 1-ին կետի, 292 հոդվածի 5-րդ կետի, 297 հոդվածի, 363 հոդվածի 2-րդ մասի, 394 հոդվածի 5-րդ մասի, 398 հոդվածի 6-րդ մասի, 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները եւ 419 հոդվածի 2-րդ կետի՝ լրացուցիչ

նախաքննությունն նախատեսող դրույթը սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՍԳՈ-710 որոշմամբ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Նման պարագայում վերահրատարակված օրենսգիրքը հակասահմանադրական ճանաչված նորմերը մատուցում է որպես գործող նորմեր:

Մենք վիճակը շտկելու համար գրավոր դիմեցինք ՀՀ արդարադատության նախարարին (նամակի պատճենը կցվում է): Ցավոք, նրա պատասխանը խնդրի լուծում չի բովանդակում (պատասխանը կցվում է): Նկատի ունենալով, որ ակտն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից եւ իրավաստեղծ կամ նորմատիվ ակտը հրապարակող մարմինը կարող է պաշտոնապես վերահրատարակել այն, խնդրում եմ միջոցներ ձեռք առնել, որպեսզի օրենքների հակասահմանադրական եւ անվավեր ճանաչված նորմերը պաշտոնական շրջանառության մեջ չդրվեն՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով հանդերձ: Մասնավորապես, կարող էր գործել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի տրամաբանությունը»:

ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 25.04.2008թ. թիվ Ն-298 պատասխանում նշվում է, որ իրոք նման վիճակը կարող է օրենքների կիրառման ժամանակ թյուրըմբռնում առաջացնել եւ լավագույն լուծումը կլինի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություն կատարելը: **Նման փոփոխություն դեռեւս չի կատարվել:**

Մի շարք անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկվող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Սակայն դատարանն իր որոշումների պատճառաբանական մասում արձանագրել է նաեւ իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը: Սահմանադրական դատարանը կարելու է համարում, որ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անհրաժեշտ ուշադրություն դարձնեն նաեւ այդ հանգամանքին: Մասնավորապես.

1. ««Լոռիշեն» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանն իր՝ 22.04.2008թ. ՍԳՈ-752 որոշման 7-8-րդ կետերում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«7. ... օրենսդրությամբ կարգավորված է քաղաքացիադատավարական ժամկետների հաշվարկի, դրանք բաց թողնելու դեպքում վերականգնելու ընթացակարգ: Վերականգնման կանոնները որոշված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածի 1-ին մասում, ինչպես նաեւ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածում (կատարողական թերթը կատարման ներկայացնելու դեպքում), համաձայն որոնց՝

բաց թողնված դատավարական ժամկետը դատարանի որոշմամբ վերականգնվում է հարգելի պատճառների առկայությամբ՝ գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա:

Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ դատավարական ժամկետը բաց թողնելու հնարավոր պատճառներն օրենքով օբյեկտիվորեն կանխորոշված չեն, որի պայմաններում դրանք գնահատելու եւ արդյունքում այդ ժամկետի բացթողումը հարգելի կամ անհարգելի ճանաչելու (գնահատման չափանիշներ ընտրելու) դատարանի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ: Սակայն, ի տարբերություն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 4-րդ մասում ամրագրված կանոնի, դատավարական գործողության կատարման բաց թողնված ժամկետը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 77 հոդվածի հիմքով վերականգնելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման, հետևաբար՝ այդ ակտի հիմնավորվածությունը (օրինականությունը) վիճարկելու իրավական հնարավորություն նախատեսված չէ, որի սահմանադրականությունը սույն գործի շրջանակներում չի վիճարկվում:

Ի դեպ, քննության առարկա հիմնահարցի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաեւ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն իր «Դատական ակտերը բողոքարկելու ժամկետների վերաբերյալ օրենսդրության կիրառման դատական պրակտիկայի մասին» 2000թ. թիվ 36 որոշմամբ:

Վերահաստատելով իր՝ 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման 7-րդ եւ 11-րդ կետերում արտահայտած դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական ժամկետները բաց թողնելու պատճառների դատական գնահատման հիմքում պետք է լինեն իրավական չափանիշներ՝ ելնելով իրավակարգավորման ընդհանուր սկզբունքներից, բացառելով կամային ու չհիմնավորված որեւէ մոտեցում: Այդպիսի ազատությունը պետք է իրականացվի իրավասու դատարանի՝ օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակներում, անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով՝ ՀՀ Սահմանադրության 3 հոդվածում եւ 47 հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների պահպանմամբ: Հակառակ պարագայում, դատարանը մարդու սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջական գործող իրավունքի, ապահովման ու պաշտպանության փոխարեն իր ակտով այդ իրավունքների ոտնահարման պատճառ կարող է դառնալ: Դրանով է պայմանավորված դատական ակտերի՝ որպես սահմանադրական արդարադատության օբյեկտ հանդիսանալու իրողությունը միջազգային պրակտիկայում:

Ելնելով դիմողի առաջադրած հարցադրումներից, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի հիման վրա ի պաշտոնե պարզելով գործի հանգամանքները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությունը նախատեսել է բոլոր հնարավոր լուծումները քննության առարկա հարցով դիմողի սահմանադրական իրավունքների պաշտպանության համար: Խնդիրը կայանում է նրանում, թե այդ հնարավորություններն ինչպես են իրացվել դատական պրակտիկայում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործով դա չի արվել

հոգուտ իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման, միաժամանակ արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրությամբ դատական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսանալ չեն կարող:

8. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածի 2-րդ մասի հիմքով կայացված դատական որոշման պատճառաբանման պարտադիր պահանջի վերաբերյալ դիմող կողմի պնդմանը, նկատի ունենալով, որ այդպիսի որոշման կայացումը դուրս է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144 հոդվածի կանոնակարգման շրջանակներից, եւ վերահաստատելով 09.04.2007թ. ՄԳՈ-690 եւ 11.04.2007թ. ՄԳՈ-691 որոշումներում արտահայտած իր դիրքորոշումը, սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է ՀՀ դատական օրենսգրքի 21, 48, 50 (4-րդ մաս) եւ 60 (1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետեր) հոդվածներով նախատեսված՝ դատական որոշումների պատճառաբանման պարտադիր պայմանների միակերպ կիրառման կարելիությունը ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջների լիարժեք երաշխավորումն ապահովելու խնդրում»:

2. «Քաղաքացի Վարդան Մալխասյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով սահմանադրական դատարանն իր՝ 14.10.2008թ, ՄԳՈ-766 որոշման 6-րդ եւ 8-րդ կետերում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«6. ... «պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր» եւ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչեր» հասկացությունները ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի սահմանադրաիրավական իմաստով պետք է հասկանալ **օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության մարմինների պետաիշխանական գործառույթներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ բռնությամբ կամ դրա գործադրման անմիջական եւ իրական սպառնալիքով տիրանալու համար գործողություն պլանավորելու, կազմակերպելու, նախապատրաստելու կամ իրականացնելու նպատակով այլ անձանց մասնակից դարձնելու դիմում կամ հրավեր:** Իրավակիրառական պրակտիկան եւ ցանկացած գործի փաստական հանգամանքների գնահատումը պետք է ելնի տվյալ հասկացությունների սահմանադրաիրավական այդ բովանդակությունից, **առաջին հերթին նկատի ունենալով հակաիրավական (բռնի) գործողությունների միջոցով պետաիշխանական գործառույթի նկատմամբ ոտնձգություն իրականացնելու նշված հանգամանքը:** Բռնության կոչերի նպատակը մեկն է՝ համախմբել մարդկանց, ուղղություն տալ նրանց բռնի գործողություններին: Զննարկվող հանցակազմի իմաստով բռնության կոչեր չեն կարող համարվել իշխանության քննադատությունը, իշխանությունների հրաժարականի անհրաժեշտության հիմնավորումը, հրաժարականի պահանջը, ցույցեր, երթեր, հանրահավաքներ անցկացնելու կոչը կամ կազմակերպումը, փոխաբերական իմաստով արված արտահայտությունները:

Հանրային իշխանության մարմինները եւ պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամատեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Հանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ եւ ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման:

Վերոշարադրյալ մեկնաբանությունից բխում է նաեւ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իմաստով՝ «պետական իշխանություն» հասկացությունը չի կարող նույնականացվել «պաշտոնատար անձ» հասկացության հետ, եւ դա չի կարող արվել նաեւ իրավակիրառական պրակտիկայում:

Վեճի առարկա դրույթների համատեքստում իրավունքի ամեն մի չարաշահում պետք է գնահատվի միայն ու միայն վերոշարադրյալ իմաստով սահմանադրական կարգը բռնությամբ տապալելու իրական սպառնալիքի եւ դրա կանխման անհրաժեշտության տեսանկյունից: Այս շրջանակներում միայն ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դիսպոզիցիան սահմանադրական նորմերի ու սկզբունքների տեսանկյունից կարող է ունենալ իրավաչափ բնույթ:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործի շրջանակներում առաջնային խնդիրը վեճի առարկա նորմի պատշաճ իրավական մեկնաբանման եւ կիրառման երաշխավորումն է: Դրա ապահովման իրավական պարտավորությունը, ՀՀ Սահմանադրությանը համապատասխան, կրում է ՀՀ վճռաբեկ դատարանը: ...ՀՀ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածով նախատեսված դրույթների, ինչպես նաեւ իր՝ 09.04.2007թ. ՄԴՌ-690 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում արձանագրում է, որ սույն գործին առնչվող հարցով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 04.05.2008թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ պարզապես նշելով, որ «Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ չկան հիմքեր եզրակացնելու, որ բողոքներում բարձրացված հարցերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար...»: Մինչդեռ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները վկայում են, որ տվյալ գործի շրջանակներում ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի եւ ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի պաշտոնական մեկնաբանումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից էական նշանակություն կարող էր ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Առավել եւս, երբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007թ. սեպտեմբերի 25-ի դատավճռում ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իրավական բովանդակության որեւէ մեկնաբանում չի տրվել, իսկ դատական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր տվյալ նորմի կիրառման պրակտիկա փաստորեն չի ձեւավորվել»:

Սահմանադրական դատարանը սույն գործով որոշել է, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 301 հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում»: Նման որոշումը համապատասխան պարտավորություններ է առաջացնում նաև օրինաստեղծ մարմնի համար՝ գործող օրենսդրական նորմերը սահմանադրական դատարանի որոշումից ու իրավական դիրքորոշումներից ելնելով Սահմանադրությանը համապատասխանեցնելու առումով:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները եւ դրանց կատարումը

2008 թվականի ընթացքում սահմանադրական դատարանում մուտքագրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված մեկ դիմում, որով օրենքի վիճարկվող դրույթը սահմանադրական դատարանի որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Մինչույն ժամանակ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2007 թվականին ներկայացվել են ևս երկու դիմումներ, որոնց հիման վրա գործերով որոշումները կայացվել են 2008 թվականին: Վերջին երկու դիմումներով օրենքի վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Դրանք են.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15.01.2008թ. ՄԳ-Ո-723 որոշմամբ որոշել է.

«1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել նաև դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա»:

ՀՀ Ազգային ժողովը դեռևս սահմանադրական դատարանի որոշման կատարումն ապահովող օրենսդրական քայլեր չի ձեռնարկել:

2. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (19 նոյեմբերի 2002 թվականի, ՀՕ-519-Ն) 47 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 29.01.2008թ. ՄԳ-Ո-731 որոշմամբ որոշել է.

«1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի 2-րդ եւ

3-րդ մասերը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 37 հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա»:

Նման որոշման առկայության պայմաններում օրենքի դրույթների որեւէ փոփոխություն Ազգային ժողովի կողմից չի իրականացվել:

Հանրապետության Նախագահի թեկնածուների դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները եւ դրանց կատարումը

Հանրապետության Նախագահի թեկնածուների կողմից ներկայացվել է 4 դիմում, որոնցից երկուսը վերաբերել են ՀՀ Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի ճանաչելուն, իսկ մյուս երկուսը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի՝ «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը վիճարկելուն: Նշված 4 դիմումներից 3-ը սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումներով ընդունվել են քննության: Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ 1 դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժվել է: Նշված դիմումը ներկայացրել էր ՀՀ Նախագահի թեկնածու Արման Մելիքյանը, որով սահմանադրական դատարանին բառացիորեն խնդրել էր հետեւյալը. «26.02.2007թ. «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-79-Ն) 2-րդ հոդվածի «բ» ենթակետը 2008թ. փետրվարի 19-ին անցկացվելիք ՀՀ նախագահի ընտրությունների ընթացքում, ինձ՝ ՀՀ նախագահի թեկնածու Արման Մելիքյանի համար համարել խոչընդոտ եւ վերացնել այն»:

Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական դատարանն իր՝ 02.02.2008թ. ՄԳԱՈ-12 աշխատակարգային որոշմամբ մերժել է նշված դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը, այդուհանդերձ, սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նշված աշխատակարգային որոշման մեջ արտահայտված հետեւյալ իրավական դիրքորոշումների վրա.

««Անհաղթահարելի խոչընդոտ» սահմանադրական դրույթն սկիզբ է առել ֆրանսիական սահմանադրաիրավական պրակտիկայից, եւ այս երկրի Սահմանադրական խորհուրդը նույնպես բազմաթիվ քննարկումների ժամանակ տվյալ դրույթը մեկնաբանել է որպես թեկնածուներից մեկի կոնկրետ վիճակով պայմանավորված ընտրական գործընթացին անձամբ նրա մասնակցության անհնարինություն»:

Դատարանն իրավասու չէ եւ չի կարող խոչընդոտ վերացնել: Դատարանն այն կարող է կամ ճանաչել անհաղթահարելի, կամ վերացած՝ ինչպես սահմանված է ՀՀ Սահմանադրության 52 եւ 100 (կետ 4) հոդվածներում»:

ՀՀ Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթա-

հարելի ճանաչելու վերաբերյալ մյուս դիմումը ներկայացրել էր ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը:

«ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ 2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի ճանաչելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 11.02.2008թ. ՍԳՈ-734 որոշմամբ որոշել է.

«1. Դիմողի ներկայացրած փաստարկները՝ ՀՀ Սահմանադրության 52 հոդվածի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում, 2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի համար չեն կարող համարվել որպես անհաղթահարելի խոչընդոտներ»:

Նշված որոշմամբ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

««Նախագահի թեկնածուի համար առաջացած անհաղթահարելի խոչընդոտ» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը ... ենթադրում է, որ Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցվելու պահից մինչև Հանրապետության Նախագահի ընտրության օրվան նախորդող ութերորդ օրը տեւող ժամանակահատվածում Հանրապետության Նախագահի թեկնածուի կամքից անկախ նրա հետ կապված այնպիսի վիճակ է առաջացել, որն այդ ժամանակահատվածում օբյեկտիվորեն անհնարին է հաղթահարել, եւ որը գործնականում նրան զրկել է ընտրական գործընթացին հետագա մասնակցելու հնարավորությունից:

... Սույն գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում ՀՀ վարչական դատարանից, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովից պահանջված տեղեկանքները վկայում են, որ դիմողի վստահված անձը սահմանադրական դատարան դիմելու օրը՝ 2008թ. փետրվարի 7-ին, դիմումում շարադրված փաստերով հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան: Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովն իր 07.02.2008թ. թիվ 01-17 գրությամբ սահմանադրական դատարանին տեղեկացրել է, որ «07.02.2008թ. հանձնաժողովը ստացել է ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Արտակ Ջեյնալյանի կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացված գործողության կատարման հայց նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու մասին»: Սույն գրությամբ տեղեկացվում է նաեւ, որ 06.02.2008թ. ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի կողմից նույնպես ստացվել է դիմում-առաջարկություն, որը վերցվել է ուսումնասիրության:

ՀՀ սահմանադրական դատարանն ներկայացված փաստարկների շրջանակներում 2008թ. փետրվարի 6-ին ՀՀ Նախագահի թեկնածուի վստահված անձի կողմից դիմում-առաջարկություն է ներկայացվել նաեւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով»:

Սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ Նախագահի թեկնածուի

վստահված անձանց այդ գործողություններն իրավաչափ են, բխում են օրենքի վերոհիշյալ պահանջներից, եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաեւ ՀՀ վարչական դատարանի խնդիրն է իրենց իրավասության շրջանակներում, օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում ապահովել զանգվածային լրատվամիջոցների կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջների հստակ կատարումը: Այս հարցում ցանկացած ձեւական մոտեցում անվստահություն կարող է առաջացնել ընտրական գործընթացի նկատմամբ:

«...Միաժամանակ, նախընտրական քարոզչության գործընթացի շրջանակներում ՀՀ Նախագահի թեկնածուի վստահված անձանց վերոնշյալ գործողությունները, ինչպես նաեւ թեկնածուի կողմից նախընտրական քարոզչության շարունակման փաստը վկայում են, որ ոչ թե առկա են անհաղթահարելի խոչընդոտներ, այլ այդ գործընթացի շրջանակներում առաջ է քաշվում նախընտրական քարոզչության օրինականության ապահովման հետ կապված վեճ, որն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ներկայացվել է ընտրությունների այս փուլում դրանց գնահատման եւ լուծման իրավասությունն ունեցող վերոհիշյալ մարմիններին»:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել նաեւ ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հիշյալ հոդվածներում խոսքը վերաբերում է ՀՀ Նախագահի թեկնածու իրավասությեկտին: Այսինքն՝ այն անձին, ով օրենքով սահմանված կարգով առաջադրվել, գրանցվել եւ ձեռք է բերել ՀՀ Նախագահի թեկնածուի իրավական կարգավիճակ: Այս առումով, դիմողի բերած այն փաստարկները, որոնք առնչվում են ՀՀ Նախագահի թեկնածուի գրանցմանը նախորդող գործընթացներին, անմիջականորեն չեն վերաբերում սույն գործով սահմանադրական դատարանին ներկայացված խնդրանքին:

ՀՀ Նախագահի թեկնածուների կողմից ներկայացված մյուս երկու դիմումները վերաբերում են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի՝ «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը վիճարկելուն: Նշված դիմումները ներկայացրել են ՀՀ Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանը եւ Լեւոն-Տեր Պետրոսյանը: Դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածին համապատասխան, 2008թ. մարտի 1-ի աշխատակարգային որոշմամբ միավորվել են՝ դատարանի նույն նիստում քննելու համար: «Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանի եւ Լեւոն-Տեր Պետրոսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի՝ «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 08.03.2008թ. ՍԳՈ-736 որոշմամբ որոշել է.

«1. «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Թիվ 01/28, 08/27, 17/02, 20/18, 23/41, 28/15, 33/04, 33/21, 33/22, 37/03, 37/11, 37/44 տեղամասային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ արձանագրություններում փոփոխությունների, թիվ 30, 31 եւ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների՝ վերահաշվարկ կատարելը մերժելու վերաբերյալ որոշումների, ինչպես նաեւ դիմողների կողմից ներկայացված քվեաթերթիկների եւ քվեարկության ծրարների ու տեսանյութերով ներկայացված փաստերի իրավագնահատման եւ օրինականությունը պարզելու նպատակով դրանք տրամադրել ՀՀ դատախազությանը՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար»:

Նշված որոշման 11-13-րդ և 15-16-րդ կետերում սահմանադրական դատարանն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք պարունակում են նաեւ ընտրական վեճերի վերաբերյալ գործերով ՀՀ ընտրական օրենսգրքի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի որոշ պարզաբանումներ: Մասնավորապես, նշվում է, որ.

«11. ... Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ՀՀ ԿԸՀ-ի որոշման իրավական հիմնավորվածությունը սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել երկու տեսանկյունից. ինչպես դրա ընդունման սահմանված կարգի (ընթացակարգի)՝ օրենքով պահանջվող ձեւի պահպանվածության (ձեւական հիմքեր), այնպես էլ նյութական իրավունքի նորմերի կիրառման ենթադրյալ սխալների հիմքով, որով ընտրությունների արդյունքներն ամփոփող կենտրոնական ընտրական հանձնաժողովը սխալ հետետության է հանգել թեկնածուների ընտրվելու կամ չընտրվելու փաստի վերաբերյալ (նյութական հիմքեր): Ընդ որում, երկրորդ դեպքում ընտրությունների արդյունքների վրա ազդող կարող են դիտվել այն իրավախախտումները, որոնք աղավաղում են քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման ընդհանուր պատկերը, հնարավորություն չեն տալիս հստակ եզրակացության հանգել ընտրությունների վերջնական արդյունքների վերաբերյալ: Միաժամանակ, պասիվ ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում ընտրությունների արդյունքների վրա տարաբնույթ խախտումների ազդեցության գնահատման արդյունքում չի կարող ոտնահարվել իրենց ընտրությունն օրինական եղանակով կատարած ընտրողների ակտիվ ընտրական իրավունքը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն իրավասու չէ միաժամանակ քննության առնել օրենքների սահմանադրականության հարց, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ:

...

12. Սահմանադրական դատարանի՝ գործի փաստական հանգամանքները կողմերի դիրքորոշումներից անկախ բացահայտելու պարտականությունն ունի իր առանձնակի սահմանները, որոնց առկայությունը պայմանավորված է Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված իրական հնարավորություններով եւ իրավաբանորեն ամրագրված գործառնական ու դրանցից ածանցվող այլ լիազորություններով: Գործի հանգամանքների ի պաշտոնե պարզումը հնարա-

վոր է միայն այդ սահմաններում, եւ այդ սկզբունքը չի լիազորում սահմանադրական դատարանին ստանձնելու իրավապահ այլ մարմինների (դատախազական կամ քննչական) լիազորություններ, փոխարինել արդարադատական կամ վարչական այլ մարմիններին:

Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական դատարանը պետք է որոշում ընդունի դիմումի մուտքագրման օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում՝ Սահմանադրության 51-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով: Այդ հիմքով սահմանադրական դատարանում վեճի քննության պարագայում վճռական են դառնում ընտրական գործընթացի բոլոր փուլերում իրավունքի պաշտպանության հնարավորությունների ամբողջական իրացումը եւ ապացուցողական նշանակության փաստարկներով սահմանադրական դատարան դիմելը:

13. Ելնելով ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի եւ 101 հոդվածի 9-րդ կետի պահանջներից, ինչպես նաեւ ընտրական իրավունքի դատական պաշտպանության՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի բնույթից, սահմանադրական դատարանն իր 10 հունիսի 2007թ. ՍԳՌ - 703 որոշման մեջ (ընդունված սահմանադրական փոփոխություններից հետո) իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ բոլոր հարցերը, որոնք առնչվում են ընտրությունների ընթացքում թեկնածուների գրանցման շուրջ առաջացած վեճերին, եւ որոնց լուծման իրավասությունը վերապահված է այլ դատարանների, սահմանադրական դատարանում առանձին քննության առարկա դառնալ չեն կարող, իսկ որպես ապացույց հիմք են ընդունվում այդ դատարանների վերջնական ակտերը:

...
15. ... ՀՀ սահմանադրական դատարանը մինչեւ սահմանադրական փոփոխություններն իր 16.04.2003թ. ՍԳՌ - 412 որոշմամբ իրավական դիրքորոշում էր արտահայտել, որ սահմանադրական դատարանում ընտրական վեճի լուծման ժամանակ ընտրատեղամասերում քվեարկության արդյունքները ոչ հավաստի են, եթե.

ա) նույն ընտրատեղամասում ի հայտ են եկել քվեարկության արդյունքների պաշտոնական բնույթ ունեցող, միմյանցից էապես տարբերվող ամփոփիչ արձանագրություններ,

բ) իրավական առումով հիմնավոր փաստարկված է, որ տեղ են գտել քվեաթերթիկների լցումման, ձայների սխալ հաշվարկի, այլոց փոխարեն քվեարկության եւ այլ բնույթի էական խախտումներ, սակայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից անհիմն ձեռով մերժվել է, իսկ դատարանների կողմից օրենքով սահմանված կարգով չեն պաշտպանվել հանձնաժողովների անդամների եւ թեկնածուների վստահված անձանց իրավունքները՝ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում տեղամասային քվեարկության արդյունքների ստուգումներ կազմակերպելու վերաբերյալ: **Միաժամանակ** ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա քվեարկության ոչ հավաստի արդյունքների ազդեցությունը գնահատելու նպատակով մնաց ընտրատեղամասերում առավել ձայներ ստացած թեկնածուի ձայների

չափով սահմանադրական դատարանը կրճատել էր ընտրությունների արդյունքում թեկնածուներին տրված ձայների ընդհանուր տարբերությունը:

...
16. ... ընտրական օրենսգրքի եւ վարչական դատավարության օրենսգրքի հիշատակված հոդվածներից բխում է, որ ընտրական գործընթացում տեղի ունեցած իրավախախտումներն ապացուցողական նշանակություն են ունենում այն դեպքում, երբ ձեռք են բերվում իրավասու դատարաններում հստակորեն սահմանված ժամկետներում փաստական հանգամանքների քննության արդյունքում:

... Միեւնույն ժամանակ, որեւէ ընտրատեղամասում կամ ընտրատարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ ընտրական գործընթացի օրինականությունն ամբողջությամբ կասկածի տակ դնելու համար: Ընտրությունների արդյունքում ընդունված որոշումն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն օրենքով սահմանված կարգով փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա»:

Դիտարկվող որոշման 17-րդ կետում սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում, որը վերաբերում է նախընտրական քարոզչության վերահսկմանը և **ուղղված է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին:** Այդ իրավական դիրքորոշումը հետևյալն է.

«17. Դիմող կողմն առանձնահատուկ կարեւորում է նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների համար անհավասար պայմանների ստեղծման հանգամանքը եւ հատկապես Հանրային հեռուստաընկերության «Հայլուր» ծրագրի կողմից ընտրական օրենսգրքով նախատեսված անկողմնակալության սկզբունքի խախտումը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ 2008թ. Հանրապետության Նախագահի ընտրության ընթացքում նույնպես ՀՀ ԿԸՀ-ի տեսադաշտից դուրս է մնացել նախընտրական քարոզչության արդյունավետ վերահսկումը: Օրենքի պահանջների կատարմանը ձեւական մոտեցում է դրսևորել Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը: Դրանց արդյունքում լրատվամիջոցներում ոչ միայն տեղ են գտել կողմնակալ մոտեցումներ, այլև առանձին լուսաբանումների ընթացքում արձանագրվել են նաեւ իրավական ու բարոյական նորմերի խախտումներ:

... միջազգային իրավական չափանիշներից ելնելով՝ այն սկզբունքը, ըստ որի նախընտրական քարոզչությունը պետք է լինի ազնիվ եւ արդար, չի կարող մեկնաբանվել այնքան ընդարձակ, որ բացառվի խոսքի ազատության եւ տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացումը կամ բացառվի պաշտոնատար անձի հասցեին հնչեցված մեղադրանքների շուրջ պատասխան կարծիք ներկայացնելու հնարավորությունը»:

Վերոնշյալ որոշման մեջ սահմանադրական դատարանն արտահայտել է նաև այնպիսի իրավական դիրքորոշումներ, որոնք ուղղված են օրենսդիր մարմնին:

Որոշման 18-րդ կետում սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում, որը վերաբերում է սահմանադրական դատարանի որոշումների կատարմանը՝ ընդհանրապես, և սահմանադրական դատարանի 10.06.2007թ. ՄԴՈ-703 որոշման կատարմանը՝ մասնավորապես, և առավելապես **ուղղված է ՀՀ Ազգային ժողովին**: Այդ իրավական դիրքորոշումը հետևյալն է.

«18. Դիմողների կողմից մատնանշված մի շարք ընտրախախտումների, ՀՀ դատախազության կողմից ընտրական գործընթացի շրջանակներում հարուցված քրեական գործերի, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերի վերլուծությունը վկայում է, որ ընտրական գործընթացի հիմնական թերությունները եւ այդ գործընթացի նկատմամբ հանրային վստահության պակասը խորքային պատճառներ ունեն: ՀՀ սահմանադրական դատարանն իր 10.06.2007թ. ՄԴՈ-703 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «ընտրական իրավունքի պաշտպանությունը, հատկապես սահմանադրական արդարադատության շրջանակներում, չի ենթադրում ձեռնարկված մոտեցում՝ թե որքանով են խախտվել մարդկանց ակտիվ կամ պասիվ ընտրական իրավունքները: Հարցն ունի ընդգրկման ավելի լայն շրջանակ եւ վերաբերում է ընտրությունների հանրային գործառույթին՝ թե ինչ կերպ եւ ինչպիսի վստահությամբ է ձեռավորվում ներկայացուցչական կառավարման համակարգը, ինչպես են ներդաշնակվում կառավարմանը մասնակցելու ազատությունը եւ ներկայացուցչական մարմիններ կազմավորելու պարտականությունը, ինչպիսին է անհատների հասարակական վարքագիծն այս գործընթացում: Ուստի ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հնարավորության ապահովումը պետության պարտավորությունն է եւ ոչ թե առանձին քաղաքական միավորումների կամ անհատների: Դրանից եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից է բխում նաեւ ՀՀ ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ «Պետությունը, օրենսդրությամբ վերապահված իրենց լիազորությունների շրջանակում՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման եւ կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորող մարմիններն ու պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման օրինականության համար»: Ուստի պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի.

ա) ընտրական օրենսդրությունը գերծ լինի ընտրական իրավունքի արդյունավետ իրացումը խոչընդոտող թերություններից,

բ) քաղաքական ընթացիկ գործունեությունը հստակ տարանջատվի նախընտրական քարոզչությունից,

գ) բացառվի քաղաքական ու բարեգործական գործունեության միատեղումը,

դ) ընտրական գործընթացի բոլոր փուլերում կանխվի քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը:

ՀՀ Սահմանադրության 2 եւ 4 հոդվածներում ամրագրված հիմնարար սկզբունքների համաձայն՝ իրավական պետության համար ելակետայինն ընտրական գործընթացներում հասարակության քաղաքական շահերի գերակայության

օրենսդրական ու կառուցակարգային այնպիսի երաշխիքների ապահովումն է, որը կբացառի առաջնային մանդատով օժտված իշխանության ներկայացուցչական մարմինների ձեռնարկման գործում քաղաքական եւ գործարար շահերի անմիջական միահյուսման որեւէ հնարավորություն»:

Այս իրավական դիրքորոշումը բավարար չափով ուշադրության չարժանացավ ՀՀ ընտրական օրենսգրքի եւ ողջ ընտրական համակարգի բարեփոխման ընթացքում, մասնավորապես, նաեւ՝ ՀՀ Սահմանադրության 65 հոդվածի պահանջների կատարումը երաշխավորելու առումով, որն էապես կարող էր նպաստել ընտրական համակարգի եւ կոնկրետ ընտրական գործընթացի նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը:

ՀՀ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները պետք է դառնան քաղաքական հակամարտությունների հաղթահարման եւ պետական կարգի հիմքերն ամրապնդող գործոն: Իրականում հետընտրական գործընթացներն ավելի են սրում թե՛ քաղաքական եւ թե՛ հասարակական հակամարտությունը՝ վտանգելով ժողովրդավարական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, բազմակարծությունը, համագործակցությունը, հանրային վստահությունը, քաղաքակիրթ երկխոսությունը: **Նման իրավիճակը նաեւ սահմանադրաիրավական լուծումներ պահանջող հիմնախնդիր է, որին բազմիցս անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում, ինչպես նաեւ 2006 եւ 2007 թվականների տարեկան հաղորդումներում:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք առաջնահերթ լուծում են պահանջում: Դա առաջին հերթին վերաբերում է գործող ընտրական համակարգին: Այս համակարգի պայմաններում հետեւանքները միշտ նույնը կարող են լինել: Ընտրական համակարգի հիմքում պետք է լինի հնարավոր ընտրախախտումների բացառման սկզբունքը: Դրան հնարավոր է հասնել ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համակարգի արմատական բարեփոխման արդյունքում միայն: Հանրային վստահության բարձրացման եւ սահմանադրական հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան ընտրություններ կազմակերպելու համար որակապես նոր մոտեցում պետք է դրսևորվի նաեւ ընտրական գործընթացների բողոքարկման ողջ համակարգի նկատմամբ»:

ՀՀ Ազգային ժողովում նախապատրաստական աշխատանքներ են տարվում ընտրական օրենսգրքի հետագա բարեփոխումների ուղղությամբ: Սակայն դրանք չպետք է ավարտին հասցվեն հաջորդ ընտրությունների նախաշեմին եւ պետք է հաշվի առնվեն նաեւ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

Միանգամայն անընդունելի է այն հանգամանքը, որ 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո դեռեւս ընտրական օրենսգրքում շարունակում են տեղ գտնել դրույթներ, որոնք չեն համապատասխանեցվել սահմանադրական փոփոխություններին: Այդ հարցին անդրադարձել էր սահմանադրական դատարանն իր հիշյալ որոշման մեջ:

Սահմանադրական դատարանը կրկին ուշադրություն է հրավիրում այն

հանգամանքի վրա, որ ընտրական օրենսդրության առնչությամբ սահմանադրական դատարանի, մասնավորապես՝ 08.03.2008թ. ՄԳՈ-736 և 10.06.2007թ. ՄԳՈ-703 որոշումներում արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումների օրենսդրական ու կառուցակարգային ապահովման ուղղությամբ անելիքներն անհետաձգելի անհրաժեշտություն են:

ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատական սահմանադրական վերահսկողության բնագավառում տարվա արդյունքների ամփոփումից հետևում է.

1. Շարունակում է ձեռնարկված բնույթ կրել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնական ներկայացուցիչների դերը ՀՀ սահմանադրական դատարանում:

2. Պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք դեռեւս բավարար չափով հաշվի չեն առնում սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են եւ իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն: Մինչդեռ միջազգային սահմանադրական արդարադատության պրակտիկան միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձեռնարկում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար:

3. Դեռեւս չեն հաղթահարվել աղճատված եւ իրավական պետության սկզբունքներին անհարիր պատկերացումները սահմանադրական արդարադատության բովանդակության, էության եւ նշանակության վերաբերյալ: Ինչպես վերը նշվեց, ՀՀ Սահմանադրության 93 հոդվածը միանշանակ ամրագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով ամրագրված է, որ «Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը»: Այսբանով հանդերձ, 2007թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության

օրենսգրքի 135 հոդվածը սահմանում է, որ վարչական դատարանին ընդդատյա են «...գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»: Դա այն դեպքում, երբ առկա են նաև ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի պահանջները: Սահմանադրական դատարանը կրկին արձանագրում է, որ խնդիրը պարզապես մեխանիկական բացթողմանը կամ սահմանադրական արդարադատության էությանն անտեղյակ լինելուն չի վերաբերում: Սա այն փաստն է, որը վկայում է դատական իշխանությանն առնչվող համակարգային սխալի մասին, որն անհապաղ շտկման անհրաժեշտություն ունի: Հայաստանի Հանրապետությունը չի կարող լուրջ շեղում գրանցել սահմանադրական արդարադատության միջազգային զարգացման ընդհանուր միտումներից, որոնք երկրում ժողովրդավարական զարգացումների եւ անկախ արդարադատական համակարգի արմատավորման կարեւոր նախադրյալներ են:

4. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կրկին անդրադառնալ նախորդ հաղորդման մեջ ներկայացված մի խնդրի: Ինչպես նշվել է՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածը սահմանում է, որ.

«1. Սահմանադրական դատարանը, իսկ գործը դատաքնության նախապատրաստելու կապակցությամբ նաև սահմանադրական դատարանի կողմից որպես տվյալ գործով զեկուցող նշանակված սահմանադրական դատարանի անդամը (անդամները: սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու է (են: պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, եզրակացություններ եւ այլ նյութեր, հանձնարարելու կատարել ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձաքննություններ, հետազոտություններ, իսկ ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից՝ պահանջելու նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր:

2. Սահմանադրական դատարանի եւ զեկուցողի պահանջները եւ հանձնարարականները (այսուհետ՝ պահանջ) պետք է կատարվեն սահմանադրական դատարանի կամ զեկուցողի սահմանած ժամկետում:

Եթե այդ ժամկետում սահմանադրական դատարանի կամ զեկուցողի պահանջների կատարումն անհնարին է, ապա պահանջի հասցեատերը պարտավոր է պահանջի կատարման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երեք օր առաջ սահմանադրական դատարանին կամ զեկուցողին գրավոր իրազեկել ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին: Սահմանադրական դատարանը եւ զեկուցողը կարող են երկարաձգել պահանջի կատարման ժամկետը կամ պահանջները վերահասցեագրել մեկ այլ մարմնի (անձի): Հակառակ դեպքում ուժի մեջ է մնում սահմանադրական դատարանի կամ զեկուցողի արդեն իսկ սահմանած ժամկետը:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանադրական դատարանի պահանջները չկատարվելու կամ ոչ պատշաճ կա-

տարվելու, դրանց կատարումից խուսափելու կամ կատարման ժամկետները խախտելու դեպքում սահմանադրական դատարանն այդ մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ կարող է նշանակել օրենքով սահմանված պատասխանատվության միջոց:

Պատասխանատվության միջոցի նշանակումը չի ազատում սահմանադրական դատարանի պահանջների կատարումից:

Սույն մասում նշված գործողությունների կամ անգործության համար ֆիզիկական անձինք կամ իրավաբանական անձի ղեկավարը կարող են տուգանվել՝ օրենքով սահմանված չափով:

4. Պատասխանատվության միջոց նշանակվելուց հետո սահմանադրական դատարանի պահանջները վերստին չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ դրանց կատարումից խուսափելը կամ կատարման ժամկետները խախտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն»:

Սահմանադրական դատարանը կրկին արձանագրում է, որ սույն հոդվածի պահանջների կատարումը շարունակում է ձեռնարկել կրել, քանի որ նշված պատասխանատվության միջոցները դեռևս օրենքով սահմանված չեն: Նույնը վերաբերում է նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66 հոդվածի պահանջներին: Ի տարբերություն մի շարք երկրների՝ ՀՀ սահմանադրական դատարանն օրենսդրական նախաձեռնության իրավունք չունի: Նման հարցերը պետք է լուծվեն ՀՀ Ազգային ժողովի օրենսդրական համակարգված քաղաքականության շրջանակներում:

5. Տարբեր գործերի քննությունը եւ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում են, որ գործնականում դեռևս չի ապահովվել ՀՀ Սահմանադրության 117 հոդվածի 1-ին կետի պահանջների կատարումը: Միաժամանակ, մի շարք իրավական ակտեր (հատկապես դատական համակարգի վերափոխումների մասին և այլն), ՀՀ միջազգային պարտավորությունների շրջանակներում չանցնելով անհրաժեշտ փորձաքննություն, սահմանադրականության հարցերով ստեղծում են բազմաթիվ խնդիրներ: Համակարգային բարեփոխումների հատկապես երկրորդ փուլում մասն հարցերն ավելի են կարեւորվում, եւ Հայաստանի Հանրապետությունը պետք է առավել հետետողական մոտեցում դրսևտրի ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան իշխանությունների բաժանման ու հավասարակշռման եւ իրավունքի գերակայության սկզբունքների արմատավորման նկատմամբ: Ներկայումս առավել քան հրատապ են դառնում ինչպես Սահմանադրության գերակայության երաշխավորման, այնպես էլ Սահմանադրության անմիջական գործողության ապահովման խնդիրները:

Իրավակիրառական պրակտիկայում չեն տարբերակվում «Սահմանադրության անմիջական գործողություն» եւ «սահմանադրական նորմի անմիջական կիրառում» հասկացությունները: Դատական մարմինների կողմից սահմանադրական նորմի անմիջական կիրառումն ընդհանրապես անհնարին է, երբ խոսքը վերաբերում է քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվությանը: Միայն սահմանադրական պատասխանատվության հարցերն են անմիջականորեն կարգավորվում սահմանադրական նորմերով՝ բավարար հս-

տակությամբ, որ հնարավոր լինի դրանց անմիջական կիրառումը: Նույնիսկ այս դեպքում օրենքը որոշակի ընթացակարգ է սահմանում:

Պետք է տարբերակել «...մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները՝ որպէս անմիջական գործող իրավունք» (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 3) եւ «Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն» (հոդվ. 6) հասկացությունները «սահմանադրական նորմերի կիրառում» հասկացությունից: Նախ. «...մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները՝ որպէս անմիջական գործող իրավունք» դրույթն անհնարին է առանձին մեկնաբանել՝ կտրելով Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի այն դրույթից, որ պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով եւ ազատություններով՝ որպէս անմիջականորեն գործող իրավունք: Վերջինս իր հերթին ենթադրում է, որ այդ իրավունքներն են պայմանավորում օրենքների բնույթն ու բովանդակությունը, դրանց կիրառումը, ինչպէս նաեւ օրենսդիր, գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը եւ ապահովվում են արդարադատության կողմից: Այստեղից հետեւում է, որ այդ իրավունքներն անմիջականորեն պարտավորեցնում են օրենսդիրն երաշխավորել այդ իրավունքները՝ դրանք դնելով օրենսդրության հիմքում, գործադիրին՝ չխախտել այդ իրավունքները, դատական իշխանությանը՝ ապահովել ու պաշտպանել դրանք:

Անմիջական կիրառումը բոլորովին այլ իմաստ ունի: Մասնավորապէս, դատարանների կողմից պարզապէս սահմանադրական նորմին հղում կատարելը բավարար չէ: Անհրաժեշտ է, որ դատարանն ապահովի եւ պաշտպանի սահմանադրական իրավունքը կամ սահմանադրական նորմը հիմք ընդունելով (որքանով դա հնարավոր է եւ եթէ տվյալ իրավահարաբերությունն օրենսդրորեն հստակ կանոնակարգված չէ)՝ իրականացնի արդարադատություն: Այս պարտականությամբ է պայմանավորված նաեւ դատարանների կողմից սահմանադրական դատարան դիմելու անհրաժեշտությունը: Փաստն այն է, որ 2008թ. սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված բոլոր օրենքների նորմերը (թվով 10 գործերով՝ 18 քաղաքացիների դիմումների հիման վրա) նախապէս կիրառվել են դատարանների կողմից եւ ապա քաղաքացիները դրանց սահմանադրականությունը վիճարկել են սահմանադրական դատարանում: Դատարաններն օրենքների դրույթների սահմանադրականության հարցին բավարար ուշադրություն չեն դարձրել ընդհուպ այն դեպքերում, երբ քաղաքացիները նման խնդիր են առաջադրել:

Սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը միաժամանակ ենթադրում է իշխանության մարմինների, հանրային իրավունքի բոլոր սուբյեկտների համարժեք պարտականություններ այդ իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության գծում: Անձը՝ իր սուբյեկտիվ իրավունքներով, ստանում է առանձնահատուկ սահմանադրական կարգավիճակ եւ հանդես է գալիս որպէս սահմանադրական իրավահարաբերությունների կրող, որը գերակա է այլ բնույթի իրավահարաբերությունների նկատմամբ: Այս իրավահարաբերությունների իմաստն այն է, որ անձը պետության հետ

իրավահարաբերություններում հանդես է գալիս ոչ թե որպես պետական գործունեության օբյեկտ, այլ որպես պետության հետ հավասար իրավասուբյեկտ:

Այս տրամաբանությունից ելնելով՝ մեր իրավական համակարգում, հատկապես օրենսդրական քաղաքականությունն իրականացնելիս, առավել մեծ ուշադրություն պետք է դարձվի հանրային իրավական հարաբերությունների եւ հանրային իրավական բնույթ ունեցող վեճերի լուծման առանձնահատկություններին՝ հաղթահարելով նախկին իրավամտածողության ինտերցիան:

6. Սահմանադրական դատարանի որոշումներն առաջին հերթին վերաբերում են իրավաստեղծ եւ իրավակիրառական պրակտիկային եւ որոշակի գործողություններ ձեռնարկելու պարտավորություն են պարունակում: Հատկապես սահմանադրական դատարանի կողմից օրենսդրական բացերի արձանագրումը չի կարող մնալ անհետեւանք: Սահմանադրական դատարանի որոշումից պարտավորություն է ծագում՝ պատշաճ իրավական կարգավորմամբ լրացնել օրենքի բացը եւ վերացնել ոչ որակյալ իրավական կարգավորումը: Օրենսդրի կողմից որոշումն անարձագանք թողնելը կամ մնան բացի մասնակի լրացումը դիտվում է որպես իրավակարգի անոմալիա:

Հայաստանում օրենքի բացի հաղթահարման խնդիրը պետք է դառնա օրինաստեղծ քաղաքականության առանցքային հարցերից մեկը:

Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասը սահմանում է, որ «Անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ»: Սակայն իրավակիրառական պակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս պահանջի հաշվառմամբ ենթաօրենսդրական ակտերի՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին համապատասխանեցման ուղղությամբ տարվող աշխատանքները հստակ կանոնակարգված բնույթ չեն կրում: Դա առաջին հերթին վերաբերում է ՀՀ կառավարության որոշումներին:

**ՀԱՎԵԼՎԱԾ՝
ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2008թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
73 ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 02.10.2007թ. մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հետագոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002թ. նոյեմբերի 19-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. մարտի 31-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. ապրիլի 10-ից:

Օրենքի 73 հոդվածը, որը շարադրված է «Անցումային դրույթներ» 14-րդ գլխում, սահմանում է. «Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով հաշվարկված ստաժին համապատասխան՝ հաշվի առնելով սույն օրենքի 17-19-րդ հոդվածներին համապատասխան սահմանված հիմնական կենսաթոշակի չափը, ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը եւ կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

Լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով եւ համարվում է նոր նշանակում:

Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով»:

2. Դիմող կողմը վիճարկում է օրենքի 73 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասին՝ այն հիմնավորմամբ, որ այդ դրույթը, վատթարացնելով քաղաքացիների իրավական վիճակը, կիրառվում է հետադարձ ուժով: Մինչդեռ, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերին, ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան, չի կարող հետադարձ ուժ տրվել:

Դիմողը փաստում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի համաձայն մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացառությամբ նույն օրենքի 48 հոդվածով սահմանված կարգի: Նշված 48 հոդվածը, սակայն, առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքը չի դիտում որպես ստաժի հաշվարկման առանձնահատկություն: Մինչդեռ, նախկինում գործող «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի համաձայն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատելու ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկվում էր մեկուկես անգամ:

Դիմողը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասը՝ նույն օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ փոխադարձ կապի մեջ, մինչեւ օրենքի ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած եւ կենսաթոշակի

նշանակումից հետո աշխատանքային գործունեությունը շարունակած անձանց կենսաթոշակային իրավունքները գնահատելիս կամ բացառում է նշված հիմքով աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկումը, կամ թույլ չի տալիս ապահովագրական ստաժում հաշվարկել կենսաթոշակի նշանակումից հետո իրականացված աշխատանքային գործունեության այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կատարվել են սոցիալական ապահովագրության վճարները: Դրանով օրենքը վատթարացնում է քաղաքացիների վիճակը եւ վերացնում նախկինում գործող օրենսդրությամբ ձեռք բերված նրանց իրավունքները, ուստի պատկանում է այն նորմերի թվին, որոնց չի կարող հետադարձ ուժ տրվել:

3. Ըստ պատասխանող կողմի՝ դիմողի փաստարկները հիմնավոր են, վիճարկվող նորմով հետադարձ ուժ է տրվել քաղաքացիների իրավական վիճակը վատթարացնող դրույթի, վերացվել է նախկինում գործող ՀՀ օրենսդրությամբ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատելու համար քաղաքացիներին տրվող արտոնությունը՝ կապված այդպիսի պայմաններում աշխատելու ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկելու առանձնահատկությունների հետ:

Պատասխանող կողմն ակնհայտ համարելով վիճարկվող նորմի հակասությունը ՀՀ Սահմանադրությանը՝ գտնում է նաեւ, որ օրենքի վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում առանձնապես վնասակար եւ առանձնապես ծանր պայմաններում աշխատած անձանց համար ապահովագրական ստաժի հաշվարկման խնդիրը չի լուծվում: Այս առումով, թերեւս, անհրաժեշտություն կառաջանա խնդիրը լրացուցիչ կարգավորել օրենսդրական մակարդակում:

4. ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասն ամրագրում է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքը: Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության եւ իրավական պետության սկզբունքների կարեւոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարեւոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաեւ ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով:

5. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածը սահմանում է մինչեւ այդ օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման կարգը: Օրենսդիրն այդ կարգը սահմանելիս տարբերակել է կենսաթոշակը վերահաշվարկելու հետեւյալ երկու իրավիճակները.

- երբ կենսաթոշակի վերահաշվարկը կատարվում է արդեն իսկ գործում առկա փաստաթղթերի հիման վրա,

- երբ ներկայացվում են ստաժը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր:

Առաջին դեպքում, նախկինում նշանակված կենսաթոշակը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված նոր կարգով վերահաշվարկելիս հիմք է ընդունվում նախկինում գործող «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 06.12.1995թ., ուժը կորցրել է 10.04.2003թ.) հիման վրա հաշվարկված աշխատանքային ստաժը: Այդ օրենքի 30 հոդվածի համաձայն, որը սահմանում էր աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը, առանձնապես վնասակար եւ առանձնապես ծանր պայմաններում աշխատելու ժամանակահատվածում աշխատանքային ստաժը հաշվարկվում էր մեկ եւ կես անգամ: Հաշվի առնելով, որ, ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 1-ին մասի, նախկինում նշանակված կենսաթոշակը նշված օրենքով սահմանված կարգով վերահաշվարկելիս հիմք է ընդունվում արդեն իսկ հաշվարկված ստաժը, ապա վերահաշվարկելիս պահպանվում է աշխատանքային ստաժի այն արտոնյալ հաշվարկման կարգը, որը գործել է «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի հիմա վրա:

Մինչդեռ, երկրորդ դեպքում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելիս նախկինում նշանակված կենսաթոշակն այդ օրենքով սահմանված նոր կարգով վերահաշվարկելիս այդ օրենքի հիման վրա է հաշվարկվում եւ՝ ստաժի այն հատվածը, որն արդեն հիմնավորված է գործում առկա փաստաթղթերով, եւ՝ լրացուցիչ փաստաթղթերով ներկայացված ստաժը: Իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացառությամբ այդ օրենքի 48 հոդվածով սահմանված կարգի: Վերջինս էլ, իր հերթին, առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքը չի դիտում որպես ստաժի հաշվարկման առանձնահատկություն: Ուստի կենսաթոշակը նշված դրույթների հիման վրա վերահաշվարկելիս չի պահպանվում առանձնապես վնասակար եւ առանձնապես ծանր պայմաններում աշխատանքի ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը:

Օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման կարգավորման արդյունքում վերահաշվարկ կատարելիս մեծ մասամբ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ վերահաշվարկված գումարն ավելի նվազ լինի, քան նախկինում նշանակվածը, օրենքի 73 հոդվածի 3-րդ մասով նախատեսել է, որ եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչեւ այդ օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Սակայն այս դրույթը լիովին չի լուծում քաղաքացու համար վերահաշվարկի արդյունքում ստեղծվող բացասական հետեւանքները վերացնելու խնդիրը: Նման կարգավորման արդյունքում, թեեւ ապահովվում է նախկինում հաշվարկված կենսաթոշակի չափը, այնուամենայնիվ, կարող է առաջանալ մի իրավի-

ճակ, երբ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանք կատարած անձի՝ լրացուցիչ փաստաթղթերով հիմնավորվող ստաժն ընդհանրապես անտեսվի եւ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացումն իմաստ չունենա, քանի որ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման դեպքում նոր կարգով վերահաշվարկելիս կենսաթոշակի նախկինում հաշվարկված չափը կարող է նվազել:

6. Մինչեւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած եւ կենսաթոշակի նշանակում ստացած անձեքն ակնկալիք են ունեցել, որ իրենց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման արտոնյալ կարգով: Սակայն նույն օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի ուժով այդ արտոնյալ կարգը վերացվել է՝ անտեսելով նաեւ նշված պայմաններում աշխատած անձանց ակնկալիքն առայն, որ իրենց կենսաթոշակը հաշվարկվելու է արտոնյալ կարգով: Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածը, ի թիվս այլ սկզբունքների, որպես պետական կենսաթոշակային ապահովության եւ պետական կենսաթոշակային ապահովագրության կազմակերպման եւ իրականացման սկզբունք ամրագրում է նաեւ սոցիալական համերաշխության եւ սոցիալական արդարության ապահովումը: Սոցիալական արդարության սկզբունքը պահանջում է, որ որոշակի առավելություններ ու արտոնություններ տրամադրվեն վնասակար եւ ծանր պայմաններում աշխատող անձանց:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի 73 հոդվածով նախատեսված կարգավորման արդյունքում կարող է առաջանալ նաեւ օրենքի առջեւ հավասարության սկզբունքի ապահովման հետ կապված խնդիր: Սահմանելով վերահաշվարկման կարգը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու եւ չներկայացնելու պարագայում, օրենքի վիճարկվող նորմը տարբերակված մոտեցում է ցուցաբերում նույն ժամանակահատվածում նույն պայմաններում ձեռք բերված աշխատանքային ստաժի հաշվարկման կարգի նկատմամբ: Օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի կիրառման արդյունքում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ միեւնույն ժամանակահատվածում միեւնույն պայմաններում աշխատած անձանց համար սահմանվեն կենսաթոշակի տարբեր չափեր: Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է, եթե առկա չէ օբյեկտիվ եւ պատճառաբանված արդարացում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարբերակված մոտեցման հիմքում ընկած այնպիսի ձեւական հանգամանքը, ինչպիսին, ի հիմնավորումն աշխատանքային ստաժի, լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու հանգամանքն է, չի կարող դիտվել որպես օբյեկտիվ, իրավաչափ եւ ողջամիտ արդարացում:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը եւ վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի եւ իրավական որոշակիության սկզբունքների իրացումը: Մինչդեռ, օրենքի վիճարկվող նորմն առնչվել է բազմաթիվ մարդկանց իրավունքներին: Միաժամանակ, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի ներկայացրած տեղեկանքի համաձայն՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո արտոնյալ պայմաններով կենսաթոշակների վերահաշվարկման արդյունքում ապահովագրական ստաժը պակասել է 14.826 տարով (ամսական 3.4 մլն դրամով):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասին հակասող եւ անվավեր:
2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել նաեւ դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**15 հունվարի 2008 թվականի
ՍԳՈ-723**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԾՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
(19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ, ՀՕ-519-Ն) 47 ՀՈԳՎԱԾԻ
2-ՐԳ ԵՎ 3-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

հրավիրված՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Վ. Խաչիկյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (19 նոյեմբերի 2002 թվականի, ՀՕ-519-Ն) 47 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 02.10.2007թ. մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող կողմի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, սահմանադրական դատարանում ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչների վերլուծությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաս-

տանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին եւ ուժի մեջ մտել 2003 թվականի ապրիլի 10-ից:

Օրենքի 47 հոդվածը՝ հաշվի առնելով 2007թ. նոյեմբերի 19-ի ՀՕ-247-Ն օրենքով կատարված փոփոխությունը, սահմանում է. «Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը եւ անհատական հաշվառման բազայի ձեւավորումն ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է, իսկ 1992թվականի հունվարից սկսած՝ նաեւ սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի»:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

Դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652 (կետ 6), 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665 (կետ 5), 2007թ. հունվարի 16-ի ՍԴՈ-673 (կետեր 8-9), 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշումներում:

2. Դիմող կողմը գտնում է, որ իր կողմից վիճարկվող դրույթը, համաձայն որի՝

«Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի», հակասում է ՀՀ Սահմանադրությանը՝ հետեւյալ պատճառով:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Սոցիալական իրավունքների շարքում առանձնակիորեն կարեւորվում է քաղաքացիների կենսաթոշակային իրավունքը, որն իր կարգավորումն է ստանում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքով սահման-

վում են կենսաթոշակի նշանակման համար կիրառվող գործակիցները, որտեղ կարելի է նշանակություն է տրվում ապահովագրական ստաժին: Հետևաբար, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվող՝ ստաժի հաստատմանը վերաբերող ժամկետի սահմանափակումը եւ պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում դրա հաստատման արգելքը խախտում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից յուրաքանչյուրի օգտվելու սահմանադրական իրավունքը:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի հարցադրումները հիմնավոր են եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ Սահմանադրության առանձին դրույթների անհամապատասխանության խնդրի առկայությունն ակնհայտ է հետեւյալ պատճառաբանությամբ: Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները եւ պարտականությունները..., ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի եւ հրապարակային դատաքննության իրավունք»: Նույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»: Իսկ ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: Փաստորեն, օրենքով սահմանափակվել է քաղաքացիների՝ կենսաթոշակային իրավունքների պաշտպանության նպատակով դատական պաշտպանության դիմելու իրավունքը:

4. Օրենքը՝ որպես պետական կենսաթոշակային ապահովության եւ պետական կենսաթոշակային ապահովագրության կազմակերպման եւ իրականացման սկզբունք, ի թիվս այլոց, ամրագրում է պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության պարտադիրության սկզբունքը եւ անհատական (անձնավորված) ապահովագրական հաշիվներում արտացոլվող՝ կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների մասին տեղեկատվության հիման վրա կենսաթոշակների նշանակման եւ վճարման ապահովման սկզբունքը: Այս սկզբունքներին համապատասխան՝ օրենքը, կենսաթոշակի չափը պայմանավորելով կատարված ապահովագրական վճարումներով եւ ապահովագրական ստաժի տեւողությամբ (հոդված 40), ապահովագրական կենսաթոշակի (տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի) իրավունք է վերապահում միայն այն անձանց, ովքեր կատարել են պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության

վճարումներ: Մասնավորապես, ապահովագրական տարիքային կենսաթոշակի իրավունքը վերապահվում է 63 տարին լրացած անձանց՝ 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում:

Ըստ օրենքի տրամաբանության՝ կատարված ապահովագրական վճարումներով եւ ապահովագրական ստաժի տեւողությամբ է պայմանավորվում կենսաթոշակի չափը: Այս եզրահանգումն ուղղակիորեն բխում է օրենքի 40 հոդվածից եւ անուղղակիորեն՝ օրենքով ամրագրված առանձին սկզբունքներից եւ դրույթներից (մասնավորապես՝ օրենքի 2, 9 հոդվածներ):

Այն դեպքում, երբ անձը զրկված է փաստացի ապահովագրական ստաժը հաստատելու հնարավորությունից, այս տրամաբանությունը խախտվում է, քանզի հնարավոր է, որ անձը փաստացիորեն կատարել է ապահովագրական վճարումներ, սակայն համապատասխան փաստաթղթեր չունենալու պատճառով զրկվում է այդ վճարումների կատարմամբ պայմանավորված չափով կենսաթոշակ ստանալու հնարավորությունից:

5. Օրենքի հիման վրա ձեւավորվում է կենսաթոշակային ապահովագրության ենթակա անձանց անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների միասնական բազա: Կենսաթոշակային սոցիալական ապահովագրության բազայի տվյալներն օգտագործվում են կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու), վճարելու համար: Օրենքի ուժի մեջ մտնելուց եւ նշված անհատական հաշվառման բազայի ձեւավորումից հետո ապահովագրված անձի ձեռք բերած ապահովագրական ստաժը հաշվարկվում է անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների հիման վրա: Իսկ մինչ այդ ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաշվառվում է ապահովագրական ստաժում համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Համաձայն օրենքի 47 հոդվածի՝ այդ փաստաթղթերն են՝ աշխատանքային գրքույկը, իսկ 1992թ. հունվարից սկսած՝ նաեւ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշումը սահմանում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք հաստատում են ապահովագրական ստաժը՝ աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում:

Ինչպես օրենքի վիճարկվող, այնպես էլ մյուս դրույթների վերլուծությունը վկայում է, որ ապահովագրական ստաժի հաստատման խնդիր կարող է առաջանալ միայն մինչեւ վիճարկվող օրենքի դրույթի հիման վրա կենսաթոշակային ապահովագրության ենթակա անձանց անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների միասնական բազայի ստեղծումը ձեռք բերված ապահովագրական ստաժի կապակցությամբ:

6. Համաձայն օրենքի 12 հոդվածի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու նախապայման է հանդիսանում 25 տարվա ապահովագրական ստաժի (պահանջվող ստաժ) առկայությունը: Օրենքի 16 հոդվածի համաձայն՝ կենսաթոշակի չափը հաշվարկվում է կենսաթոշակի հիմնական եւ ապահովագրական

մասերի գումարից: Կենսաթոշակի ապահովագրական մասը հաշվարկվում է մինչև անձնավորված հաշվառման ներդրումը ձեռք բերված ապահովագրական ստաժի եւ անձնավորված հաշվառման ներդրումից հետո անհատական ապահովագրական հաշիվներում արտացոլվող՝ կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների մասին տեղեկատվության հիման վրա: Օրենքի 16 հոդվածում տրվում է կենսաթոշակը հաշվարկելու բանաձեւը:

Նշված բանաձեւի վերլուծությունը վկայում է, որ կենսաթոշակի չափը որոշելիս էական նշանակություն ունի ոչ միայն պահանջվող ապահովագրական ստաժը, այլև՝ փաստացի ապահովագրական ստաժը:

7. Գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Ապահովագրական ստաժը հանդիսանում է այն իրավաբանական փաստը, որի հիման վրա ծագում է ապահովագրական կենսաթոշակի իրավունքը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ գլուխը նվիրված է իրավաբանական փաստերի հաստատման վերաբերյալ գործերի քննության կարգին: Նշված օրենսգրքի 189 հոդվածը սահմանում է այն իրավաբանական փաստերի ոչ սպառիչ ցանկը, որոնք ենթակա են դատարանի կողմից հաստատման: Այդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ դատարանը, օրենքով նախատեսված դեպքերում, քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր: Ըստ քննության առարկա հանդիսացող նորմերի՝ օրենսդիրն աշխատանքային ստաժը հաստատելու իրավասությունը վերապահել է դատարանին, սակայն, միաժամանակ, վիճարկվող դրույթով այդ իրավասության իրականացումը ենթարկել է ձեւական հիմքով սահմանափակումների՝ անձին գրկելով իր իրավունքի ծագման համար անհրաժեշտ իրավաբանական փաստը հաստատելու նպատակով դատարան դիմելու եւ դատարանին՝ իրեն օրենքով վերապահված իրավասությունն արդյունավետորեն եւ լիարժեքորեն իրականացնելու հնարավորությունից:

8. Օրենսդրությամբ թույլատրված է իրավաբանական փաստերը հաստատել ոչ միայն դատական կարգով, այլ նաեւ՝ վարչական, նոտարական կարգով եւ այլ մարմինների կողմից:

Վիճարկվող օրենքի 48 հոդվածը եւս նախատեսում է ապահովագրական ստաժի հաստատման վարչական կարգ: Այդ հոդվածի 5-րդ կետը, մասնավորապես, սահմանում է, որ պատերազմների, ռազմական գործողությունների, տարերային աղետների, վթարների, արհավիրքների եւ այլ արտակարգ իրավիճակների հետևանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծում է ապահովագրական ստաժ սահմանող հանձնաժողովներ, որոնց կազմի մեջ մտնում են գործադիր իշխանությունների, գործատուների, արհմիությունների կամ աշխատողների կողմից լիազորված այլ ներկայացուցիչներ: Նման հանձնաժողով ստեղծվել է ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի թիվ

820-Ն՝ «1988 թվականի երկրաշարժի հետեւանքով Սպիտակի նախկին վարչական շրջանի տարածքի քաղաքացիների ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության պատճառով ապահովագրական ստաժ սահմանող հանձնաժողով ստեղծելու եւ հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» որոշմամբ:

Օրենքի 48 հոդվածի 5-րդ կետի գործողության շրջանակը, սակայն, որոշակիորեն սահմանափակ է, այն է՝ այս դրույթն առնչվում է միայն այն դեպքերին, երբ փաստաթղթերը չեն պահպանվել այդ հոդվածում նշված արտակարգ (ֆորսմաժորային) հանգամանքների պատճառով:

Սակայն, նույնիսկ ապահովագրական ստաժի վերոհիշյալ վարչական կարգով հաստատման հնարավորության առկայությունը չպետք է անձանց գրկի իրավաբանական փաստերի հաստատման խնդրով դատարան դիմելու իրավունքից, քանզի ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը երաշխավորում է քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության չսահմանափակվող հնարավորություն:

Միեւնոյն ժամանակ, հարկ է նկատել, որ, ի տարբերություն ապահովագրական ստաժի դատական կարգով հաստատման, ապահովագրական ստաժի՝ վարչական կարգով հաստատման դեպքում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ապահովագրական ստաժի որեւէ ժամկետային սահմանափակում, ինչը ոչ միայն չի ապահովում միեւնոյն հասարակական հարաբերության կարգավորման միասնականությունը, այլեւ անձի շահերի տեսանկյունից անիմաստ է դարձնում արտակարգ իրավիճակների հետեւանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի կորստի դեպքում դատական պաշտպանության իրավունքից օգտվելը:

9. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենքի այլ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներն առնչվում են ոչ միայն Սահմանադրության 18 հոդվածին, այլ նաեւ Սահմանադրության այլ հոդվածների պահանջներին: Մասնավորապէս, ՀՀ Սահմանադրության 37 հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձեւերը սահմանվում են օրենքով»:

Այս հոդվածի բովանդակությունից բխում է, որ ՀՀ Ազգային ժողովին է պատկանում կենսաթոշակների ծավալները եւ ձեւերը, դրանց նշանակման պայմանները եւ կարգը սահմանելու լիազորությունը: Կենսաթոշակի նշանակման պայմանները բավարարելու դեպքում անձը ձեռք է բերում կենսաթոշակի իրավունք, իսկ պետության վրա դրվում է այդ իրավունքի իրականացումն ապահովելու պարտականություն: Անձին գրկելով իր ունեցած փաստացի ապահովագրական ստաժը հաստատելու հնարավորությունից, օրենսդիրն ուղղակիորեն սահմանափակում է անձի սոցիալական ապահովության իրավունքի մաս կազմող կենսաթոշակի իրավունքը: Այդ սահմանափակումը, մասնավորապէս, կարող է

դրսետրվել նրանում, որ հնարավորություն չունենալով ապացուցել պահանջվող ստաժը (25 տարի) գերազանցող ապահովագրական ստաժի առկայությունը՝ անձը գրկվում է ավելի շատ կենսաթոշակ ստանալու հնարավորությունից, քանզի ապահովագրական ստաժի՝ պահանջվող ստաժը գերազանցող տարիներն էական նշանակություն ունեն կենսաթոշակի չավիը որոշելիս:

10. ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածն ամրագրում է օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը:

Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաեւ իրավունքի գերակայության եւ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձեւերը, դրանց նշանակման կարգը եւ պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձեւական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միեւնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջեւ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 37 հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**29 հունվարի 2008 թվականի
ՍԳՈ- 731**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ 5 ՀՈԳՎԱԾԻ ԵՎ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115 ՀՈԳՎԱԾԻ
ԳՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 փետրվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի,
Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պա-
պայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող քաղ. Ա. Հարությունյանի ներկայացուցիչ Հ. Ալումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդա-
կան Գ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի
6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Աշոտ Հա-
րությունյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի
հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փո-
փոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի եւ
2004 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունված՝ ՀՀ քրեակատարողական
օրենսգրքի 115 հոդվածի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատաս-
խանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Հարությունյանի՝ սահմանադրական դա-
տարանում 03.07.2007թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող
կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա օրենք-
ները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 24-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 18-ին, ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 10-ին: Օրենսգրքի վիճարկվող 115 հոդվածը փոփոխվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով, որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2006թ. հունիսի 16-ին եւ ուժի մեջ է մտել 2006թ. հուլիսի 21-ին: Նշված օրենքով օրենսգրքի 115 հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ: Այն փոփոխվել է նաեւ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-268-Ն օրենքով, որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007թ. դեկտեմբերի 8-ին եւ ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 2007թ. դեկտեմբերի 19-ին:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի հիման վրա օրենսգրքի վեճի առարկա 115 հոդվածը վերնագրված է. «ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԶԿՐԱԾ ՄԱՍՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»: Հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«1. Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում:

2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատա-

րան ներկայացվող միջնորդագրի հետ ներկայացվում է նաև դատապարտյալի անձնական գործը:

3. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշումը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի՝ հավանություն չտալու մասին որոշումն ստանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննարկում է հավանություն չտալու որոշումը կայացվելուց երեք ամիս անց, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը դատարանի կողմից մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդություն կրկին կարող է ներկայացվել դատարան մերժման որոշումը կայացվելուց վեց ամիս անց, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

4. Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումները օրենսդրությանը հակասելու դեպքում կարող են բողոքարկվել դատական կարգով: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. նոյեմբերի 13-ին նույնպես փոփոխություններ են կատարվել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա գործի հետ անմիջական առնչություն ունեցող 114 եւ 115 հոդվածներում եւ օրենսգիրքը լրացվել է նոր՝ 1151 հոդվածով: Համաձայն այդ փոփոխությունների՝ օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ մասում «Դատապարտյալին» բառը փոխարինվել է «Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին» բառերով: Այդ մասը լրացվել է նաև հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով. «Կարգապահական գումարտակի հրամանատարության կողմից կարգապահական գումարտակում պատիժ կրող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը ներկայացվում է սույն օրենսգրքի 1151-րդ հոդվածին համապատասխան»:

Օրենսգրքի 115 հոդվածի վերնագիրը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման կարգը»: Նույն հոդվածի 4-րդ մասից հանվել է «օրենսդրությանը հակասելու դեպքում» բառերը:

Օրենսգրքի 1151 հոդվածը վերնագրված է «Կարգապահական գումարտա-

կում պահելու դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման կարգը»: Այն նախատեսում է.

«1. Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում կարգապահական գումարտակի հրամանատարը մեկամսյա ժամկետում պարտադիր միջնորդագիր է ներկայացնում դատարան՝ կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ:

2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագրի հետ դատարան է ներկայացվում նաև դատապարտյալի անձնական գործը:

3. Դատարանի կողմից միջնորդությունը մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդությունը կրկին կարող է ներկայացվել դատարան՝ մերժման որոշումը կայացվելուց հետո ոչ շուտ, քան վեց ամիս անց:

4. Կարգապահական գումարտակի հրամանատարի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը չկատարելը կարող է բողոքարկվել դատական կարգով»:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-67-Ն օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի հունիսի 13-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 16-ին, ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 21-ին: Օրենքի 5 հոդվածով փոփոխության է ենթարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածը, որի 1-ին մասից հանվել է հետեւյալ բովանդակությամբ երրորդ նախադասությունը. «Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու եւ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին միջնորդագիր դատարան կարող են ներկայացնել նաև դատապարտյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-91-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի մայիսի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 20-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 8-ին, նույնպես կատարվել է (հոդվ. 107) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածի ճիշտ նույնաբովանդակ փոփոխություն: Պատասխանող կողմի բացատրությամբ դա ընդունվել է «...ժամանակային փոքր տարբերությամբ» եւ «...ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկման առարկա հանդիսացող դրույթի առումով իրավական հետեւանք չի առաջացնում»: Սահմանադրական դատարանը, երեւութն արտառոց գնահատելով հանդերձ, գտնում է, որ նման իրավիճակում սահմանադրականության հարցով դատարանի կողմից ընդունվող որոշումը հավասարապես պետք է վերաբերի օրենքի հիշյալ երկու փոփոխություններին:

2. Դիմող կողմը վիճարկում է նշված ՀՀ ՀՕ-67-Ն օրենքի 5 եւ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 4-րդ մասին՝ համակցված 43 եւ 44 հոդվածների հետ, այն հիմքով, որ վիճարկվող հոդվածների դրույթներով դատապարտյալները զրկվել են վաղաժամկետ ազատելու միջնորդագրով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից:

Դիմող կողմն օրենսգրքի 115 հոդվածի սահմանադրականությունը վիճարկում է նաեւ այն հիմքով, որ այն ոչ միայն դատապարտյալին զրկում է անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից՝ ստեղծելով երկակի միջնորդավորված կարգ, այլ նաեւ այն հիմքով, որ թույլ չի տալիս բողոքարկել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները:

Դիմող կողմը գտնում է, որ ոչ միայն խախտվել է Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված իր իրավունքը, այլեւ հաշվի չեն առնվել նաեւ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2003) 22 հանձնարարականի պահանջները՝ պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը հնարավորություն չի տալիս դատապարտյալին անմիջականորեն դիմել դատարան, իսկ նույն հոդվածի 4-րդ մասն անձին զրկում է իր իրավունքների ու ազատությունների «...ենթադրյալ խախտումը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից»: Ըստ դիմողի՝ վիճարկվող օրենքները հակասում են Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 4-րդ մասին, որոնք պետության վրա պոզիտիվ պարտավորություն են դնում ապահովելու դատապարտյալի՝ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը, ինչպես նաեւ այդ իրավունքի խախտման դեպքում՝ արդյունավետ պաշտպանության միջոցներ տրամադրելու իրավունքը: Դա ենթադրում է, որ պետք է լինի մարմին, որն իրավասու է քննարկել պատիժը մեղմացնելու հարցը, իսկ այն դեպքում, եթե հարցը քննարկելու ժամանակ խախտվել են անձի իրավունքները եւ (կամ) ազատությունները, ապա՝ մարմին, որն իրավասու է վերականգնել խախտված իրավունքները: Ըստ դիմողի՝ այդ մարմինները դատարաններն են, սակայն վեճի առարկա օրենքները դատարաններին զրկել են այդ լիազորություններից:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գտնում է, որ ՀՀ Սահմանադրության հիշատակվող նորմերի պահանջները հստակ ապահովվում են ՀՀ օրենսդրությամբ: Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասով երաշխավորված իրավունքը «...պետության կողմից ստեղծված իրավասու մարմիններին դիմելու յուրաքանչյուր դատապարտյալին ընձեռված հնարավորություն է», իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածը նախատեսում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշում ընդունող մարմինը դատարանն է: Միաժամանակ, ՀՀ քրեական, քրեական դատավարության եւ քրեակատարողական օրենսգրքերը սահմանում են այդ հա-

րաբերությունների բոլոր մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Ըստ պատասխանողի՝ մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ գլուխը նվիրված է պատժից ազատելու ինստիտուտին եւ հստակ սահմանված են ինչպես պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, այնպես էլ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հիմքերը:

Պատասխանող կողմի կարծիքով, ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով յուրաքանչյուր դատապարտյալի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը, ուղղակիորեն չի նշում, թե ում է ուղղված խնդրանքը, առավել եւս չի նշում, որ խնդրանքն ուղղակիորեն դատապարտյալի կողմից պետք է ներկայացվի խնդրանքի լուծման իրավագործություն ունեցող մարմնին՝ նշված հարցի լուծումը թողնելով օրենսդրի կարգավորմանը:

Պատասխանողը գտնում է, որ «...եթե խախտվել է դատապարտյալի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված խնդրանքի (եւ ոչ թե խնդրանքի բավարարման) իրավունքը (օրինակ, իրավասու մարմինը օրենքով սահմանված կարգով չի ընդունել կամ քննել խնդրանքը կամ պատժի ժամկետի օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում չի լսել կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու եւ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006թ.-ի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրի 7-րդ կետով սահմանված կարգով ենթահանձնաժողովը ոչ ուշ, քան մինչեւ յուրաքանչյուր ամսվա 15-րդ օրը չի այցելել պատիժ կատարող հիմնարկ, չի ծանոթացել դատապարտյալի անձնական գործին կամ մեկուսի չի հանդիպել նրա հետ), վերջինս միանշանակորեն կարող է օգտվել ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից»:

4. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է յուրաքանչյուր դատապարտյալի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը: Համաձայն այդ հոդվածի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը վերապահված է յուրաքանչյուր դատապարտյալի: Սահմանադրության 43 հոդվածը 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: ՀՀ Սահմանադրության 44 հոդվածին համապատասխան՝ այդ իրավունքը չի կարող նույնիսկ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Ներման ինստիտուտն իրենից ներկայացնում է հանցագործություն կատարած անձի նկատմամբ՝ մարդու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, արդարության սահմանադրական սկզբունքների անմիջական գործողության դրսեւորում: Ըստ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 17-րդ կետի՝ ներում շնորհելը ՀՀ Նախագահի բացառիկ իրավասությունն է:

Ներման դրսևորման ձեւերը բացահայտված են ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածում: Վերջինիս համաձայն՝ «հանցագործության համար դատապարտված անձը ներման ակտով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»: Հոդվածի բովանդակությունը վկայում է, որ օրենքը տարբերակում է ներման երկու տարատեսակ՝ լրիվ ներում (պատժից լրիվ ազատում, ներառյալ՝ հետեւանքները) եւ մասնակի ներում (պատժից մասնակի ազատում կամ պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պատժով): Ներում շնորհելու գործընթացը կարգավորվում է ՀՀ Նախագահի 2003թ. նոյեմբերի 19-ի՝ «Ներման խնդրագրերի կարգը հաստատելու մասին» հրամանագրով:

Ներման ինստիտուտի կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման ուսումնասիրությունը վկայում է, որ ներում հայցելու իրավունքի իրացման համար որեւէ նախապայման սահմանված չէ, ներում կարող է հայցել յուրաքանչյուր դատապարտյալ, ներումը կարող է շնորհվել յուրաքանչյուր դատապարտյալի՝ անկախ կատարված հանցագործության բնույթից, ծանրությունից ու այլ հանգամանքներից (մասնավորապես, պատժաչափից, պատժի կրած մասից): Ներում շնորհելու համար որեւէ պարտադիր չափանիշ նախատեսված չէ, այն ամբողջությամբ թողնված է ՀՀ Նախագահի հայեցողությանը. Նախագահի՝ ներում շնորհելու իրավունքը սահմանափակված չէ ո՛չ դատապարտյալների շրջանակով, ո՛չ հանցագործությունների բնույթով, ո՛չ պատժատեսակներով ու պատժաչափերով:

Ներման ինստիտուտի օրենսդրական կարգավորումը վկայում է այն մասին, որ ներման խնդրանքի իրավունքի իրացման համար որեւէ սահմանափակում նախատեսված չէ, հետեւաբար, ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի դրույթին համահունչ, ներում հայցելու իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դատապարտյալ, եւ ՀՀ Նախագահը ներում կարող է շնորհել յուրաքանչյուր դատապարտյալի:

5. Մարդասիրության սկզբունքի դրսևորման ձեւերից է նաեւ դատապարտյալին պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտը: Այդ ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ հանցագործության համար դատապարտված անձը, քրեական օրենքով նախատեսված հիմքերով, կարող է դատարանի կողմից փաստացիորեն ազատվել պատժի հետագա կրումից: Պատժից ազատելու համար նյութական հիմք է հանդիսանում պատիժը կրելու աննպատակահարմարությունը կամ անհնարինությունը, հաշվի առնելով տվյալ դատապարտյալի՝ հանրորեն վտանգավոր լինելու հանգամանքի վերացումը, դատապարտյալի առողջական վիճակի վատթարացման փաստը կամ քրեական իրավունքի փոփոխությունը: Պատժից ազատելու ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ թույլ տալով անտեսել քրեական հարկադրանքի միջոցները, խթանում է դատապարտյալի վերադաստիարակումը, նպաստում է նրա ընտելացմանն իրավակարգի պահանջներին, սոցիալական վարքագծի կանոններին, ինչպես նաեւ բացառում է պատժի կիրառումն այն

դեպքերում, երբ պատժի կիրառման նպատակներին հասնելը դառնում է ոչ իրական:

Այս ինստիտուտի դրսևորման՝ ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված ձեռքերն են՝ պատժի կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը (ՀՀ ՔՕ 76 հոդված), պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը (ՀՀ ՔՕ 77 հոդված), հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը (ՀՀ ՔՕ 78 հոդված), պատժից ազատելը ծանր հիվանդության հետեւանքով (ՀՀ ՔՕ 79 հոդված), պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետեւանքով (ՀՀ ՔՕ 80 հոդված), ինչպես նաեւ պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով (ՀՀ ՔՕ 81 հոդված): Նշված ձեռքերից յուրաքանչյուրի կիրառման դեպքում դատապարտյալը պետք է բավարարի քրեական օրենսդրությամբ սահմանված որոշակի պայմաններ ու հիմքեր, որով սահմանափակվում է այն անձանց շրջանակը, ում նկատմամբ դրանք կարող են կիրառվել: Այսպես. ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր է միայն այնպիսի պատժատեսակների դեպքում, ինչպիսիք են ազատագրկումը եւ կարգապահական գումարտակում պահելը: Պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր է, եթե դատապարտյալը փաստացի կրել է դատարանի կողմից սահմանված պատժի որոշակի մասը: Ելնելով հանցագործության ծանրությունից՝ պայմանական վաղաժամկետ ազատման համար ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսել է տարբեր ժամկետներ: Պատժից ազատելու այս ձեռքը կիրառվում է, եթե դատարանը գտնում է, որ դատապարտյալն ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պատժի կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաեւ դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը:

ՀՀ ՔՕ 77, 80 հոդվածներում նախատեսված՝ պատժից ազատելու ձեռքը կիրառելի են միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատագրկված դատապարտյալների նկատմամբ:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն պատժից ազատելու մնացած ձեռքերի, պատժից ազատելու խնդրո առարկա ձեւն իր բնույթով հանդիսանում է պայմանական, քանի որ պատժից ազատվող դատապարտյալը գտնվում է վերահսկողության ներքո, նրա վրա դրվում են որոշակի պարտականություններ, որոնք չկատարելու դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու եւ պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին:

Պատժից ազատելու պայմանական բնույթը պայմանավորում է մեկ այլ առանձնահատկությունն էւս (այս առանձնահատկությունը վերաբերում է նաեւ ՔՕ 78 հոդվածով նախատեսված՝ պատժից ազատելու ձեւին), այն է՝ եթե պատժից ազատելու մյուս ձեւերի կիրառման արդյունքում վերացվում են կատարված հանցագործության բոլոր հետեւանքները, ապա պատժից պայմանական

վաղաժամկետ ազատված դատապարտյալը մինչև դատարանի կողմից նշանակված պատժամեղաքի ավարտը շարունակում է համարվել դատվածություն ունեցող, ինչը հաշվի է առնվում փորձաշրջանում հանցագործություն կատարելու դեպքում պատիժ նշանակելիս (պատիժ նշանակվում է դատավճիռների համակցությամբ (ՔՕ հոդված 67)):

6. Ներման ինստիտուտի եւ պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտի, այդ թվում՝ նաեւ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության վերլուծությունը վկայում է, որ այդ երկու ինստիտուտների միջեւ հիմնական բովանդակային սկզբունքային տարբերությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն ներման ինստիտուտի, պատժից ազատելու ինստիտուտի դրսեւորման բոլոր ձեւերի, այդ թվում՝ նաեւ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կիրառման համար նախատեսված են որոշակի պայմաններ եւ հիմքեր, որոնք սահմանափակում են այդ ձեւերից օգտվելու հնարավորություն ունեցող դատապարտյալների շրջանակը, ինչի արդյունքում մնան հնարավորությունը չի տարածվում յուրաքանչյուր դատապարտյալի վրա: Մինչդեռ ներում հայցելու իրավունքի իրացումը որեւէ նախապայմանով պայմանավորված չէ, ինչի արդյունքում որեւէ կերպ չի սահմանափակվում ներում հայցելու իրավունք ունեցող դատապարտյալների շրջանակը՝ անկախ պատիժը կրելու ժամկետից, եւ, հետեւաբար, այդ իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դատապարտյալ:

Ելնելով վերոշարադրյալից, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում կիրառված՝ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթի այնպիսի մեկնաբանությունը, որի դեպքում այդ եզրույթը ներառում է նաեւ պատժից ազատելու ինստիտուտը, անհամատեղելի է այդ դրույթի բովանդակության հետ եւ դուրս է այդ դրույթի տրամաբանության շրջանակներից: Պատժից ազատելու ինստիտուտի ողջ տրամաբանությունը հանգում է նրան, որ այն գործում է միայն որոշակի պայմանների եւ հիմքերի առկայության դեպքում, հետեւաբար՝ նաեւ դատապարտյալների որոշակի շրջանակի համար: Ուստի պատժից ազատելու ինստիտուտի եւ դրա առանձին դրսեւորումների տրամաբանությունն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթի հետ, որտեղ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթն օգտագործված է եւ ենթակա է ընկալման մասնակի (պատիժը մեղմացնող) ներում իմաստով, ինչպես այն ներկայացված է ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածում:

Ավելին, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում օրենքը նախատեսում է նաեւ այն վերացնելու հնարավորություն: Պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը ենթադրում է, որ այդ խնդրանքի բավարարումը պետք է լինի վերացման ոչ ենթակա: Ուստի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտն այս առումով եւս անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ներման եւ պատժից ազատելու ինստիտուտների, դրանց բովանդակության, էության, սոցիալական նշանակության եւ նպատակների մի-

ջել առկա սկզբունքային եւ անհամատեղելի առանձնահատկություններն ու տարբերությունները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում խոսքը վերաբերում է ոչ թե ներման եւ պատժից ազատելու տարաբնույթ երկու առանձին ինստիտուտներին, այլ ներման ինստիտուտի գործադրման երկու տարատեսակներին՝ ներման լրիվ եւ մասնակի ձեւերին:

Ինչպես հատակ նշվում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003թ. սեպտեմբերի 24-ին ընդունած թիվ (2003) 22 հանձնարարականում, պայմանական վաղաժամկետ ազատումը չի ներառում համաներումը կամ ներումը: Այն ենթադրում է դատապարտված բանտարկյալներին ժամկետից շուտ ազատելը՝ ազատվելուց հետո ընկած ժամանակահատվածի անհատականացված պայմանների ներքո (հանձնարարականի հավելված, մաս առաջին, կետ 1-ին): Նույն հանձնարարականում որպես ընդհանուր սկզբունքներ են դիտարկվում, որ պայմանական վաղաժամկետ ազատման նպատակն է օգնել բանտարկյալներին «անցում կատարել բանտի կյանքից դեպի համայնքի օրինապահ կյանք»՝ միաժամանակ ապահովելով հանրության անվտանգությունը: Ընդ որում, եթե ներման կամ համաներման դեպքում խոսքը վերաբերում է ներմանը կամ նշանակված պատիժը մեղմացնելուն, ապա այս դեպքում գործ ունենք «պայմանական ազատման» ինստիտուտի հետ: Վերջինս ենթադրում է, նախ. օրենսդրությամբ նախատեսվող պայմաններ ու համապատասխան վերահսկողություն, ապա, այդ պայմանները չպահպանելու դեպքում՝ համապատասխան իրավական հետեւանքներ:

7. ՀՀ գործող օրենսդրության, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 70 եւ 76 հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածի դրույթների վերլուծությունը վկայում է, որ

- ա) պայմանական վաղաժամկետ ազատման եւ համապատասխան վերահսկողական պայմանների սահմանման իրավասությունը վերապահված է դատարանին՝ պատժի կիրառումն իրականացնող մարմնի միջնորդության դեպքում,
- բ) այն իրականացվում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում եւ պայմանավորված չէ դատապարտյալների դիմումով կամ խնդրանքով, այլ վերաբերում է բոլոր այն բանտարկյալներին, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին,
- գ) օրենքը տարբերակված մոտեցում է ցուցաբերում տարբեր հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ,
- դ) նախատեսվում են ներգործուն միջոցներ՝ վաղաժամկետ ազատման պայմանները խախտելու համար,
- ե) վաղաժամկետ ազատման նպատակը բոլոր դատապարտյալների համար նախապես հայտնի խրախուսելի հնարավորություն է՝ հանրային ազատ կյանքին սահուն անցում կատարելու համար, առանց վտանգելու հասարակական կարգն ու այլոց իրավունքներն ու ազատությունները,

զ) Հայաստանի Հանրապետությունը վաղաժամկետ ազատելու հարցը որոշելու համար որդեգրել է, այսպես կոչված, հայեցողական ազատման համակարգը, որն առկա է նաև եվրոպական շատ երկրներում: Այդ համակարգի բնորոշ առանձնահատկություններից ելնելով է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434, 437, 438 հոդվածներով, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114, 115 եւ 1151 հոդվածներով, ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշմամբ, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2006թ. հուլիսի 31-ի թիվ ՆՀ-163-Ն հրամանագրով սահմանվել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգերը:

8. Պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականը պարունակում է մի շարք սկզբունքային դրույթներ, որոնք էական նշանակություն ունեն իրավական պետությունում պայմանական վաղաժամկետ ազատման այս կամ այն մոդելի ընտրության հարցում: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս բազմաթիվ այլ երկրների, որդեգրել է «հայեցողական ազատման» համակարգը, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ համաձայն վերոհիշյալ Հանձնարարականի՝ հայեցողական ազատման համակարգի դեպքում.

- ա) նվազագույն ժամկետը, որը բանտարկյալները պետք է կրեն պայմանական վաղաժամկետ ազատվելուն ենթակա լինելու համար, պետք է սահմանված լինի օրենքով,
- բ) պետք է ձգտել որոշումը կայացնել բանտարկյալի կողմից նվազագույն ժամկետը կրելուց հետո որքան հնարավոր է շուտ,
- զ) պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները պետք է լինեն պարզորոշ եւ հստակ: Դրանք պետք է լինեն նաև իրական՝ այն իմաստով, որ պետք է հաշվի առնեն բանտարկյալների անձը, սոցիալական եւ տնտեսական հանգամանքները, ինչպես նաև վերաբնակեցման ծրագրերի ամկայությունը,
- դ) պայմանական վաղաժամկետ ազատելուց հետո աշխատանքի հնարավորությունների բացակայությունը կամ մշտական ապրելավայր ունենալու բացակայության հանգամանքը չպետք է հիմք հանդիսանան այն մերժելու կամ հետաձգելու համար,
- ե) պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի ազատման թույլտվություն տրվի բոլոր այն բանտարկյալներին, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին: Միաժամանակ, իշխանությունները պարտավոր են ցույց տալ, որ բանտարկյալը չի համապատասխանում այդ չափանիշներին,
- զ) եթե որոշում կայացնող մարմինը որոշում է մերժել պայմանական վաղաժամկետ ազատելը, այն պետք է սահմանի հարցը վերանայելու օր: Բոլոր

դեպքերում, բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան կրկին դիմել որոշում կայացնող մարմնին՝ այն պահից, երբ իրենց իրավիճակն էականորեն փոխվել է հոգուտ իրենց:

ՀՀ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հստակ սահմանված չեն պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դատավարության օրենսգրքի ու քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ իրավաչափ կլինեք, որպեսզի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկետները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը եւ հայեցական լիազորությունների շրջանակը)՝ ՀՀ կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հստակ սահմանվեք օրենսդրությամբ:

9. Դիմողի այն պնդումը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից զրկելը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի պահանջներին, հիմնավոր չէ: Նշված հարցով անմիջական դատարան դիմելու հնարավորությունը չի առնչվում դատական պաշտպանության իրավունքին: ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքը, երբ առկա է խախտված իրավունքների պաշտպանության խնդիր: Մինչդեռ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման քրեաիրավական ինստիտուտի բովանդակությունը կազմում է պետության կողմից հումանիզմի դրսևորում հանդիսացող դատապարտյալին տրվող իրավական հնարավորություն, այլ ոչ թե դատապարտյալի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք: Այդ մասին է վկայում այդ ինստիտուտի կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորումը. մասնավորապես, դատապարտյալն ինքը կամ նրա ներկայացուցիչը պատժից վաղաժամկետ ազատելու ներկայացման գործընթացի նախաձեռնությանը մասնակցություն չի ունենում. ներկայացման հարցն օրենքի ուժով, համապատասխան ժամկետը լրանալուց հետո, առանց դատապարտյալի խնդրանքի կամ դիմումի (սակայն նրա համաձայնությամբ), պարտադիր կարգով քննության է առնում քրեակատարողական հիմնարկի վարչական հանձնաժողովը: Հետեւաբար, այս դեպքում չի կարող խոսքը վերաբերել խախտված իրավունքին, հետեւաբար՝ նաեւ դրա դատական պաշտպանությանը: Նման հարց կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ խախտվել է պայմանական վաղաժամկետ ազատման՝ օրենքով սահմանված կարգը:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից զրկելը հակասում է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին՝ խախտելով դատարանի մատչելիության իրավունքը, ապա հարկ է նշել, որ նշված հարցով դատարան դիմելու ոչ անմիջական հնարավորու-

թյունը չի առնչվում դատարանի մատչելիության իրավունքին: ՀՀ Սահմանադրության 19 հոդվածը երաշխավորում է դատարանի մատչելիության իրավունքը, երբ առկա է կամ խախտված իրավունքները վերականգնելու, կամ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտություն: Մինչդեռ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար դիմելու դեպքում հարցը չի առնչվում ո՛չ խախտված իրավունքների վերականգնմանը, ո՛չ էլ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտությանը: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ օրենքով նախատեսված կարգի խախտման, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման հարցում օրենքով սահմանված կարգով որոշակի լիազորություն իրականացնող հանձնաժողովների գործողությունների կամ անգործության բողոքարկման առնչությամբ, որի բողոքարկման կարգը նույնպես սահմանվում է օրենքով:

10. Դիմող կողմը վիճարկում է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ:

Այս կապակցությամբ, հարկ է նախ անդրադառնալ հանձնաժողովների կարգավիճակին ու գործունեության բովանդակությանը:

Հանձնաժողովներն իրենց բնույթով անկախ են եւ ընդգրկում են ինչպես պետական կառույցների՝ համապատասխան գերատեսչությունների, այնպես էլ հասարակայնության ներկայացուցիչներ: Հանձնաժողովների նախագահների եւ անդամների լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հանձնաժողովի աշխատակարգային որոշմամբ ստեղծվում են հանձնաժողովի առնվազն երկու անդամներից կազմված ենթահանձնաժողովներ, որոնց անդամները պետք է փոխվեն ռոտացիոն կարգով, որպեսզի նույն անձը նույն քրեակատարողական հիմնարկի հետ կապված հարցերի նախապատրաստմանը մասնակցի ոչ ավելի, քան երեք ամիս անընդմեջ:

Անկախ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանող՝ ՀՀ Նախագահի հրամանագիրը (31.07.2006թ. թիվ ՆՀ-163-Ն) կարող է բողոքարկման առարկա լինել՝ դրա թե՛ օրենքին եւ թե՛ Սահմանադրությանը համապատասխան լինելու տեսանկյունից: Այդ հանձնաժողովը որեւէ հարց չի կարող քննության առարկա դարձնել, եթե չկա պատիժը կատարող հիմնարկի վարչական հանձնաժողովի որոշումը (այն ստեղծվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ ՀՀ կառավարության որոշմամբ): Վարչական հանձնաժողովի որոշումները դատական կարգով կարող են բողոքարկվել՝ ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի: Փաստորեն, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված անկախ հանձնաժողովը (այդ նորմի սահմանադրականությունը դիմող կողմը չի վիճարկել) իրականացնում է բացառապես վարչական հանձնաժողովի նկատմամբ վերահսկողական լիազորություն: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորվել է նաև իրավակիրառական պրակտիկայով, կոռուպցիոն ռիսկերի մվազեցման խնդրով, օրենքով նախատեսված պատժամիջոցների

իրավական նշանակությունը չիմաստագրելու անհրաժեշտությամբ, երբ պայմանական վաղաժամկետ ազատումը դառնում է ձեռական ու համատարած՝ առանց դրա իրավական նշանակության ու նպատակի հստակ երաշխավորման: Իսկ վերջինս անմիջականորեն առնչվում է նաև հասարակության անվտանգության եւ այլոց իրավունքների ու ազատությունների հարգման ու պաշտպանության խնդրին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2006թ. ընդունած՝ Լեզերն ընդդեմ Ֆրանսիայի վճռում, անդրադառնալով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում առկա է պայմանական վաղաժամկետ ազատման երեք հիմնական մոդել, այն է՝ հայեցողական համակարգ, պարտադիր ազատման համակարգ եւ խառը համակարգ, նշում է, որ հայեցողական համակարգը կիրառելի է անդամ պետությունների մեծամասնությունում: Այս համակարգն ուղղակիորեն կապված է անհատականացման սկզբունքի հետ, քանի որ թույլ չի տալիս ավտոմատ ազատումը:

Նման համակարգի կիրառման դեպքում հիմնական խնդիրներից է, որ տարբեր մարմինների որոշումների հնարավոր անհամապատասխանության հարցը լուծում ունենա: Տվյալ հարցին առնչվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ հնարավոր անհամաչափելիության խնդիրը կարող է միայն դատական կարգով իր լուծումն ստանալ, եթե նախապես օրենսդրորեն հստակեցված են այս հարցում տարբեր մարմինների լիազորություններն ու հայեցողության շրջանակները:

Ինչ վերաբերում է հիշատակված գործին, ապա Եվրոպական դատարանը մերժել է դիմողի պահանջը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ «հասարակությանը հարմարվելու ջանքերի»՝ դիմողի կողմից մատնանշված չափանիշի կիրառումը ներպետական իշխանությունների կողմից ներպետական օրենսդրության դրույթների մեկնաբանման իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված հանձնաժողովին առնչվող հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումը պետք է լինի, այլ նրա որոշումների՝ օրենսդրությանը համապատասխանելը վերահսկելը: ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի իմպերատիվ պահանջն է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին»: Միայն դատարանը կարող է որոշել իրավական ակտը համապատասխանում է օրենքին, թե՛ ոչ: Սակայն դատարանը չի կարող իրացնել օրենքով անկախ հանձնաժողովին վերապահված լիազորությունը: Տվյալ պարագայում պետք է գործի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի օրենսդրական կարգավորման այն տրամաբանությունը, որ երբ անկախ հանձնաժողովն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, եւ դատարանը հանգում է այն հետեւությանը, որ հանձնաժողովի հայեցողական լիազորություններն իրականացվել են օրենսդրությա-

նը ոչ համապատասխան, ապա դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է սահմանի հանձնաժողովի պատասխանատվությունը՝ իր որոշումն ընդունել կամ կատարել գործողություն՝ հիմք ունենալով դատարանի իրավական դիրքորոշումը եւ ապահովել կայացվող որոշման իրավաչափությունը՝ այն համապատասխանեցնելով օրենքի պահանջներին:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի վիճարկվող հոդվածում ամրագրված այն դրույթը, որը նախատեսում է պատիժը կրող հիմնարկի վարչակազմի որոշումները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, իսկ անկախ հանձնաժողովի որոշումների դատական բողոքարկման հնարավորություն նախատեսում է միայն այն դեպքերում, երբ այդ որոշումը կայացվել է ՀՀ Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ եւ բացառում է նաեւ այդ որոշման դատական կարգով բողոքարկումը, եթե այն հակասում է օրենքին, ոչ հետետողական լուծում է եւ չի երաշխավորում միջազգայնորեն ընդունված եւ ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կարգի արմատավորում ՀՀ իրավական համակարգում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասը՝ անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դատական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6, 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածներին հակասող եւ անվավեր:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**5 փետրվարի 2008 թվականի
ՍԳՈ-733**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 2008Թ. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՅԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ
ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 փետրվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ռուբեն Թորոսյանի, Արտակ Զեյնալյանի, Ռոբերտ Սանոյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 4-րդ կետի, 101 հոդվածի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 44 եւ 75 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ 2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի ճանաչելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Նախագահի թեկնածուի 07.02.2008թ. դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով գործում առկա փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Դիմող կողմը գտնում է, որ «2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանից անկախ պատճառներով, արդեն իսկ, առաջացած խոչընդոտներն անհնարին են դարձնում նրա հետագա մասնակցությունը ՀՀ ընտրական օրենսդրությամբ սահմանված ընտրական գործընթացներին»: Որպես պատճառ, մասնավորապես, ներկայացվում է, որ «Հանրային հեռուստառադիոընկերությունը, «Հ1» հեռուստաընկերության «Հայլուր» ծրագրի միջոցով, ՀՀ օրենսդրության (Ընտրական օրենսգրքի 18-րդ, 20-րդ եւ 22-րդ, ինչպես նաեւ, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 11-րդ եւ 28-րդ հոդվածներ) պահանջների կոպիտ խախտումներով, երեք ամիս շարունակ առ այսօր, հակաքարոզչական զանգվածային հաղոր-

դումներ է հեռարձակել ՀՀ Առաջին Նախագահ, ՀՀ Նախագահի առաջադրված եւ գրանցված թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ»:

Դիմողը մի շարք այլ փաստարկների հետ մեկտեղ, նշում է նաեւ, որ «Հանրային հեռուստատեսությամբ նախընտրական քարոզչության համար թեկնածուներին տրամադրված եւ հեռուստալսարանի համար շատ անհարմար ժամանակը, որեւէ հնարավորություն չի տալիս անգամ մեղմացնել «Հայլուր»-ի հակաքարոզչությունը»: Վկայակոչելով նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուի վստահված անձանց կողմից ձեռնարկված առանձին քայլերը, շեշտվում է, որ «ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբը ձեռնարկել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հնարավոր միջոցները՝ կանխելու Նախագահի թեկնածուի նկատմամբ իրականացվող օրինախախտումները կամ վերացնելու դրանց հետեւանքները, սակայն այդ նախաձեռնությունները որեւէ դրական արդյունքի չեն բերել»:

Դիմողի կողմից որպէս խոչընդոտ է դիտարկվում այն, որ «Մեր երկրի ընտրություններում առաջին անգամ թեկնածուներից մեկը հայտնվել է այնպիսի իրավիճակում, որ իրենից անկախ պատճառներով չի կարողանում մյուս թեկնածուների հետ հավասար պայմաններով նախընտրական քարոզչություն իրականացնել, այն է՝ հաղթահարել իր նկատմամբ կիրառված նախադեպը չունեցող պետական հակաքարոզչության հետեւանքները եւ մասնակցել ՀՀ ընտրական օրենսդրությամբ սահմանված ընտրական գործընթացներին»:

Դիմողը խնդրում է սահմանադրական դատարանին՝ «2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի համար առաջացած խոչընդոտները ճանաչել անհաղթահարելի»:

Դիմումին կից սահմանադրական դատարան են ներկայացվել դիմողի փաստարկներին առնչվող նյութեր:

2. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ առաջանալու» դրույթը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 52 հոդվածում, համաձայն որի՝ Հանրապետության Նախագահի ընտրությունը հետաձգելու եւ նոր ընտրություն նշանակելու երկու հնարավոր դեպք է նախատեսված: Նախ՝ խոչընդոտի բնույթի գնահատման արդյունքում, երբ Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ են առաջացել ու դրանք չեն վերացել, երկրորդ՝ իրավունքի ուժով՝ մինչեւ քվեարկության օրը թեկնածուներից մեկի մահվան դեպքում: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ՀՀ Նախագահի թեկնածուներից մեկի համար առաջացած խոչընդոտի բնույթի գնահատումը՝ դրա անհաղթահարելի ճանաչման կամ չճանաչման առումով, վերապահված է սահմանադրական դատարանի իրավասությանը:

Սահմանադրության 52 եւ 100 (կետ 4) հոդվածների պահանջներից ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի 5-րդ մասը սահմանել է. «Սահմանադրական դատարանը կարող է անհաղթահարելի ճանաչել այն խոչընդոտները, որոնք արդեն իսկ առաջացել են եւ տվյալ թեկնածու-

ից անկախ պատճառներով անհնարին են դարձնում նրա հետագա մասնակցությունն ընտրական գործընթացներին»:

3. Անդրադառնալով «Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար առաջացած անհաղթահարելի խոչընդոտ» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, սահմանադրական դատարանը նշում է, որ այդ դրույթի իրավական նախադեպն սկզբնավորվել է ֆրանսիական սահմանադրաիրավական պրակտիկայում, համաձայն որի՝ «անհաղթահարելի խոչընդոտը» մեկնաբանվում է որպես Նախագահի թեկնածուներից մեկի կոնկրետ վիճակով պայմանավորված ընտրական գործընթացին անձամբ նրա հետագա մասնակցության անհնարինություն:

Այս ինստիտուտը կիրառվում է բացառապես Նախագահի թեկնածուների նկատմամբ՝ նկատի ունենալով, որ նախագահական նոր ընտրությունների անհրաժեշտությունը պայմանավորվում է ոչ թե ընտրապայքարի վիճահարույց խնդիրներով, այլ վիճակի անհաղթահարելիությամբ՝ թեկնածուի այնպիսի վիճակով, որի պատճառով վերջինս անկարող է մասնակցել ընտրական հետագա գործընթացներին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ընտրական գործընթացում տեղ գտած հնարավոր օրինախախտումների ու դրանցով պայմանավորված վիճահարույց խնդիրների լուծման համար օրենքով նախատեսվում են վերջիններիս բացահայտման, գնահատման ու վերացման կոնկրետ ընթացակարգեր՝ հստակեցնելով ժամկետները եւ տարբեր իրավասուբյեկտների լիազորությունները: ՀՀ Սահմանադրության 52 հոդվածի, 100 հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում «Նախագահի թեկնածուի համար առաջացած անհաղթահարելի խոչընդոտ» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է այլ բանի: Այն ենթադրում է, որ Հանրապետության Նախագահի թեկնածու գրանցվելու պահից մինչեւ Հանրապետության Նախագահի ընտրության օրվան նախորդող ութերորդ օրը տեւող ժամանակահատվածում Հանրապետության Նախագահի թեկնածուի կամքից անկախ նրա հետ կապված այնպիսի վիճակ է առաջացել, որն այդ ժամանակահատվածում օբյեկտիվորեն անհնարին է հաղթահարել, եւ որը գործնականում նրան զրկել է ընտրական գործընթացին հետագա մասնակցելու հնարավորությունից:

4. Դիմողը հիմնականում փաստում է, որ թեկնածուներից մեկը հայտնվել է այնպիսի իրավիճակում, որ «...իրենից անկախ պատճառներով չի կարողանում մյուս թեկնածուների հետ հավասար պայմաններով նախընտրական քարոզչություն իրականացնել», նկատի ունենալով, որ Հանրային հեռուստառադիոընկերությունը, «Հ1» հեռուստաընկերության «Հայլուր» ծրագրի միջոցով, ՀՀ օրենսդրության պահանջների կոպիտ խախտումներով շարունակաբար հակաքարոզչական զանգվածային հաղորդումներ է հեռարձակել իր նկատմամբ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 1-ին մասի համաձայն պետությունն է ապահովում քաղաքացիների նախընտրական քարոզչության ազատ իրականացումը: Օրենքի պահանջն է նաեւ, որ նախընտրական քարոզչությունն իրականացվում է հավասար հիմունքներով: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու համար թեկնածուներին երաշխավորվում են հավասար պայմաններ՝ եթերաժամանակ կամ ծավալ, սակագին եւ այլն:

Միաժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքի 20 հոդվածը սահմանում է, որ Հանրային հեռուստաընկերությունը եւ հանրային ռադիոն պարտավոր են հավասար պայմաններ ապահովել ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների համար: Հանրային հեռուստաընկերությամբ եւ հանրային ռադիոյով հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական քարոզարշավի վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն՝ ապահովելով արդար ու հավասար պայմանների պահպանումը: Դրա ապահովմանն առնչվող մի շարք լիազորություններ նախատեսված են նաեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ ընտրական օրենսգրքը սահմանել է նաեւ նախընտրական քարոզչության նկատմամբ վերահսկողության կարգը (հոդվ. 20, մաս 9), համաձայն որի. «Հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը, որը նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում իրավասու է դիմելու դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է խախտումների վերաբերյալ կարծիք ներկայացնելու դատարան»: Բացի դրանից, ՀՀ ընտրական օրենսգրքի 41 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը «վերահսկում է զանգվածային լրատվության միջոցների կողմից քարոզչության համար սահմանված հավասար հնարավորությունների ապահովումը»: Միաժամանակ, համաձայն Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխի դրույթների՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթն իրականացնում է ՀՀ վարչական դատարանը՝ հիշյալ օրենսգրքի 143-150 հոդվածներով սահմանված կարգով:

5. Սույն գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում ՀՀ վարչական դատարանից, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովից պահանջված տեղեկանքները վկայում են, որ դիմողի վստահված անձը սահմանադրական դատարան դիմելու օրը՝ 2008թ. փետրվարի 7-ին, դիմումում շարադրված փաստերով հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան: Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովն իր 07.02.2008թ. թիվ 01-17

գրությամբ սահմանադրական դատարանին տեղեկացրել է, որ «07.02.2008թ. հանձնաժողովը ստացել է ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Արտակ Ջեյնալյանի կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացված գործողության կատարման հայց նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու մասին»: Նույն գրությամբ տեղեկացվում է նաև, որ 06.02.2008թ. ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի կողմից նույնպես ստացվել է դիմում-առաջարկություն, որը վերցվել է ուսումնասիրության:

ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված փաստարկների շրջանակներում 2008թ. փետրվարի 6-ին ՀՀ Նախագահի թեկնածուի վստահված անձի կողմից դիմում-առաջարկություն է ներկայացվել նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Նախագահի թեկնածուի վստահված անձանց այդ գործողություններն իրավաչափ են, բխում են օրենքի վերոհիշյալ պահանջներից, եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանի խնդիրն է իրենց իրավասության շրջանակներում, օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում ապահովել զանգվածային լրատվամիջոցների կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջների հստակ կատարումը: Այս հարցում ցանկացած ձեւական մոտեցում անվստահություն կարող է առաջացնել ընտրական գործընթացի նկատմամբ:

Միաժամանակ, նախընտրական քարոզչության գործընթացի շրջանակներում ՀՀ Նախագահի թեկնածուի վստահված անձանց վերոնշյալ գործողությունները, ինչպես նաև թեկնածուի կողմից նախընտրական քարոզչության շարունակման փաստը վկայում են, որ ոչ թե առկա են անհատաբար խոչընդոտներ, այլ այդ գործընթացի շրջանակներում առաջ է քաշվում նախընտրական քարոզչության օրինականության ապահովման հետ կապված վեճ, որն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ներկայացվել է ընտրությունների այս փուլում դրանց գնահատման եւ լուծման իրավասությունն ունեցող վերոհիշյալ մարմիններին:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հիշյալ հոդվածներում խոսքը վերաբերում է ՀՀ Նախագահի թեկնածու իրավասությեկտին: Այսինքն՝ այն անձին, ով օրենքով սահմանված կարգով առաջադրվել, գրանցվել էւ ձեռք է բերել ՀՀ Նախագահի թեկնածուի իրավական կարգավիճակ: Այս առումով, դիմողի բերած այն փաստարկները, որոնք առնչվում են ՀՀ Նախագահի թեկնածուի գրանցմանը նախորդող գործընթացներին, անմիջականորեն չեն վերաբերում սույն գործով սահմանադրական դատարանին ներկայացված խնդրանքին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 52 հոդվածով, 100 հոդվածի 4-րդ կե-

տով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 75 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Դիմողի ներկայացրած փաստարկները՝ ՀՀ Սահմանադրության 52 հոդվածի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածի իրավակարգավորման առարկայի շրջանակներում, 2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի համար չեն կարող համարվել որպես անհաղթահարելի խոչընդոտներ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**11 փետրվարի 2008 թվականի
ՍԳՈ-734**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԱՆԻՎ» ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԵՎ «ՈՍԿԵ ՏԱԿԱՌ-ԱԼԿՈ» ՍՊԸ-Ի
ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ՝ «... ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ՊԱՐՏԱՊԱՆՆ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ՉԷ»
ԲԱՌԱԿԱՎՊԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ԵՎ 3-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ
«Բ» ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողներ՝ «Անիվ» հիմնադրամի գործադիր տնօրեն Հ. Մինասյանի, նրա ներկայացուցիչներ Ա. Գրիգորյանի եւ Է. Գալստյանի, «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ճարոյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 39 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց ««Անիվ» հիմնադրամի եւ «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, եւ 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Սահմանադրական դատարանն իր՝ 11.12.2007թ. ՍԳԱՈ-117 աշխատակարգային որոշմամբ որոշել է նշված գործերը միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

Գործի քննության առիթը «Անիվ» հիմնադրամի եւ «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի դիմումներն են սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի բացատրությունները, ուսումնասիրելով գործի նյութերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սնանկության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. դեկտեմբերի 25-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. հունվարի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 10-ին: Օրենքն ուժի մեջ մտնելու պահից վերջինիս 107 հոդվածի 4-րդ մասի ուժով ուժը կորցրած է ճանաչվել «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության 2003թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն օրենքը:

2. ՀՀ տնտեսական դատարանը, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի դիմումի հիման վրա, քննելով «Անիվ» հիմնադրամին սնանկ ճանաչելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործը, իր 2007թ. հուլիսի 17-ի վճռով բավարարել է դիմողի պահանջը եւ սնանկ ճանաչել պատասխանող «Անիվ» հիմնադրամին: Նշված քաղաքացիական գործի վարույթի շրջանակներում ՀՀ տնտեսական դատարանը քննության առարկա է դարձրել նաեւ պարտապանի պարտավորության հետ կապված նյութաիրավական վեճը:

Դիմող «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել ՀՀ տնտեսական դատարանի 2007թ. օգոստոսի 28-ի վճռով: Տնտեսական դատարանը «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի վերաբերյալ գործով սնանկության հարցը քննելիս չի անդրադարձել պարտապանի պարտավորության հետ կապված նյութաիրավական վեճին, քանի որ այն արդեն իսկ լուծվել էր Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 22.05.2007 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով:

3. Դիմող «Անիվ» հիմնադրամի պնդմամբ՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, եւ 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին, 18-րդ եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերին:

Դիմող «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի պնդմամբ՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, հակասում է ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, 31-րդ հոդվածի 1-ին մասին եւ 33.1. հոդվածին: Ըստ երկու դիմողների էլ՝ իրենց իրավունքների խախտման հիմնական պատճառն օրենքում «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության ամրագրումն է, ինչը հնարավորություն է ընձեռում սնանկ ճանաչելու վճարունակ պարտապանին:

Դիմող «Անիվ» հիմնադրամը՝ վիճարկելով նաեւ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի դրույթների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին, 18-րդ եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերին, գտնում է, որ այն ձեւակերպված է բավականին անորոշ, ինչի հետեւ-

անքով գույքային պարտավորության վերաբերյալ նյութաիրավական վեճը տեղափոխվում է սնանկության գործերով դատավարական վարույթ եւ բացառվում է նույն անձանց միջեւ նույն առարկայի վերաբերյալ նյութաիրավական վեճը դատական կարգով լուծելու հնարավորությունը, խախտվում է արդար դատաքննության իրավունքը: Միեւնույն ժամանակ, դիմողն իր փաստարկները հիմնավորում է նրանով, որ թիվ 3-2475 (ՏԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2006 թվականի դեկտեմբերի 21-ին կայացրած որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ անթույլատրելի է համարել պարտավորության վիճելիության դեպքում սնանկության վարույթում նյութաիրավական վեճին ըստ էության անդրադառնալը՝ չսահմանափակելու համար այդ վեճի քննության համար հետագայում դատարան դիմելու անձի իրավունքը: Ըստ դիմող «Անիվ» հիմնադրամի՝ վիճարկվող դրույթի ընդունումը նպատակ է հետապնդել ձախողելու թիվ 3-2475 (ՏԳ) գործով վճռաբեկ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի նախադեպային որոշմամբ տրված իրավական դիրքորոշումների հետագա կիրառումը եւ հանդիսանում է միջամտություն արդարադատության իրականացման գործընթացին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողներին, գտնում է, որ վեճի առարկա հողվածի դրույթների վերլուծությունից հետեւում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-3-րդ մասերում ամրագրված դրույթները համակարգային առումով փոխկապակցված են միմյանց հետ, եւ ելակետային դրույթն այն է, որ սնանկ կարող է ճանաչվել միայն անվճարունակ պարտապանը:

Միեւնույն ժամանակ պարտապանի անվճարունակությանը վերաբերող հարցերն իրենց կարգավորումն են ստացել նույն հոդվածի 3-րդ մասում: Ընդ որում, դրանում ամրագրված դրույթների վերլուծությունը վկայում է սնանկության երկու հետեւյալ հիմքերի առկայության մասին՝ ա) հաշվեկշռային անվճարունակությունը, որը բնութագրվում է այնպիսի իրավիճակով, երբ պարտապանի պարտավորությունները գերազանցում են իր ակտիվների արժեքը, բ) փաստացի անվճարունակությունը, երբ պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները: Պարտապանին անվճարունակ ճանաչելու համար օրենսդիրը նախատեսել է հիշյալ հիմքերից առնվազն մեկի առկայության պայմանը:

Պատասխանողը գտնում է, որ «չնայած այն հանգամանքին, որ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը բացառում է դատարանի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու այլ պայման, քան պարտապանի անվճարունակ լինելը, իսկ 2-րդ մասը սահմանում է վճարունակ պարտապանին սնանկ ճանաչելու հնարավորությունը (օրենքում ձեւակերպված է «նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ»), այնուամենայնիվ, հիշատակված մասերի միջեւ առկա ներքին հակասությունը՝ ձեւական տրամաբանության եւ դատողությունների համադրման տեսանկյունից չի նշանակում, որ վճարունակ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել, եթե կատարում է իր անվիճելի վճարային պարտավորությունը եւ դրանով ապացուցում է իր վճարունակ լինելը»:

Ըստ պատասխանողի՝ դա նշանակում է, որ քննության առարկա օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» արտահայտությունը որեւէ իրավական հետեւանք չի առաջացնում, քանի որ միայն դատարանը դատաքննության ընթացքում կարող է պարզել եւ գնահատել պարտապանի անվճարունակությունը՝ վերջինիս նկատմամբ սնանկության վարույթ իրականացնելու նպատակով: Իսկ անվճարունակության հանգամանքը կարող է հիմնավորված լինել, եթե պարտապանը թույլ է տվել անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա եւ ավելի ժամկետով կետանց:

Պատասխանողն ընդունելի չի համարում նաեւ դիմողի այն եզրահանգումը, համաձայն որի՝ «վերը նշված անորոշ նորմերի կիրառման արդյունքում, անձը ի վերջո գրկվում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով եւ 19-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատարանում գործի արդար քննության իրավունքն իրականացնելու հնարավորությունից...»:

Ըստ պատասխանողի՝ սնանկության վարույթը՝ հանդիսանալով նույնպիսի դատական վարույթ, չի գրկում որեւէ անձի արդար դատաքննության իր իրավունքից:

Ինչ վերաբերում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի վերաբերյալ դիմողի փաստարկներին, ապա պատասխանողի կարծիքով ոչ մի օրենք չի կարող հաշվի առնել իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների բազմազանությունը եւ հստակ կանոնակարգել այդ հարաբերությունների մասնակիցների այս կամ այն վարքագիծը: Օրենսդիրն սպառիչ կերպով չի բացահայտում «... եւ պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը)» իրավանդումի բովանդակությունը՝ բնութագրելով եւ համարելով այն որպես իրադրային, այսինքն՝ ենթակա գնահատման յուրաքանչյուր գործի հանգամանքներից ելնելով:

Պատասխանող կողմը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցությունը եւ նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը չեն հակասում ՀՀ Սահմանադրության 3-րդ եւ 8-րդ հոդվածներին, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին 1-ին մասերին, 31-րդ եւ 31.1. հոդվածներին:

5. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հատկանիշները» վերտառությամբ 3-րդ հոդվածը սահմանում է.

«1. Պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

2. Պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային

պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, եւ վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է, նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ: Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

- ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, եւ բացակայում է հաշվանցի հնարավորությունը.
- բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, եւ պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը).
- գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, եւ պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը).
- դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը»:

6. Սնանկության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը յուրաքանչյուր պետության տնտեսության կայունության ապահովման երաշխիքներից է: Հաշվի առնելով սնանկ ճանաչելու եւ սնանկության վարույթն իրականացնելու օրենսդրական հիմքերի միջազգային ներկա զարգացումները, Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովն ընդունել է «Անվճարունակության մասին օրենսդրության հարցերով օրենսդիր մարմինների ուղեցույց» (Ուղեցույց, 2005թ.), որում ամրագրված սկզբունքներն իրենց արտացոլումն են գտել տարբեր պետությունների անվճարունակության մասին օրենսդրական ակտերում:

Համաձայն այդ Ուղեցույցի՝ անվճարունակության մասին օրենսդրության առանցքը կազմում է սնանկության վարույթն իրականացնելու չափորոշիչների սահմանումը: Այդ հիմքերի պահպանմամբ է հնարավոր դառնում սնանկության գործերով վարույթի իրականացումը, որն էլ հնարավորություն է ընձեռում սահմանել այն պարտապաններին, որոնց վրա կարող է տարածվել օրենսդրության պաշտպանական եւ ընթացակարգային կառուցակարգերի գործողությունը, ինչպես նաեւ այն կողմերին (պարտապան, պարտատեր կամ այլ կողմեր), որոնք կարող են սնանկության մասին գործի վարույթը հարուցել:

7. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք խարսխվում են այն տրամաբանության վրա, համաձայն որի՝ սնանկության հիմքն անվճարունակությունն է: Այդ մասին է, մասնավորապես, վկայում օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված դրույթը, որը եւ՝ կամավոր սնանկության, եւ՝ հարկադրված սնանկության դեպքում որպես սնանկության հիմք ամրագրում է պարտապանի անվճարունակության փաստը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական գնահատականը տալու համար առանցքային նշանակություն ունի «անվճարունակություն» հասկացության ամբողջական եւ ճշգրիտ բովանդակության բացահայտումը:

«Անվճարունակությունը» ըստ վերոհիշյալ Ուղեցույցի՝ մի վիճակ է, երբ պարտապանն ընդհանուր առմամբ անկարող է վճարելու իր պարտքերը՝ պարտավորությունները կատարելու համար նախատեսված ժամկետներում, կամ երբ պարտապանի պարտավորությունների ընդհանուր գումարը գերազանցում է նրա ակտիվների արժեքը: Այսինքն՝ տարբերակվում է անվճարունակության երկու ձեւ՝ փաստացի եւ հաշվեկշռային: Անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ օրենքը եւս տարբերակում է անվճարունակության երկու ձեւ՝ հաշվեկշռային (բացասական հաշվեկշռի դեպքում) եւ փաստացի, այն է՝ այնպիսի վիճակ, երբ պարտապանն ի վիճակի չէ պարտատերերի օրինական պահանջներն ամբողջովին բավարարել: Մասնավորապես, մյան եզրահանգման համար հիմք է հանդիսանում օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը: Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում օրենսդիրը որպես պարտապանի անվճարունակության հիմք սահմանում է պարտապանի պարտավորությունների՝ պարտապանի ակտիվները գերազանցելու հանգամանքը, իսկ 3-րդ մասի «բ» կետում՝ այն հանգամանքը, որ պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները (փաստացի անվճարունակություն): Անվճարունակության այս երկու տարատեսակները միմյանցից տարանջատված են, եւ պարտապանին սնանկ ճանաչելու համար օրենքը չի առաջադրում անվճարունակության այդ երկու տարատեսակների զուգահեռ միաժամանակյա առկայության պահանջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28 եւ 71 հոդվածների 1-ին մասերի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրն այս դեպքում որպես պարտապանի անվճարունակության ընդհանուր հիմք է դիտարկում պարտապանի կողմից վճարում կատարելու փաստացի անկարողությունը, այն է՝ միայն փաստացի անվճարունակությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը որպես փաստացի անվճարունակության հիմք նախատեսում է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կետանցը, ինչը թույլ է տալիս պարտատիրոջը նախաձեռնելու սնանկության վարույթ: Այսինքն՝ օրենքը հիմնվում է անվճարունակության կանխավարկածի վրա, այն է՝ եթե պարտապանն ի վիճակի չէ կատարելու ժամկետանց վճարային պարտավորությունները, ապա ի սկզբանե ենթադրվում է, որ նա փաստացիորեն անվճարունակ է, եւ այդ ենթադրությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ ժամկետանց պարտավորությունը չի կատարվել կամ վիճարկվել ու հերքվել: Այս տրամաբանությունն է արտահայտված, մասնավորապես, օրենքի 17-րդ հոդվածում, որը կանոնակարգում է պարտատիրոջ դիմումի հիման վրա սնանկ ճա-

նաչելու կարգը: Այդ հողվածի համաձայն՝ դատարանը մերժում է սնանկ ճանաչելու մասին դիմումն այն դեպքում, երբ պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետեւանքով պարտապանը դադարում է անվճարունակ լինելուց կամ վերանում են օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերը: Ընդ որում, «անվճարունակության կանխավարկածն» իր հերթին հիմնվում է պարտապանի «բարեխղճության եւ պարտաճանաչության կանխավարկածի» վրա, այսինքն՝ եթե պարտապանը չի կատարում իր պարտավորությունները, ապա ի սկզբանե պարտավորության չկատարումը բացատրվում է ոչ թե նրա անբարեխղճությամբ, այլ վճարում կատարելու կարողության բացակայությամբ:

8. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում վիճարկվող բառակապակցությունը հարկ է դիտարկել ողջ օրենքի եւ նույն հոդվածի համատեքստում: Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը կարող է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա սնանկ ճանաչվել, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, եւ վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է: Մակայն էական է այն, որ խոսքը վերաբերում է «անվիճելի վճարային պարտավորություններին»: Եթե առկա է վճարային պարտավորությունների վերաբերյալ վեճ, ապա պարտապանը պետք է հնարավորություն ունենա այդ վեճը լիարժեք դատական քննության առարկա դարձնել, որից հետո միայն կարող է հարց դրվել նրա անվիճելի վճարային պարտավորությունների կատարման մասին: Հակառակ պարագայում կոտնահարվի անձի՝ Սահմանադրության 31 հոդվածով ամրագրված սեփականության իրավունքը:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նաեւ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի այն պահանջին, որ վճարային պարտավորությունը ճանաչված է համարվում օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով: Ուստի հատուկ վարույթի կարգով սնանկության գործի քննությունն օրենսդրորեն առավել հստակ պետք է սահմանազատված լինի նյութաիրավական վեճի քննությունից:

Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ եւ պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաեւ ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը եւ ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը եւ միեւնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը:

9. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «... եթե նույնիսկ պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության այնպիսի ընկալման դեպքում, երբ վճարունակությունը բացառապես վերաբերում է հաշվեկշռային վճարունակությանը, օրենքի ողջ իրավակարգավորման համատեքստում այդ բառակապակցությունը դառնում է ավելորդ, եւ այն ըստ էության սնանկության ինստիտուտի ընդհանուր իրավակարգավորման մեջ որեւէ դերակատարություն չունի: Այդ բառակապակ-

ցության առկայությունը կամ բացակայությունը որեւէ իրավական հետեւանք չի առաջացնում:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավակիրառական պրակտիկայում օրենքի վիճարկվող դրույթը կարող է տարաբնույթ մեկնաբանություններ առաջացնել, սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վիճարկվող դրույթի՝ վերոհիշյալից տարբերվող որեւէ այլ մեկնաբանության դեպքում, երբ այն կարող է կիրառվել վիճելի վճարային պարտավորությունների առկայության դեպքում, այդ դրույթը ներքին հակասության մեջ կմտնի ինչպես օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, այնպես էլ ողջ օրենքի եւ սնանկության ինստիտուտը կարգավորող այլ նորմատիվ ակտերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի դրույթների հետ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող դրույթի որեւէ այլ մեկնաբանություն ոչ միայն վեր կհանի վերոհիշյալ հակասությունները, այլ նաեւ կստեղծի սնանկ ճանաչված պարտապանի սեփականության իրավունքի խախտման իրական վտանգ: Նման պարագայում տեղի կունենա չարդարացված եւ չհիմնավորված միջամտություն պարտապանի սեփականության իրավունքին, պարտապանի համար կառաջանան այնպիսի բացասական եւ ծանր հետեւանքներ, որոնք արդարացված չեն որեւէ իրավաչափ նպատակով:

10. Ըստ դիմող «Անիվ» հիմնադրամի՝ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետում ամրագրված դրույթը խոչընդոտում է պարտապանի՝ վիճելի պարտավորության կապակցությամբ նյութաիրավական վեճն ընդհանուր հայցային վարույթի կարգով դատաքննության առարկա դարձնելու հնարավորությունը, ինչի արդյունքում, ինքը, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերի, գրկվել է իր իրավունքների դատական պաշտպանության իրականացման հնարավորությունից:

Վիճարկվող դրույթի վերլուծությունը վկայում է, որ այն չի ենթադրում, որ պարտապանի վիճելի պարտավորության կապակցությամբ նյութաիրավական վեճը լուծվում է սնանկության վարույթի շրջանակներում եւ, հետեւաբար, այս դրույթը չի խոչընդոտում նաեւ նշված նյութաիրավական վեճի քննությանն ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում: Այդ մասին է, մասնավորապես, վկայում ձեւավորված իրավակիրառական պրակտիկան: Այսպես. «Անիվ» հիմնադրամի պարագայում Տնտեսական դատարանը սնանկության գործը քննելիս միաժամանակ քննության առարկա է դարձրել նաեւ նյութաիրավական վեճը, այն է՝ պարտապանի՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող վիճելի վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանցի հարցը: Մինչդեռ «Ոսկե Տակառ-Ալկո» ՍՊԸ-ի դեպքում նյութաիրավական վեճը քննության առարկա է դարձվել ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում՝ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանում:

Բացի դրանից, վիճարկվող դրույթում «...պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր» ձեւակերպումը ենթադրում է, որ խոսքը վերաբերում է ոչ թե պարտապա-

նի պարտավորության կամ կետանցի բացակայության փաստն ապացուցող հիմքերին, այլ նյութաիրավական վեճի առկայությանը, այն է՝ պարտավորության վիճելիությունը հավաստող հիմքերին: Դա բխում է օրենքի վիճարկվող նույն 3-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությունից, որը սնանկ ճանաչելու հիմք է դիտարկում ոչ թե ընդհանրապես վճարային պարտավորությունը, այլ անվիճելի վճարային պարտավորությունը: Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ», «գ», «դ» կետերը վերաբերում են վճարային պարտավորության անվիճելիությանը, այլ ոչ թե սնանկության հիմքերին, եւ նպատակ չեն հետապնդում սնանկության գործը քննող դատարանին ներքաշելու նյութաիրավական վեճի լուծման գործընթացի մեջ:

11. Դիմող «Անիվ» հիմնադրամը մատնանշում է նաեւ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ընդունումը ՀՀ Ազգային ժողովի կողմից միտում է հետապնդել խոչընդոտել Վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակության որոշման (3-2475 (ՏԳ) գործով 21.12.2006թ.) դրույթների կիրառման միջոցով արդարադատության իրականացմանը: Դիմողն այդ կապակցությամբ հղում է կատարում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Դիմումում, մասնավորապես, նշված է. «...օրենսդրի կողմից որեւէ օրենքի ընդունումը արդարադատության իրականացման գործընթացի վրա ազդելու նպատակով անհամատեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների հետ եւ առաջացնում է պետության պատասխանատվություն այդ հոդվածի շրջանակներում»: Մատնանշված վճիռներից, մասնավորապես, ZIELINSKI AND PRADAL AND GONZALEZ AND OTHERS v. FRANCE գործով վճռի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ օրենսդրի կողմից խնդրո առարկա հարցի կարգավորման առնչությամբ օրենքի ընդունումը Եվրոպական դատարանի կողմից որակվել է միջամտություն հետեւյալ հանգամանքներում.

- օրենսդիրը հետադարձ ուժ է տվել իր սահմանած նորմերին՝ դրանք տարածելով այն վեճերի վրա, որոնց կապակցությամբ արդեն իսկ գործ է հարուցված դատարաններում եւ դրանք գտնվում են դատարաններում քննության ընթացքում, այդ թվում նաեւ՝ այն վեճերի վրա, որոնց կապակցությամբ ստորին ատյանի դատարանները կայացրել են դատական ակտեր, սակայն, որոնք դեռեւս վերջնական ուժ չեն ստացել (նման կարգավորման արդյունքում դիմումատուների օգտին կայացված վճիռները նոր օրենսդրական կարգավորման հիման վրա բեկանվել էին Վճռաբեկ դատարանի կողմից),
- օրենսդրական նման կարգավորումն իր բնույթով եղել է այնպիսին, որ կանխորոշել է դատարանների կողմից վեճի լուծումը, դատաքննության ելքը,
- տվյալ վեճի մի կողմում հանդես է եկել պետությունը, եւ նման օրենսդրական կարգավորման արդյունքում կողմերի միջեւ հավասարությունը խախտվել է հոգուտ պետության, քանի որ վեճի ելքը կանխորոշել է ի շահ այդ կողմի:

Տվյալ դեպքում օրենսդրի կողմից վիճարկվող նորմի ընդունումը չի կարող որակվել որպես միջամտություն արդարադատության իրականացմանը, քանզի նոր կարգավորումն իր բնույթով այնպիսին չէ, որ կարողանա կանխորոշել արդարադատության իրականացման արդյունքը, վճռել դատական գործի ելքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «...նույնիսկ եթե պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**25 փետրվարի 2008 թվականի
ՍԳՈ- 735**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ
ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի՝
«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԹԻՎ 24-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 մարտի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի՝ Հանրապետության Նախագահի թեկնածու Տ. Կարապետյանի, նրա ներկայացուցիչներ Ա. Ղազարյանի, Ռ. Ստեփանյանի,

դիմող կողմի՝ Հանրապետության Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի, նրա ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Վ. Գրիգորյանի, Պ. Օհանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գ. Ազարյանի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Բախչազուլյանի, փաստաբան Դ. Մանթաշյանի,

որպես հարակից պատասխանողներ ներգրավված՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչներ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Թամազյանի, ՀՀ դատախազության ավագ դատախազ Կ. Փիլոյանի, ՀՀ դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ Դ. Դավթյանի, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ՝ ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Ա. Մահտեսյանի, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, քննչական գլխավոր վարչության պետ Գ. Համբարձումյանի, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ներկայացուցիչ՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գ. Ամալյանի, նույն հանձնաժողովի լիցենզավորման եւ մեթոդական վարչության լիցենզավորման բաժնի պետ Ա. Արզումանյանի, ինչպես նաեւ հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի եւ վերահսկողության վարչության առաջատար մասնագետ Լ. Շահբազյանի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի 5-րդ մասի հիմքով որպես երրորդ անձ ներգրավված՝ Հանրապետության Նախագահի

թեկնածու Ս. Սարգսյանի ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դ. Հարությունյանի եւ իրավաբան Կ. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51 հոդվածի 5-րդ մասի, 100 հոդվածի 3.1. կետի, 101 հոդվածի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 74 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանի եւ Լեւոն-Տեր Պետրոսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի՝ «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ են հանդիսացել Հանրապետության Նախագահի թեկնածուներ Տ. Կարապետյանի՝ 27.02.2008թ. եւ Լ. Տեր-Պետրոսյանի՝ 29.02.2008թ. դիմումները սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանը 2008 թվականի փետրվարի 28-ի աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել Հանրապետության Նախագահի թեկնածու Տ. Կարապետյանի դիմումը: Միաժամանակ, այդ աշխատակարգային որոշմամբ, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74 հոդվածի 4-րդ մասով, որպես պատասխանող կողմ է ներգրավվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես հարակից պատասխանողներ են ներգրավվել ՀՀ դատախազությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը: Սահմանադրական դատարանի 2008թ. մարտի 1-ի աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունվել Հանրապետության Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի դիմումը: Հանրապետության Նախագահի թեկնածուներ Լ. Տեր-Պետրոսյանի եւ Տ. Կարապետյանի դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածին համապատասխան, 2008թ. մարտի 1-ի աշխատակարգային որոշմամբ միավորվել են՝ դատարանի նույն նիստում քննելու համար: Սահմանադրական դատարանի 2008թ. մարտի 1-ի աշխատակարգային որոշմամբ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, որպես երրորդ անձ է ներգրավվել 2008թ. փետրվարի 19-ի Հանրապետության Նախագահի ընտրություններում Հանրապետության Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանը:

Լսելով գործով զեկուցողների համատեղ զեկույցը, կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ուսումնասիրելով ու համադրելով նրանց կողմից ներկայացված փաստարկներն ու հակափաստարկները, ինչպես նաեւ հետազոտելով դիմումները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հանրապետության Նախագահի ընտրությունն անցկացվել է 2008 թվականի փետրվարի 19-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության

51 հողվածում նախատեսված ժամկետում: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 15 հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու եւ քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 1923 ընտրական տեղամաս: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 171 հոդվածով նախատեսված կարգով հանրապետության տարածքում կազմավորվել է 41 ընտրատարածք: Նույն օրենսգրքի 31 հոդվածին համապատասխան կազմավորվել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել եւ վերահսկել է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2008 թվականի փետրվարի 24-ին ամփոփել է Հանրապետության Նախագահի 2008 թվականի փետրվարի 19-ի ընտրության արդյունքները: Համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանադրական դատարան ներկայացված ամփոփիչ արձանագրության՝ քվեաթերթիկում ընդգրկված 9 թեկնածուներին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը կազմել է 1.632.666, որը Հանրապետության Նախագահի թեկնածուների միջեւ բաշխվել է հետևյալ համամասնությամբ. Ա. Բաղդասարյան՝ 272.427 ձայն, Ա. Գեղամյան՝ 7.524 ձայն, Տ. Կարապետյան՝ 9.792 ձայն, Ա. Հարությունյան՝ 2.892 ձայն, Վ. Հովհաննիսյան՝ 100.966 ձայն, Վ. Մանուկյան՝ 21.075 ձայն, Ա. Մելիքյան՝ 4.399 ձայն, Ս. Սարգսյան՝ 862.369 ձայն, Լ. Տեր-Պետրոսյան՝ 351.222 ձայն:

Վերոհիշյալ արդյունքների հիման վրա եւ ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածով եւ 84-րդ հոդվածի 1-ին կետով՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է իր 2008թ. փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը, համաձայն որի Հանրապետության Նախագահ է ընտրվել Սերժ Ազատի Սարգսյանը:

3. Դիմելով սահմանադրական դատարան՝ դիմողները գտնում են, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 24.02.2008թ. թիվ 24-Ա որոշումը եւ անվավեր ճանաչել Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 19-ին անցկացված ընտրության արդյունքները:

Ըստ դիմող՝ Հանրապետության Նախագահի թեկնածու Տ. Կարապետյանի՝ 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ միջազգային դիտորդական առաքելությունն արձանագրել է մի շարք էական խախտումներ, որոնք հիմք են տալիս վիճարկելու ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 24.02.2008թ. թիվ 24-Ա որոշումը եւ ընտրության արդյունքները: Որպես խախտումներ, մասնավորապես, մատնանշվել են դիտորդական առաքելության կողմից արձանագրվածն այն մասին, որ անհավասար պայմաններ են ստեղծվել թեկնածուների միջեւ, ընտրական հանձնաժողովների ղեկավար եռյակների մեծամասնության կազմը հնարավորություն է տվել

ապահովելու մեկ քաղաքական ուժի կողմից ընտրությունների կազմակերպման վերահսկողությունը, արձանագրվել են մի քանի հարձակումներ նախընտրական գրասենյակների վրա, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը համարժեք կերպով չի իրականացրել լրատվամիջոցներին վերահսկելու իր լիազորությունը, հավաքվել են անձնագրային տվյալներ հնարավոր ընտրակեղծիքներ կատարելու նպատակով եւ այլն: Դիմողը լրացուցիչ որեւէ փաստարկ չի ներկայացրել սահմանադրական դատարան, դիմումին կցելով միայն ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության՝ 2008թ. փետրվարի 19-ի Հանրապետության Նախագահի ընտրությունների վերաբերյալ նախնական զեկույցը:

4. Դիմող՝ Հանրապետության Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի ներկայացուցիչների պնդմամբ Հանրապետության Նախագահի 2008 թվականի փետրվարի 19-ի ընտրության նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղի են ունեցել այնպիսի ընտրախախտումներ, որոնք խախտել են ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածում ամրագրված՝ ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները:

Ըստ դիմող կողմի՝ ընտրական իրավունքի համընդհանրության սկզբունքի խախտումը դրսևորվել է նրանում, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի 5-րդ մասով սահմանափակվել է արտասահմանում բնակվող կամ գտնվող բազմահազար ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքը՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 30 եւ 43 հոդվածները:

Դիմողի կարծիքով՝ որպէս համընդհանուր ընտրական իրավունքի խախտման դրսևորում է նաեւ ընտրողների ռեգիստրում շուրջ 80.000 քաղաքացիների «ծննդյան ամսաթիվը, ամիսը եւ տարին» սյունակում ամսաթիվը եւ ամիսը «00.00» նշելը:

Դիմողի կարծիքով՝ հազարավոր քաղաքացիներ միաժամանակ ընդգրկված են եղել հիմնական եւ լրացուցիչ ցուցակներում ու քվեարկել են կրկնակի անգամ, քվեարկության օրը կրկնակի քվեարկություններ են իրականացվել անձնագրի մեջ վերջին էջին հաջորդող կազմի ներսի ներդիր էջերի միջոցով՝ դրանց վրա քվեարկությանը մասնակցելու մասին դրոշմակնիք դնելու միջոցով:

Ի հիմնավորումն հավասար ընտրական իրավունքի խախտման՝ դիմողը, մասնավորապէս, ներկայացրել է հետեւյալ փաստարկները.

- ՀՀ ընտրական օրենսգրքում ընտրությունների նշանակմանը հաջորդող եւ նախընտրական քարոզչության սկզբին նախորդող ժամանակահատվածի համար հստակ իրավական հիմքերի բացակայության հետեւանքով՝ ընտրված հռչակված թեկնածուի համար ստեղծվել է նախընտրական քարոզչության վաղաժամկետ մեկնարկի հնարավորություն, ինչը խախտել է դիմողի եւ ընտրված հռչակված թեկնածուի միջեւ հավասարությունը՝ հոգուտ վերջինիս,
- ի խախտումն ՀՀ ընտրական օրենսգրքի՝ Հանրապետության Նախագահը եւ՝ նախընտրական քարոզչությանը նախորդող ժամանակահատվածում, եւ՝ նախընտրական քարոզչության ընթացքում հանդես է եկել

ընտրված ճանաչված թեկնածուի օգտին կատարվող քարոզչությամբ, ինչպես նաև դիմողի նկատմամբ հակաքարոզչությամբ,

- այնպիսի պայմաններում, երբ ՀՀ Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանը, ընտրությունների ընթացքում շարունակել է կատարել իր աշխատանքային պարտականությունները որպես ՀՀ վարչապետ, ստեղծվել են իրական հնարավորություններ թեկնածուների միջև հավասարությունը հօգուտ այդ թեկնածուի խախտելու համար: Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը շարունակել է իրականացնել ՀՀ վարչապետի դիրքում գործադիր իշխանության ղեկավարի իր լիազորությունները՝ առանց դրանց հայեցողական իրականացման նկատմամբ վերահսկողության՝ օգտագործելով իր պաշտոնական դիրքի առավելություններն ի շահ իր անձի ընտրության եւ ի վնաս Հանրապետության Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի:

Ազատ ընտրությունների իրավունքի խախտման առնչությամբ դիմողը, մասնավորապես, մատնանշել է նախընտրական քարոզչության ընթացքում տեղի ունեցած, իր կարծիքով, հետեւյալ բնույթի ընտրախախտումները.

- 31.01.2008թ. եւ 17.02.2008թ. Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական քարոզչությանը ներգրավվել է կրոնական կազմակերպություն՝ ի դեմս Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդը, ինչի արդյունքում, ըստ դիմողի, խախտվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը եւ Սահմանադրության 8.1. հոդվածի 1-ին մասը,
- ՀՀ զինված ուժերի հրամանատարական պաշտոններ զբաղեցնող երկու սպաներ՝ ի խախտումն ՀՀ ընտրական օրենսգրքի, կատարել են հրապարակային եւ պաշտոնական հայտարարություններ Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին,
- Հանրային հեռուստաընկերության «Հայրուր» լրատվական ծրագրով եթեր է հեռարձակվել Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի՝ աշխատանքային խմբի գրասենյակ կատարած այցը լուսաբանող ռեպորտաժ, ինչը հանդիսացել է նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում: Նշված աշխատանքային խումբն ստեղծվել է ՀՀ վարչապետի 2007թ. դեկտեմբերի 4-ի թիվ 855-Ա «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» որոշմամբ: Ըստ դիմողի՝ այս խմբի ստեղծմամբ օգտագործվել է Հանրապետության Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի՝ որպես վարչապետ ունեցած դիրքը, եւ այդ խմբի կողմից նրա անունից պետական միջոցների հաշվին տարաբնույթ եւ զանգվածային ծառայություններ են մատուցվել քաղաքացիներին,
- հեռարձակվող 8 ալիքների կողմից 21.01.2008թ. մինչեւ 30.01.2008թ. ընկած ժամանակահատվածում երկու թեկնածուների հիշատակումներից Սերժ Սարգսյանն զգալի մեծամասնությամբ դրական է ներկայացվել, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ բոլոր դեպքերում բացասական, հեռարձակվող մի քանի ալիքների կողմից երկու թեկնածուների լուսաբանման ժամանակ հավասարակշռություն չի ապահովվել, եթերաժամանակը բաշխվել է ոչ

հավասար ձեռով: Դիմողը, ի հիմնավորումն իր այն պնդման, որ էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցների կողմից խախտվել է օրինականության, հավասարության եւ ազատության սկզբունքը, վկայակոչել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության զեկույցը եւ Երեւանի մամուլի ակումբի սույն թվականի փետրվարի 14-ին հրապարակած միջանկյալ հաշվետվությունը,

- ըստ դիմողի՝ իրականացվել է արգելված քարոզչություն, որն էլ, իր հերթին, դրսևտրվել է նրանում, որ 2008թ. փետրվարի 18-ին եւ 19-ին Սերժ Սարգսյանի քարոզչական պաստառները շարունակվել են պահպանվել Երեւանի բոլոր քարոզչական վահանակների վրա, ինչպես նաեւ հեռուստասերիալի հերոսների միջոցով իրականացվել է թաքնված քարոզչություն:

Դիմողը գտնում է նաեւ, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից միջոցներ են ձեռնարկվել Հանրապետության Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի կամ նրա կողմնակիցների հանդիպումները խոչընդոտելու, այդ թվում՝ կողմնակիցներին ծեծելու միջոցով, հանդիպումներում ընտրողների մասնակցության աստիճանն արհեստականորեն փոքրացնելու համար, եւ, հակառակը՝ Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի կամ նրա կողմնակիցների հանդիպումների ժամանակ՝ այդ հանդիպումներում առանց ծնողների գիտության ընդգրկելով դպրոցահասակ երեխաների կամ աշխատանքից կտրելով՝ աշխատանքային կոլեկտիվների:

Գնահատելով քաղաքացիների ազատ ընտրության իրավունքը խախտող փաստերը՝ դիմողը գտնում է, որ խախտվել է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը, համաձայն որի՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների միջոցով, ինչպես նաեւ խախտվել են Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածում ամրագրված՝ մասնակից պետությունների՝ ազատ ընտրություններ անցկացնելու պարտավորությունը, ՀՀ ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի պահանջները:

Դիմողը գտնում է, որ առկա են նաեւ ֆինանսական կարգապահության սկզբունքի խախտումներ: Մասնավորապես, Սերժ Սարգսյանի նախընտրական հիմնադրամին, ի խախտումն ՀՀ ընտրական օրենսգրքի 25 հոդվածի, մուծումներ են կատարել պետական բաժնեմաս ունեցող ձեռնարկություններ, որոնց բաժնեհավաք կապիտալում 30 տոկոսից ավելին կազմում են օտարերկրյա միջոցները (օրինակ՝ «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն), ինչպես նաեւ Սերժ Սարգսյանը գերազանցել է նախընտրական քարոզչության համար օրենքով նախատեսված առավելագույն գումարի չափը:

Դիմողի պնդմամբ՝ ինչպես դիմում-բողոքների քննարկումը կենտրոնական ընտրական հանձնաժողովում, այնպես էլ հայցերի քննությունը ՀՀ վարչական դատարանում կրել է ձեւական բնույթ, ինչի արդյունքում պաշտպանության այդ միջոցները եղել են ոչ արդյունավետ: Մասնավորապես, առանձին դիմում-

բողոքներ ընդհանրապես քննության առարկա չեն դարձել կամ քննվել են ոչ պատշաճ կերպով: Դիմում-բողոքների քննության ընթացքում չի հարգվել վարչական վարույթի ընթացքում լսվելու՝ դիմողի իրավունքը, չի ապահովվել դրանց քննության հրապարակայնությունը, հանձնաժողովի որոշ անդամներ դիմում-բողոքների քննարկման օրվա մասին չեն ծանուցվել, անց են կացվել դռնփակ քննարկումներ՝ հնարավորություն չտալով ՁԼՄ-ներին ներկա գտնվելու քննարկումներին: Այս կապակցությամբ դիմողը վկայակոչում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության զեկույցը, որի համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովում դիմում-բողոքների քննության ընթացքը կասկածի տակ է դնում դիմողի համար այդ իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը:

Դիմողը գտնում է, որ ԿԸՀ-ի վիճարկվող՝ 24.02.2008թ. թիվ 24-Ա որոշումն ընդունվել է ի խախտումն չհանձնող օրենսգրքի 632 հոդվածի 3-րդ, 83 հոդվածի 1-ին եւ 86 հոդվածի 2-րդ կետերի պահանջների, ինչը, մասնավորապես, դրսևորվել է հետևյալում.

ԿԸՀ-ն իր 24.02.2008թ. միստում չի քննարկել իրեն ներկայացված ավելի քան 60 դիմում-բողոքներում եւ չհ վարչական դատարանում գտնվող համապատասխան ընտրական գործերում առկա՝ չհ ընտրական օրենսգրքի խախտումների վերաբերյալ տեղեկությունները,

հաշվի չեն առնվել ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղի ունեցած ընտրախախտումները, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա,

վիճարկվող որոշումը կայացնելիս ԿԸՀ-ի կողմից անտեսվել են իրեն ուղղված մի շարք դիմումներ եւ դատական վիճարկումներում գտնվող գործեր,

վիճարկվող որոշումը ԿԸՀ-ի կողմից մինչեւ օրենքով սահմանված 7-օրյա ժամկետի լրանալն ընդունելը հնարավորություն չի ընձեռել դիմողին իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը,

վիճարկվող որոշումն ընդունվել է այն պայմաններում, երբ չհ վարչական դատարան ներկայացված ընտրական վեճի վերաբերյալ հայցադիմումը դեռեւս քննության առարկա չի դարձվել:

Դիմողը գտնում է նաեւ, որ քվեարկության ընթացքում եւ քվեարկության արդյունքներն ամփոփելիս նույնպես տեղի են ունեցել տարաբնույթ ընտրախախտումներ՝ մատնանշելով ինչպես իր, այնպես էլ այլ թեկնածուների վստահված անձանց դիմում-բողոքները, վերահաշվարկի պահանջի վերաբերյալ դիմումները՝ ուղղված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին եւ ԿԸՀ-ին: Մասնավորապես, դրանք վերաբերում են դիմողի վստահված անձանց գնահատմամբ իրենց իրավունքների ոտնահարմանը, նրանց համար ստեղծված խոչընդոտներին, լցոնման դեպքերին, ձայների սխալ հաշվարկմանը, քվեարկության գաղտնիությունը չապահովելուն, առանձին տեղամասերում, մասնավորապես, զինվորականների քվեարկության դեպքում, տեղի ունեցած բաց քվեարկությանը, ընտրակաշառքի երեւույթին: Դիմողը գտնում է նաեւ, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ քվեարկության արդյունքներն ամփոփելու վերաբերյալ արձանագրությունների ելակետային տվյալները փո-

փոխվել են ԿԸՀ-ի կողմից, առանձին տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը, ի խախտումն ՀՀ ընտրական օրենսգրքի 61 հոդվածի 5-րդ մասի, ընդհատվել են:

Դիմողը պնդում է, որ թվով 167 ընտրական տեղամասերում ներկայացրել է քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջ, որոնց ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն ընդհանրապես չեն անդրադարձել կամ էլ կայացրել են դրանք մերժելու վերաբերյալ չպատճառաբանված որոշումներ՝ չսպահովելով դիմողի մասնակցության իրավունքը: Թվով 35 տեղամասերում ներկայացրել է վերահաշվարկի պահանջներ, որոնք կամ մնացել են անարձագանք, կամ մերժվել են, ըստ նրանց, անհիմն պատճառաբանությամբ:

Ըստ դիմողի՝ իր կողմից մատնանշված ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող ու պարբերական բնույթ եւ այդ պայմաններում խախտվել են ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված՝ ընտրական իրավունքի սկզբունքները:

Իր փաստարկները հիմնավորելու համար դիմող կողմը սահմանադրական դատարան է ներկայացրել տարբեր դիմում-բողոքներ, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություններ, ի պաշտպանություն ընտրական իրավունքի հարուցված դատական գործերի արդյունքում ընդունված դատական ակտեր, մոնիտորինգի հաշվետվություններ, դիտորդական առաքելությունների զեկույցներ, տեսաձայնագրություններ:

Հանրապետության Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը սահմանադրական դատարանում մասնավորապես շեշտեց նաեւ, որ ըստ Սահմանադրության 53.1. հոդվածի՝ ռազմական եւ արտակարգ դրության ժամանակ Հանրապետության Նախագահի ընտրություն չի անցկացվում, իսկ Հանրապետության Նախագահը շարունակում է իր լիազորությունների իրականացումը: Կողմը դրանից բխեցնում է, որ «Նախագահի ընտրություն» նշանակում է ընտրական ողջ գործընթացը՝ սկսած առաջադրումից մինչեւ բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտը, այն է՝ սահմանադրական դատարանի որոշումը: Հետեւաբար, քանի որ արտակարգ դրություն է, ապա ընտրությունները վավերական կամ օրինական չեն կարող համարվել:

5. Պատասխանող կողմը, անդրադառնալով ընտրական իրավունքի համընդհանրության սկզբունքի խախտումների վերաբերյալ դիմողների այն պնդումներին, թե ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով արտասահմանում ընտրական տեղամասեր չստեղծելը խախտում է «ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը», իսկ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով նախընտրական քարոզչությանը նախորդող ժամանակահատվածի համար «հստակ իրավական հիմքերի» բացակայությունը խախտում են «ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը», ինչպես նաեւ այն հարցադրմանը, որ Հանրապետության Նախագահը, ի խախտումն ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, ընտրված թեկնածուի օգտին բացահայտ քարոզչություն է իրականացրել, գտնում է, որ.

- ընտրական օրենսգիրքը չի նախատեսում քվեարկության կազմակերպում եւ անցկացում Հայաստանի Հանրապետության աշխարհագրական տարածքից դուրս, ուստի արտասահմանում ընտրական տեղամասերի չկազմավորումն ու քվեարկության չանցկացումն ընտրական օրենսգրքի խախտում չեն եւ չեն կարող հիմք հանդիսանալ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու համար,
 - իրավաչափ նախընտրական քարոզչությունն անց է կացվում բացառապես օրենքով սահմանված ժամկետներում եւ օրենքով սահմանված կարգով: Ընտրական օրենսդրությունը կարգավորում է բացառապես ընտրական հարաբերությունները եւ չի տարածվում այլ բնույթի հարաբերությունների վրա, եթե դրանք նույնիսկ նմանություններ ունեն որոշ ընտրական հարաբերությունների հետ: Քաղաքացիների, կուսակցությունների կողմից մինչեւ նախընտրական քարոզչության փուլն սկսվելն իրականացվող տեղեկատվություն տարածելու գործունեությունը, եթե նույնիսկ նրանք ունեն նախընտրական քարոզչության նշաններ, չեն համարվում նախընտրական քարոզչություն: Քաղաքական քարոզչությունը կամ քաղաքական գովազդը, ինչպես էլ որ մեկնաբանվեն, միեւնույն է, ընտրական օրենսգրքի իմաստով նախընտրական քարոզչություն չեն,
 - ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի նորմը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել, որ խոսքը վերաբերում է պետական մարմնի իրավասություններ իրականացնելու շրջանակներում նախընտրական քարոզչություն իրականացնելու արգելքին: Իսկ հրապարակային ելույթը՝ Հանրապետության Նախագահի՝ որպես պետական մարմնի, իրավասությունների կատարում չէ, այլ քաղաքական գործունեություն:
- Պատասխանող կողմը՝ անդրադառնալով նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումների վերաբերյալ դիմողների այն պնդումներին, թե կրոնական կազմակերպության կողմից քարոզչություն է կատարվել, գտնում է, որ.
- Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի կազմակերպած միջոցառմանը որեւէ թեկնածուի նախընտրական կարգախոսը կրող անձանց մասնակցությունը որեւէ կերպ չի կարող նույնացվել կրոնական կազմակերպության կողմից քարոզչություն կատարելու հետ, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրությամբ եւ գործող օրենսդրությամբ երաշխավորված է կրոնի ազատությունը, միաժամանակ, Հանրապետության Նախագահի թեկնածուների համար այս ազատության դրսեւորումն արգելված չէ:
- Պատասխանող կողմը, անդրադառնալով նախընտրական քարոզչության փուլում ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ազատ ընտրությունների իրավունքի խախտման վերաբերյալ դիմողների այն պնդումներին, թե կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվել, գտնում է, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր կողեգիալ բնույթով պայմանավորված՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար օգ-

տագործում է 4 եղանակ՝ հանձնաժողովի անդամների նախաձեռնությամբ, կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի միջոցով, դիմումների, բողոքների քննության, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված տեղեկատվության միջոցով:

Ըստ պատասխանող կողմի՝ հանձնաժողովի անդամների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում չի արձանագրվել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան աշխատակիցը նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումների վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի առջև հարց չի բարձրացրել: Դիմում-բողոքների մի մասը վերաբերել է նախընտրական քարոզչության սահմանված կարգին եւ բոլոր դիմում-բողոքների մասին տեղեկացվել են հանձնաժողովի բոլոր անդամները: Դիմումներում մատնանշված փաստերի մի մասը հանձնաժողովը չի համարել որպես նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում, մի մասը վերահասցեագրվել է կամ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվել այլ իրավասու մարմինների քննարկմանը: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման վերաբերյալ փաստեր կենտրոնական ընտրական հանձնաժողովին չեն ներկայացվել:

Պատասխանող կողմը՝ անդրադառնալով արգելված քարոզչության վերաբերյալ դիմողների այն պնդումներին, թե Երեւանի բոլոր քարոզչական վահանակների վրա փակցված են մնացել թեկնածուի նկարով, քվեաթերթիկում նրա համարով եւ քվեարկության նշումով քարոզչական պատառները, հեռուստասերիալի հերոսների միջոցով թաքնված քարոզչություն է իրականացվել Սերժ Սարգսյանի օգտին, գտնում է, որ.

- համաձայն ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի՝ քվեարկության եւ դրան նախորդող օրերի ընթացքում նախընտրական քարոզչություն կատարելու արգելքից բացառություն է արված հենց տպագիր՝ փակցված քարոզչական նյութերի համար: Տեղամասային կենտրոնում չգտնվող քարոզչական նյութերը քվեարկության օրը մնում են իրենց տեղերում,
- հեռուստասերիալի հերոսների միջոցով Սերժ Սարգսյանի օգտին թաքնված քարոզչության առնչությամբ դիմումում բավարար տեղեկություններ ներկայացված չեն այդ հարցադրման անդրադառնալու համար:

Պատասխանող կողմը, անդրադառնալով ընտրակարգի դեմ խախտումների վերաբերյալ դիմողների այն պնդումներին, թե տեղական ինքնակառավարման մարմինները եւ պետական մարմիններն օգտագործել են իրենց վարչական հնարավորությունները Տեր-Պետրոսյանի հանդիպումներին մարդկանց մասնակցությունը նվազեցնելու, իսկ Սերժ Սարգսյանի դեպքում՝ մեծացնելու համար, ՀՀ հարկային տեսչությունը ներգրավվել է ընտրական գործընթացներին, գտնում է, որ. այդ փաստերը /եթե հաստատվեն/ կարող են պարունակել հանցագործության հատկանիշներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը օժտված չէ այդ փաստերի առկայություն բացահայտելու անհրաժեշտ իրավունքներով եւ միջոցներով, մնան բոլոր դեպքերի վերա-

բերյալ ստացված դիմումները վերահասցեագրվել են ՀՀ դատախազությանը:

Պատասխանող կողմը, անդրադառնալով նախընտրական քարոզչության ընթացքում վարչապետի դիրքի օգտագործման վերաբերյալ դիմողների այն պնդումներին, թե վարչապետի կողմից 2007 թվականի դեկտեմբերի 4-ին «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» 855-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը գործել է Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի անունից եւ տարաբնույթ ծառայություններ է մատուցել պետական միջոցների հաշվին, որ դիմումները ձեւակերպված են եղել մշակված ձեւաթղթի վրա եւ դրանց հասցեատերն է «ՀՀ Նախագահի թեկնածու, ՀՀ վարչապետ Ս.Սարգսյանը», գտնում է, որ.

- Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված դիմումներում Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնից զատ այլ կարգավիճակի մատնանշումը «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի» մասին օրենքի իմաստով պետք է համարել ձեւական սխալ, որը հիմք չէր կարող հանդիսանալ դիմումի ընդունումը մերժելու համար: Նման վարքագիծը կհակասեր «ձեւական պահանջների չարաշահման արգելքի» սկզբունքին: Ըստ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի գրության՝ ուղղված կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վարչապետի այդ որոշումը նպատակ է ունեցել ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում քաղաքացիների դիմումների համակողմանի ու լիարժեք քննարկումը, ինչպես նաեւ բարձրացնել այդ ոլորտում աշխատանքների արդյունավետությունը,
- օրենսդրությամբ ամրագրված պարտականությունների կատարումը, անշուշտ, չի կարող դիտվել որպես ծառայությունների մատուցում: Այդ մոտեցումն ամրագրված է նաեւ վարչական դատարանի թիվ ՎԴ /1014/05/08 առ 16.02.2008 թվականի վճռով: Դիմողը որեւէ ապացույց չի կցել, որը կվկայեր, որ մատուցվել է ծառայություն:

Պատասխանող կողմը՝ անդրադառնալով համընդհանուր ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմողների այն պնդումներին, թե ընտրողների ռեգիստրում առկա են 80000 ընտրողներ, որոնց ծննդյան ամիս-ամսաթիվը նշված է 00.00, այդ կերպ նշելով հանրապետությունից բացակա կամ մահացած ընտրողներին, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից «անհետացել են» 00.00 ծննդյան օրերով նշված քաղաքացիների վերաբերյալ տվյալները, ինչպես նաեւ այն հարցադրմանը, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է վարչական ակտ, որով սխալ է մեկնաբանել ընտրական օրենսգրքում առկա «վերջին էջ» եզրույթը, գտնում է, որ

- Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչությունից այս կապակցությամբ հայտնել են, որ քաղաքացիների ԽՍՀՄ նմուշի նախկին անձնագրերը ձեւակերպելիս, ըստ գործող կարգի՝ ծննդյան վկայականներում անձի ծննդյան օրը եւ ամիսը բացակայելու դեպքում, գրվում էր միայն ծննդյան տարեթիվը: Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրերի տպագրության համակարգին անցնելու կապակցությամբ, ավտոմատ ծրագրի պահանջներից ելնե-

լով, միայն ծննդյան տարեթիվ ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերը տպագրելու համար ծննդյան օրվա եւ ամսի դիմաց լրացվում է «01.07» նշումը: Հետագայում, քաղաքացիների տվյալների հնարավոր կրկնությունից խուսափելու նպատակով, ինչպես նաեւ հաշվի առնելով քաղաքացիների դիմում-բողոքները, անձնագրային համակարգի ավտոմատացված համալիրի ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ «01.07» նշումը փոխարինվել է «00.00» նշումով:

Ըստ անձնագրային համակարգի ավտոմատացված համալիրի պահոցի տվյալների՝ Հայաստանի Հանրապետության թվով 73.730 քաղաքացիների անձնագրերում ծննդյան օրը եւ ամիսը նշվել է «00.00»: Դիմողը որեւէ ապացույց չի ներկայացրել, որ անձնագրերում ծննդյան օրը եւ ամիսը «00.00» նշելը որեւէ կերպ ազդել է ընտրությունների արդյունքների վրա կամ հանդիսանում է ընտրական իրավունքի խախտում:

Պատասխանողը գտնում է նաեւ, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից «00.00» ծննդյան օրերով նշված քաղաքացիների վերաբերյալ տվյալների «անհետացման» առնչությամբ դիմող կողմի պնդումն արժանահավատ չէ: «00.00» ծննդյան օրերով նշված քաղաքացիների վերաբերյալ տվյալներն ինչպես քվեարկության օրվանից առաջ, այս պահին էլ նույն կարգով՝ անփոփոխ, զետեղված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքէջում:

Ինչ վերաբերում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտին, ապա դրա վերաբերյալ առկա է վարչական դատարանի վճիռը, որով դիմողի պահանջը մերժվել է:

Պատասխանող կողմը, անդրադառնալով ֆինանսական կարգապահության սկզբունքի խախտումների վերաբերյալ դիմողների պնդումներին, գտնում է, որ իրականություն է, որ Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական հիմնադրամ մուծումներ են կատարել նաեւ կազմակերպություններ, որոնք դրա իրավունքը չունեին: Սակայն օրենսգիրքը նման դեպքերում նախատեսում է, որ այդ մուծումները պետք է փոխանցվեն պետական բյուջե, եւ օրենքի պահանջը՝ այդ գումարները պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ, կատարված է ամբողջությամբ: Դիմողը չի բերել որեւէ օրինակ, որ նման գումարը պետական բյուջե փոխանցված չէ եւ/կամ օգտագործված է քարոզչության նպատակով: Տվյալ թեկնածուի կողմից նախընտրական քարոզչության վրա, բացի նախընտրական հիմնադրամի միջոցներից, այլ միջոցներ օգտագործելու՝ դիմողի պնդումը հավաստող որեւէ ապացույց կցված չէ եւ այն պետք է թողնել անարձագանք:

Պատասխանող կողմը՝ անդրադառնալով ԿԸՀ-ի կողմից սեփական նախաձեռնությամբ վերահսկողություն չիրականացնելու, դիմում-բողոքների քննարկման կարգի խախտումների վերաբերյալ դիմող կողմի պնդումներին, գտնում է, որ ընտրական հանձնաժողովներում դիմումները (բողոքները) եւ առաջարկություններն ընդունվում, քննարկվում եւ դրանց պատասխան են տրվում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հանձնաժողովը թվով 57 դիմումների վերաբերյալ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ընդունել է որոշումներ:

Պատասխանող կողմը վերահաշվարկների առնչությամբ փաստեց, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում իրականացվել է 135 տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ, որից 62-ը՝ Լ. Տեր-Պետրոսյանի, իսկ 11-ը՝ Տ. Կարապետյանի ներկայացուցիչների դիմումների հիման վրա: Արդյունքում, ընդամենը 1 տեղամասում է գրանցվել արդյունքների էական աղավաղում, որի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ: Ժամանակի սղության պատճառով օրենքով սահմանված կարգի շրջանակներում չեն վերահաշվարկվել տարբեր ընտրատարածքների 24 տեղամասերի քվեարկության արդյունքները, որից 19-ը՝ Լ. Տեր-Պետրոսյանի ներկայացուցիչների դիմումներով:

Պատասխանող կողմը՝ անդրադառնալով թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 10, 11, 12, 13, 14, 16, 27, 28, 29, 31, 34, 40 ընտրատարածքների վերաբերյալ դիմողի կողմից ներկայացված լրացուցիչ թղթակցություններին, գտնում է, որ ներկայացված փաստաթղթերից իրավական արժեք կարող են ներկայացնել բացառապես սահմանված կարգով գրված դիմում-բողոքները, վստահված անձանց՝ վերահաշվարկ կատարելու վերաբերյալ դիմումները:

Պատասխանող կողմը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմող կողմն ունեցել է գրանցված 5051 վստահված անձ, գտնում է նաև, որ նրանց միայն 6.3 %-ն է մասնակցել վերոհիշյալ թղթակցությունների ներկայացմանը: Նշված թղթակցություններում արտահայտված դատողությունները, ըստ պատասխանող կողմի, վերաբերում են Հանրապետությունում ձեւավորված 1923 տեղամասերից միայն 291-ին կամ 15.1%-ին: Պատասխանող կողմն ընդգծեց նաև, որ հանրապետության 1923 ընտրական տեղամասերից 1506-ում (78.3 տոկոս) քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունն ստորագրել են հանձնաժողովի բոլոր ութ անդամները, 340-ում՝ 7 անդամ, 69-ում՝ 6 անդամ եւ միայն ութ տեղամասերում՝ 5 անդամ: Հանրապետության 1923 ընտրական տեղամասերի հանձնաժողովների ընդհանուր թվով 15.384 անդամներից հատուկ կարծիք ներկայացնելու վերաբերյալ ցանկություն են հայտնել (այդ մասին գրառում են կատարել արձանագրությունում) հանձնաժողովների միայն 39 անդամներ (0.25%)՝ 32 տեղամասերում (1.66%), իսկ փաստացի նման կարծիք է ներկայացվել միայն երեք տեղամասերում (0.16%)՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների միայն 4 անդամների կողմից (0.03%): Այս փաստերի վերաբերյալ դիմող կողմը հարցեր չառաջադրեց եւ առարկություններ չներկայացրեց:

Պատասխանող կողմը գտնում է, որ չնայած առանձին ոչ էական թերություններին, Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրության արդյունքները լիովին համապատասխանում են իրականությանը, ընտրություններն անցկացվել են ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների պահպանմամբ, իսկ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008թ. փետրվարի 24-ի «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» թիվ 24-Ա որոշումը կայացվել է ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

6. Հարակից պատասխանող՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչն անդրադառնալով դիմողների մատնանշած ընտրախախտումներին եւ ՀՀ դատախազության կողմից նշված ընտրախախտումների առնչությամբ ձեռնարկված միջոցառումներին, նշեց, որ Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրություններում հնարավոր ընտրախախտումները կանխարգելելու, դրանց օպերատիվ արձագանքելու եւ համարժեք իրավական գնահատական տալու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ: Նախընտրական քարոզարշավի ընթացքում, ընտրական գործընթացների հետ կապված, դատախազական մարմինների կողմից ընթացք է տրվել 52 հաղորդումների, հայտարարությունների եւ հրապարակումների, որոնց արդյունքում 29 դեպքում մերժվել է քրեական գործի հարուցումը, որից 19-ում՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ, 13-ով տրվել է գրավոր պարզաբանում, 12-ով հարուցվել են քրեական գործեր: Ստացված հաղորդումները եւ հայտարարությունները քննարկվել են օրենքով սահմանված ժամկետներում, ժամկետի խախտում կամ անհիմն ձգձգում թույլ չի տրվել: Ըստ ՀՀ դատախազության ներկայացուցչի՝ ներկայացված վիճակագրական տվյալները, ինչպես նաեւ հարուցված քրեական գործերի բնույթը, դրանց աշխարհագրությունը վկայում են, որ, ըստ էության, նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղի ունեցած իրավախախտումները զանգվածային ու տարածված բնույթ չեն կրել: Կողմը գտնում է, որ ողջ ընտրական գործընթացի շրջանակներում դիմող կողմի ներկայացուցիչներն իրենց իրավունքների պաշտպանության իրավական հնարավորություններն արդյունավետ օգտագործելու փոխարեն տարբեր կերպ փորձել են զանգվածային ընտրախախտումների երեսութականություն ստեղծել՝ տարածելով բազմաթիվ անհիմն դիմումներ, բողոքներ, հայտարարություններ:

Ինչ վերաբերում է ընտրության օրը տեղի ունեցած ընտրախախտումներին, ապա այդ կապակցությամբ, հարակից պատասխանողի կարծիքով, ընտրական հանձնաժողովի աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար հարուցվել է թվով 11 քրեական գործ, եւս 11 քրեական գործ է հարուցվել քվեարկության արդյունքները՝ արձանագրությունները կեղծելու համար, 2 քրեական գործ՝ այլ անձի փոխարեն քվեարկելու համար, 1 քրեական գործ հարուցվել է սուտ մատնության հատկանիշներով: Միաժամանակ, ՀՀ դատախազությունում ձեւավորված աշխատանքային խմբի կողմից ընտրախախտումների վերաբերյալ ստացված հաղորդումների քննարկման արդյունքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ իրականում տեղ են գտել ընտրական իրավունքի տարաբնույթ խախտումներ, սակայն դրանք զանգվածային եւ կազմակերպված բնույթ չեն կրել:

7. Հարակից պատասխանող՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ներկայացուցիչն անդրադառնալով Հանրապետության Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի դիմումում ներկայացված՝ ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների կողմից թույլ տրված իրավախախտումներին, նշեց, որ դրանք հիմնված են ենթադրությունների վրա, եւ դիմողի փաստարկ-

ներն ամրապնդված չեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածով նախատեսված ապացույցներով: Հարակից պատասխանողը՝ չհամաձայնելով կոնկրետ փաստերի վերաբերյալ դիմող կողմի փաստարկներին, ներկայացրեց իր հակափաստարկները եւ դրանց հիմնավորումները:

Քաղաքացիներին հիմնական եւ լրացուցիչ ցուցակներում միաժամանակ ընդգրկելու, կրկնակի քվեարկության, լրացուցիչ ցուցակներում ընդգրկված անձանց թվաքանակի վերաբերյալ ՀՀ ռստիկանության կողմից տեղեկանքներ չտրամադրելու փաստերի առնչությամբ՝ ՀՀ ռստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը Հանրապետության Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբից ստացել է 2 դիմում, որոնցից մեկով պահանջվել է այն ընտրողների թիվը, որոնք ընդգրկվել են լրացուցիչ ցուցակներում, իսկ մյուսով պահանջվել է այդ ցուցակների էլեկտրոնային տարբերակը: Դիմումները 18.02.2008թ. բավարարվել են, այսինքն՝ դիմող կողմը լիակատար հնարավորություն է ունեցել ռստիկանության կողմից տրամադրված փաստաթղթերի հիման վրա ճշտել ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից անձանց հանելու եւ լրացուցիչ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Քաղաքացիների ընտրական իրավունքն ապահովելու նպատակով 2008թ. հունվարի 19-ից փետրվարի 19-ն ընկած ժամանակահատվածում անձնագրերի կորստյան գործերով ՀՀ ռստիկանության տարածքային մարմինների կողմից 1330 անձի տրվել է թիվ 9 ձեռի տեղեկանք, իսկ 264 քաղաքացու՝ ընտրությանը մասնակցելու համար սահմանված տեղեկանք: Ընտրատեղամասերում ծառայություն կատարող ռստիկաններն ընտրությունների ընթացքում կարգուկանոնի պահպանման հարցերում միջամտել են միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի միջնորդությամբ: Նման միջամտության արդյունքում կանխվել է հանցագործության 6 դեպք:

8. Հարակից պատասխանող՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ներկայացուցիչ Գ. Ամալյանը հայտնեց, որ Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրության նախընտրական քարոզարշավի ընթացքում դիմող Լ. Տեր-Պետրոսյանի դիմումում հիշատակված հեռուստառադիոընկերությունների հաղորդումները մոնիտորինգի են ենթարկվել նշված հանձնաժողովի աշխատակազմի ծրագրերի մոնիտորինգի եւ վերահսկողության վարչության կողմից եւ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ չեն հայտնաբերվել: Իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նախընտրական քարոզչության ժամանակահատվածից դուրս ՁԼՄ-ների գործունեությունը քննարկման առարկա չի կարող դառնալ: Ինչ վերաբերում է նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների դրական կամ բացասական համատեքստում լուսաբանումների վերաբերյալ պնդումներին, ապա դա արվել է անհասկանալի մեթոդիկայով եւ փաստարկված չէ:

9. Գործով որպես երրորդ անձ ներգրավված՝ Հանրապետության Նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի ներկայացուցիչ Դ. Հարությունյանը դիմողի

այն պնդման կապակցությամբ, որ Հանրապետության Նախագահի թեկնածու՝ ՀՀ վարչապետ Ս. Սարգսյանը պարտավոր էր ՀՀ ընտրական օրենսգրքի 78 հոդվածի պահանջներին համապատասխան ընտրությունների ընթացքում ազատվել իր աշխատանքային պարտականությունների կատարումից, ներկայացրեց հետևյալ բացատրությունը: ՀՀ ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի երկու նախադասությունների համադրումից կարելի է հանգել այն եզրակացության, որ վարչապետը հանդիսանում է «պետական ծառայության մեջ գտնվող»: Սակայն, հաշվի առնելով 2002 թվականի հունվարի 9-ին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում «հանրային ծառայություն» հասկացության սահմանումը, եւ նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունում սահմանված՝ պետական ծառայության տարատեսակները՝ քաղաքական եւ հայեցողական պաշտոնները պետական ծառայության պաշտոններ չեն համարվում: Այդ իսկ պատճառով ՀՀ վարչապետի պաշտոնը քաղաքական պաշտոն է, եւ, հետեւաբար, վարչապետը պետական ծառայության մեջ չի գտնվում: Դ. Հարությունյանը խնդրո առարկայի կապակցությամբ փաստեց ՀՀ ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի եւ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի դրույթների միջեւ առկա հակասությունը, ինչը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան լուծվում է հօգուտ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի այն նորմի, որի համաձայն ՀՀ վարչապետի պաշտոնը քաղաքական պաշտոն է:

Նախընտրական հիմնադրամի ձեւավորման աղբյուրների եւ միջոցների ծախսման օրինականության հարցի առնչությամբ Դ. Հարությունյանը հայտնեց, որ եղել են դեպքեր, երբ Ս. Սարգսյանի նախընտրական հիմնադրամ վճարումներ են կատարել նաեւ դրա իրավունքը չունեցող սուբյեկտներ, սակայն բոլոր նման դեպքերում այդ գումարները, օրենքի պահանջին համապատասխան, փոխանցվել են պետական բյուջե: Չի եղել որեւէ դեպք, երբ հիմնադրամից կատարվող ծախսերը գերազանցեն այդ պահին հիմնադրամ մուտք եղած օրինական վճարումները:

ՀՀ վարչապետի 2007թ. դեկտեմբերի 4-ի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի առնչությամբ դիմողի փաստարկներին ի պատասխան Դ. Հարությունյանը հայտնեց, որ այդ խմբի ստեղծումը հետապնդել է միայն մեկ նպատակ, այն է՝ 2007 թվականին դիմումների կտրուկ աճի պայմաններում (2005թ.՝ 3584 դիմում, 2007թ.՝ 18424 դիմում) ապահովել դրանց արդյունավետ քննարկումը եւ լուծումը: Այն դիմումները, որոնք ուղղված են եղել Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանին, ՀՀ կառավարության աշխատակազմից փոխանցվել են Հանրապետության Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբին: Միաժամանակ, կային բազմաթիվ դիմումներ, որոնցում որոշ թերացումով էին նշված հասցեատիրոջ պաշտոնը, այսինքն՝ դրանք ըստ էության եւ բովանդակային առումով ուղղված էին ՀՀ վարչապետին, սակայն որպես հասցեատեր նշված էր Հանրապետության Նախագահի թեկնածու, ՀՀ վարչապետին: Ըստ էության, այստեղ գործ ունենք «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի

իմաստով ձեռնարկի հետ, եւ նույն օրենքով ձեռնարկի պահանջների չարաշահումն արգելվում է, նման պարագայում վարչական մարմինը ինքնուրույն է վերացրել այդ սխալը՝ չձանրաբեռնելով դիմողներին լրացուցիչ վարչարարությամբ, որի ոչ միայն իրավունքն ունեն է կառավարության աշխատակազմը, այլեւ պարտավոր էր նման կերպ գործել:

Արտակարգ դրության պայմաններում սահմանադրական դատարանում դատավարությունը շարունակելու հարցի առնչությամբ երրորդ անձի ներկայացուցիչը հայտնեց, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 53.1. հոդվածի՝ արտակարգ դրության պայմաններում չի կարող անցկացվել Հանրապետության Նախագահի ընտրություն, իսկ ընտրություններն ավարտվում են իրավասու մարմնի կողմից ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելու համար լիազորված մարմնի ակտն ընդունելու պահից: Ընտրությունների արդյունքների բողոքարկումը չի հանդիսանում ընտրությունների բաղկացուցիչ փուլ: Ավելին, տվյալ պահին գործի քննության ընդհատումը կհակասի ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի 5-րդ մասին, ինչպես նաեւ 19 հոդվածին:

Ինչ վերաբերում է ընտրական վեճ քննելիս սահմանադրական դատարանի իրավասությունների շրջանակին, ապա այս կապակցությամբ ըստ ներկայացուցիչի՝ 2005թ. սահմանադրական բարեփոխումների եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների արդյունքում ներկայումս սահմանադրական դատարանը քննում է ոչ թե ընտրությունների արդյունքների, այլ Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճ: Նշված վեճի շրջանակներում սահմանադրական դատարանն իրավասու է քննության առնելու այն հարցը, թե որքանով է այդ որոշումն իրավաչափ, այսինքն՝ որոշակի փաստերի առկայությունը հաստատվելու դեպքում որոշումն ընդունող մարմինն արդյոք ընդունել է իրավաչափ որոշում, թե՛ ոչ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ ստանալով ԸԸՀ-ների քվեարկության համապատասխան արդյունքները, չի կարող դրանք չընդունել իր կողմից ընդունվող որոշումը կայացնելիս, քանի դեռ դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով չեն բողոքարկվել ՀՀ վարչական դատարան եւ փոփոխության չեն ենթարկվել դատական ակտերով: Սահմանադրական դատարանը, իր կառուցվածքով, ինչպես նաեւ վեճը լուծելու համար սահմանված ժամկետներով ի գործ է եւ իրավասու չէ փոխարինել վարչական դատարանին եւ ընտրական հանձնաժողովների ողջ համակարգին:

10. Գործը քննության նախապատրաստելու ընթացքում սահմանադրական դատարանը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջել է ստացել է 19.02.2008թ. անցկացված Հանրապետության Նախագահի ընտրության հետ կապված Նախագահի թեկնածուների (վստահված անձանց) դիմում-բողոքների քննարկման արձանագրությունները, ընդունված որոշումները, տրված պատասխանների պատճենները, ըստ կոնկրետ ընտրական տեղամասերի՝ տեղեկանք ընտրության հետ կապված Նախագահի թեկնածուների դիմում-բողոքների հիման վրա կատարված վերահաշվարկների արդյունքների եւ

դիմում-բողոքների առկայության դեպքում վերահաշվարկ չկատարելու հիմնավորումների վերաբերյալ: Ստացվել են ՀՀ Նախագահի թեկնածուների նախընտրական հիմնադրամների՝ օրենքով նախատեսված հաշվետվությունները, ինչպես նաև վերստուգման արդյունքները, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների այն որոշումները, որոնցով մերժվել են քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմումները: Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովից պահանջվել է ստացվել են այդ հանձնաժողովին ներկայացված դիմում-բողոքների, դրանց կապակցությամբ հանձնաժողովի հրավիրած նիստերի արձանագրությունների, պատասխանների պատճենները: ՀՀ դատախազությունից պահանջվել է ստացվել է ընտրախախտումների առնչությամբ հարուցված քրեական գործերի վերաբերյալ ամփոփ տեղեկանք: ՀՀ վարչական դատարանից պահանջվել է ստացվել են Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրություններում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով ՀՀ վարչական դատարանի կայացրած դատական ակտերի պատճենները: Թվարկված բոլոր նյութերը տրամադրվել են սույն գործով դատավարության կողմերին:

Դատաքննության ընթացքում դիմող կողմի ներկայացուցիչ Ա. Ջեյնալյանը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 51 հոդվածի 5-րդ մասի եւ 52 հոդվածի հիման վրա հանդես է եկել նաև որպես վկա:

11. 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքներով կատարված սահմանադրական փոփոխությունների հիման վրա ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի համաձայն սահմանադրական դատարանը լուծում է ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճ: Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ՀՀ ԿԸՀ-ի որոշման իրավական հիմնավորվածությունը սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել երկու տեսանկյունից. ինչպես դրա ընդունման սահմանված կարգի (ընթացակարգի)՝ օրենքով պահանջվող ձեւի պահպանվածության (ձեւական հիմքեր), այնպես էլ նյութական իրավունքի նորմերի կիրառման ենթադրյալ սխալների հիմքով, որով ընտրությունների արդյունքներն ամփոփող կենտրոնական ընտրական հանձնաժողովը սխալ հետետեսության է հանգել թեկնածուների ընտրվելու կամ չընտրվելու փաստի վերաբերյալ (նյութական հիմքեր): Ընդ որում, երկրորդ դեպքում ընտրությունների արդյունքների վրա ազդող կարող են դիտվել այն իրավախախտումները, որոնք աղավաղում են քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման ընդհանուր պատկերը, հնարավորություն չեն տալիս հստակ եզրակացության հանգել ընտրությունների վերջնական արդյունքների վերաբերյալ: Միաժամանակ, պասիվ ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում ընտրությունների արդյունքների վրա տարաբնույթ խախտումների ազդեցության գնահատման արդյունքում չի կարող ուսմահարվել իրենց ընտրությունն օրինական եղանակով կատարած ընտրողների ակտիվ ընտրական իրավունքը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի քննության շրջա-

նակներում սահմանադրական դատարանն իրավասու չէ միաժամանակ քննության առնել օրենքների սահմանադրականության հարց, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ: ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ, Սահմանադրության 100 հոդվածը նույնպես սահմանում է, որ տվյալ հոդվածում ամրագրված իր լիազորությունները սահմանադրական դատարանն իրականացնում է օրենքով սահմանված կարգով:

12. Սահմանադրական դատարանի՝ գործի փաստական հանգամանքները կողմերի դիրքորոշումներից անկախ բացահայտելու պարտականությունն ունի իր առանձնակի սահմանները, որոնց առկայությունը պայմանավորված է Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված իրական հնարավորություններով եւ իրավաբանորեն ամրագրված գործառնական ու դրանցից ածանցվող այլ լիազորություններով: Գործի հանգամանքների ի պաշտոնե պարզումը հնարավոր է միայն այդ սահմաններում, եւ այդ սկզբունքը չի լիազորում սահմանադրական դատարանին ստանձնելու իրավապահ այլ մարմինների (դատախազական կամ քննչական) լիազորություններ, փոխարինել արդարադատական կամ վարչական այլ մարմիններին:

Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական դատարանը պետք է որոշում ընդունի դիմումի մուտքագրման օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում՝ Սահմանադրության 51-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով: Այդ հիմքով սահմանադրական դատարանում վեճի քննության պարագայում վճռական են դառնում ընտրական գործընթացի բոլոր փուլերում իրավունքի պաշտպանության հնարավորությունների ամբողջական իրացումը եւ ապացուցողական նշանակության փաստարկներով սահմանադրական դատարան դիմելը:

13. Ելնելով ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի եւ 101 հոդվածի 9-րդ կետի պահանջներից, ինչպես նաեւ ընտրական իրավունքի դատական պաշտպանության՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի բնույթից, սահմանադրական դատարանն իր 10 հունիսի 2007թ. ՄԴՈ - 703 որոշման մեջ (ընդունված սահմանադրական փոփոխություններից հետո) իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ բոլոր հարցերը, որոնք առնչվում են ընտրությունների ընթացքում թեկնածուների գրանցման շուրջ առաջացած վեճերին, եւ որոնց լուծման իրավասությունը վերապահված է այլ դատարանների, սահմանադրական դատարանում առանձին քննության առարկա դառնալ չեն կարող, իսկ որպես ապացույց հիմք են ընդունվում այդ դատարանների վերջնական ակտերը: Սույն գործի քննությունը վկայեց, որ դիմող կողմը՝ վկայակոչելով սահմանադրական դատարանի տարբեր իրավական դիրքորոշումներ, ընտրական ողջ գործընթացում եւ դիմումի ներկայացման ընթացքում այս դիրքորոշմանը բավարար ուշադրություն չի դարձրել:

Սահմանադրական դատարանը հատուկ կարեւորում է ընտրական գործընթացներով պայմանավորված բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ պահանջների պահպանումն այդ գործընթացի բոլոր փուլերում, որը կայուն իրավական նախադրյալ է ընտրական խախտված իրավունքները սահմանադրական-արդարադատական կարգով պաշտպանելու համար:

14. Սահմանադրական դատարանը՝ կարեւորելով ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության դերն ու գործունեությունը, այսուհանդերձ, գտնում է, որ Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքների վերաբերյալ այդ առաքելության նախնական զեկույցից ընտրանքային կարգով իրավախախտումների վերաբերյալ դիտարկումների ներկայացումը դատավարական գործընթացի համար բավարար ապացուցողական հիմք չէ ԿԸՀ-ի որոշումն անվավեր ճանաչելու համար: Մասնավորապես, դիմողներից առաջինն այդ դիտարկումներին իր կողմից ապացուցողական նշանակություն ունեցող որեւէ փաստարկ չի ավելացրել: Նման պարագայում այդ զեկույցը պետք է դիտարկել իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով, որ դրանում ամբողջականացված ձեւով արձանագրված է նաեւ, որ «Հայաստանի Հանրապետության Նախագահի փետրվարի 19-ի ընտրությունները մեծապես անցկացվեցին ԵԱՀԿ-ի եւ Եվրախորհրդի նկատմամբ ստանձնված պարտավորությունների եւ չափանիշների համաձայն»:

15. Հանրապետության Նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի ներկայացուցիչների կողմից սահմանադրական դատարան ներկայացվել են քվեարկության գործընթացին առնչվող ավելի քան 500 տարաբնույթ սկզբնական փաստաթղթեր, որոնցից պատշաճ ձեւակերպված եւ իրավաբանական նշանակություն կարող էին ունենալ թվով 94-ը, այդ թվում՝ վերահաշվարկի պահանջով դիմումներ՝ 23, հայտարարություններ խախտումների մասին՝ 7, դիմումներ՝ 12, դիմում-բողոքներ՝ 7, խախտումների վերաբերյալ արձանագրություններ (կամ դրանցից քաղվածքներ)՝ 13, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություններից քաղվածքներ՝ 28, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի արձանագրություններ կամ դրանցից քաղվածքներ՝ 2, դիմումներ ստանալու վերաբերյալ ստացականներ՝ 2: Ներկայացվել են նաեւ առանձին տեսանյութեր ընտրախախտումների վերաբերյալ:

Ընտրական գործընթացին մասնակից Հանրապետության Նախագահի բոլոր թեկնածուների կողմից թվով 258 տեղամասերի վերաբերյալ (ընդհանուր թվի 13.4 տոկոսը) վերահաշվարկ կատարելու դիմումներ են ներկայացվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, որոնցից.

ա/ 53 տոկոսը կամ թվով 135 դիմումներ (որից 62-ը՝ Լ. Տեր-Պետրոսյանի, իսկ 15-ը՝ Տ.Կարապետյանի ներկայացուցիչների դիմումների հիման վրա) բավարարվել են եւ դրանց հիման վրա կատարվել է վերահաշվարկ, որոնց արդյունքները ներկայացրել է պատասխանող կողմը,

բ/ թվով 24 ընտրատեղամասերի վերաբերյալ դիմումներ մուտքագրվել են,

սակայն դրանց հիման վրա վերահաշվարկ չի կատարվել՝ օրենքով սահմանված ժամկետը սպառված լինելու պատճառաբանությամբ,

գ/ թվով 99 ընտրատեղամասերի վերաբերյալ դիմումները մերժվել են՝ տարբեր պատճառներով, մասնավորապես.

- թվով 35 ընտրատեղամասերի վերաբերյալ դիմումները մերժվել են՝ պատշաճ սուբյեկտի կողմից ներկայացված չլինելու հիմքերով՝ ՀՀ ԸՕ 402 հոդվածի 1-ին եւ 13-րդ մասերի համաձայն,
- թվով 16 ընտրատեղամասերի վերաբերյալ դիմումները պատշաճ կերպով ձեւակերպված չեն եղել, որի արդյունքում մերժվել են՝ ՀՀ ԸՕ 402 հոդվածի 2-րդ եւ/կամ 3-րդ եւ 13-րդ մասերի համաձայն,
- թվով 25 ընտրատեղամասերի վերաբերյալ դիմումները մերժվել են՝ ՀՀ ԸՕ 402 հոդվածի 13-րդ, 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն, քանի որ դիմողներն անձամբ չեն ներկայացրել դիմումները՝ խախտելով ՀՀ ԸՕ 402 հոդվածի պահանջները,
- թվով 23 ընտրատեղամասերում վերահաշվարկ կատարելու վերաբերյալ դիմումները մերժվել են՝ չհիմնավորված լինելու պատճառով: Սակայն դրանց վերաբերյալ որոշումները վարչական կամ դատական կարգով չեն բողոքարկվել:

Միաժամանակ, դիմող կողմը ներկայացրել է թվով 25 տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացված եւ պատշաճ կերպով վավերացված քվեարկության արդյունքների արձանագրություններից քաղվածքներ (1/28, 8/27, 17/02, 18/30, 20/04, 20/17, 20/18, 21/10, 23/41, 24/18, 24/19, 25/07, 26/26, 27/15, 27/35, 27/36, 28/15, 33/04, 33/21, 33/22, 35/13, 37/03, 37/11, 37/44, 37/74 ընտրատեղամասեր), որոնցում արձանագրված տվյալները տարբերվում են ՀՀ ԿԸՀ-ի պաշտոնական կայքէջում գետեղված տվյալներից: Սակայն դրանցից թվով 3 ընտրատեղամասերում (27/15, 27/35, 27/36) համաձայն ԿԸՀ-ի կողմից սահմանադրական դատարան ներկայացված նյութերի՝ կատարվել է վերահաշվարկ: Թվով 3 ընտրատեղամասերի առնչությամբ (20/04, 24/18, 24/19) ըստ ՀՀ դատախազության տրամադրած տեղեկատվության՝ արդեն իսկ հարուցվել են քրեական գործեր՝ ՀՀ ԲՕ 150 հոդվածի հատկանիշներով: Թվով 7 ընտրատեղամասերի (18/30, 20/17, 21/10, 25/07, 26/26, 35/13, 37/74) վերաբերյալ արձանագրությունների քաղվածքների տվյալները եւ ԿԸՀ-ի պաշտոնական կայքէջում գետեղված տվյալները տարբերվում են աննշան թվով (1-4 միավոր): Թվով 12 ընտրատեղամասերի (01/28, 08/27, 17/02, 20/18, 23/41, 28/15, 33/04, 33/21, 33/22, 37/03, 37/11, 37/44) վերաբերյալ արձանագրությունների քաղվածքների թվական տվյալները եւ ԿԸՀ-ի պաշտոնական կայքէջում գետեղվածներն զգալիորեն տարբերվում են: Կոնկրետ ընտրատեղամասերում սահմանադրական դատարանի կողմից ստուգումներ կազմակերպելու պահանջից դիմողը հրաժարվեց՝ պատճառաբանելով, որ ընտրություններից օրեր անց դրա կազմակերպումն անհնաստ է:

ՀՀ դատախազության կողմից 01.03.2008թ. ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված 2/8-01 տեղեկանքի համաձայն՝ 19.02.2008թ. Հանրապետության Նախագահի ընտրության ընթացքում թիվ 9/18, 17/5, 20/4, 22/21, 22/22, 22/30,

24/18, 24/19 եւ 38/62 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրություններից վստահված անձանց տրված քաղվածքների եւ ընտրությունների արդյունքների պաշտոնական ամփոփման համար ներկայացված արձանագրությունների տվյալները տարբեր պատճառներով չհամապատասխանելու կապակցությամբ արդեն իսկ հարուցված է քրեական գործ եւ իրականացվում է նախաքննություն:

ՀՀ սահմանադրական դատարանը մինչեւ սահմանադրական փոփոխություններն իր 16.04.2003թ. ՄԴՈ - 412 որոշմամբ իրավական դիրքորոշում էր արտահայտել, որ սահմանադրական դատարանում ընտրական վեճի լուծման ժամանակ ընտրատեղամասերում քվեարկության արդյունքները ոչ հավաստի են, եթե.

ա) նույն ընտրատեղամասում ի հայտ են եկել քվեարկության արդյունքների պաշտոնական բնույթ ունեցող, միմյանցից էապես տարբերվող ամփոփիչ արձանագրություններ,

բ) իրավական առումով հիմնավոր փաստարկված է, որ տեղ են գտել քվեաթերթիկների լցուման, ձայների սխալ հաշվարկի, այլոց փոխարեն քվեարկության եւ այլ բնույթի էական խախտումներ, սակայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից անհիմն ձեռով մերժվել է, իսկ դատարանների կողմից օրենքով սահմանված կարգով չեն պաշտպանվել հանձնաժողովների անդամների եւ թեկնածուների վստահված անձանց իրավունքները՝ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում տեղամասային քվեարկության արդյունքների ստուգումներ կազմակերպելու վերաբերյալ: Միաժամանակ ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա քվեարկության ոչ հավաստի արդյունքների ազդեցությունը գնահատելու նպատակով նման ընտրատեղամասերում առավել ձայներ ստացած թեկնածուի ձայների չափով սահմանադրական դատարանը կրճատել էր ընտրությունների արդյունքում թեկնածուներին տրված ձայների ընդհանուր տարբերությունը:

Թեև դիմողը սույն գործի շրջանակներում շեշտը դնում է ընտրությունների արդյունքների գնահատման ոչ թե քանակական բաղադրիչների, այլ խախտումների որակական բնույթի վրա, վկայակոչելով իր կարծիքով ընտրախախտումների «զանգվածային եւ համակարգված» բնույթը, այնուհանդերձ, նույնիսկ ներկա իրավակարգավորման շրջանակներում սահմանադրական դատարանի վերոհիշյալ դիրքորոշման կիրառման պայմաններում էլ Հանրապետության Նախագահի թեկնածուներին տրված ձայների իրական հարաբերակցության որակական փոփոխություն տեղի չի ունենում:

16. ՀՀ ընտրական օրենսգրքի 14, 141, 171, 18, 20, 25, 26, 40, 632, 75, 79 եւ 139 հոդվածների, ինչպես նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 143-150 հոդվածների դրույթների բովանդակային եւ իրավակիրառական նշանակության վերլուծությունից բխում է, որ. Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական զարգացումների արդյունքում ընտրական իրավունքի դատական պաշտպանության նշանակալի լիազորությամբ են օժտված նորաստեղծ վարչական դատարանները: Իսկ սահմանադրական դատարանին, ինչպես

նշվեց, Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի հիմքով վերապահված է միայն ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճի քննության իրավասությունը: Ընդ որում, ընտրական օրենսգրքի եւ վարչական դատավարության օրենսգրքի հիշատակված հոդվածներից բխում է, որ ընտրական գործընթացում տեղի ունեցած իրավախախտումներն ապացուցողական նշանակություն են ունենում այն դեպքում, երբ ձեռք են բերվում իրավասու դատարաններում հստակորեն սահմանված ժամկետներում փաստական հանգամանքների քննության արդյունքում: 2008թ. փետրվարի 19-ին կայացած ընտրությունների արդյունքների իրական պատկերն այն է, որ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ վարչական արդարադատության հնարավորություններն արդյունավետ չեն օգտագործվել նույնիսկ այն դեպքերում, երբ առանձին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ իրենց որոշմամբ մերժել են վերահաշվարկի իրականացումը, այդ որոշումները, այսինքն՝ դրանք դատական կարգով չեն բողոքարկվել: Դիմողի այն պնդումը, թե դա պայմանավորված է վարչական դատարանի նկատմամբ ունեցած անվստահությամբ, միեւնույն է, նման փաստարկն իրավական հետազոտ գործընթացի անհրաժեշտ երաշխիքներ չի ապահովում:

Միեւնույն ժամանակ, որեւէ ընտրատեղամասում կամ ընտրատարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ ընտրական գործընթացի օրինականությունն ամբողջությամբ կասկածի տակ դնելու համար: Ընտրությունների արդյունքում ընդունված որոշումն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն օրենքով սահմանված կարգով փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

17. Դիմող կողմն առանձնահատուկ կարեւորում է նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների համար անհավասար պայմանների ստեղծման հանգամանքը եւ հատկապես Հանրային հեռուստաընկերության «Հայլուր» ծրագրի կողմից ընտրական օրենսգրքով նախատեսված անկողմնակալության սկզբունքի խախտումը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ 2008թ. Հանրապետության Նախագահի ընտրության ընթացքում նույնպես ՀՀ ԿԸՀ-ի տեսադաշտից դուրս է մնացել նախընտրական քարոզչության արդյունավետ վերահսկումը: Օրենքի պահանջների կատարմանը ձեւական մոտեցում է դրսևորել Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը: Դրանց արդյունքում լրատվամիջոցներում ոչ միայն տեղ են գտել կողմնակալ մոտեցումներ, այլեւ առանձին լուսաբանումների ընթացքում արձանագրվել են նաեւ իրավական ու բարոյական նորմերի խախտումներ:

Նույնիսկ նման պայմաններում Հանրապետության Նախագահի թեկնածուների համար նախընտրական քարոզչության հավասար հնարավորությունների խնդիրը սերտորեն առնչվում է ընտրողների կարծիքի ձեւավորման հետ, եւ

սահմանադրական դատարանը գտնում է, որ թեկնածուները, այսուհանդերձ, կարողացան նախընտրական քարոզչության տարբեր միջոցներով իրենց դիրքորոշումները հասցնել ընտրողներին: Միաժամանակ, միջազգային իրավական չափանիշներից ելնելով՝ այն սկզբունքը, ըստ որի նախընտրական քարոզչությունը պետք է լինի ազնիվ եւ արդար, չի կարող մեկնաբանվել այնքան ընդարձակ, որ բացառվի խոսքի ազատության եւ տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացումը կամ բացառվի պաշտոնատար անձի հասցեին հնչեցված մեղադրանքների շուրջ պատասխան կարծիք ներկայացնելու հնարավորությունը:

18. Գիմողների կողմից մատնանշված մի շարք ընտրախախտումների, ՀՀ դատախազության կողմից ընտրական գործընթացի շրջանակներում հարուցված քրեական գործերի, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերի վերլուծությունը վկայում է, որ ընտրական գործընթացի հիմնական թերությունները եւ այդ գործընթացի նկատմամբ հանրային վստահության պակասը խորքային պատճառներ ունեն: ՀՀ սահմանադրական դատարանն իր 10.06.2007թ. ՄԴՈ-703 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «ընտրական իրավունքի պաշտպանությունը, հատկապես սահմանադրական արդարադատության շրջանակներում, չի ենթադրում ձեռնարկյալ մոտեցում՝ թե որքանով են խախտվել մարդկանց ակտիվ կամ պասիվ ընտրական իրավունքները: Հարցն ունի ընդգրկման ավելի լայն շրջանակ եւ վերաբերում է ընտրությունների հանրային գործառույթին՝ թե ինչ կերպ եւ ինչպիսի վստահությամբ է ձեռավորվում ներկայացուցչական կառավարման համակարգը, ինչպես են ներդաշնակվում կառավարմանը մասնակցելու ազատությունը եւ ներկայացուցչական մարմիններ կազմավորելու պարտականությունը, ինչպիսին է անհատների հասարակական վարքագիծն այս գործընթացում: Ուստի ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հնարավորության ապահովումը պետության պարտավորությունն է եւ ոչ թե առանձին քաղաքական միավորումների կամ անհատների: Դրանից եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից է բխում նաեւ ՀՀ ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ «Պետությունը, օրենսդրությամբ վերապահված իրենց լիազորությունների շրջանակում՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման եւ կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորող մարմիններն ու պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման օրինականության համար»: Ուստի պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի.

- ա) ընտրական օրենսդրությունը զերծ լինի ընտրական իրավունքի արդյունավետ իրացումը խոչընդոտող թերություններից,
- բ) քաղաքական ընթացիկ գործունեությունը հստակ տարանջատվի նախընտրական քարոզչությունից,
- գ) բացառվի քաղաքական ու բարեգործական գործունեության միատեղումը,

դ) ընտրական գործընթացի բոլոր փուլերում կանխվի քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը:

ՀՀ Սահմանադրության 2 եւ 4 հոդվածներում ամրագրված հիմնարար սկզբունքների համաձայն՝ իրավական պետության համար ելակետային ընտրական գործընթացներում հասարակության քաղաքական շահերի գերակայության օրենսդրական ու կառուցակարգային այնպիսի երաշխիքների ապահովումն է, որը կբացառի առաջնային մանդատով օժտված իշխանության ներկայացուցչական մարմինների ձեւավորման գործում քաղաքական եւ գործարար շահերի անմիջական միահյուսման որեւէ հնարավորություն»:

Այս իրավական դիրքորոշումը բավարար չափով ուշադրության չարժանացավ ՀՀ ընտրական օրենսգրքի եւ ողջ ընտրական համակարգի բարեփոխման ընթացքում, մասնավորապես, նաեւ՝ ՀՀ Սահմանադրության 65 հոդվածի պահանջների կատարումը երաշխավորելու առումով, որն էապես կարող էր նպաստել ընտրական համակարգի եւ կոնկրետ ընտրական գործընթացի նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը:

ՀՀ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքների հիմնարար սկզբունքներից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները պետք է դառնան քաղաքական հակամարտությունների հաղթահարման եւ պետական կարգի հիմքերն ամրապնդող գործոն: Իրականում հետընտրական գործընթացներն ավելի են սրում թե՛ քաղաքական եւ թե՛ հասարակական հակամարտությունը՝ վտանգելով ժողովրդավարական այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, բազմակարծությունը, համագործակցությունը, հանրային վստահությունը, քաղաքակիրթ երկխոսությունը: Նման իրավիճակը նաեւ սահմանադրաիրավական լուծումներ պահանջող հիմնախնդիր է, որին բազմիցս անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում, ինչպես նաեւ 2006 եւ 2007 թվականների տարեկան հաղորդումներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք առաջնահերթ լուծում են պահանջում: Դա առաջին հերթին վերաբերում է գործող ընտրական համակարգին: Այս համակարգի պայմաններում հետեւանքները միշտ նույնը կարող են լինել: Ընտրական համակարգի հիմքում պետք է լինի հնարավոր ընտրախախտումների բացառման սկզբունքը: Դրան հնարավոր է հասնել ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համակարգի արմատական բարեփոխման արդյունքում միայն: Հանրային վստահության բարձրացման եւ սահմանադրական հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան ընտրություններ կազմակերպելու համար որակապես նոր մոտեցում պետք է դրսեւորվի նաեւ ընտրական գործընթացների բողոքարկման ողջ համակարգի նկատմամբ:

Ինչ վերաբերում է դատաքննության առարկա դարձած վեճի շրջանակներում իրավիճակի գնահատմանը, ապա համադրելով կողմերի փաստարկներն ու հակափաստարկները, վերլուծելով գործի նյութերը, օրենսդրական առկա կարգավորումներն ու դրանց կիրառման պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ գործող իրավակարգավորման շրջանակներում՝ հիմք

ունենալով ընտրությունների այն փաստական արդյունքները, որոնք ստացվել են ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների հիման վրա եւ ՀՀ ԸՕ-ով նախատեսված իրավասության շրջանակներում դրանք ամփոփելու արդյունքում, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2008թ. փետրվարի 19-ի Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներով այլ որոշում կայացնել չէր կարող:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 74 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Թիվ 01/28, 08/27, 17/02, 20/18, 23/41, 28/15, 33/04, 33/21, 33/22, 37/03, 37/11, 37/44 տեղամասային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ արձանագրություններում փոփոխությունների, թիվ 30, 31 եւ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների՝ վերահաշվարկ կատարելը մերժելու վերաբերյալ որոշումների, ինչպես նաեւ դիմողների կողմից ներկայացված քվեաթերթիկների եւ քվեարկության ծրարների ու տեսանյութերով ներկայացված փաստերի իրավագնահատման եւ օրինականությունը պարզելու նպատակով դրանք տրամադրել ՀՀ դատախազությանը՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**8 մարտի 2008 թվականի
ՍԳՈ- 736**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՎԻԿՏՈՐԻԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 76 ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԳ
ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մարտի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող),
Ֆ. Թոխյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ
Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդ-
վածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Հայկ
Գրիգորյանի եւ Վիկտորիա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողո-
վի կողմից 2001 թվականի մայիսի 2-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապե-
տության հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հան-
րապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշե-
լու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Հ. Գրիգորյանի եւ Վ. Սարգսյանի
դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողների գրա-
վոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հե-
տազոտելով ՀՀ հողային օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը,
Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ հողային օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազ-
գային ժողովի կողմից 2001 թվականի մայիսի 2-ին, ՀՀ Նախագահի կողմից
ստորագրվել՝ 2001 թվականի հունիսի 4-ին եւ ուժի մեջ է մտել 2001 թվականի
հունիսի 15-ից:

2. ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի վիճարկվող առաջին պարբերությունը սահմանում է. «Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները /Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը/»:

3. Ըստ վերջնական դատական ակտի՝ Հ. Գրիգորյանի եւ Վ. Սարգսյանի հայցն ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման, Արմեն Սիկոյանի, Պարույր Տեր-Ոսկանյանի եւ Մամվել Կոստանյանի՝ պետական մարմինների ակտերն անվավեր ճանաչելու, ժառանգության վկայագրով սեփականության իրավունքը գրանցել պարտավորեցնելու եւ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքն ազատելու պահանջների մասին, Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը 21.03.2007թ. վճռով մերժել է: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանն իր 03.07.2007թ. վճռով հայցը բավարարել է: ՀՀ վճարեկ դատարանի քաղաքացիական պալատը 05.09.2007թ. որոշմամբ, կիրառելով ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածը, բեկանել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 03.07.2007թ. վճիռը եւ օրինական ուժ է տվել Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 21.03.2007թ. վճռին:

4. Դիմողները գտնում են, որ ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, եւ խնդրում են այն անվավեր ճանաչել: Նրանք մասնավորապես նշում են, որ վիճարկվող հոդվածը գուրկ է որոշակիությունից, թերի է կարգավորում պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի /տվյալ դեպքում՝ հողամասի/ տնօրինման իրավահարաբերությունները: Պետական մարմինը՝ չիրականացնելով գույքի օգտագործման եւ տիրապետման գործառնությունները, որոնք սեփականության իրավունքի պատկանելության անհրաժեշտ տարրերն են, իրականացրել է գույքի տնօրինման գործառնություն: Եվ չպարզված հանգամանքներում պետությունը հռչակել է իր սեփականությունը քաղաքացու ժառանգական զանգվածի նկատմամբ եւ այն վարձակալության է տրամադրել այլ քաղաքացիների՝ սահմանափակելով դիմողների սեփականության իրավունքի իրացումը:

5. Պատասխանողը գտնում է, որ դիմումը ենթակա է մերժման հետեւյալ նկատառումներով՝ վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի նկատմամբ անհրաժեշտ է համակարգային մոտեցում դրսեւորել ոչ միայն ՀՀ Սահմանադրության 31 հոդվածին, այլեւ ՀՀ Սահմանադրության 42.1., 105 եւ 107 հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Ըստ պատասխանողի՝ սեփականության իրավունքի իրականացման /հոդված 31/, իրավաբանական անձանց իրավունքների կիրառելիության /հոդված 42.1./, համայնքի

սեփական եւ պատվիրակված լիազորությունների իրականացման /հոդված 105/, տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացման /հոդված 107/ վերաբերյալ սահմանադրական նորմերի եւ քաղաքացիական իրավահարաբերություններում պետությանը եւ համայնքներին քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հետ հավասար հնարավորություն ընձեռելու մասին դրույթի /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128 հոդված/ համադրական վերլուծությունից բխում է հետեւյալը.

- ա) սեփականության իրավունքը ճանաչելու եւ սեփականատիրոջ կողմից սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավունքը հավասար չափով վերապահվել է ինչպես քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց, այնպես էլ՝ պետությանը եւ համայնքներին,
- բ) որեւէ օրենսդրական ակտով արգելված չէ պետության կամ համայնքների սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության հանձնելը կամ վարձակալության հանձնելու իրավունքը համայնքի ղեկավարին փոխանցելը,
- գ) պետությունը կամ համայնքներն իրենց սեփականությունը հանդիսացող գույքը կարող են տնօրինել իրենց հայեցողությամբ՝ հաշվի առնելով Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված սահմանափակումները,
- դ) համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով հանձնելը համայնքի սեփական լիազորությունն է,
- ե) պետական սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության հանձնելու համայնքի ղեկավարի իրավունքը՝ վերջինիս պատվիրակված լիազորությունն է:

Նման պարագայում ակնհայտ է, որ ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածում ամրագրված՝ համայնքի ղեկավարի եւ Երեսնի քաղաքապետի /մարզպետի/ պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության տրամադրելու իրավունքը բխում է ՀՀ Սահմանադրության վերոնշյալ հոդվածների բովանդակությունից եւ թղթակցվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128 հոդվածի եւ «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքով ամրագրված համայնքի ղեկավարի լիազորությունների մասին դրույթների հետ: Պատասխանող կողմը գտնում է, որ վերը թվարկված դրույթների վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ օրենսդրությամբ համապարփակ կարգավորված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման կամ վարձակալության տրամադրման գործընթացը, մասնավորապես՝ նշված հողամասերը վարձակալության տրամադրելու իրավունքը, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 31, 42.1., 105 եւ 107 հոդվածներից:

6. Սահմանադրական դատարանը փաստում է, որ չնայած դիմող կողմը խնդրում է որոշել ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը, սակայն իրականում նրանց գործով կիրառվել է 76 հոդվածի

2-րդ մասի առաջին պարբերությունը, հետեւաբար՝ սահմանադրական դատարանը քննության է առնում միայն առաջին պարբերության սահմանադրականությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով /31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 եւ 105.1. հոդվածներ/, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163 եւ 166 հոդվածների ուժով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, ինչպես նաեւ համայնքների հետ մեկտեղ սեփականության իրավունքի սուբյեկտ է հանդիսանում նաեւ Հայաստանի Հանրապետությունը, որը սեփականության իրավունքի մյուս սուբյեկտների հետ հավասար կարող է իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել եւ տնօրինել իրեն պատկանող գույքը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129 եւ 168 հոդվածների ուժով Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը պետական սեփականություն է, եւ Հայաստանի Հանրապետության անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի համաձայն՝ «Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողերը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում սեփականության իրավունքով անհատույց փոխանցվում են համայնքներին:

Համայնքն իր սեփականություն համարվող հողերը կարող է տնօրինել, տիրապետել եւ օգտագործել օրենքով սահմանված կարգով»:

ՀՀ օրենսդրության վերոհիշյալ վերլուծության հիման վրա կարելի է արձանագրել, որ գույքը, սովյալ դեպքում՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելը ՀՀ Սահմանադրության 8 հոդվածին համահունչ հանդիսանում է պետության եւ համայնքների սեփականության իրավունքի իրացման ձեւերից մեկը, որի իրացմանն էլ ուղղված է ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության վիճարկվող դրույթը:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների իրավունքների հնարավոր խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմով: Վիճարկվող նորմին համապատասխան վիճելի հողամասը Երեւանի քաղաքապետարանի կողմից վարձակալության է տրվել հիմնվելով այն փաստի վրա, որ այդ հողամասը հանդիսացել է պետության սեփականությունը: Այս փաստը քաղաքացիաիրավական վեճի շրջանակներում հաստատվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**18 մարտի 2008 թվականի
ՍԳՈ- 741**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՆԻՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԳԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 2-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 159-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ,
«ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԻՆՔՆԱԿԱՄ ԶՔԱՂԵՑՎԱԾ ՀՈԳԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 8-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
ԵՎ ՀՀ ԳԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 94-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝
«ԱՎԱՆԳԱՏՈՒ» ԲԱՌԻՅ ՀԵՏՈ՝ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ, ԵՎ 3-ՐԳ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 ապրիլի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչ Կ. Մեծլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նինա Ղազարյանի եւ այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 159-րդ հոդվածի, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ն. Ղազարյանի, Խ. Հովհաննիսյանի, Ա. Հարությունյանի եւ Ա. Հովհաննիսյանի՝ 19.11.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողների գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998թ. հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

«Ինքնական կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. հունվարի 31-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. փետրվարի 22-ից: Օրենքի 11-րդ հոդվածին համապատասխան այն ուժը կորցրել է 2005թ. փետրվարի 22-ին:

ՀՀ դատական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ. փետրվարի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007թ. մայիսի 18-ից:

2. Դիմողները գտնում են, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը եւ 159-րդ հոդվածը, իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված բովանդակությամբ, «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 5, 6, 18, 19, 83.5., 91, 97 եւ 98-րդ հոդվածներին:

Մասնավորապես, ըստ դիմողների՝ Երևանի Արաբկիր եւ Բանաբեռ-Չեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրենք համապատասխան դատական վարությամբ չեն դիտվել որպես շահագրգիռ անձ, ինչի արդյունքում խախտվել են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված իրենց իրավունքները:

Ինչ վերաբերում է «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին, ապա դիմողները գտնում են, որ այն, իրավակիրառական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանությամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին՝ այնքանով, որքանով անձը զրկվում է պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքն իրականացնելու հնարավորությունից:

Ըստ դիմողների՝ ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի վիճարկվող

դրույթները խախտում են դատավորների անկախության սահմանադրական սկզբունքը:

3. Պատասխանող կողմը նկատի ունենալով, որ «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է 2005 թվականին, ուստի հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 47 եւ 60-րդ հոդվածները, միջնորդում է սույն գործի վարույթը՝ «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության մասով՝ կարճել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2008 թվականի հունվարի 1-ից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել, եւ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 47 եւ 60-րդ հոդվածները, պատասխանող կողմը միջնորդում է սույն գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի սահմանադրականության մասով՝ կարճել: Պատասխանող կողմը նաեւ գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի եւ ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներում ամրագրված դրույթների միջև հակասություն չկա:

Պատասխանող կողմի կարծիքով, ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասում կետերով ամրագրված սահմանափակումների թույլատրելիության աստիճանը պետք է վերլուծվի 2-րդ մասի սկզբնամասում ձեւակերպված դրույթի եւ թվարկված կետերի ամբողջության համատեքստում, քանզի, իր կարծիքով, սահմանափակումների թույլատրելիության այդպիսի աստիճանը ՀՀ Սահմանադրության հետ հակասության չի հանգեցնում, այլ, ընդհակառակը, ամրագրելով բուն ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու արգելքը՝ միաժամանակ թույլատրելի է համարվում բնականոն գույքային շրջանառությանը մասնակցելը՝ առանց ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունքի (օրինակ՝ բաժնետոմսերի ձեռքբերում): Ընդ որում, այդպիսի մասնակցությունն էլ իր հերթին կրում է սահմանափակ բնույթ՝ այդ թվում ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով:

4. Դիմումում վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածն ուժը կորցրել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 28.11.2007թ. ընդունված ՀՀ ՀՕ-277-Ն օրենքով: Բացի դրանից, վիճարկվող 159-րդ հոդվածը զետեղված էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում, որը ՀՀ սահմանադրական դատարանն իր 28 նոյեմբերի 2007թ. ՍԳՈ-719 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածին եւ 32-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանադրական դատարանի կողմից գործի վարույթը ենթակա է կարճման, եթե դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը:

5. Սահմանադրական դատարանը գործի ուսումնասիրության արդյունքներով գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասի նորմերը ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների կողմից դիմողների նկատմամբ չեն կիրառվել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասին եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության կողմ հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 եւ 32-րդ հոդվածներին համապատասխան՝ գործի քննությունը ենթակա է կարճման, եթե դիմումը չի համապատասխանում նշված պահանջներին:

6. Դիմողների կողմից վիճարկվող՝ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «... քաղաքացիները կամ իրավաբանական անձինք ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ զբաղեցված հողամասերի նկատմամբ իրավունքների ճանաչման նպատակով, ըստ դրանց գտնվելու վայրի, պետք է դիմեն անշարժ գույքի կադաստր վարող պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետը եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասն անձին իրավունք են տալիս դիմել սահմանադրական դատարան ոչ թե ցանկացած օրենքի, այլ միայն իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցով:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցին՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ,

ապա դիմողներն այս կապակցությամբ ըստ էության բարձրացնում են ոչ թե իրավակիրառական պրակտիկայում ստացած բովանդակությանը համապատասխան նշված դրույթների սահմանադրականությունը որոշելու հարց, այլ այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

7. Համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, եւ յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը եւ պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումում շարադրված փաստարկները, ինչպես նաեւ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում են, որ խնդիրը վերաբերում է ոչ թե վկայակոչվող նորմերի սահմանադրականությանը, այլ դատական կարգով բողոքարկման առարկա դարձած առանձին ենթաօրենսդրական ակտերի (մասնավորապես, Երեսանի քաղաքապետի 2005թ. հոկտեմբերի 14-ի թիվ 2191-Ա որոշման, դրա հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագրի) օրինականությանն ու օրենքների ճիշտ կիրառմանը, որոնց գնահատման եւ դրանց առնչությամբ որոշում կայացնելու լիազորություն սահմանադրական դատարանը չունի:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի, ՀՀ դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասի, ինչպես նաեւ «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32

հողվածի 3-րդ մասի, 60 հողվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 69 հողվածի 1-ին եւ 7-րդ մասերի վրա:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հողվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հողվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**4 ապրիլի 2008 թվականի
ՍԳՈ- 747**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐՄԵՆ ՀԱՄԱՄՁՅԱՆԻ, ԱԻԴԱ ՔՈՉԱՐՅԱՆԻ,
ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵՉՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ
ԱԳՆԵՍԱ ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 68 ՀՈԳՎԱԾԻ
10-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 12-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 ապրիլի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողներ՝ քաղ. Աիդա Քոչարյանի եւ Իրինա Օգանեզովայի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Արմեն Համամջյանի, Աիդա Քոչարյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա Բաղդասարյանի եւ Ազնեսա Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Արմեն Համամջյանի, Աիդա Քոչարյանի, Իրինա Օգանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների դիմումներն են սահմանադրական դատարան, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով, մինչեւ դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, լսելով պատասխանող կողմի լրացուցիչ պարզաբանումները, հե-

տագնուելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությունը եւ 12-րդ մասը ու գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 1-ից:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածը վերնագրված է «Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերի քննությունը Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին, 3, 4 եւ 8-րդ կետերում նշված մարմինների եւ անձանց դիմումների հիման վրա (իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողություն)», որի 10-րդ մասը սահմանում է. «Վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավաբանական ուժը կորցնում է սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ սույն հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերով սահմանված դեպքերի:

Այդ ակտերի վրա հիմնված սահմանադրական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն:

Չկատարված վարչական եւ դատական ակտերի կատարումը սահմանադրական դատարանի որոշումը հրապարակելուց հետո անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ»:

Իսկ 68 հոդվածի 12-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետում նշված որոշումը սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաեւ այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետեւանքներ:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված որոշմամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաեւ այդ ակտի կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունված մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով»:

2. Դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերջնական դատական ակտեր հանդիսացող որոշումներ, որոնցով սույն գործով դիմողների նկատմամբ կիրառվել են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները, եւ վիճարկում են այդ դրույթների սահմանադրականությունը:

Ըստ վերջնական դատական ակտերի՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, քննելով Ա. Համամջյանի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի 13.02.2007թ. որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու մասին դիմումը, ինչպես նաև Ա. Քոչարյանի, Ի. Օզանեզովայի, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանների վճռաբեկ բողոքները վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի 05.02.2007թ. եւ 07.02.2007թ. որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայելու դիմումները, իր 02.08.2007թ. եւ 18.06.2007թ. որոշումներով դրանք մերժել է:

Վճռաբեկ դատարանը մերժումը պատճառաբանել է նրանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման համար հիմք է ՀՀ սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչվել այն օրենքը կամ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը (տվյալ դեպքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը, որը սահմանադրական դատարանի 09.04.2007թ. որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել):

Վճռաբեկ դատարանն իր որոշումներով պատճառաբանել է, որ սահմանադրական դատարանի՝ դիմողների կողմից վկայակոչված 09.04.2007թ. որոշումն ուժի մեջ է մտել կայացման պահից, իսկ սահմանադրական դատարանն այն չի տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, հետեւաբար՝ այն տվյալ քաղաքացիական գործերով որպես նոր հանգամանք չի կարող հանդիսանալ:

Մասնավորապես, Ա. Համամջյանը 12.11.2007թ. դիմել է սահմանադրական դատարան, գտնելով, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ իր նկատմամբ կիրառված դրույքը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 եւ 6 հոդվածների 1-ին եւ 2-րդ մասերի, 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերի պահանջներին, ուստի խնդրում է այն անվավեր ճանաչել:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ դրանից առաջ դիմել էր սահմանադրական դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը, սակայն դիմումը քննության չէր ընդունվել այն պատճառաբանությամբ, որ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. որոշմամբ արդեն իսկ քննվել էր սույն հոդվածի սահմանադրականության հարցը:

Դիմողներ Ա. Քոչարյանը, Ի. Օզանեզովան, Աննա եւ Ազնեսա Բաղդասարյանները 19.12. 2007թ. դիմել են սահմանադրական դատարան՝ գտնելով, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի՝ իրենց նկատմամբ կիրառված դրույքը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 14.1., 18 եւ 19 հոդվածների պահանջներին, ուստի խնդրում են այն անվավեր ճանաչել:

Դիմողներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են նրանով, որ դրանից առաջ իրենք նախատեսել են դիմել սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիա-

կան դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետն անվավեր ճանաչելու խնդրանքով, սակայն սահմանադրական դատարանի 09.04.2007թ. որոշմամբ արդեն իսկ լուծվել էր նշված հոդվածի սահմանադրականության հարցը, ուստի դրա հնարավորությունը բացառվեց, քանի որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքը:

Դիմողները գտնում են, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները գրկել են իրենց Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերի համաձայն իրենց խախտված իրավունքները դատական կարգով վերականգնելու հնարավորությունից:

3. Պատասխանողը գտնում է, որ դիմողների կողմից բերված հիմնավորումներն անհիմն են եւ դիմումները ենթակա են մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

1) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի դրույթները, համակարգային առումով փոխկապակցված լինելով նույն հոդվածի 12-րդ մասի դրույթների հետ, երաշխավորում են Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումը: Սահմանադրական վերահսկողության այս ձեւի կիրառումը, որը հիմնվում է իրավական ակտի հակասահմանադրականության մասին որոշման ընդունումից հետո ծագող իրավահարաբերությունների վրա տարածելու պայմանի վրա, բխում է Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմի բովանդակությունից, քանի որ ըստ ժամանակի մեջ գործողության հիմքի՝ սահմանադրական դատարանի որոշումները ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս մոտեցումը բխում է նաեւ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի պահանջներից, քանի որ իրավական ակտն հակասահմանադրական ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշումը, ըստ էության, հանդիսանում է անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտ եւ, հետեւաբար, այն կարող է հետադարձ ուժ ունենալ, եթե միայն դա նախատեսված է այդ ակտերով:

2) Ըստ պատասխանող կողմի՝ կարելի էր սահմանադրական դատարանի որոշման հետեւանքով առաջացող հնարավոր իրավիճակների սահմանադրականության խնդիրը, օրենսդիրը, միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ եւ 12-րդ մասերի ուժով սահմանադրական դատարանին օժտել է դատական ակտին հետադարձ ուժ տալու հայեցողական իրավագրությամբ: Բնականաբար, նման որոշումների առկայությունը ենթադրում է վերականգնել մինչեւ որոշման ընդունման պահին առկա հարաբերությունները, բայց ակնհայտ է, որ՝ առանց բացառող պայմանների, սահմանադրական դատարանի ակտին հետադարձ ուժով օժտելը գործնական առումով կարող է հանգեցնել երկրում իրավական անվտանգության խաթարմանն ու անլուծելի իրավիճակների առաջացմանը: Եվ այս տրամաբանությամբ օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68

հողվածի 12-րդ մասի ուժով սահմանափակել է սահմանադրական դատարանի հայեցողական մոտեցումների շրջանակները, որը նպատակ է հետապնդում ապահովել հանրության եւ պետության օրինական շահերի պաշտպանությունը՝ չպատճառելով էական վնասներ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս կամ այն վիճարկվող ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ իր որոշման իրավական հետեւանքները կապվում են ոչ միայն տվյալ ակտի, այլ նաեւ դրա հիման վրա կայացված դատական կամ վարչական ակտերի իրավական հետեւանքների, այդ ակտերի հիման վրա մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների ապահովման ու պաշտպանության հետ՝ որպես անմիջական գործող իրավունք: Հետեւաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությունում եւ 12-րդ ու 13-րդ մասերում ամրագրված դրույթներով կանոնակարգվել են սահմանադրական դատարանի՝ նման որոշումների իրավական հետեւանքներն այն դատական եւ վարչական ակտերի համար, որոնք կայացվել են մինչեւ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման ընդունումը: Ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ սահմանադրական դատարանի որոշումները, որպես ընդհանուր կանոն, չունեն հետադարձ ուժ եւ չեն տարածվում մինչ սահմանադրական դատարանի որոշման ընդունումը ծագած եւ դատական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա: Ընդ որում, եթե կատարված դատական կամ վարչական ակտերը վերանայման ենթակա չեն, ապա չկատարված վարչական կամ դատական ակտերը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության՝ ենթակա չեն կատարման եւ դրանց կատարումն անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերը նախատեսում են վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություններ՝ տարբերակված մոտեցում դրսևորելով քաղաքացիաիրավական եւ քրեաիրավական հարաբերություններին: Օրենքի 68 հոդվածի 12-րդ մասով նախատեսված բացառության համաձայն՝ սահմանադրական դատարանի հայեցողությանն է թողնված իր որոշումներին հետադարձ ուժ տալու հարցը: Նույն մասը որոշակի սահմաններ է նախատեսում սահմանադրական դատարանի այդ հայեցողության իրացման համար, այն է՝ սահմանադրական դատարանը կարող է իր այս հայեցողությունից օգտվել այն դեպքում, երբ իր որոշմանը հետադարձ ուժ չտալը հանրության կամ պետության համար կարող է առաջացնել ծանր հետեւանքներ: Ինչպես նաեւ սահմանադրական դատարանի նման որոշման հիման վրա վերանայման ենթակա են այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող միայն երեք տարիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը:

Նույն հոդվածի 13-րդ մասով նախատեսված բացառությունը վերաբերում է սահմանադրական դատարանի այն որոշումների հետադարձ ուժին, որոնք Սահմանադրությանը հակասող եւ անվավեր են ճանաչում քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը: Այս բացառությունը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ քրեական եւ վարչական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն: Մասնավորապես, այս դեպքում հաշվի է առնվել անձի նկատմամբ քրեական օրենսգրքով կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքով հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայությունը եւ դրանց վերացման իրական հնարավորությունը:

Ինչպես վիճարկվող դրույթում ամրագրված ընդհանուր կանոնի, այնպես էլ վերոհիշյալ բացառությունների հիմքում ընկած է հետեւյալ տրամաբանությունը. սահմանադրական դատարանի որոշումներին հետադարձ ուժ կարող է տրվել այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է որոշակի կենսական շահերի պաշտպանության նպատակով, եւ երբ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, քննության առնելով այդ կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտության հարցը, հիմնավորված եւ պատճառաբանված որոշում է կայացնում իր որոշմանը հետադարձ ուժ տալու մասին:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածն ունի այն բնորոշ առանձնահատկությունը, որ դրանով կանոնակարգվում են իրավական նորմերի վերացական սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները: Անհատական դիմումների քննությանը կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգվում են օրենքի 69 հոդվածով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ 69 հոդվածի 11-րդ մասի հղումն օրենքի 68 հոդվածի 6-17-րդ մասերին խորությամբ հաշվի չի առել վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, դա վերաբերում է սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտի առանձնահատկություններին՝ վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության պարագաներում: Եթե նախնական եւ հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Հետեւաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջները հաշվի առնելով, սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել միայն անձի

նյութական եւ դատավարական իրավունքների պաշտպանության տեսանկյունից վիճարկվող դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11 եւ 12-րդ մասերի, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 բաժնի (մասնավորապես՝ 20420 հոդվածի) դրույթների հետ համադրության մեջ դիտարկելով միայն:

6. Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաեւ անհատական շահերի պաշտպանության խնդիրը: Այս բնորոշ գծերին համահունչ՝ ՀՀ ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն է արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների, պաշտպանությանը: Մասնավորապես, օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը նախատեսում է դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով վերանայելու հնարավորությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության եւ քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածներով սահմանված է սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման կարգը:

Օրենսդրական նման կարգավորումը հնարավորություն է տալիս սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացրած անձին լիարժեքորեն իրացնելու իր իրավունքները եւ ապահովում է սահմանադրական դատարանում անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին 2411 հոդվածի (որն ընդունվել էր ըստ 21.02.07թ. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի եւ ուժը կորցրել ըստ 28.11.07թ. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի) եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի կիրառման առնչությամբ ձեւավորվել էր իրավակիրառական պրակտիկա, որը հիմնվում էր վերոհիշյալ 2411 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ««Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում» դրույթի մեկնաբանության վրա: Ըստ որոշ մեկնաբանությունների՝ այդ նախադասությունը հիմք էր տալիս եզրակացնելու, որ օրենքի 69 հոդ-

վածի 12-րդ մասի հիման վրա դատական ակտի վերանայումը եւս հնարավոր է միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանն օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի ուժով հետադարձ ուժ է տվել իր որոշմանը՝ այն տարածելով այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա: Մինչդեռ այս մեկնաբանությունը ոչ միայն անընդունելի է, այլ նաեւ անհիմաստ է դարձնում սահմանադրական դատարանի միջոցով անձի խախտված իրավունքների պաշտպանության գաղափարը, քանզի օրենսգրքի 2411 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերոհիշյալ նախադասության մեջ ամրագրված «դեպք» բառը ներառում էր ոչ միայն օրենքի 68 հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքը, այլ նաեւ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքը:

7. Վերացական եւ կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններով է պայմանավորված նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ եւ 69 հոդվածի 12-րդ մասերի միջեւ եղած «անհամապատասխանությունը»: Մասնավորապես, օրենքի 68 հոդվածի 10-րդ մասը սահմանում է ընդհանուր կանոն, որից բացառություն է անում նույն հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերով նախատեսված դեպքերում միայն, այդ ցանկում չներառելով օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը: Մինչդեռ օրենքի 69 հոդվածի նշված մասն ամրագրում է, որ օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման: Այսինքն՝ այս նորմը եւս բացառություն է օրենքի 68 հոդվածի 10-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնից, բնորոշ է կոնկրետ վերահսկողությանը, որի մասին, բնականաբար, հիշատակում չէր կարող լինել 68 հոդվածում, որն էլ իր հերթին տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորություն է տալիս: Եվ եթե ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի արդյունքում ընդհանուր իրավասության դատարանների կողմից շարունակվի նախապատվությունը տալ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին՝ անտեսելով 69 հոդվածի 12-րդ մասի պահանջը, ապա ընդհանրապես անհիմաստ կդառնա սահմանադրական դատարան անհատական դիմումներ ներկայացնելը:

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ օրենքի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաեւ այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը, այդ հոդվածին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի սահմանադրականության հարցին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս

դրույթի հիման վրա դատարանների կողմից վերանայվում են միայն այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա սահմանադրական դատարանն ընդունել է օրենքի կիրառված դրույթի՝ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում:

Նշված իրավակիրառական պրակտիկայի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաեւ 32 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ այն անձինք, որոնց համար դեռեւս չի լրացել սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը, զրկվում են սահմանադրական դատարան դիմելու միջոցով իրենց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից:

Վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկան արդյունք է նաեւ նրա, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասում օգտագործված՝ «դիմող» եզրույթի բովանդակությանը տրվել է սահմանափակ մեկնաբանություն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցները» վերտառությամբ 44 հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցներն են դատավարության կողմերը՝ դիմողը՝ սույն օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող մարմինները եւ անձինք»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրությամբ եւ սույն օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 101-րդ հոդվածով նախատեսված մարմինները եւ անձինք, ընդ որում, Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետում նշված դեպքում սահմանադրական դատարան կարող են դիմել նաեւ իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան»:

Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրության եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ դրույթներից բխում է, որ այն ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ովքեր Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով կոնկրետ գործով իրավասու են վիճարկել այդ ակտով իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, համարվում են սահմանադրական դատարան դիմելու իրավունքի սուբյեկտներ: Տվյալ դեպքում «դիմող» հասկացությունը պետք է մեկնաբանվի լայն իմաստով եւ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը պետք է օրենսդրորեն երաշխավորված լինի:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը երաշխավորում է անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, օրենքով այդ իրավունքն իրացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, սակայն, գործնականում ստեղծվում է մի այնպիսի իրավիճակ, երբ մեկ այլ անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելը խոչընդոտում է անձին իրացնելու իր՝ սահմանադրական դատարան դիմելու սահմանադրական իրավունքը: Այսինքն՝ մի անձի իրավունքի իրացումը կանխվում է մեկ այլ անձի կողմից իր իրավունքի իրացման փաստով, ինչի արդյունքում նրանց միջեւ ստեղծվում է նաեւ անհավասար վիճակ:

Սահմանադրական իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելու՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի այդ իրավունքի իրացումը կախվածության մեջ չդրվի տվյալ անձի կամքից անկախ առաջացած որեւէ հանգամանքից: Հետեւաբար, յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում օգտվելու սահմանադրական դատարանի միջոցով տրամադրվող իրավական պաշտպանությունից: Նման հնարավորությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաեւ այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարան դիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: Դա նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջն է, քանի որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն նաեւ մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք

է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Հետեւաբար, օրենսդիրը պարտավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 բաժնում սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը կերաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը: Անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասերի ուժով: Այլապես, սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանության իրավունքը կդառնան անիրական եւ երեւութական՝ զուրկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից:

10. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ համաձայն 28.11.07թ. ընդունված եւ 01.01.08թ. ուժի մեջ մտած «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, նախկին 2411 հոդվածը փոխարինվել է 20420 հոդվածով, որի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«1. Նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման համար հիմք են՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը...»:

Փաստորեն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դիտարկում է սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները որպես դատական ակտերի վերանայման հիմք՝ անկախ որեւէ հանգամանքից եւ առանց որեւէ բացառության կամ վերապահման: Մյուս կողմից, շարունակում է գործել այն իրավակիրառական պրակտիկան, երբ քաղաքացիների նկատմամբ «նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման» ինստիտուտը չի կիրառվում բոլոր այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանը հետադարձություն չի տվել իր որոշմանը՝ անկախ այն բանից, թե վերացական կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողություն է իրականացվել:

Վիճարկվող դրույթների եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 բաժնի (մասնավորապես՝ 20420 հոդվածի) դրույթների համակարգային վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման արդյունավետության տեսանկյունից կարելոթում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը, նախ՝ չի խաթարի երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, ինչպես նաեւ լիարժեք հնարավորություն կտա անձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը: Բացի վերոշարադրյալից, խնդիրը վերաբերում է նաեւ այն բանին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան բաժնի նոր խմբագրությամբ (20422 հոդված) սահմանադրական դատարանի որոշման հիմքով փաստորեն վերանայման ենթակա են բոլոր այն դատական ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 20 տարուց ոչ վաղ: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը սահմանադրական դատարանի որոշման ուժը տարածում է 20-ամյա վաղեմությամբ իրավահարաբերությունների վրա: Ակնհայտ է, որ նշված նորմը հակասում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին, իսկ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ կետի՝ «2. Իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին»: Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 6-րդ կետի՝ «6. Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների դրոթում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին» (տվյալ դեպքում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթները պետք է համապատասխանեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներին, չնայած այն բանին, որ ՀՀ Ազգային ժողովը 2007թ. փետրվարի 21-ին փոփոխություն կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2411 հոդվածի 1-ին մասում, շեշտել էր, որ նոր հանգամանքների ինստիտուտը կիրառվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում: 2007թ. նոյեմբերի 28-ի փոփոխությունների արդյունքում օրենսգրքից այս նորմը նույնպես հանվեց):

Նույն կանոնն ամրագրված է նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1 հոդվածի 1-ին մասում. «1. Հայաստանի Հանրապետության դատարաններում... քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով եւ դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Այլ օրենքներում... պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին, իսկ հակասության դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի նորմերը»:

Հաջորդ խնդիրը կայանում է հետեւյալում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20420 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը, որի համաձայն՝ «նոր հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանների դատական ակտերը», կարող է խոչընդոտներ ստեղծել անձի խախտված իրավունքները սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու համար, քանզի առանձին դեպքերում անձի խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնումը կարող է պահանջել վերաքննիչ դատարանի կամ վճռաբեկ դատարանի որոշումների վերանայում: Հաշվի առնելով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունները՝ հնարավոր են իրավիճակներ, երբ խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնման համար ընդհանրապես չպահանջվի առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայում, եւ խախտված իրավունքը հնարավոր չլինի վերականգնել առանց վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի ընդունած դատական ակտի վերանայման:

Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 բաժնում համապատասխան փոփոխությունների միջոցով պարտավոր է կարգավորել նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման գործող կարգը՝ այն հաշվով, որպեսզի չխաթարվի իրավական անվտանգությունը, եւ քաղաքացիները լիարժեքորեն կարողանան վերականգնել հակասահմանադրական նորմի կիրառման հետեւանքով խախտված իրենց իրավունքները:

Սահմանադրական դատարանը նման օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը կարելուրում է նաեւ այն տեսանկյունից, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20420 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման եւ պաշտպանության, հետեւաբար՝ նաեւ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին եւ նոյեմբերի 28-ին ընդունված օրենքներով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների փոփոխություններն ու լրացումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի դրույթները, որոնք համակարգային առումով փոխկապակցված են օրենքի վիճարկվող դրույթների հետ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման եւ տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջեւ ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**15 ապրիլի 2008 թվականի
ՍԳՈ-751**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԼՈՌԻՇԵՆ» ՍՊԸ-Ի ԳԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 77 ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 ապրիլի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածներին,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Լորիշեն» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Լորիշեն» ՍՊԸ-ի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողի գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները եւ լսելով վերջինիս լրացուցիչ պարզաբանումները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 77 հոդվածը սահմանում է.

«1. Դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

2. Բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ վերականգնելը մերժելու մասին դատարանը կայացնում է որոշում»:

3. Ըստ վերջնական դատական ակտի՝ «Լոռիչեն» ՍՊ ընկերության դիմումը՝ ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, երրորդ անձ «Պրոմեթեյ-Խիմպրոմ» ՓԲ ընկերության՝ պետական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ տնտեսական դատարանի 22.11.2006 թվականին կայացրած վճռի, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 26.06.2007 թվականի որոշմամբ մերժվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 եւ 228.1. հոդվածների հիման վրա՝ վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետը դիմողի կողմից բաց թողնելու եւ այն վերականգնելն անհարգելի համարելու պատճառաբանությամբ:

4. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ եւ 5-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին, քանի որ աշխատանքային օրվա ավարտից հետո մինչեւ ժ. 24:00 դատավարական գործողությունների կատարման անհնարիւնության պատճառով բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման պայման չնախատեսելու, ինչպես նաեւ բաց թողնված այդ ժամկետը վերականգնելու կամ վերականգնելը մերժելու մասին դատական որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու հետեւանքով, չի ապահովում արդարադատության արդյունավետության եւ դրա բավարար մատչելիության իրավական երաշխիքներ:

Դիմողը միաժամանակ գտնում է, որ դատավարական գործողության կատարումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրը՝ աշխատանքային ժամի ավարտից հետո մինչեւ նույն օրվա ժ. 24:00-ն գործնականում անհնար է, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74, 75 հոդվածների եւ վիճարկվող 77 հոդվածի կարգավորման պայմանները չեն պարունակում այդպիսի գործողություն կատարելու բավարար իրավական երաշխիքներ:

5. Պատասխանողը գտնում է, որ դիմողի պնդումը հիմնավորված չէ եւ դիմումը ենթակա է մերժման հետեւյալ նկատառումներով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով վճռաբեկ բողոքի կազմման եւ ներկայացման համար սահմանված է բավական երկար ժամանակահատված՝ վեց ամիս, որն

ավելի քան բավարար է ցանկացած բարդության գործի ուսումնասիրման եւ բողոքի ներկայացման համար: Բացի դրանից, դիմողի նշած դատավարական ժամկետների սահմանման եւ վերականգնման հիմնահարցն իր կարգավորումն է ստացել նաեւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5 եւ 84 հոդվածներում, որոնց եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերի վերլուծությունից բխում է, որ դրանք լրացնում են միմյանց: Հետեւաբար, եթե դատավարական գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա այդպիսի գործողության կատարման ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ հիմնարկի կամ կազմակերպության սահմանած կանոններով ավարտվում է աշխատանքային օրը: Իսկ դատավարական բաց թողնված ժամկետի վերականգնման կամ վերականգնումը մերժելու վերաբերյալ դատարանի պատճառաբանված որոշման կայացման պարտադիր պայմանը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144 հոդվածի բովանդակությունից, հետեւաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածում դատական որոշման պատճառաբանված լինելու անհրաժեշտության մասին դրույթի ամրագրման կարիքը բացակայում է, եւ այն իր բովանդակությամբ չի հակասում ՀՀ Սահմանադրությանը:

6. ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի (1-ին մաս) եւ 19 հոդվածի (1-ին մաս) համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, ինչպես նաեւ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք, որն ամրագրված է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6 հոդվածում: Դատավարական ժամկետների ինստիտուտն ընդհանրապես կոչված է երաշխավորելու անձանց իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության սահմանադրական վերոհիշյալ իրավունքի արդյունավետ իրացումը: Այն օրենքով կամ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում դատարանը, կողմերը եւ գործի մյուս մասնակիցներն իրավունք ունեն (պարտավոր են) կատարելու օրենքով նախատեսված դատավարական գործողություններ: Միաժամանակ, որոշակի ժամկետով այդպիսի գործողությունների կատարման սահմանափակումը դատավարական հարաբերությունների կայունությունը, որոշակիությունը, հստակությունը, դատավարական սկզբունքների պահպանումը, գործով բազմակողմանի եւ օբյեկտիվ քննությունը, ի վերջո, արդարադատության արդյունավետությունն ապահովող եւ անձանց խախտված իրավունքները ողջամիտ ժամկետում վերականգնելու կարեւոր երաշխիք է:

7. Քաղաքացիադատավարական ժամկետների սահմանման եւ կիրառման (այդ թվում՝ նաեւ գործողությունների կատարման) ընդհանուր կանոնները նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-77 հոդվածներով, համաձայն որոնց՝ դատավարական գործողությունները կատարվում են սահմանված ժամկետներում (օրենսդրությամբ, դատարանի որոշմամբ), եւ

կարող են կատարվել մինչև այդ ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն, որը որպես իրավական ակտով նախատեսված գործողությունը կատարելու ընդհանուր կանոն նախատեսված է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասում:

Միաժամանակ, օրենսդրությամբ կարգավորված է քաղաքացիադատավարական ժամկետների հաշվարկի, դրանք բաց թողնելու դեպքում վերականգնելու ընթացակարգ: Վերականգնման կանոնները որոշված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածում (կատարողական թերթը կատարման ներկայացնելու դեպքում), համաձայն որոնց՝ բաց թողնված դատավարական ժամկետը դատարանի որոշմամբ վերականգնվում է հարգելի պատճառների առկայությամբ՝ գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա:

Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ դատավարական ժամկետը բաց թողնելու հնարավոր պատճառներն օրենքով օբյեկտիվորեն կանխորոշված չեն, որի պայմաններում դրանք գնահատելու եւ արդյունքում այդ ժամկետի բացթողումը հարգելի կամ անհարգելի ճանաչելու (գնահատման չափանիշներ ընտրելու) դատարանի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ: Սակայն, ի տարբերություն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 4-րդ մասում ամրագրված կանոնի, դատավարական գործողության կատարման բաց թողնված ժամկետը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 77 հոդվածի հիմքով վերականգնելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման, հետեւաբար՝ այդ ակտի հիմնավորվածությունը (օրինականությունը) վիճարկելու իրավական հնարավորություն նախատեսված չէ, որի սահմանադրականությունը սույն գործի շրջանակներում չի վիճարկվում:

Ի դեպ, քննության առարկա հիմնահարցի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն իր «Դատական ակտերը բողոքարկելու ժամկետների վերաբերյալ օրենսդրության կիրառման դատական պրակտիկայի մասին» 2000թ. թիվ 36 որոշմամբ:

Վերահաստատելով իր 09.04.2007թ. ՍԳՈ-690 որոշման 7-րդ եւ 11-րդ կետերում արտահայտած դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական ժամկետները բաց թողնելու պատճառների դատական գնահատման հիմքում պետք է լինեն իրավական չափանիշներ՝ ելնելով իրավակարգավորման ընդհանուր սկզբունքներից, բացառելով կամային ու չհիմնավորված որեւէ մոտեցում: Այդպիսի ազատությունը պետք է իրականացվի իրավասու դատարանի՝ օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակներում, անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով՝ ՀՀ Սահմանադրության 3 հոդվածում եւ 47 հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների պահպանմամբ: Հակառակ պարագայում, դատարանը մարդու սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջական գործող իրավունքի, ապահովման ու պաշտպանության փոխարեն իր ակտով այդ իրավունքների ոտնահարման պատճառ կարող է դառնալ: Դրանով է պայմանավորված դատական

ակտերի՝ որպես սահմանադրական արդարադատության օբյեկտ հանդիսանալու իրողությունը միջազգային պրակտիկայում:

Ելնելով դիմողի առաջադրած հարցադրումներից, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի հիման վրա ի պաշտոնե պարզելով գործի հանգամանքները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությունը նախատեսել է բոլոր հնարավոր լուծումները քննության առարկա հարցով դիմողի սահմանադրական իրավունքների պաշտպանության համար: Խնդիրը կայանում է նրանում, թե այդ հնարավորություններն ինչպես են իրացվել դատական պրակտիկայում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործով դա չի արվել հոգուտ իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման, միաժամանակ արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրությամբ դատական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսանալ չեն կարող:

8. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածի 2-րդ մասի հիմքով կայացված դատական որոշման պատճառաբանման պարտադիր պահանջի վերաբերյալ դիմող կողմի պնդմանը, նկատի ունենալով, որ այդպիսի որոշման կայացումը դուրս է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144 հոդվածի կանոնակարգման շրջանակներից, եւ վերահաստատելով 09.04.2007թ. ՍԴՈ-690 եւ 11.04.2007թ. ՍԴՈ-691 որոշումներում արտահայտած իր դիրքորոշումը, սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է ՀՀ դատական օրենսգրքի 21, 48, 50 (4-րդ մաս) եւ 60 (1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետեր) հոդվածներով նախատեսված՝ դատական որոշումների պատճառաբանման պարտադիր պայմանների միակերպ կիրառման կարեւորությունը ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջների լիարժեք երաշխավորումն ապահովելու խնդրում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**22 ապրիլի 2008 թվականի
ՍԴՈ- 752**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՌԱԳԻՈ ՀԱՅ» ՍՊԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱՄ
«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԳԻՈՅԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 53 ՀՈՂՎԱԾԻ
3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ «Ռադիո Հայ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Սկրտչյանի, նրա ներկայացուցիչ Հ. Ալումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց ««Ռադիո Հայ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ռադիո Հայ» ՍՊԸ-ի՝ 25.12.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի բացատրությունները, ուսումնասիրելով գործի նյութերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2000 թվականի հոկտեմբերի 9-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի նոյեմբերի 9-ին եւ ուժի մեջ է մտել 2000 թվականի նոյեմբերի 18-ին (ՀՕ-97):

Ազգային ժողովի կողմից 2001 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված եւ 2001 թվականի դեկտեմբերի 12-ին ուժի մեջ մտած՝ ««Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն-

ներ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-251 ՀՀ օրենքով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ եւ լրացումներ: Մասնավորապես, ««Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-251 ՀՀ օրենքի 20 հոդվածի ուժով օրենքի 53 հոդվածից երկրորդ մասը հանելու կապակցությամբ օրենքի երրորդ եւ չորրորդ մասերը համապատասխանաբար համարվում են երկրորդ եւ երրորդ մասեր, իսկ օրենքի 53 հոդվածի՝ նոր խմբագրությամբ երկրորդ մասից հանվել է «կամ արտադրության եւ հեռարձակման» բառերը, «հազարապատիկը» բառը փոխարինվել է «հինգհարյուրապատիկը» բառով:

Քննության առարկա դիմումով վիճարկվում է օրենքի նոր՝ 2001 թվականի հոկտեմբերի 24-ի խմբագրությամբ 53 հոդվածի 3-րդ մասը, որը, ըստ էության, հանդիսանում է օրենքի նախկին խմբագրությամբ 53 հոդվածի 4-րդ մասը եւ առայսօր որեւէ բովանդակային փոփոխության չի ենթարկվել:

Օրենքի՝ «Արտոնագիր (լիցենզիա) տալը» վերտառությամբ 53 հոդվածը սահմանում է. «Արտոնագրատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձին Ազգային հանձնաժողովն արտոնագիր (լիցենզիա) է տալիս համապատասխան մուծումներ կատարելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար արտոնագրային (լիցենզային) վճարի չափը կախված է հաղորդչի հզորությունից եւ սփռման հնարավոր տարածքից: Արտոնագրային (լիցենզային) վճարը սահմանում է հանձնաժողովը. դա չի կարող լինել ավելի, քան սահմանված նվազագույն (հաշվարկային) աշխատավարձի հինգհարյուրապատիկը:

Հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար արտոնագրատերը մուծում է տարեկան եթերավճար, որի չափը հաշվարկվում է՝ ելնելով միայն հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերից»:

2. ՀՀ կառավարությունը, օրենքի 53 հոդվածի կիրարկումն ապահովելու նպատակով եւ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 3-րդ մասով, 06.07.2006 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարությանը լիազորություն վերապահելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1807-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 946-Ն որոշումը, որով ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը վերապահվել է հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափը հաշվարկելու եւ հաստատելու լիազորություն:

Իր հերթին, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարը, հիմնվելով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի եւ ՀՀ կառավարության 06.07.2006թ. թիվ 946-Ն որոշման վրա, 01.11.2006 թվականին ընդունել է թիվ 274-Ն հրամանը, որով հաստատել է հեռարձակման հաճախությունների սպասարկման տարեկան եթերավճարի չափը:

ՀՀ տնտեսական դատարանը, դիմողի, ինչպես նաեւ մի քանի այլ ռադիոընկերությունների դիմումի հիման վրա՝ ընդդեմ ՀՀ կառավարության, քննելով ՀՀ

կառավարության 06.07.2006թ. թիվ 946-Ն որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործը, իր 2007թ. մայիսի 11-ի վճռով մերժել է դիմողների պահանջը: ՀՀ կառավարության նշված որոշումը, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի եւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի 01.11.2006թ. թիվ 274-Ն հրամանի հետ մեկտեղ, իրավական հիմք էր հանդիսացել դիմողներին եթերավճար մուծելու պահանջ ներկայացնելու համար: Ըստ դիմողների՝ ՀՀ կառավարությունն իրավասու չէր իր այդ որոշմամբ լիազորելու ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը՝ հաստատելու հեռարձակման հաճախությունների սպասարկման տարեկան եթերավճարների չափերը: ՀՀ տնտեսական դատարանը գտել է, որ ՀՀ կառավարության վիճարկվող որոշումը «որեւէ կերպ չի հակասում օրենքին, որպիսի հիմքով եւ չի խախտում դիմողների՝ դիմումի հիմքում նշված իրավունքները, քանի որ ՀՀ կառավարության կողմից՝ վիճարկվող որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության 85 հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի եւ 14 հոդվածի պահանջների պահպանմամբ, եւ քննարկվող որոշմամբ ՀՀ կառավարության կողմից չի սահմանվել իրավաբանական անձանց կողմից վճարվող պարտադիր վճարի չափ...»:

3. Ըստ դիմողի՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասին, 5 հոդվածի 2-րդ մասին, 27 հոդվածին՝ 43 հոդվածի հետ համատեղ, 42 հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությանը եւ 45 հոդվածին:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի ներկայացրած փաստարկները վերաբերում են ոչ միայն օրենքի վիճարկվող դրույթի հակասահմանադրականության հիմնավորմանն ու պատճառաբանմանը, այլեւ դրա հիման վրա ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարությանը լիազորություն վերապահելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1807-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 06.07.2006թ. թիվ 946-Ն որոշման եւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի 01.11.2006թ. թիվ 274-Ն հրամանի սահմանադրականության հարցին: Նշված ակտերի սահմանադրականության հարցը, սակայն, չի կարող քննության առարկա դառնալ սահմանադրական դատարանում, քանզի անհատական դիմումի հիման վրա սահմանադրական վերահսկողության օբյեկտ կարող են լինել միայն օրենքները, եւ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իրավասու չէ սահմանադրական դատարանում վիճարկելու ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականությունը:

Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի իրավական անորոշության հարցը՝ այն հիմնավորմամբ, որ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը չի սահմանել հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափը եւ չի լիազորել որեւէ մարմնի՝ որոշելու հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար եթերային հաճախությունների ցանկով սահմանված տիրույթը գտնվում է բացառապես Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կառավարության, կառավարման ներքո: Ուստի հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի սահմանումը չի կարող դիտարկվել որպես բացառապես օրենքի կարգավորման առարկա: Դա պայմանավորված է նրանով, որ եթերավճարի մուծումն օրենքի համաձայն կատարվում է պետության լիազորած իրավասու մարմնի կողմից հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերի, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների հատուցման դիմաց:

Ըստ պատասխանող կողմի՝ խնդրո առարկա եթերավճարը բացառապես պետության լիազորած մարմնի կողմից հաճախության սպասարկման համար անհրաժեշտ ծախսերի, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների հատուցման դիմաց կատարվող վճար է:

Պատասխանող կողմը փաստում է նաև, որ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասով նախատեսված եթերավճարը հանդիսանում է բյուջեի այլ եկամուտների աղբյուր եւ մուտքագրվում է պետական բյուջե:

5. Քննության առարկա դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված «պարտադիր վճար» հասկացության բովանդակությանը, ինչպես նաև օրենքի վիճարկվող դրույթում օգտագործված «եթերավճար» հասկացության բովանդակությանն ու էությանը:

Սահմանադրության 45 հոդվածում «այլ» բառի առկայությունից բխում է, որ հիշյալ հոդվածում նշված հարկերը եւ տուրքերը եւս պարտադիր վճարումներ են, եւ, հետեւաբար, հիշյալ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները, հարկերից եւ տուրքերից տարբերվելով հանդերձ, վերջիններիս հետ պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ:

Հարկային օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված պարտադիր վճարները.

ա/ կրում են հանրային իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում եւ վճարվում են հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում,

բ/ նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար:

6. Ըստ ներկայումս գործող ՀՀ օրենսդրության՝ հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակող կազմակերպություններն ունեն հետեւյալ վճարատեսակները վճարելու պարտականություն.

ա/ արտոնագրային (լիցենզային) վճար. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածով սահմանվում են լիցենզավորման ենթակա գործունեու-

թյան տեսակները: Համաձայն այդ հոդվածի՝ ի թիվս այլոց, որպես հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են ամրագրվում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործումը, ձայնային ծառայությունների, շարժական կապի ծառայությունների, տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցումը, հեռուստահաղորդումների հեռարձակումը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն՝ լիցենզիայի տրման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով եւ չափով:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի՝ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման բնագավառում լիցենզավորման հետ կապված իրավահարաբերությունները նշված օրենքով կարգավորվում են այնքանով, որքանով այն չի հակասում բնագավառը կարգավորող «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքներին եւ դրանց հիման վրա Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ընդունած համապատասխան կարգերին:

Համաձայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումն իրականացվում է արտոնագրի (լիցենզիայի) հիման վրա: Վերջինս միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս իրականացնել հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում, օգտվել որոշակի հաճախությունից, կաբելային (լարային) ցանցից: Նույն օրենքի 53 հոդվածը սահմանում է արտոնագրային (լիցենզային) վճար մուծելու՝ արտոնագրատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձի պարտականությունը: Այս վճարը սահմանում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածի հիման վրա գանձվող արտոնագրային (լիցենզային) վճարը միանվագ գանձվող եւ պետական բյուջե մուծվող վճար է, եւ նշված հոդվածին համապատասխան՝ արտոնագրատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձին Ազգային հանձնաժողովն արտոնագիր (լիցենզիա) է տալիս այդ վճարումը կատարելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի, ինչպես նաեւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի իմաստով՝ նշված արտոնագրային (լիցենզային) վճարն իր բնույթով հանդիսանում է պետական տուրք, եւ որպես այդպիսին այն վճարվում է հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակելու համար արտոնագրի (լիցենզիայի) տրման համար («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 2.1. մասի ուժով՝ պետական տուրքերն են օրենքով սահմանված պետական տուրքի տեսակները: Այսինքն՝ պետական տուրք կարող է սահմանվել ոչ միայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, այլ նաեւ այլ օրենքներով),

բ) հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակելու համար պետական տուրք. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն՝ լիցենզավորման

ենթակա գործունեության իրականացման համար օրենքով կարող են նախատեսվել տարեկան տուրքեր: Հարկ է նկատել, որ նշված օրենքը լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար նախատեսում է երկու վճարատեսակ վճարելու պարտականություն, այն է՝ լիցենզիայի տրման համար եւ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար: Ընդ որում, օրենքը լիցենզիայի տրման համար գանձվող պետական տուրք վճարելու պարտականությունը սահմանել է իմպերատիվ կերպով, իսկ լիցենզավորման գործունեություն իրականացնելու համար տարեկան պետական տուրքի առնչությամբ նախատեսել է նման տուրք գանձելու հնարավորությունը:

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի՝ ի թիվս հարկային եկամուտների, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, պաշտոնական դրամաշնորհների եւ այլ եկամուտների, պետական բյուջեի աղբյուր է հանդիսանում նաեւ պետական տուրքը: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի համաձայն՝ պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է: Այն ծառայությունները եւ գործողությունները, որոնց համար պետական տուրք է գանձվում, սպառիչ կերպով թվարկված են նույն օրենքի «Պետական տուրքի գանձման օբյեկտները» վերտառությամբ 7 հոդվածում: Ըստ այդ հոդվածի՝ ի թիվս այլոց, պետական տուրքի գանձման օբյեկտ են հանդիսանում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալը, ինչպես նաեւ նույն օրենքի 19.1. եւ 20 հոդվածներով սահմանված այլ ծառայությունները կամ գործողությունները: Խնդրո առարկա բնագավառին վերաբերում է օրենքի 19.1. հոդվածի՝ «հեռահաղորդակցության բնագավառ» վերտառությամբ 9-րդ կետը: Այդ կետով սահմանվում է տարեկան տուրքի վճարման պարտականություն՝ լիցենզավորման ենթակա գործունեության հետեւյալ տեսակների իրականացման համար. հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման, ձայնային ծառայությունների, շարժական կապի ծառայությունների, տվյալների հաղորդման եւ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման, հեռուստահաղորդումների եւ ռադիոհաղորդումների հեռարձակման համար:

Այսպիսով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաեւ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ լիցենզավորված գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն ունեն երկու տեսակի պետական տուրք վճարելու պարտականություն, այն է՝ միանվագ վճարվող պետական տուրք, որը վճարվում է լիցենզիա տալու դիմաց, եւ տարեկան տուրք, որը վճարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար: Հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակող ընկերությունների դեպքում՝ «Լիցեն-

զավորման մասին» ՀՀ օրենքի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին համապատասխան որպես լիցենզիա տալու դիմաց պետական տուրք հանդիսացող միանվագ վճար հանդես է գալիս «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածով նախատեսված արտոնագրային վճարը, իսկ լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար տարեկան պետական տուրքը նախատեսված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.1. հոդվածի 9-րդ կետով,

զ) եթերավճար. այս վճարը մուծելու՝ հեռուստառադիոընկերությունների պարտականությունը սահմանված է «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածով: Ի տարբերություն վերոհիշյալ երկու վճարատեսակների՝ այս վճարատեսակը գանձվում է ոչ թե համապատասխան պետական մարմինների լիազորություններով պայմանավորված՝ ծառայության կամ գործողության դիմաց, այլ տնտեսավարող սուբյեկտի կողմից ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 5-րդ կետը ռադիոհաճախականության օգտագործման վճարը՝ որպես պետական բյուջեի եկամտի աղբյուր, չդիտելով որպես հարկային եկամուտ կամ պետական տուրք, դասում է այլ եկամուտների շարքին:

Ռադիոհաճախականությունների օգտագործման վճար մուծելու պարտականություն օրենսդրությամբ սահմանված է ոչ միայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող տնտեսավարող սուբյեկտների, այն է՝ հեռուստառադիոընկերությունների, այլ նաեւ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի (նշված օրենքը չի տարածվում հեռարձակվող հեռուստատեսային եւ ձայնային ծրագրեր մատուցող անձանց կամ բացառապես մմանօրինակ ծրագրերի համար օգտագործվող ենթակառուցվածքների վրա) հիման վրա գործող՝ հեռահաղորդակցության ոլորտի այլ տնտեսավարող սուբյեկտների համար: Վերջիններիս՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճար մուծելու պարտականությունը եւ այդ վճարի գանձման գործընթացն օրենսդրությամբ ստացել է հետեւյալ կարգավորումը: «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի համաձայն՝ եթե էլեկտրոնային հաղորդակցության որեւէ ցանցի շահագործման կամ ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ է ռադիոհաճախականությունների օգտագործում, ապա անձը չի կարող տվյալ ցանցն օգտագործել կամ ծառայությունը մատուցել առանց ռադիոհաճախականություններն օգտագործելու համար պահանջվող թույլտվության: Նույն օրենքի 19 հոդվածը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ունեցող անձանց պարտավորեցնում է կատարել այդ թույլտվության պայմանները: Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006թ. մարտի 7-ի թիվ 28-Ն որոշմամբ: Այդ որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ ռադիոհաճախականություններն օգտագործելու թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից: Թույլտվության անբաժանելի մասն են համարվում ռադիոհաճախականության օգտագործման պայմանները: Վերջին-

ներս, ի թիվս այլոց, ներառում են նաև ռադիոհաճախականության օգտագործման վճար մուծելու պայմանը: Համաձայն հաստատված կարգի՝ ռադիոհաճախականության օգտագործման վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Թույլատրված ռադիոհաճախականության օգտագործման համար տարեկան վճարները գանձվում են եռամսյակը մեկ անգամ՝ տարեկան վճարի մեկ քառորդի չափով: Մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրը թույլտվություն ունեցող անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել վճարումը հավաստող անդորրագիրը: Ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների չափերը սահմանված են նշված որոշմամբ հաստատված կարգի Աղյուսակ 2-ում: Սահմանված օգտագործման վճարների իրավական բնույթն ու բովանդակությունն էլ ավելի է հստակեցվել Հանձնաժողովի 2006թ. մարտի 7-ի թիվ 28-Ն որոշման մեջ կատարված համապատասխան լրացմամբ: Հանձնաժողովի 2007թ. ապրիլի 20-ի թիվ 189-Ն որոշմամբ 2006թ. մարտի 7-ի թիվ 28-Ն որոշմամբ հաստատված կարգի N 8-րդ հավելվածի 1-ին գլխի 1.1. կետը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն կետով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման վճարները հանդիսանում են հրապարակային պայմանագիր կնքելու պարտադիր պայման»:

7. Վերոհիշյալ իրավակարգավորման վերլուծությունը վկայում է, որ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի հաստատման եւ գանձման գործընթացի ամբողջական եւ լիարժեք կարգավորումը թույլ է տալիս բացահայտել այդ վճարի բնույթն ու բովանդակությունը: Նշված իրավակարգավորման համատեքստում ռադիոհաճախականությունների օգտագործման վճարը, հանդիսանալով գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր, եւ որպես այդպիսին մնան գումարի գանձման համար իրավական հիմք է հանդիսանում ռադիոհաճախականությունների սեփականատիրոջ, այն է՝ պետության, որն այդ իրավահարաբերություններում գործում է Հանձնաժողովի միջոցով, եւ ռադիոհաճախականությունն օգտագործողի միջեւ կնքված համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիրը: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վերոհիշյալ՝ 2006թ. մարտի 7-ի թիվ 28-Ն եւ 2007թ. ապրիլի 20-ի թիվ 189-Ն որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ որպես նշված սուբյեկտների միջեւ իրավահարաբերությունները կանոնակարգող եւ օգտագործման վճարի գանձման համար իրավական հիմք ծառայող քաղաքացիաիրավական պայմանագիր է հանդիսանում ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունը. վերջինս հանդիսանում է հրապարակային պայմանագիր եւ որպես այդպիսին ներառում է ռադիոհաճախականությունների օգտագործման բոլոր պայմանները, այդ թվում՝ նաև ռադիոհաճախականության օգտագործման վճարներ մուծելու վերաբերյալ պարտադիր պայմանը: «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածն ամրագրում է այդ թույլտվության պայմանները կատարելու՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ունեցող անձանց

պարտավորությունը: Հարկ է նկատել, որ նման իրավակարգավորումը համահունչ է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան պահանջներին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով (հոդված 438)»: Իսկ նույն օրենսգրքի 440 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Օրենքով նախատեսված դեպքերում կիրառվում են լիազորված պետական մարմինների կողմից սահմանված կամ կարգավորված գները (տարիֆները, վարձաշափերը, դրույքները եւ այլն)»:

Այսպիսով, էլեկտրոնային հաղորդակցության որեւէ ցանցի շահագործման կամ ծառայություն մատուցելու համար ռադիոհաճախականությունների օգտագործման անհրաժեշտություն ունեցող անձը, դիմելով ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստանալու համար, համաձայնում է հրապարակային պայմանագիր հանդիսացող թույլտվության պայմաններին եւ պայմանագրերի ազատության սկզբունքին համապատասխան ըստ էության մտնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ՝ իր ազատ կամքով ի թիվս այլ պարտավորությունների՝ ստանձնելով նաև օգտագործման վճար մուծելու պարտավորություն:

Մինչդեռ հեռուստառադիոընկերությունների պարագայում նույնատիպ վճարի սահմանման եւ գանձման գործընթացն ստացել է այնպիսի անորոշ եւ հակասական կարգավորում, որ հնարավոր չէ հստակ հետեւություն անել ո՛չ այդ վճարի գանձման նպատակի, ո՛չ այդ վճարի բնույթի ու բովանդակության մասին: Վիճարկվող դրույթում «Հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար արտոնագրատերը մուծում է տարեկան եթերավճար» ձեւակերպումը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1807-Ն որոշման մեջ «Հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափի հաշվարկման եւ հատատման, ինչպես նաև հավաքագրման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարությանը» դրույթը թերեւս հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ վճարը, ինչպես վերոհիշյալ դեպքում, պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ռադիոհաճախականության օգտագործման դիմաց գանձվող վճար է: Այս դիրքորոշումն են պաշտպանել նաև ՀՀ կառավարության ներկայացուցիչները տնտեսական դատարանում՝ համարելով, որ «...Հեռուստառադիոընկերությունների հեռարձակման եթերային հաճախությունները հանդիսանում են պետության սեփականությունը, եւ պետությունը՝ ի դեմս կառավարության, վարձակալական հիմունքներով օգտագործման նպատակով ՀՀ օրենսդրությանը համապատասխան իր կողմից սահմանված վճարի դիմաց այն տրամադրում է մրցութային կարգով արտոնագիր ստացած հեռուստառադիոհաղորդումների ռարձակում իրականացնել ցանկացող սուբյեկտներին»:

Մինչդեռ, ինչպես միեւնույն՝ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի դրույթում՝ «...չափը հաշվարկվում է՝ ելնելով միայն հաճախության սպասարկման համար անհ-

րաժեշտ ծախսերից», այնպես էլ «Հեռարձակման հաճախությունների սպասարկման տարեկան եթերավճարների չափերը հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի 2006թ. նոյեմբերի 1-ի թիվ 274-Ն հրամանում «Հաստատել հեռարձակման հաճախությունների սպասարկման տարեկան եթերավճարների չափերը» ձեւակերպումներից կարելի է հետետություն անել, որ նշված վճարը սպասարկման դիմաց տրվող վճար է: Հարկ է նկատել, որ իրավակիրառական պրակտիկայում եւս այդ վճարն ըստ էության ընկալվել է որպես սպասարկման վճար: Այսպես, եւ՝ դիմողին, եւ՝ մի քանի այլ ռադիոընկերությունների եթերավճար վճարելու պահանջ ներկայացվել է «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առետրային կազմակերպության գլխավոր տնօրենի գրությամբ: Նշված գրության մեջ որպես եթերավճարի վճարում պահանջելու իրավական հիմք մատնանշվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը, ընդ որում, առանց մատնանշելու համապատասխան հոդվածը, ինչպես նաեւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի 01.11.2006թ. հրամանը: Գրությամբ պահանջվել է սահմանված ժամկետում վճարումը հաստատող անդորրագրի կրկնօրինակը ներկայացնել «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Մինչդեռ համապատասխան օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ նշված կազմակերպությունը որեւէ իրավական հիմք չունի դիմողին եւ մյուս ռադիոընկերություններին մման պահանջ ներկայացնելու համար, եւ ընդհանրապես այդ կազմակերպության եւ ռադիոընկերությունների միջեւ որեւէ իրավական կապ գոյություն չունի: Այսպես, ««Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առետրային կազմակերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության 6 հոկտեմբերի 2005 թվականի N 1807-Ն որոշման առաջին պարբերության մեջ որպես այդ որոշման իրավական հիմք է մատնանշված «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4 հոդվածի 12-րդ մասը: Իսկ նշված օրենքի՝ «Օրենքի գործողության շրջանակները» վերտառությամբ 3 հոդվածի 2-րդ մասում ամրագրված է. «Սույն օրենքը չի տարածվում հեռարձակվող հեռուստատեսային եւ ձայնային ծրագրեր մատուցող անձանց կամ բացառապես նմանօրինակ ծրագրերի համար օգտագործվող ենթակառուցվածքների վրա»: Ավելին, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 6-ի թիվ 946-Ն որոշման 2-րդ կետով ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի թիվ 1807-Ն որոշման 5-րդ կետը լրացվել է հետեւյալ բովանդակությամբ նոր՝ «է» ենթակետով՝ «է) հաճախություններն օգտագործողների, բացառությամբ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան գործող հեռուստառադիոընկերությունների, հաճախությունների սպասարկում»:

Այսինքն՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ն իր գործառույթները, այդ թվում՝ նաեւ ռադիոհաճախականությունների սպասարկման գործառույթը, իրականացնում է պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին՝ միայն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող՝ ռադիոհաճախականություններ օգտագործող տնտեսավարող սուբյեկտների առնչությամբ. հեռուստառադիոընկերությունները

դուրս են ինչպես նշված օրենքի, այնպես էլ ՀՀ կառավարության 6 հոկտեմբերի 2005 թվականի N 1807-Ն որոշման իրավակարգավորման շրջանակից:

Հարկ է նկատել, որ օրենքի 53 հոդվածով նախատեսված եթերավճարի իրավական բովանդակությունը վերոհիշյալից էականորեն տարբերվող ընկալում է ստացել դատական պրակտիկայում: Մասնավորապես, գործում առկա` ՀՀ տնտեսական դատարանի 2007թ. մայիսի 11-ի վճռի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ դատարանը, ի տարբերություն գործադիր իշխանության վերոհիշյալ մեկնաբանության, հիմք է ընդունել այն հանգամանքը, որ օրենքի 53 հոդվածի 3-րդ մասով սահմանված` հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարը ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի իմաստով հանդիսանում է պարտադիր վճար եւ դրա չափը սահմանված է օրենքի 53 հոդվածով: Իսկ ՀՀ կառավարությունը լիազորել է ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը ոչ թե սահմանելու, այլ հաշվարկելու եւ հաստատելու օրենքի 53 հոդվածով արդեն իսկ սահմանված հեռարձակման հաճախությունն օգտագործելու համար տարեկան եթերավճարի չափը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հարցը կանոնակարգելիս օրենսդրությունը տարբերակված մոտեցում չի դրսևորել նաեւ առանձին ոլորտները կարգավորող անկախ հանձնաժողովների ու կոնկրետ նախարարության պետաիրավական կարգավիճակների հարցում` գործնականում ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը վերապահելով անկախ հանձնաժողովի իրավասություն:

8. Ելնելով վերոհիշյալից` սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, եթե օրենսդիրն օրենքի 53 հոդվածի 3-րդ մասով եթերավճար սահմանելիս` այն դիտարկել է որպես պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի` ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց տրվող վարձավճար, ապա վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերությունները պետք է ստանալին քաղաքացիաիրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում, որտեղ խնդրո առարկա վճարը պետք է դիտարկվեր որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր: Նույն մոտեցումը պետք է լիներ նաեւ այն պարագայում, եթե խնդրո առարկա եթերավճարը դիտարկվեր որպես սպասարկման վճար: Մինչդեռ առկա իրավակարգավորման վերլուծությունը վկայում է, որ, ի տարբերություն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող տնտեսավարողների, հեռուստառադիոընկերությունների կողմից վճարվող եթերավճարի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումը կրում է ոչ թե քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ հատկանիշներ, այլ հանրային իրավական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ հատկանիշներ, այն է` խնդրո առարկա եթերավճարը սահմանվել է հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում եւ 2007 թվականից համարվել է պետական մարմինների լիազորություններով պայմանավորված ծառայությունների մատուցման (հեռարձակման հաճախության սպասարկման) համար որպես պետական բյուջե

մուտքագրվելու համար նախատեսված վճար, ինչի արդյունքում այն ձեռք է բերում պարտադիր վճարի հատկանիշներ՝ մասնավորապես համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի: Իսկ եթերավճարն օրենսդրի կողմից որպես պարտադիր վճար դիտարկվելու դեպքում իրավակարգավորումը պետք է համապատասխաներ ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի եւ 83.5. հոդվածի 2-րդ կետի պահանջներին:

9. Հեռուստառադիոընկերությունների՝ եթերավճար վճարելու պարտավորության կապակցությամբ առկա ոչ լիարժեք, անհատակ, հակասական իրավակարգավորման եւ իրավակիրառական պրակտիկայի պայմաններում, երբ տվյալ տնտեսավարող սուբյեկտի համար որոշակիացված չեն ո՛չ եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, ո՛չ գանձման նպատակը, ո՛չ գանձող մարմինը, ո՛չ գանձման ընթացակարգը, ձեւավորվում է իրավական անորոշության եւ անկանխատեսելիության մի վիճակ, որը կասկածի է ենթարկում եթերավճարի գանձման իրավաչափությունը՝ հիմքեր ստեղծելով օրենքով նախատեսված պարտականությունը չկատարելու համար:

Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաեւ իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձեւակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական եւ ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետեւանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարելի է գործոն է նաեւ տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջուկ հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը:

Հաշվի առնելով միեւնույն սահմանափակ ռեսուրսի, այն է՝ ռադիոհաճախականությունների օգտագործման իրավակարգավորման հակասականությունը, օրենքի վիճարկվող դրույթի անորոշությունը, այդ անորոշությունից բխող՝ օրենքի դրույթի սխալ մեկնաբանության վրա հիմնված իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը տնտեսավարող սուբյեկտի համար հստակ կանխատեսելի չի դարձնում եթերավճարի գանձման նպատակը, իրավական մեխանիզմները, եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, այդ եթերավճարը վճարելու՝ տնտեսավարող սուբյեկտի պարտականության իրավաչափությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքին, 45 հոդվածի եւ 83.5. հոդվածի 2-րդ կետի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով, որ, մի կողմից, եթերավճարի գանձումն առնչվում է բյուջետային հարաբերությունների կայունությանը, մյուս կողմից՝ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից հեռուստառադիոընկերությունների համար եթերավճար վճարելու պարտավորության անմիջական ընդհատումը կարող է անհավասար վիճակ ստեղծել ռադիոհաճախականություն օգտագործող տնտեսավարող սուբյեկտների միջեւ՝ խաթարելով սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահին վեճի առարկա դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանը հեռուստառադիոընկերություններից եթերավճարի գանձման օրենսդրական ներկա կարգավորումն անհարիր համարելով իրավական պետության սկզբունքներին՝ միաժամանակ ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց վճարելու պարտականությունն ինքնին իրավաչափ է համարում, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53 հոդվածի 3-րդ մասի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008թ. դեկտեմբերի 1-ը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**13 մայիսի 2008 թվականի
ՍԳՈ- 753**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԷՄԻԼԻՅԱ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ
231.1. ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ (ՆՈՐ ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՄԲ
233 ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍ)՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող),
Ֆ. Թոխյանի, Ջ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմող՝ քաղ. Է. Մելիքյանի և նրա ներկայացուցիչ Հ. Հարությունյանի,
գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական
ներկայացուցիչ՝ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության
վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի
6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69
հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Էմիլիյա
Մելիքյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության
օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասի (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ
մաս)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատաս-
խանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Է. Մելիքյանի՝ 28.12.2007թ. դիմումն է սահմա-
նադրական դատարան:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի բացատրությունները, հե-
տազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում
առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրա-
կան դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց .**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաս-
տանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի
17-ին, Հանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ.
օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

Սկզբնապես դիմողի կողմից վիճարկվել է ՀՀ քաղաքացիական դատավա-

րության օրենսգրքի 228.1. հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության, 231.1. հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի դրույթների սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանի կողմից դիմումը քննության է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասի առնչությամբ:

Օրենսգրքի 231.1. հոդվածը վերնագրված է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը», որի 4-րդ մասը սահմանում է.

«4. Առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման դեպքում բողոք բերող անձը չի կարող կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը դիմողի նկատմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-98-Ն՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.02.2007թ. ընդունված, 15.03.2007թ. ՀՀ Նախագահի կողմից ստորագրված, 07.04.2007թ. ուժի մեջ մտած ՀՀ օրենքի խմբագրությամբ: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ լուծել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի՝ մինչեւ նշված օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ տեքստի սահմանադրականության հարցը. նշված տեքստը բաղկացած է եղել միայն 3 մասից եւ չի ներառել վիճարկվող դրույթը: Վերջինս ավելացվել է վերոհիշյալ օրենքով: Հետագայում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով՝ ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007թ. դեկտեմբերի 20-ին, ուժի մեջ է մտել 01.01.2008թ., ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 231.1. հոդվածը վերաձեւակերպվել է որպես գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդված:

2. Համաձայն վերջնական դատական ակտի՝ ՀՀ կառավարության 10.06.2004թ. նիստում ընդունվել է ՀՀ պետական գույքը մասնավորեցնելու մասին որոշում, որով նախատեսվել է «Պարեն» ԳԱՆ ՊՓԲԸ-ի բաժնետոմսերը մասնավորեցնել մրցույթով: Հետագայում, առանց կառավարության կողմից կրկին քննարկման, փոխվել է գույքի մասնավորեցման ձեւը՝ վերածվելով ուղղակի վաճառքի:

Դիմողը, իր մի շարք աշխատակիցների հետ, դիմում է ներկայացրել Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել կառավարության նշված որոշումը: Դատարանի 25.01.2005թ. վճռով դիմումը մերժվել է: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2005 թվականի հունիսի 28-ի վճռով եւս դիմումը մերժվել է: Դիմողը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերով պալատ, որն իր 20.09.2005թ. որոշմամբ բեկանել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը՝ ՀՀ կառավարության որոշումն

անվավեր ճանաչելու պահանջը մերժելու մասով, եւ գործի վարույթը կարճել է՝ վճռի մնացած մասը թողնելով անփոփոխ:

Հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի 16.11.2006թ. ՍԳՈ-665 որոշումը, դիմողը դիմում է ներկայացրել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան՝ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման մասին, որն էլ իր՝ 23.03.2007թ. վճռով դիմումը թողել է առանց բավարարման: Դիմողը կրկին դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր՝ 28.06.2007թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է, գտնելով, որ գործը վարույթ ընդունելու հիմքերը բացակայում են:

3. Դիմողը 28.12.2007թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ գտնելով, որ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 231.1. հոդվածի 4-րդ մասի դրույթները՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, հակասում են ՀՀ Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ եւ 5-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին, եւ դրանք անհրաժեշտ է անվավեր ճանաչել:

Դիմողը մասնավորապես մատնանշում է, որ Հայաստանի Հանրապետությունը, իրեն հռչակելով որպես իրավական պետություն, Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով հստակ նախատեսում է երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ իր խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով ու ծավալով:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթում թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետների սահմանումը պետք է հետապնդի դատական պաշտպանության իրավունքի իրականացման ապահովման, այլ ոչ թե այդ իրավունքի սահմանափակման նպատակ: Ժամկետ չսահմանելը չի կարող բացառել օրենքով իսկ սահմանված ժամկետում թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու իրավունքը (առնվազն մեկ անգամ՝ բարեխղճորեն օգտվելով դատավարական իրավունքներից): Վճռաբեկ դատարանը չի կարող իրագործել թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ սահմանելու կամ չսահմանելու իրավունքը՝ առանց պատճառաբանություններ նշելու:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող դրույթի եւ ՀՀ Սահմանադրության նշված հոդվածների միջեւ հակասությունը կայանում է նրանում, որ վիճարկվող դրույթը պարունակում է վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված սովորական ժամկետներում ընդհանուր կարգով վճռաբեկ բողոք ներկայացնելու սահմանափակում:

4. Առարկելով դիմողի պնդումների դեմ՝ պատասխանող կողմը գտնում է, որ վեճի առարկա նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանողի կարծիքով, վճռաբեկ բողոքը քննության ընդունելուն վերաբերող դատավարական կանոնները նպատակ են հետապնդում ապահովել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ վճռաբեկ դատարանի գործունեության

նպատակի՝ օրենքի միատեսակ կիրառությունը: Հաշվի առնելով, որ վճարեկ բողոքը քննության ընդունելու կամ չընդունելու որոշումը կարող է էական նշանակություն ունենալ անձի սահմանադրական իրավունքների իրականացման համար, եւ այն, որ վճարեկ բողոքը քննության չընդունելու մասին որոշումը վերջնական դատական ակտ է, օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքի 53 հոդվածի 1-ին մասում սահմանել է բողոքը քննության ընդունելու կամ չընդունելու համար հատուկ ընթացակարգ, ինչը պայմանավորված է անձի իրավունքների դատական պաշտպանության երաշխավորման անհրաժեշտությամբ, եւ իրենից ներկայացնում է բողոքարկողի համար լրացուցիչ դատավարական երաշխիք:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ վճարեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով վերապահվել են ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ: Տվյալ դեպքում ՀՀ վճարեկ դատարանին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասի համաձայն, վերապահվել է հայեցողական լիազորություն:

Պատասխանողը գտնում է, որ այս մոտեցումները բխում են նաեւ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, եւ հենց այդ մոտեցումներից ելնելով է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել է համապատասխան փոփոխություններ: Վիճարկվող նորմերը որոշակի են ու հստակ, բխում են դատական համակարգի բարեփոխումների հայեցակարգային մոտեցումներից, համարժեք են արդարադատական համակարգի եվրոպական զարգացումներին:

Միաժամանակ, պատասխանողը՝ անդրադառնալով դատական համակարգի զարգացման բնագավառում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականներին, արել է այն հիմնական հետեւությունը, որ տարբեր մոտեցումներ են ցուցաբերվում դատական տարբեր ատյանների իրավասությունների սահմանման ու դրանց իրականացման կարգերի նկատմամբ, ընդ որում, երրորդ ատյանի դատարան բողոքներ պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է նաեւ նեղացվել այն գործերի վերաբերյալ բողոքներով, որոնք առնչվում են իրավունքի այնպիսի հարցերի, որպիսիք ողջ հասարակության համար կարեւորություն չեն ներկայացնում:

5. Դիմողի փաստարկները հիմնականում առնչվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ վճարեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճարեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության վերաբերյալ դրույթին, որի սահմանադրականության հարցն արդեն իսկ քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանում:

Սահմանադրական դատարանը իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ առանձնակիորեն կարեւորել է այն իրավական երաշխիքներն օրենսդրորեն

ամրագրելու անհրաժեշտությունը, որոնք կոչված են ապահովելու վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումը: Մասնավորապես, սահմանադրական դատարանն իր որոշման 11-րդ կետում շեշտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ կետում կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ըմբռնելի բովանդակությունը սահմանելը, բողոքատու անձանց կողմից վճռաբեկ բողոքն օրենսգրքի 230 հոդվածի պահանջներին ըստ ձեւի համապատասխանեցնելու պայմանները, կարգը եւ ժամկետն օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա վճռաբեկ վարույթում առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանն իր նշված որոշման եզրակապակիչ մասի 3-րդ կետում ամրագրել է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) ... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»: Այսինքն՝ վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումն ապահովող կարելու իրավական երաշխիք պետք է հանդիսանար նաեւ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պարտադիր պայմանն օրենքով հստակ սահմանելը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական դատարանի նշված որոշման ընդունումից ի վեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների եւ լրացումների արդյունքում վերոհիշյալ իրավական երաշխիքները լիարժեքորեն չեն ապահովվել:

Այսպես՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի օրենքի 75 հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233 հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի»: Նույնաբովանդակ դրույթ է ըստ էության ամրագրված նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4-րդ մասում. վերջինս եւս վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշ-

ման պատճառաբանման պահանջը չի տարածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նման բացառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կատարումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը դեռևս չի սահմանել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում (գործող օրենսգրքի 233 հոդվածի 3-րդ մաս) կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ըմբռնելի բովանդակությունը:

Վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացման ապահովմանը միտված անհրաժեշտ իրավական երաշխիքներն օրենսդրորեն ոչ լիարժեքորեն ամրագրելու պայմաններում «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 21.02.2007թ. ՀՕ-98-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը (07.07.2006թ. խմբագրությամբ) լրացվել է վիճարկվող դրույթով:

Փաստորեն, մի կողմից՝ չեն ստեղծվել վերոհիշյալ հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ, մյուս կողմից՝ վիճարկվող դրույթով բացառվել է կրկին վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը չի սահմանում բողոքի թերությունները շտկելու համար ժամկետ: Այսինքն՝ բացակայում են ինչպես հայեցողական լիազորության կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այնպես էլ այդ հայեցողական լիազորության ոչ իրավաչափ իրականացումը հաղթահարելու միջոցը:

6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով համապատասխանաբար հայցադիմումը, դիմումը, վերաքննիչ բողոքը, անհատական դիմումը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման ուսումնասիրությունը վկայում է, որ համաձայն այդ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության՝ հայցադիմումի, դիմումի, վերաքննիչ բողոքի, անհատական դիմումի թերությունները չեն կարող խոչընդոտել դրանց քննության ընդունման հարցի դրական լուծմանը եւ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Նշված տրամաբանությունն էլ իր հերթին բխում է դատարանի մատչելիությունն ապահովելու անհրաժեշտությունից:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե դրանում առկա են այդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտումներ: Հայցադիմումում թույլ տրված խախտումները, նույնն է, թե թերությունները վերացվե-

լու եւ եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումն ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը: Ընդ որում, հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան:

Նույն օրենսգրքի 213 հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանը գործն ստանալուց հետո եռօրյա ժամկետում կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին, եթե բողոքում թույլ են տրվել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների խախտումներ: Համապատասխան խախտումները վերացվելու եւ որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Այս դեպքում եւս, վերադարձնելու որոշումը ենթակա է բողոքարկման. այն բողոքարկվում է վճռաբեկության կարգով:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78 հոդվածի՝ վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում: Վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնում է պատշաճ հիմնավորմամբ՝ նշելով բոլոր առերեսույթ թերությունները: Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու եւ որոշումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացվելու օրը: Հարկ է նկատել, որ այս հոդվածում հայցադիմումի «թերություններ» եւ «խախտումներ» հասկացությունները նույնացված են:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի համաձայն՝ դիմողը դիմումը վերադարձնելը կարող է եռօրյա ժամկետում բողոքարկել սահմանադրական դատարանի նախագահին, որն այդ հարցով ոչ ուշ, քան բողոքը ներկայացվելուց մեկ օր հետո ընդունում է վերջնական որոշում:

Վերոհիշյալ իրավակարգավորումը վկայում է, որ ստեղծված են այնպիսի իրավական երաշխիքներ, որոնք գործնականում կբացառեն թերությունների կամ օրենքի համապատասխան պահանջների խախտումների պատճառաբանությամբ հայցադիմումի, դիմումի, վերաքննիչ բողոքի կամ անհատական դիմումի քննության ընդունման հարցի դրական լուծումը: Նախեսառաջ, անձը դատարանի մատնանշած թերությունները շտկելուց հետո ըստ էության ազատ է շտկված փաստաթուղթը կրկին ներկայացնելու հարցում. կրկին ներկայացնելու հնարավորությունը կախվածության մեջ չէ իրավասու դատարանի հայեցողությունից, եւ, երկրորդ՝ անձն ունի արդյունավետ պաշտպանության միջոց ընդդեմ հայցադիմումը, դիմումը, վերաքննիչ բողոքը կամ անհատական դիմումը վերադարձնելու մասին իրավասու դատարանի որոշման. օրենսդրությունն ամրագրում է նման որոշումը բողոքարկելու հնարավորություն:

Մինչդեռ վճռաբեկ բողոքի պարագայում՝ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու հնարավորության օգտագործումը կախվածության մեջ է դրված վճռաբեկ դատարանի հայեցողությունից, եւ այդ հայեցողության կամայական դրսևորման դեմ բացակայում է արդյունավետ պաշտպանության որեւէ միջոց: Նման պայմաններում, ի խախտումն վերոհիշյալ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, վիճարկվող դրույթի կիրառումը թույլ է տալիս

այնպիսի վիճակի առաջացման հնարավորություն, երբ բողոքի թերությունները կարող են խոչընդոտել անձին իրացնելու դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը եւ, հետեւաբար՝ նաեւ դատարանի մատչելիության իրավունքը:

7. Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վճռաբեկ դատարանի կողմից իր՝ խնդրո առարկա հայեցողական լիազորության իրականացումն առանձին դեպքերում կրում է ոչ իրավաչափ եւ կամայական բնույթ: Մասնավորապես, վճռաբեկ դատարանի 28 հունիսի 2007թ. որոշման մեջ որպէս վճռաբեկ բողոքի թերություն մատնանշվել է այն հանգամանքը, որ նշված չէ. «...թե վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտն որ օրենքի միատեսակ կիրառության համար կարող է էական նշանակություն ունենալ»: Վճռաբեկ դատարանն իր այս որոշմամբ թերությունները շտկելու համար ժամկետ չի սահմանել: Մինչդեռ մեկ այլ՝ 15 նոյեմբերի 2007թ. որոշմամբ վճռաբեկ դատարանը, վերադարձնելով վճռաբեկ բողոքը, նշել է. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում նշված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը բացակայում են, քանի որ բողոք բերած անձի հիմնավորումները, թե որ օրենքների միատեսակ կիրառության համար վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ, թերի են, այսինքն՝ սույն վճռաբեկ բողոքի սահմաններում վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտը օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն չի կարող ունենալ»: Չնայած նրան, որ այս դեպքում եւս թերությունն ըստ էության նույնաբնույթ է, այս որոշմամբ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սահմանել ժամկետ թերությունը շտկելու համար: Վճռաբեկ դատարանն իր մեկ այլ՝ 2007թ. փետրվարի 22-ի որոշմամբ սույն գործով դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ թերությունը վերացնելու համար ժամկետ չսահմանելով, այն պատճառաբանությամբ, որ բողոքատուն բողոքին չի կցել բողոքի պատճենը գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այսինքն՝ նման ձեւական բնույթի թերությունը հիմք է հանդիսացել անձի՝ վճռաբեկ դատարանի կողմից իր գործի քննության հնարավորությունը բացառելու համար:

Իրավակիրառական պրակտիկայի նման դրսեւորումների պայմաններում, հաշվի առնելով, որ ի կատարումն սահմանադրական դատարանի ՄԴՈ-690 որոշման՝ չեն ստեղծվել վճռաբեկ դատարանի խնդրո առարկա հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումն ապահովող օրենսդրական լիարժեք երաշխիքներ, ինչպէս նաեւ նկատի ունենալով, որ բացակայում է որեւէ արդյունավետ պաշտպանության միջոց ընդդեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթն իրավական արգելք է հանդիսանում վճռաբեկ դատարանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համար:

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 231.1. հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմը հանդիսանում է մասնավոր նորմ նույն օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված այն ընդհանուր նորմի առնչությամբ, որի համաձայն՝ նույն անձը նույն դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերել միայն մեկ անգամ: Վիճարկվող նորմի եւ 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի նման առնչության պայմաններում, իրավական դաշտում վիճարկվող դրույթի բացակայության դեպքում եւս, հնարավոր կլինի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված ընդհանուր նորմի ուժով անձին արգելել կրկին ներկայացնել շտկված վճռաբեկ բողոքը, եթե վճռաբեկ դատարանը թերությունները շտկելու համար ժամկետ չի սահմանել: Այսինքն՝ մասնավոր նորմի վերացման դեպքում կգործի ընդհանուր նորմը՝ իրավակիրառական պրակտիկայում բողոք ներկայացրած անձի համար առաջացնելով միեւնույն բացասական իրավական հետեւանքները, ինչ վիճարկվող դրույթը: Հաշվի առնելով նշված դրույթների նման համակարգային փոխկապակցվածությունը՝ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցին:

9. Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (*res judicata*), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների՝ քրեական եւ քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի: Նշված սկզբունքն իր ամբողջական եւ տրամաբանական դրսեւորումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ բողոքը թողնվում է առանց քննության այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել: Սահմանադրական դատարանն իր 2007թ. հուլիսի 20-ի ՍԴՈ-709 որոշման մեջ նշված դրույթը գնահատել է որպես իրավագոր պահանջ, «... քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ»: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ, որ նշված դրույթում օգտագործվող՝ «բողոքում նշված հիմքով» եւ «նույն գործով» ձեւակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միեւնույն առարկայի վերաբերյալ նույն պատճառաբանություններով ներկայացված բողոքի հիման վրա ձգտում է հասնել նպաստավոր որոշման:

Միջազգային իրավունքում հայտնի վերոհիշյալ սկզբունքը, սակայն, աղավաղված է այդ սկզբունքի նպատակին ոչ համահունչ դրսեւորում է ստացել ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում: Այդ մասում ամրագրված դրույթն իր ձեւակերպումներով միտված է ոչ թե նրան, որպեսզի բացառվի այնպիսի հարցերի քննությանը կրկին անդրադառնալը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, այլ խոչընդոտում է անձի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի լիարժեք եւ արդյունավետ իրացմանը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226 հոդվածը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու երկու հիմք, դրանք են՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումները, որոնք կարող էին ազդել գործի ելքի վրա: Այն դեպքում, երբ նշված հիմքերից մեկով ներկայացված վճռաբեկ բողոքը չի ընդունվում քննության կամ մերժվում է, օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը թույլ չի տալիս անձին նույն դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնել նաեւ մյուս հիմքով:

Նշված դրույթը ոչ միայն խոչընդոտում է անձին լիարժեք կերպով իրացնելու օրենքով նախատեսված հիմքերով վճռաբեկ բողոք բերելու իր իրավունքը, այլ նաեւ բացառում է վիճարկվող դատական ակտի օրինականության եւ հիմնավորվածության ստուգումը վճռաբեկության կարգով լրիվ ծավալով իրականացնելու հնարավորությունը, քանզի օրենսգրքի 239 հոդվածի ուժով վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերով եւ հիմնավորումներով:

Բացի դրանից, վիճարկվող դրույթը վերացնելու դեպքում օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը կշարունակի իրավական խոչընդոտ հանդիսանալ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու եւ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետում կրկին ներկայացնելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 21-ին եւ նոյեմբերի 28-ին ընդունված օրենքներով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների փոփոխություններն ու լրացումները եւ հաշվի առնելով, որ վեճի առարկա 231.1. հոդվածի 4-րդ մասը բովանդակային փոփոխության չի ենթարկվել, այլ վերածեւակերպվել է որպես 233 հոդվածի 4-րդ մաս, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մասը)՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ նույն անձի կողմից նույն դատական ակտի դեմ մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոք բերելու արգելքի մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**27 մայիսի 2008 թվականի
ՍԳՈ- 754**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԻՆԵ ՖԼՋՅԱՆԻ ԳԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
«ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՈՒՄՆԵՐ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 80 ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ,
4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳԻՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 սեպտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ս. Ֆլջյանի ներկայացուցիչ Կ. Մեծլումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սերինե Ֆլջյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիքը քաղաքացի Ս. Ֆլջյանի՝ 14.05.2008թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա օրենքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապե-

տության Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը վիճարկում է դիմողը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 20-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը լրացվել է 3.2 (վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով) բաժնով: Միաժամանակ, նշված օրենքի 76 հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 (վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով) բաժինը: Նշված 3.2 բաժնի հոդվածները սահմանում են նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասու դատարանը, դատական ակտի վերանայման հիմքերը, վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը, վերանայման խնդրանք ներկայացնելու կարգը:

2. Քննության առարկա գործի քաղաքացիական հայցի շրջանակներում դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը 29.12.2007թ. հավատարմագրված փաստաբանի միջոցով դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ խնդրելով ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման հիման վրա վերանայել վճռաբեկ դատարանի 30.11.2007թ. որոշումը: Վճռաբեկ դատարանը 22.01.2008թ. թիվ 3-95/ՎԳ/2008թ. որոշմամբ՝ կիրառելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածը, անհրաժեշտ է համարել՝ «ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2006թ. վճռի դեմ Սերինե Ֆլջյանի վճռաբեկ բողոքը փոխանցել Երեւանի քաղաքացիական դատարան»:

Երեւանի քաղաքացիական դատարանը, կիրառելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասը, 204.20 հոդվածի 2-րդ մասը, 204.25 հոդվածը, որոշել է Սերինե Ֆլջյանի դիմումի հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը մերժել՝ այն պատճառաբանությամբ, որ դիմող Սերինե Ֆլջյանը խնդրել է նոր հանգամանքներով վերանայել ոչ թե առաջին ատյանի դատարանի դատական ակտը, այլ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, այն դեպքում, երբ, ըստ Երեւանի քաղաքացիական դատարանի՝ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանների դատական ակտերը:

3. Վիճարկելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի

1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի, ինչպէս նաեւ վերջիններիս հետ համակարգային առումով փոխկապակցված եւ նույն օրենքի 72 հոդվածում ներառված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասի, 204.26 եւ 204.29 հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթների սահմանադրականությունը, դիմողը գտնում է, որ այդ նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 6, 18, 19 եւ 42 հոդվածներին:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների եւ ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների միջեւ հակասությունը դրսեւորվում է նրանում, որ այդ դրույթները բացառում են նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերի վերանայման հնարավորությունը եւ ըստ այդմ՝ անձի խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունը: Ավելին, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերը հակասում են նաեւ ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի պահանջներին, քանի որ դրանք հետադարձ ուժ են հաղորդել անձի վիճակը վատթարացնող իրավակարգավորմանը: Նույն հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը վիճարկվում է այն հիմքով, որ այն ընդունվել է ի խախտումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջների:

Ըստ դիմողի՝ թեւ սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխությունները պետք է կատարվեն այնպէս, որ արդյունքում անձինք չզրկվեն օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված եւ դեռեւս չավարտված իրավակարգավորման գործընթացի պայմաններում իրենց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու լիարժեք հնարավորությունից, սակայն, ըստ դիմողի՝ պատասխանող ՀՀ Ազգային ժողովը շարունակում է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխություններ, որոնց արդյունքում, փաստորեն, անձինք զրկվում են այդ իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

4. Պատասխանողի ներկայացուցչի պնդմամբ՝ ՀՀ դատական օրենսգրքի 26, 47 հոդվածներում եւ 50 հոդվածի 7-րդ մասում ամրագրված դրույթների, ինչպէս նաեւ այդ դրույթների հետ թղթակցող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219 եւ 239 հոդվածների համադրական վերլուծությունից բխում է, որ անձը չի զրկվել նոր հանգամանքներով կամ նոր երեւան եկած հանգամանքներով գործը վերանայելու համար դիմումը ներկայացնելու իրավունքից կամ չի սահմանափակվել նրա այդ իրավունքը, այսինքն՝ անձը չի զրկվել իր խախտված իրավունքները վերականգնելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից (ՀՀ Սահմանադրության 19 հոդված), ինչպէս նաեւ չի զրկվել իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից (ՀՀ Սահմանադրության 18 հոդված):

Ըստ պատասխանող կողմի՝ դատական պաշտպանության արդյունավետության գնահատման բաղկացուցիչ մաս կարող է դիտվել նաև այն գործոնը, որի համաձայն՝ նոր հանգամանքներով կամ նոր երեսան եկած հանգամանքներով գործը քննվում է ըստ էության, քանի որ այդ հանգամանքների ուժով կարող է ըստ էության փոփոխվել նախկինում կայացված դատական ակտը: Միևնույն ժամանակ, անձի իրավական վիճակը չի վատթարացել, այլ ապահովվել է «սկզբից մինչև վերջ» սկզբունքով դատական պաշտպանության արդյունավետ միջոցների կիրառման կառուցակարգ:

Պատասխանող կողմի կարծիքով՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով կարգավորվել են օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված եւ դեռևս չավարտված գործընթացի պայմաններում անձանց սահմանադրական իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները, հետեւաբար, նորմատիվ այդ դրույթները նպատակ ունեն ոչ թե սահմանափակել քաղաքացիադատավարական հարաբերությունների ընթացքում անձանց իրավունքները, այլ կարգավորել դրանք իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները, ինչը չի նշանակում, որ սահմանափակվել է անձանց սահմանադրական իրավունքը:

5. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածը սահմանում է.

«Հոդված 80. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը բողոքարկված դատական ակտերի նկատմամբ սույն օրենքով նախատեսված կանոնները կիրառելի չեն:
3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործին մասնակից չդարձված անձանց ներկայացված բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են վերաքննիչ քաղաքացիական դատարան:
4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նոր երեսան եկած հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան:
5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նոր հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքները դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան:
6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն առաջին ատյանի եւ տնտեսական դատարանում առկա հայցադիմումները եւ հարուցված դատական գործերը դատարանի որոշմամբ փոխանցվում են համապատասխան դատարան՝ սույն օրենքով սահմանված տարածքային եւ առարկայական ընդդատության պահանջներին համապատասխան»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Նոր հանգամանքներով վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանների դատական ակտերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.26 հոդվածը սահմանում է. «Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը»:

6. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 23.05.2008թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունվել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 1-ին, 4-րդ եւ 5-րդ մասերի կապակցությամբ, իսկ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված վերոհիշյալ դրույթների սահմանադրականությունը պարզելու անհրաժեշտության հարցի լուծումը թողնվել է գործի դատաքննության փուլին:

Դիմումի քննության արդյունքներով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. հունվարի 22-ի որոշման մեջ հիշատակվում է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի՝ նոր երեսան եկած հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքներին վերաբերող 4-րդ մասը (նույն որոշման մեջ ոչ ճիշտ վկայակոչելով նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80 հոդվածը, որը դիմումի առարկային չի առնչվում եւ վերաբերում է գործի վարույթի ժամանակ գործին մասնակցող անձանց հասցեները փոխվելուն): Սակայն գործի հանգամանքները, մասնավորապես նաեւ Երեսանի քաղաքացիական դատարանի 19.03.2008թ.՝ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը, վկայում են, որ խոսքը վերաբերում է նույն հոդվածի՝ նոր հանգամանքներով ներկայացված վճռաբեկ բողոքներին վերաբերող 5-րդ մասին, քանզի դիմողը վճռաբեկ դատարան է դիմել վերջինիս որոշումը վերանայելու պահանջով՝ ոչ թե նոր երեսան եկած հանգամանքով, այլ նոր հանգամանքով, որպիսին հանդիսանում է ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՄԴ-Ռ-690 որոշումը: Հետեւաբար, տվյալ գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի քննության առարկան, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածին համապատասխան՝ որպես դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթ, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 5-րդ մասն է:

Սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում պարզել նաեւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված եւ վեճի առարկա օրենքի հիման վրա ընդունված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասի եւ 204.26 հոդվածի դրույթների սահմանադրականությունը, քանզի այդ դրույթները, վիճարկվող դրույթների հետ համակցության մեջ, կազմում են նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորման բաղկացուցիչ տարրերը:

Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումն առնչվում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի առանձին տարրերի սահմանադրականությանը, սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ այդ ինստիտուտի իրավակարգավորման բուն տարրերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնի դրույթների սահմանադրականությանը՝ իրենց համակարգային ամբողջականության մեջ: Հետևաբար, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև 2007թ. նոյեմբերի 28-ին ընդունված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 76 հոդվածի սահմանադրականության հարցին, որով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 բաժինը, ինչպես նաև 72 հոդվածի սահմանադրականության հարցին, որով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը լրացվել է 3.2 բաժնով:

7. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն ըստ էության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում իր ամրագրումն ստացավ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 18.02.04թ.ՀՕ-39-Ն ՀՀ օրենքով: Վերջինս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը լրացրեց նոր՝ «Վճիռների եւ որոշումների վերանայումը նոր հանգամանքներով» վերտառությամբ 5.1 բաժնով, որով սահմանվեց նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ընթացակարգը: 2007թ. փետրվարի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով լրացում է կատարվել նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման հիմքերը սահմանող 241.1 հոդվածում: Նշված օրենքի 22 հոդվածը, մասնավորապես, սահմանում էր. «Օրենսգրքի 241.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում» բառերով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 բաժինն ուժը կորցրած է ճանաչվել վերոհիշյալ՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.07. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի 76 հոդվածով:

8. Վիճարկվող եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթների վերլուծությունը, ինչպես նաև դրանց իրավակիրառական պրակտիկական վկայում են, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման օրենսդրական ներկա կարգավորման հիմնական տարրերը հետեւյալներն են.

- նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերը,

- նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի միայն համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը,
- վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նշված հիմքերով վերանայման ենթակա չեն,
- վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները նշված հիմքերով դատական ակտերի վերանայման իրավասությամբ օժտված չեն,
- նոր հանգամանքների հիմքով վերանայման ենթակա են ոչ միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այն է՝ վճիռները, այլ նաեւ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերը:

Նշված իրավակարգավորման արդյունքում ձեւավորված իրավակիրառական պրակտիկայի մասին է վկայում գործում առկա՝ Երեւանի քաղաքացիական դատարանի՝ Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելը մերժելու մասին 19.03.2008թ. որոշումը: Այս որոշմամբ դատարանը մերժել է ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման հիման վրա վճռաբեկ դատարանի թիվ 3-1882/ՎԴ/ քաղաքացիական գործով 30.11.2007թ. որոշումը վերանայելու խնդրանքը՝ պատճառաբանելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ատյանի դատական ակտերը:

9. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ներկա իրավակարգավորման հիմքում թերեւս ընկած է ՀՀ դատական օրենսգրքի այն տրամաբանությունը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող դատարաններից ընդհանուր իրավասության դատարաններ են հանդիսանում միայն առաջին ատյանի դատարանները, եւ քաղաքացիական դատավարության շրջանակներում վեճն ըստ էության լուծող դատական ակտ է համարվում առաջին ատյանի դատարանի վճիռը:

Դա իր հերթին բխում է դատական օրենսգրքի՝ դատարանակազմությանը վերաբերող դրույթների հիմքում ընկած այն տրամաբանությունից, որ ընդհանուր կանոնը մասնագիտացված դատարաններն են, իսկ ընդհանուր իրավասության դատարանները, փաստորեն, բացառություն են այդ ընդհանուր կանոնից: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածում ամրագրված է հակառակ տրամաբանությունը:

Սույն գործի շրջանակներում իրավասու չլինելով անդրադառնալու ՀՀ դատական օրենսգրքի՝ նշված տրամաբանության վրա հիմնված դրույթների սահմանադրականությանը, այնուամենայնիվ, սահմանադրական դատարանը մնան մոտեցումը խնդրահարույց է համարում ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի տեսանկյունից: ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասն ամրագրում է Հայաստանի Հանրապետության դատարանակազմության հիմքում ընկած հետեւյալ ընդհանուր կանոնը. «Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատա-

րանները եւ վճռաբեկ դատարանը...»: Սահմանելով այն ընդհանուր նորմը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության դատական համակարգի հիմնական բաղադրիչն ընդհանուր իրավասության դատարաններն են՝ միաժամանակ նույն դրույթով Սահմանադրությունն ամրագրել է ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան համակարգը, որը ներկայացված է առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների եւ վճռաբեկ դատարանի միջոցով: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի առնչությամբ քաղաքացիների համար գործում է դատական պաշտպանության եռաստիճան համակարգը. ընդհանուր իրավասության դատարանների բոլոր ակտերը ենթակա են բողոքարկման քաղաքացիական եւ քրեական վերաքննիչ դատարաններ, իսկ այդ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանների ընդունած որոշումները ենթակա են բողոքարկման վճռաբեկ դատարան:

ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի երկրորդ հատվածը սահմանում է նույն դրույթի 1-ին հատվածում ամրագրված վերոհիշյալ ընդհանուր կանոնից հետեւյալ բացառությունը. «...իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ մասնագիտացված դատարաններ»: ՀՀ Սահմանադրությունը, նշված նորմն ամրագրելով որպես վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություն, չի մանրամասնում մասնագիտացված դատարանների ո՛չ տեսակները, ո՛չ ատյանները՝ դրանց սահմանումը թողնելով օրենսդրի հայեցողությանը: Ուստի օրենսդիրն ազատ է մասնագիտացված դատարանների պարագայում սահմանելու վերաքննիչ ատյան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածը նախատեսում է ընդհանուր իրավասության դատարանների՝ ստորադասության վրա հիմնված եռաստիճան համակարգ, որում հստակեցված է նաեւ վճռաբեկ դատարանի ֆունկցիոնալ դերը՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու առումով: Այդ համակարգին բնորոշ է տարբեր ատյանի դատարանների միջու եղած գործառնական կապը: Տարբեր ատյանների միջու եղած կապը նպատակ է հետապնդում ապահովել դատարանների կողմից կայացվող դատական ակտերի օրինականությունը եւ հիմնավորվածությունը, վերացնել օրենքի խախտումները եւ վերականգնել դատավարության մասնակիցների խախտված իրավունքները:

Տարբեր ատյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական ատյանի իրավասությունների եւ գործառնությունների կրողը: Հետեւաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառնության իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառնությունների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում:

Այսպես, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունների ուսումնասիրությունը վկայում է, որ, ընդհանուր առմամբ, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններն իրենց լիազորությունների շրջանակներում արդարադատություն իրականացնելիս.

- մերժում են վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ. ընդ որում, այն դեպքում երբ բողոքարկվող ակտը պատճառաբանված է թերի կամ սխալ, կամ ընդհանրապես պատճառաբանված չէ, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը պատճառաբանում է ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը,
- բեկանում են դատական ակտը եւ գործն ուղարկում համապատասխան ստորադաս դատարան,
- բեկանում եւ փոփոխում են ստորադաս դատարանի դատական ակտը:

Վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների լիազորությունների բնույթից բխում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերանայելիս, հատկապես այն դեպքում, երբ վերադաս դատական ատյանը փոփոխում է ստորադաս դատական ատյանի ակտը, վերադաս դատական ատյանների դատական ակտերը հանդես են գալիս որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նոր եւ ինքնուրույն արդյունք՝ ըստ էության ազդելով ստորադաս դատարանի դատական ակտի բովանդակության վրա եւ դատավարության կողմերի համար առաջացնելով նոր իրավական հետեւանքներ:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը շեղվել է վերոհիշյալ տրամաբանությունից՝ աղճատելով ստորադասության վրա հիմնված դատական եռաստիճան համակարգի էությունն ու բովանդակությունը, դատական երեք ատյանների միջեւ ֆունկցիոնալ կապը՝ հաշվի չառնելով դատական երեք ատյանների գործառնությունների առանձնահատկությունները:

10. Սահմանադրական դատարանը նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 նախկին բաժնով եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնով սահմանված ներկա իրավակարգավորման համեմատական վերլուծության արդյունքում արձանագրում է, որ դրանց միջեւ առկա են էական սկզբունքային տարբերություններ, որոնք, մասնավորապես, դրսևորվում են նրանում, որ նախկին կարգավորմամբ.

- նոր հանգամանքներով վերանայման ենթակա էին ինչպես առաջին ատյանի դատարանի, այնպես էլ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը,
- վերանայման ենթակա էին վերոհիշյալ դատարանների՝ ինչպես գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այնպես էլ նրանց կայացրած միջանկյալ ակտերը,
- վճիռները եւ որոշումները վերանայելու իրավասություն ունեին.

1) առաջին ատյանի դատարանը՝ իր օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը վերանայելու կապակցությամբ,

2) վերաքննիչ դատարանը՝ իր օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը վերանայելու կապակցությամբ,

3) վճռաբեկ դատարանը՝ իր ուժի մեջ մտած որոշումը վերանայելու կապակցությամբ, որը կայացվել է առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի կամ որոշման վերաբերյալ:

Ի տարբերություն նախկին կարգավորման, ինչպես նշվեց, ներկա իրավակարգավորման հիմնական առանձնահատկությունն այն է, որ նոր հանգամանքների հիմքով հնարավոր է միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերի վերանայումը նույն ատյանի դատարանի կողմից:

Բացի դրանից, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին 5.1 բաժնում օգտագործվում էր միայն «վճիռ եւ որոշում» հասկացությունը՝ պարզորոշ կերպով մատնացույց անելով, որ վերանայման ենթակա են ինչպես գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերը: Մինչդեռ օրենսգրքի գործող 3.2 բաժնում օգտագործվում է «դատական ակտ» հասկացությունը, եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների բովանդակային մեկնաբանությունն է միայն հնարավորություն տալիս պարզելու, որ խոսքը վերաբերում է ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտին, այլ նաեւ միջանկյալ դատական ակտին:

Սահմանադրական դատարանը վերոհիշյալ համեմատական վերլուծության արդյունքում նշում է, որ նախկին իրավակարգավորումն ուներ հստակ, լիարժեք եւ ողջամիտ տրամաբանություն՝ քաղաքացիների իրավունքների վերականգնումն ապահովելու հնարավորության տեսանկյունից՝ երաշխավորելով նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ընթացակարգ՝ դատական բոլոր ատյաններում: Հետեւաբար, հաշվի առնելով նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 17-րդ մասի պահանջները, սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչեւ ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ հարցի հետագա կանոնակարգումը, կարող է գործել նշված ինստիտուտի այն իրավակարգավորումը, որը սահմանվել էր 18.02.2004թ. ՀՕ-39-Ն օրենքով:

11. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման միջոցով անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է բացառապես վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների ակտերի վերանայում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի

6-րդ կետի համաձայն՝ անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկվել դատարանի վերջնական ակտով կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհատական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաև առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարաններում. օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը հնարավոր է համարում սահմանադրական դատարանում այնպիսի օրենքի դրույթի սահմանադրականության վիճարկում, որը կիրառվել է որպես վերջնական դատական ակտ հանդիսացող՝ վճռաբեկ դատարանի կամ վերաքննիչ դատարանի ակտով, սակայն չի կիրառվել առաջին ատյանի դատարանի ակտով: Նման իրավիճակում, այս կամ այն օրենքի դրույթը սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայումը դառնում է անհիմատ եւ անհնարին. սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է միայն վերջնական դատական ակտի վերանայում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ անհատական դիմումների քննության ընդունման առնչությամբ սահմանադրական դատարանում արդեն ձեռավորված է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի վերոհիշյալ մեկնաբանությանը համապատասխան իրավակիրառական պրակտիկա:

Բացի դրանից, սահմանադրական դատարանում կարող են վիճարկված առարկա դառնալ նաև այն դատավարական նորմերը, որոնք կանոնակարգում են վարույթի կոնկրետ ձեւերը, այն է՝ վարույթն առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ դատարանում կամ վճռաբեկ դատարանում: Նման նորմերը կիրառելի են միայն տվյալ դատական ատյանի դատական ակտով:

Ավելին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եւ՝ վերաքննիչ դատարանը, եւ՝ վճռաբեկ դատարանն ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանում է այդ ակտը, եթե գտնում է, որ այն թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ: Այս դեպքում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը կարող են կիրառել օրենքի դրույթներ, որոնք ստորին ատյանի դատարանի կողմից չեն կիրառվել:

Միաժամանակ, նոր հանգամանքների հիման վրա վերանայման են ենթակա ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը: Իսկ միջանկյալ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններն իրավասու են կայացնելու նոր դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս դեպքում ավելի քան ակնհայտ է, որ միայն առաջին ատյանի դատարանի միջանկյալ ակտի՝ նոր հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը բացառում է վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների կողմից միջանկյալ դատական ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կայացված նոր դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման առկա իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպատակ եւ ոչ արդյունավետ:

12. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման հանգամանքը: Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-751 որոշման մեջ մտահոգություն է հայտնել առ այն, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման եւ պաշտպանության, հետեւաբար՝ նաև Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար»:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 46 հոդվածն ամրագրում է պայմանավորվող կողմերի՝ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու պարտավորությունը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճիռների՝ պայմանավորվող պետություններից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից, պահանջվում է, ի թիվս այլոց, ձեռնարկել անհատական բնույթի միջոցառումներ: Վերջիններին խնդիրն է վերացնել ժամանակի մեջ շարունակվող իրավախախտումը եւ այդ իրավախախտման հետեւանքները՝ մինչեւ կոնվենցիոն իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը հնարավորինս վերականգնելու նպատակով (*restitutio in integrum*): Անհատական բնույթի միջոցառումները, որպես

կանոն, ներառում են Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտերի վերանայումը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճռի՝ նման անհատական բնույթի միջոցառումն անխուսափելի է լինում բոլոր այն դեպքերում, երբ կոնվենցիոն իրավունքի խախտման պատճառը ներպետական դատական վարույթի ընթացքում դատավարական նորմերի խախտումն է: Հարկ է նկատել, որ դատավարական նորմերի խախտումը կարող է տեղի ունեցած լինել ներպետական ցանկացած դատական ատյանում: Հետևաբար, ի կատարումն Եվրոպական դատարանի վճռի՝ անհրաժեշտ է վերանայել այն դատական ատյանի ակտը, որի կողմից թույլ է տրվել դատավարական նորմի սխալը. եթե առաջին ատյանի դատարանը գործի քննությունն իրականացրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված՝ արդար դատաքննության կոնվենցիոն երաշխիքների պահպանմամբ, ապա առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման խնդիր չի կարող ծագել:

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հարկ է համարում վկայակոչել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման եւ վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը: Վերջինս, մասնավորապես, ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ... նկատի ունենալով, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը *restitutio in integrum*-ի հասնելու համար.

1. Առաջարկում է Պայմանավորվող պետություններին համոզվել, որ ներպետական մակարդակում գոյություն ունեն համարժեք հնարավորություններ *restitutio in integrum*-ի հասնելու համար...»:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման առկա իրավակարգավորումն առանձին դեպքերում ոչ միայն հնարավորություն չի տա վերականգնելու անձի խախտված իրավունքը, այլ նաև կխոչընդոտի Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորության լիարժեք կատարմանը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետետողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը տվյալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգատներից ընտրում է մեկ առավել տիպային օրինակ եւ ըստ էության քննում եւ վճիռ է կայացնում միայն այդ գանգատի կապակցությամբ. մնացած գանգատների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է ներպետական մակարդակում՝ այդ «ուղենիշ

վճռի» հիման վրա: Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները եւ ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում՝ Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի:

13. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28 հոդվածը սահմանում է վերանայման արդյունքում դատարանի լիազորությունները: Վերջիններս, ի թիվս այլոց, ներառում են նաեւ նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելը: Եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման արդյունքում հնարավոր է այդ դատական ակտն ուժի մեջ թողնելը, ապա այն դեպքում, երբ դատական ակտի համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշումը, ապա գործնականում վերանայված ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետեւ արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմը:

14. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներկայումս սահմանված իրավակարգավորման արդյունք կարող է հանդիսանալ այն, որ անհնարին կդառնա վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելը: Նման իրավիճակում գործնականում դատական ակտի վերանայման ինստիտուտը դադարում է գործել ընդհանրապես՝ հնարավորություն չտալով վերականգնել անձի խախտված իրավունքը՝ ինչն առկա է սույն գործով դիմողի առնչությամբ:

Սահմանադրական դատարանը դեռեւս 2008թ. ապրիլի 15-ի իր ՄԳՈ-751 որոշման մեջ անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման արդյունավետության տեսանկյունից կարեւորել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը, նախ՝ չի խաթարի երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, ինչպես նաեւ լիարժեք հնարավորություն կտա անձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում խախտված իրավունքը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներն անձին զրկում են նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միջոցով իր խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունից՝ խաթարելով երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, մեծացնելով կոռուպցիոն ռիսկը, թույլ չտալով Հայաստանի Հանրապետությանը լիարժեք եւ բարեխղճորեն կատա-

րելու ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ատյանների ակտերի վերանայման հնարավորությունը, բացառելով ստորադաս ատյանի դատարանի կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը:

15. Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի, անձի իրավական վիճակը վատթարացնող իրավակարգավորմանը տրվել է հետադարձ ուժ, ապա այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, ելնելով խնդրո առարկա ինստիտուտի նախկին եւ ներկա իրավակարգավորման վերոհիշյալ համեմատական վերլուծության արդյունքներից եւ նախկին իրավակարգավորմանը տված իր վերոհիշյալ գնահատականից, գտնում է, որ իրոք նոր իրավակարգավորմամբ ստեղծվել է անձի համար ավելի անբարենպաստ վիճակ, քանի որ անձը զրկվել է նոր հանգամանքի հիմքով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների ակտերը վերանայելու հնարավորությունից: Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ նշյալ դրույթները, որոնց բովանդակությունը հանգում է վճռաբեկ բողոքները համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան փոխանցելուն, ինքնին չի ենթադրում, որ վերջինս պետք է մինչեւ օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված բողոքների առնչությամբ հետադարձ ուժով կիրառի անձի համար վատթարացնող հետեւանք ունեցող նոր իրավակարգավորումը՝ նրան զրկելով դատական ակտի վերանայման հնարավորությունից: Սակայն, եթե նույնիսկ համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը, որին վիճարկվող դրույթի հիման վրա փոխանցվել է վճռաբեկ բողոքը, փորձի կիրառել նախկին իրավակարգավորումը, ապա այն կհանգեցնի մեկ այլ անընդունելի իրավիճակի, երբ վերադաս դատական ակտը կվերանայվի ստորադաս դատարանի կողմից:

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներն ստացել են այնպիսի մեկնաբանություն, որ այդ դրույթների հիման վրա վճռաբեկ բողոքն ստացած համապատասխան առաջին ատյանի դատարանը կիրառում է նոր իրավակարգավորումը՝ մերժելով վերադաս ատյանների դատական ակտերը վերանայելու խնդրանքը՝ դրանով իսկ, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի, հետադարձ ուժ տալով անձի վիճակը վատթարացնող օրենքին:

16. Դիմողի պնդմամբ՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ նշված օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի

հունվարի 1-ից, խախտում է ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի՝ օրենքներն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո: Նշված խախտումը, ըստ դիմողի՝ դրսևորվել է նրանում, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի պահանջներին համապատասխան նշված օրենքը պետք է ուժի մեջ մտնե՞ր պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, սակայն պաշտոնական տեղեկագրում հրապարակվելով 26.12.2007թ.՝ ուժի մեջ է մտել օրենքով սահմանված տասնօրյա ժամկետից շուտ, այն է՝ 2008թ. հունվարի 1-ից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նման ժամկետ սահմանել է՝ ելնելով օրենքի ուժի մեջ մտնելու համար օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգի տարբեր փուլերի համար սահմանված եւ անհրաժեշտ ժամկետների ողջամիտ հաշվարկից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը նկատի է ունեցել նաեւ այն պարագան, որ տարբեր տեխնիկական հանգամանքների բերումով իրավական ակտը կարող է պաշտոնապես հրապարակվել նաեւ ավելի ուշ, քան տվյալ իրավական ակտով սահմանված՝ դրա ուժի մեջ մտնելու օրը: Մասնավորապես, 62 հոդվածի 6-րդ մասում ամրագրված է, որ «Եթե նորմատիվ իրավական ակտը չի հրապարակվել այնտեղ նշված իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, ապա իրավական ակտն ուժի մեջ մտնելու օր է համարվում դրա հրապարակմանը հաջորդող օրը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր կոնկրետ դեպքերում իրավակիրառ սուբյեկտներն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի առնչությամբ պետք է առաջնորդվեն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել:

2. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80 հոդվածի 5-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տր-

ված բովանդակությամբ հանդերձ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 եւ 42 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնի 204.20 հոդվածի 2-րդ մասը եւ 204.26 հոդվածը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Վերոհիշյալ նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու արդյունքում օրենսդրական բացը բացառելու անհրաժեշտությունից ելնելով, նկատի ունենալով սույն որոշման 10-րդ կետում սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասով, ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի՝ սույն որոշման 3-րդ եւ 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավադրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված 72 եւ 76 հոդվածները:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**9 սեպտեմբերի 2008 թվականի
ՍԳՈ- 758**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒՇԱՆՅԱՆԻ,
ԳԵՎՈՐԳ ԳՅՈՉԱԼՅԱՆԻ, ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆԻ,
ՌՈՒՔԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՀՐԱԶ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼ,
ՄԱՐԻԵՏՏԱ ԵՎ ՄԱԴԼԵՆԱ ԲԱԲԱԼՅԱՆՆԵՐԻ, ՀԱԿՈՒՐ ՌԱՅՅԱՆԻ,
ՀԱՅԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 223 ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 231 ՀՈԳՎԱԾԻ
2-ՐԳ ՄԱՍԻ, 233 ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-6-ՐԳ ԿԵՏԵՐԻ, 2-ՐԳ ԵՎ 4-ՐԳ
ՄԱՍԵՐԻ, «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 29.1.
ՀՈԳՎԱԾԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
404 ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԳ ԿԵՏԻ (28.11.2007թ.
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝ 404 ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ)
ԵՎ ՀՀ ԳԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 13 ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԳ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյա-
նի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի (զեկու-
ցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողներից՝ Հ. Ռուշանյանի, Գ. Գյոզալյանի, Խ. Շահինյանի, Հ. Վարդան-
յանի, Հ. Ռաֆյանի, ինչպես նաև դիմողներ Միքայել, Մարիետտա եւ Մադլենա
Բաբալյանների ներկայացուցիչ Ռ. Տեր-Վարդանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդ-
րության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվա-
ծի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրա-
պետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքա-
ցիներ Հովհաննես Ռուշանյանի, Գեորգ Գյոզալյանի, Խաչատուր Շահինյա-
նի, Ռուբեն Մանուկյանի, Հրաչ Վարդանյանի, Միքայել, Մարիետտա եւ
Մադլենա Բաբալյանների, Հակոբ Ռաֆյանի, Հայկ Միքայելյանի եւ Սամվել

Միքայելյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231 հոդվածի 2-րդ մասի, 233 հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ 3-րդ կետի (28.11.2007թ. խմբագրությանը՝ 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի) եւ ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը վերոհիշյալ քաղաքացիների դիմումներն են սահմանադրական դատարան, որոնց հիման վրա, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով, մինչև դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են դատարանի նույն նիստում քննելու համար:

Լսելով գործով զեկուցողների հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ դատական օրենսգիրքը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Յ.**

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ դատական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին համապատասխան ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 13-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 22-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերը կոչված են կարգավորելու ՀՀ դատարաններում քաղաքացիական եւ քրեական գործերով դատավարության կարգը եւ երաշխավորելու ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով եւ իրավական այլ ակտերով նախատեսված՝ անձանց իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի դատական պաշտպանությունը:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածը սահմանում է.

«Հոդված 223. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք

1. Ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն՝

1) գործին մասնակցող անձինք՝ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով.

2) գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

2. Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը եւ վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ վերաքննիչ դատարանի ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք»:

Գիմող Գ. Գյոզալյանը գտնում է, որ օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթը՝ հավատարմագրված փաստաբանների մասով, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 14.1. եւ 18 հոդվածներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231 հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Հոդված 231. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը

2. Վճռաբեկ բողոքն ստորագրում է հավատարմագրված փաստաբանը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Հավատարմագրված փաստաբանը բողոքին կցում է հասարակ գրավոր լիազորագիրը»:

Գիմող Գ. Գյոզալյանը գտնում է, որ վերոհիշյալ 231 հոդվածի 2-րդ մասի դրույթը՝ հավատարմագրված փաստաբանների մասով, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 14.1. եւ 18 հոդվածներին: Նշված դրույթը վիճարկվել է նաեւ դիմող Խ. Շահինյանի կողմից, որը գտնում է, որ այն չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3, 5, 6, 18, 19, 35, 39 հոդվածներին, 48 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին, 91 եւ 92 հոդվածներին: Նույնաբովանդակ հիմնավորումներով 231 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը վիճարկել են նաեւ դիմողներ Հ. Միքայելյանը եւ Ս. Միքայելյանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածը սահմանում է.

«Հոդված 233. Վճռաբեկ բողոքը վերադարձնելը

1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե՝

1) վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 231 հոդվածի եւ 234 հոդվածի 1-ին կետի պահանջներին, կամ

2) բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի խախտվել, կամ

3) վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, ով վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չունի, կամ

4) վճռաբեկ բողոք ներկայացվել է օրենքով նախատեսված կամ վճռաբեկ դատարանի սահմանած ժամկետից ուշ, եւ բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է.

- 5) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով, կամ
- 6) առկա է սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքը:
2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի:
3. Վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ կարող է սահմանել ժամկետ՝ թերությունները վերացնելու եւ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:
4. Առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման դեպքում բողոք բերող անձը չի կարող կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել»:

Դիմողներ Հ. Ռուշանյանը, Հայկ Միքայելյանը եւ Սամվել Միքայելյանը գտնում են, որ վերոհիշյալ 233 հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին: Նշված դրույթները վիճարկվել են նաեւ դիմողներ Հ. Ռաֆյանի եւ Խ. Շահինյանի կողմից: Վերջիններս գտնում են, որ դրանք չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3, 5, 6, 18, 19, 35, 39 հոդվածներին, 48 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին, 91 եւ 92 հոդվածներին, քանի որ խախտում են դատական պաշտպանության իրավունքն անձամբ իրացնելու հնարավորությունը եւ արդարադատության իրականացումը պայմանավորում անձի ֆինանսական հնարավորություններով ու փաստաբանի հավակնությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասը (28.11.2007թ. խմբագրությամբ) սահմանում է.

«Հոդված 404. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք

1. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող եւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաեւ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները վճռաբեկ դատարան բողոքարկելու իրավունք ունեն՝

- 1) դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաեւ դիմողները՝ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով.
- 2) գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում»:

Դիմողներ Հ. Վարդանյանը, Միքայել, Մարիետտա եւ Մադլենա Բաբալյանները գտնում են, որ վերոհիշյալ 404 հոդվածի 1-ին մասի դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 14-21, 22, 91, 92, 93, 94 եւ 103 հոդվածներին:

Դիմող Ռ. Մանուկյանն իր՝ 21.04.2008թ. դիմումում նշել է. «... Վիճարկում եմ՝ Հ.Հ. վճռաբեկ դատարանի՝ 28.02.08թ. որոշման համար՝ հիմք ընդունված՝ Հ.Հ. քր.

դատ. օր-ի 404-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետը եւ 407-րդ հոդվածի՝ 3-րդ մասի. – Կիրառված հոդվածների դրույթների սահմանադրականությունը՝ ըստ. Հ.Հ. Սահմանադրության. 3; 14; 14.1; 18; 19; 20; 22-րդ, րդ հոդվածների պահանջների»։ Վիճարկում է նաեւ. «Հ.Հ. վճռաբեկ դատարանի կողմից. համաձայն Հ.Հ. դատական օրենսգրքի՝ 50-րդ հոդվածի, 60-րդ հոդվածի 2-րդ մասի եւ Հ.Հ. քր. դատ. օր-ի 66-րդ հոդվածի. - Կիրառվելիք դրույթները՝ չկիրառելու սահմանադրականությունը՝ ըստ. Հ.Հ. Սահմանադրության. հոդված 11.3, հոդված 14, հոդված 14.1, հոդված 20 պահանջների»։ Իր՝ 21.04.2008թ. դիմումում դիմող Ռ. Մանուկյանը սահմանադրական դատարանին խնդրել է. «... քննեք. իմ՝ կողմից վիճարկվող դրույթների օրինականությունները, կայացնելով օրինական, ողջամիտ որոշում: - Որով հնարավոր կլինի վերականգնելու. իմ՝ իրավունքները եւ գործարար համբավը.՝ ըստ. Հ.Հ. Սահմանադրության. հոդվածներ՝ 3; 14; 14.1; 18; 19; 20; 21; 23; 32; 37; 48 (1-ին մասի, 12-րդ կետի, 2-րդ մասի) պահանջներով...»:

3. ՀՀ դատական օրենսգրքը եւ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը կոչված են կարգավորելու համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության (բացառությամբ ՀՀ սահմանադրական դատարանի), ինչպես նաեւ փաստաբանության կազմակերպման եւ գործունեության հետ կապված իրավահարաբերությունները, ուղղված են ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով եւ իրավական այլ ակտերով նախատեսված՝ անձանց իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի դատական պաշտպանության եւ անձանց՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորմանը:

ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը սահմանում է.

«Հոդված 13. Դատավորի անձեռնմխելիությունը

6. Դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, եթե այդ ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված չէ»:

Դիմողներ Միքայել, Մարիետտա եւ Մադլենա Բաբայանները գտնում են, որ վերոհիշյալ 13 հոդվածի 6-րդ կետի դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 8, 14, 14.1. հոդվածներին, 16 հոդվածի 7-րդ կետին, 18 հոդվածին, 19 հոդվածի 1-ին պարբերությանը, 22 հոդվածին, 43 հոդվածի 2-րդ պարբերությանը, 91 հոդվածի 1-ին պարբերությանը, 92 հոդվածի 2-րդ պարբերությանը, 97 հոդվածի 1-ին պարբերությանը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածը սահմանում է.

«Հոդված 29.1. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանը

1. Հավատարմագիրը փաստաբանին տրամադրվում է օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:

2. Հավատարմագիր ստանալու համար փաստաբանը յուրաքանչյուր տարի՝ նոյեմբերի 20-ից 30-ը ընկած ժամանակահատվածում, գրավոր դիմում է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին:

3. Դիմումի հետ միասին ներկայացվում են հավատարմագիր տրամադրելու վերաբերյալ Պալատի տասը այլ փաստաբանների գրավոր համաձայնությունները:

Յուրաքանչյուր փաստաբան օրացուցային տարվա ընթացքում իրավունք ունի միայն մեկ փաստաբանի հավատարմագիր տրամադրելու համար համաձայնություն տալու: Եթե միեւնույն փաստաբանը տվել է մեկից ավելի փաստաբանի հավատարմագրման համաձայնություն, ապա նախապատվությունը տրվում է վճռաբեկ դատարան ավելի վաղ ներկայացված համաձայնությանը:

4. Դիմումը եւ դրան կից փաստաթղթերը հանձնվում են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի գրասենյակ: Դիմումը եւ դրան կից փաստաթղթերն ընդունելիս դրանց վրա նշվում են հանձնման օրը եւ ժամը:

5. Հավատարմագրերը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի կողմից՝ տվյալ փաստաբանին հավատարմագրելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

6. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, ստանալով փաստաբանի դիմումը եւ դրան կից փաստաթղթերը, ստուգում է դրանց համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին եւ հավատարմագրում է փաստաբանին դեկտեմբերի 1-ից 10-ը ընկած ժամանակահատվածում:

Հավատարմագիրը տրամադրվում է տասներեք ամիս գործողության ժամկետով:

7. Հավատարմագրի գործողությունը դադարեցված է ճանաչվում, եթե՝

ա) լրացել է հավատարմագրի ժամկետը.

բ) դադարեցվել է արտոնագրի գործողությունը.

գ) փաստաբանը գրավոր դիմել է հավատարմագրի գործողությունը դադարեցնելու համար:

8. Եթե վճռաբեկ բողոք բերած փաստաբանի հավատարմագրի գործողությունը դադարեցված է ճանաչվում բողոքը ներկայացնելուց հետո, սակայն մինչեւ վճռաբեկ դատարանում բողոքի քննության պահը, ապա բերված բողոքը ենթակա է քննության:

9. Փաստաբանական պալատի նախագահը փաստաբանների արտոնագրերի գործողությունը դադարեցված ճանաչելու դեպքում եռօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին:

10. Փաստաբանին տրամադրված փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագրի գործողության կասեցումը հանգեցնում է տրամադրված հավատարմագրի գործողության կասեցման»:

Դիմող Գ. Գյոզալյանը գտնում է, որ վերոհիշյալ 29.1. հոդվածը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 14.1. եւ 18 հոդվածներին:

4. Դիմումների ուսումնասիրությունը վկայում է, որ միմյանց հետ համակարգային առումով փոխկապակցված դրույթների սահմանադրականությունը վիճարկելու միջոցով դիմողները հիմնականում բարձրացնում են վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի կազմա-

վորման, ինչպես նաև վճարել դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով վճարել բողոք բերելու պարտադիր պահանջ նախատեսելու սահմանադրականության հարցերը:

Քաղաքացիական դատավարության բնագավառում վճարել դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի առնչությամբ դիմողներն իրենց դիրքորոշումները հիմնականում պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

ա/ Սահմանադրության 14.1. հոդվածի երկրորդ պարբերության եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի ուժով խտրականությունը, կախված, ի թիվս այլոց, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Մինչդեռ օրենսդիրը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածով կիրառելով խտրականություն փաստաբանների միջեւ, այդուհանդերձ, չի բացահայտել բուն հարցի էությունը, այն է՝

- ո՞րն է կիրառվող խտրականության մոտիվացիան,
- արդյո՞ք կիրառվող խտրականությունն օբյեկտիվ է եւ ողջամիտ,
- կիրառվող միջոցների եւ հետապնդվող նպատակի միջեւ արդյո՞ք առկա է ողջամիտ հարաբերակցություն,

բ/ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու, պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Դիմողներից քաղաքացի Գ. Գյոզալյանը հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Բելգիայի ոստիկանության ազգային արհմիությունն ընդդեմ Բելգիայի գործով 27.10.1975թ. վճռի 44-46-րդ կետերին՝ գտնում է, որ Սահմանադրության 14.1. հոդվածով սահմանված խտրականության ինստիտուտը չունի ինքնուրույն բնույթ, այն ավելի շատ հանդես է գալիս որպես ածանցյալ նորմ եւ լրացնում է Սահմանադրության այլ հոդվածները՝ կազմելով ինտեգրացված մասը Սահմանադրության յուրաքանչյուր հոդվածի, որոնք սահմանում են իրավունքներ եւ ազատություններ՝ անկախ իրենց բնույթից: Մինչդեռ վերը նշված հիմնավորման լույսի ներքո «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածով կիրառված խտրականությունը հնարավորություն է ստեղծում մարդու սահմանադրական այլ իրավունքների, մասնավորապես՝ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման համար,

գ/ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 231 հոդվածի 2-րդ մասի, 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ վճարել բողոք կարող է բերել միայն վճարել դատարանում հավատարմագրված փաստաբանը, իսկ քանի որ այդ բողոքը չի բխում վերջինիս շահերից, նման բողոք բերելու հնարավորությունը հավասարեցվում է զրոյի, եւ անձը, ձեռնարկներն զրկված չլինելով հավատարմագրված փաստաբանի միջոցով դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից, գործնականում զրկվում է

այդպիսի հնարավորությունից, խախտվում է Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված իրավունքների պաշտպանությունը:

Քրեական դատավարության բնագավառում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի առնչությամբ դիմողներն իրենց դիրքորոշումները հիմնականում պատճառաբանում են նրանով, որ քրեական դատավարության բնագավառում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտը կարգավորող օրենսդրական դրույթները սահմանափակում են դատարանում գործերն անձամբ վարելու իրենց դատավարական իրավունքը՝ խախտելով Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի առնչությամբ դիմող Հ. Ռուշանյանն իր դիրքորոշումը հիմնականում պատճառաբանում է նրանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերի, 2-րդ եւ 4-րդ մասերի դրույթներն իրենց բնույթով այնպիսին են, որ առաջացնում են կոռուպցիոն ռիսկ՝ սահմանափակելով Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով երաշխավորված իրավունքների պաշտպանությունը: Իսկ դիմող Հ. Ռաֆյանն օրենսգրքի 233 հոդվածի վերոհիշյալ դրույթների սահմանադրականության առնչությամբ պնդում է, որ ՀՀ վճռաբեկ դատարան դիմելու իրավունքի իրացումն ամբողջովին պայմանավորված լինելով միայն հավատարմագրված փաստաբանի ցանկությամբ, սահմանափակում է դատական մատչելիության իրավունքը եւ դրանով հակասում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթներին:

ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի առնչությամբ դիմողներ Միքայել, Մարիետտա եւ Մադլենա Բաբայանների ներկայացուցիչ Ռ. Տեր-Վարդանյանն իր դիրքորոշումը հիմնականում պատճառաբանում է նրանով, որ դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդման հարուցումը դատական ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված լինելու հանգամանքով պայմանավորելը հարիր չէ իրավական պետությանը, ստեղծում է ակնհայտ անարդար դատական ակտերի կայացման շարունակական գործընթացի հնարավորություն: Բացի դրանից, ըստ դիմողների ներկայացուցչի՝ դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդման հարուցումը դատական ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված լինելու հանգամանքով պայմանավորելը զրկում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում հարուցելու հնարավորությունից:

5. Առարկելով դիմողների փաստարկների դեմ՝ պատասխանող կողմը գտնում է, որ դիմումներում նշված վիճարկվող դրույթները կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի՝

ա) վճռաբեկ դատարանում քրեական եւ քաղաքացիական գործերով հան-

դես գալու համար սահմանված հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի սահմանադրականության հարցը,

բ) վճռաբեկ բողոքի ընդունելիության ընթացակարգերի հարցը,

գ) դատավորի անձեռնմխելիության բարձր աստիճանը՝ կապված դատական ակտերի կայացման հետ:

Անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին՝ պատասխանողը նշում է, որ այդ դատարանի վճիռներում մասնավորապես շեշտվում է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ իրավունք չէ, եւ որ այն կարող է որոշակիորեն սահմանափակվել, հատկապես բողոքի ընդունելիության հարցում, քանի որ դատարան դիմելու դեպքում պետք է հաշվի առնվեն եւ կոնկրետ պետության դատական համակարգը, եւ առանձնահատկություններն ու օրենսդրական կարգավորումները, մասնավորապես՝ վերաքննիչ, վճռաբեկ ատյանների նշանակությունը, որտեղ վճռաբեկ բողոքի ընդունելիության համար կարող են նախատեսվել ավելի խիստ պայմաններ:

Ելնելով միջազգային իրավական մոտեցումներից եւ փորձից՝ պատասխանողը նաեւ կարելի է, որ ներկայացուցիչների միջոցով դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը չի կարող անհնարին դարձնել արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը յուրաքանչյուր անձի համար:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանում դատավարությունն ամբողջովին գրավոր է, ուստի գործի նյութերի հետազոտմանն անձնական մասնակցության անհրաժեշտություն չի առաջանում: Բացի դրանից, ապացույցներ չեն հետազոտվում: Անհրաժեշտ է, սակայն, որ վճռաբեկ բողոքը համապատասխանի օրենքի պահանջներին եւ ներկայացվի այն ներկայացնելու լիազորություն ունեցող անձի միջոցով: Հայաստանի Հանրապետությունում սահմանափակումը վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներին, ընդ որում, այդ սուբյեկտներից հավատարմագրված փաստաբանները հավատարմագրվում են փաստաբանների որոշմամբ՝ կամքի ազատ արտահայտմամբ, որը չի խաթարում փաստաբանական գործունեության անկախության սկզբունքը:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «...թեւ շարադրված է իրավունքի տեսքով, սակայն իրականում սահմանափակում է ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների այդ իրավունքը անձամբ իրականացնելու հնարավորությունը եւ սահմանում է ընթացակարգային արգելք, այն է՝ այդ իրավունքից հնարավոր է օգտվել բացառապես վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով»: Հիշյալ հարցում կիրառվել է օրենսդրական տեխնիկայի այն կանոնը, որ ընդհանրական սահմանափակումը փոխարինվում է հստակ ձեւակերպված իրավունքով ու դրա իրականացման մեխանիզմով: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե վճռաբեկ դատարան դիմելու իրավունքի սահմանափակմանը, այլ այդ իրավունքի իրականացման մեխանիզմի հստակ սահմանմանը:

Միաժամանակ, պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ սահմանադրական

դատարանի վարույթում գտնվող թե քրեական եւ թե քաղաքացիական գործերով այդ ինստիտուտի՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ մի շարք գործերի առկայությունը թերեւս ահազանգում է պրակտիկայում վճռաբեկ բողոքների ընդունելիությանն առնչվող խնդիրների մասին, ինչը ենթադրում է օրենսդրության կատարելագործման անհրաժեշտության մասին:

Վեճի առարկա այլ հոդվածների առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ եթե ընդունվում է, որ վճռաբեկ դատարան հավատարմագրված փաստաբանի միջոցով ներկայանալու ինստիտուտը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը նույնպես չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, քանի որ ծառայում է վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով ներկայանալու ինստիտուտի իրականացմանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նույնպես չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, քանի որ ամրագրելով վճռաբեկ դատարանի մեջ համար օրենքով կամ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ժամկետներում բողոք բերելու իրավունքը եւ այդ իրավունքն իրականացնելու համար ժամկետներով սահմանափակված պարտականությունը՝ պարտադրում է գործի մասնակիցներին, հավատարմագրված փաստաբաններին եւ դատարանին օրենքով վերապահված լիազորություններն իրականացնել ժամկետային որոշակի շրջանակում, ինչն իր հերթին նպաստում է արդյունավետ արդարադատության իրականացմանը:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը անհամապատասխանության վերաբերյալ ներկայացված հիմնավորումներն անհիմն են եւ դիմումը ենթակա է մերժման: Ըստ պատասխանողի՝ դատական ակտն արդար է այնքան ժամանակ, քանի դեռ չի բեկանվել օրենքով սահմանված կարգով: Դատական ակտի արդար կամ անարդար, կամ ակնհայտ անարդար լինելու մասին գնահատականը տրվում է բացառապես այն դատական ատյանի կողմից, որն իրավասու է բեկանել այն կամ թողնել օրինական ուժի մեջ: Եթե դատական ակտն անարդար կամ ակնհայտ անարդար է, այն կարող է վերանայվել օրենքով սահմանված կարգով եւ հիմքերով:

6. Բոլոր դիմողներն էլ ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի առանձին դրույթների, այնպես էլ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու միջոցով վիճարկում են մի ամբողջ դատավարական ինստիտուտի՝ ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի սահմանադրականության հարցը: Ուստի սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ այդ ինստիտուտի իրավակարգավորման բոլոր տարրերի, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ օրենսգրքի 426.2 հոդվածի սահմանադրականությանը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեսան եկած հանգամանք-

ներով դատական ակտերը վերանայելու կապակցությամբ դիմում ներկայացնելու՝ հավատարմագրված փաստաբանի իրավունքին, 426.5 հոդվածի սահմանադրականությանը՝ այն մասով, որ նոր երեւան եկած հանգամանքների մասին հայտարարությունները եւ հաղորդումներն ուղարկվում են հավատարմագրված փաստաբանին, 426.6 հոդվածի սահմանադրականությանը՝ հավատարմագրված փաստաբանների գործողություններին վերաբերող մասով, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հավատարմագրված փաստաբանի ինստիտուտն իր կարգավորումն է գտել նաեւ ՀՀ դատական օրենսգրքում (56 հոդված) եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում (19 հոդվածի 3-րդ մաս):

7. ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի նախատիպն է հանդիսանում հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների ինստիտուտը: Վերջինս նախատեսված էր ՀՀ Սահմանադրության՝ 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ տեքստի 93 հոդվածով, որի համաձայն՝ «Օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները եւ որոշումները վճռաբեկ դատարանում վերանայվում են գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների բողոքների հիման վրա»: Այսինքն՝ հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի ինստիտուտն ուներ սահմանադրաիրավական կարգավորում:

Մինչեւ 21.02.2007թ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-93-Ն եւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-98-Ն օրենքներով կատարված օրենսդրական փոփոխությունները նախատեսված էր քրեական եւ քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոք բերելու երկու կարգ՝ անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգ եւ միջնորդավորված կարգ: Միջնորդավորված կարգը, ՀՀ Սահմանադրության՝ մինչեւ 2005թ. փոփոխությունները տեքստի 93 հոդվածին համահունչ, իրացվում էր ոչ միայն ՀՀ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների միջոցով, այլեւ հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների ինստիտուտի միջոցով: 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, նպատակ ունենալով բարձրացնել արդարադատության արդյունավետությունն ու մատչելիությունը, հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի ինստիտուտի վերաբերյալ դրույթը ՀՀ Սահմանադրությունից վերացվեց: Սակայն մինչեւ ՀՀ քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերում 2006թ. հունիսի 1-ին կատարված բարեփոխումները, այն պահպանվեց ընթացիկ օրենսդրության մեջ: Արդյունքում, որոշ ժամանակահատվածում վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգը պահպանվեց միայն ՀՀ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների առնչությամբ, քանի որ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի

հունիսի 1-ին ընդունված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-107-Ն եւ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-108-Ն օրենքներով (ուժի մեջ են մտել 16.07.06թ.) հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների ինստիտուտը վերացվեց նաեւ ընթացիկ օրենսդրության մեջ: Ընդ որում, ի տարբերություն քրեական դատավարության, քաղաքացիական դատավարությունում չնայած նույնպես վերացվեց հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը, այնուամենայնիվ, ամրագրվեց փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջը:

Անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգն ի սկզբանե վերաբերում էր միայն վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին, իսկ միջնորդավորված կարգը՝ առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին: Նշված երկու կարգերի զուգահեռաբար գործելու իմաստը կայանում էր նրանում, որ բարձրացվեք դատավարության մասնակիցների դատավարական կարգապահությունը, երաշխավորվեք գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը, ինչպես նաեւ, որպեսզի վճռաբեկ դատարանը զերծ մնար անհիմն վճռաբեկ բողոքներ ներկայացվելու հետեւանքով ավելորդ ծանրաբեռնվածությունից:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում հիշատակել «Անձանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի իրագործումն ապահովելու մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006թ. հունիսի 13-ի որոշումը, որն ընդունվել է մինչեւ 01.06.06թ. ՀՕ-107-Ն եւ ՀՕ-108-Ն օրենքների ուժի մեջ մտնելը եւ ըստ էության հանդիսացել է Սահմանադրության տեքստից (մինչև 2005թ. փոփոխությունները) հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի վերաբերյալ դրույթը վերացնելու իրավական արձագանք: Նախագահների խորհուրդը, մասնավորապես, հաշվի է առել, որ «ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) դատական իշխանությանը նվիրված 6-րդ գլխում հատուկ արտոնագիր ունեցող եւ վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի ինստիտուտ նախատեսված չէ: Բացի դրանից, լրացել է նաեւ նշված փաստաբանների հատուկ արտոնագրերի՝ օրենքով սահմանված ժամկետը: Իսկ հատուկ արտոնագրեր օրենքով սահմանված կարգով այլ փաստաբանի տրված չեն»:... Նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 6-րդ հոդվածի համաձայն «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն», հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով եւ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման անթույլատրելիությունը, մասնավորապես, որոշվել է, որ 1. Վճռաբեկ դատարանի կողմից քննության են ենթակա՝ 1.1. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ գործին մասնակցող ան-

ձանց, գործին մասնակից չդարձած անձանց, վճարել բողոքները, որոնց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ:

01.06.2006թ. ՀՕ-107-Ն եւ ՀՕ-108-Ն օրենքներով հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով վճարել բողոք ներկայացնելու պահանջը վերացնելուն հետեւեցին 07.07.2006թ. ՀՕ-152-Ն եւ ՀՕ-153-Ն օրենքներով կատարված փոփոխությունները, որոնցով, ի թիվս այլոց, սահմանվեց վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու նոր կարգ: Համաձայն այդ փոփոխությունների՝ վերաքննիչ դատարանի ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

01.06.2006թ. ՀՕ-107-Ն եւ ՀՕ-108-Ն օրենքներով եւ 07.07.2006թ. ՀՕ-153-Ն եւ ՀՕ-152-Ն օրենքներով կատարված փոփոխությունների արդյունքում, փաստորեն, ՀՀ Սահմանադրության 2005թ. խմբագրությամբ տեքստին համահունչ, վերացվեց վճարել դատարան դիմելու միջնորդավորված կարգը (քացառությամբ՝ դատախազի եւ նրա տեղակալների մասով), իսկ անմիջական կարգը, վերաքննիչ դատարանի ակտերի ուժի մեջ մտնելու նոր կարգի սահմանման հետեւանքով, պահպանվեց միայն առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռների, դատավճիռների եւ որոշումների բողոքարկման առնչությամբ: Օրենսդրական նման կարգավորումը շարունակվեց մինչեւ 21.02.2007թ. ՀՕ-98-Ն եւ ՀՕ-93-Ն օրենքների ընդունումը, որոնցով վերացվեց վճարել դատարան դիմելու անմիջական կարգը եւ սահմանվեց քացառապես հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի միջոցով գործող միջնորդավորված կարգը: Նշված օրենքներով կատարված փոփոխությունների արդյունքում վճարելության կարգով բողոքարկման էին ենթակա առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռներն ու որոշումները, այն էլ միայն հավատարմագրված փաստաբանների միջոցով:

21.02.2007թ. ՀՕ-98-Ն եւ ՀՕ-93-Ն օրենքներին զուգահեռ ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.02.07թ. ընդունված եւ 07.04.2007թ. ուժի մեջ մտած՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-95-Ն օրենքով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը լրացվել է ՀՀ վճարել դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտին նվիրված 29.1. հոդվածով, որով սահմանվել է հավատարմագրի տրամադրման կարգը:

28.11.2007թ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն եւ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-277-Ն ՀՀ օրենքներով փոփոխության ենթարկվեց նաեւ վճարելության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը, ինչն արդյունք էր 18.05.2007թ. ուժի մեջ մտած ՀՀ դատական օրենսգրքի 22 եւ 50 հոդվածների պահանջների:

Փաստորեն, վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում գործում է վճարել դատարան դիմելու միայն միջնորդավորված կարգը եւ միայն վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող եւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի առնչությամբ:

8. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել.

- բխու՞մ է, արդյոք, փաստաբանների հավատարմագրման ինստիտուտը փաստաբանության վերաբերյալ միջազգային իրավական, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով հաստատագրված իրավակարգավորման ընդհանուր սկզբունքներից (մասնավորապես՝ ինքնակառավարման եւ իրավահավասարության սկզբունքներ),
- ապահովվա՞ծ են, արդյոք, վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների՝ ՀՀ վճռաբեկ դատարանից անկախությունն ու ինքնուրույնությունը,
- ապահովվա՞ծ են, արդյոք, վիճարկվող ինստիտուտի ներկա իրավակարգավորման պայմաններում անձի իրավունքների դատական պաշտպանության մատչելիության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները:

9. Փաստաբանության ինստիտուտի կարգավիճակը սահմանված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդ օրենքի՝ փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, դուրս է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների համակարգից (օրենքի հոդված 3-ի 1-ին պարբերություն): Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման եւ փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

Իր հերթին, փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով եւ եղանակներով: Որպես կանոն, փաստաբանական գործունեությունը կրում է ձեռնարկատիրական բնույթ:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի տրամադրած տեղեկությունների՝ 2008թ. հունիսի 11-ի դրությամբ փաստաբանական գործունեության արտոնագիր ունի 715 փաստաբան: 43 փաստաբանի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված է: Պալատի գրանցման օրվանից ի վեր (2005թ. հոկտեմբերի 28) դադարեցվել է թվով 30 փաստաբանի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողություն:

Համաձայն ՀՀ դատական դեպարտամենտի տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի ներդրումից ի վեր՝ փաստաբանների կողմից հավատարմագիր ստանալու համար ՀՀ վճռաբեկ դատարանի գրասենյակ է ներկայացվել 62 դիմում, որից 59-ը բավարարվել է եւ, համապատասխանաբար, տրվել է 59 հավատարմագիր, 3-ը մերժվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտմամբ կազմված լիցենզիայի հիմքով:

10. ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի նախատիպը հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի ինստիտուտն էր: ՀՀ վճռաբեկ դատարանում փաստաբանների հավատարմագրման կարգի եւ վճռաբեկ դատարանում փաստաբանական գործունեության համար հատուկ արտոնագիր տրամադրելու կարգի համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է այդ երկու ինստիտուտների ձեւավորման կարգերի միջեւ հետեւյալ առանցքային եւ հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի անկախության ու ինքնուրույնության ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող տարբերությունները.

ա/ հատուկ արտոնագիր տրամադրելու գործընթացն սկսվում եւ ավարտվում էր փաստաբանների պալատի շրջանակներում, վճռաբեկ դատարանի նախագահն այդ գործընթացին որեւէ մասնակցություն չուներ. հատուկ արտոնագիրը տրամադրում էր փաստաբանների պալատի նախագահը եւ այն էլ կոլեգիալ մարմնի՝ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի փակ գաղտնի քվեարկության արդյունքներով ընդունված որոշման հիման վրա: Մինչդեռ հավատարմագրված փաստաբանների դեպքում հավատարմագիրը տրամադրում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ՀՀ փաստաբանների պալատի մարմիններն ըստ էության այդ գործընթացում որեւէ դերակատարում չունեն,

բ/ հատուկ արտոնագրի տրամադրման հիմքում ընկած էր փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների եւ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների տարբերակման ծանրակշիռ չափանիշ, այն է՝ մասնագիտական պատրաստվածության աստիճանը եւ մասնագիտական գիտելիքների որակը: Եթե փաստաբանական գործունեություն իրականացնելու համար արտոնագիրը տրամադրվում էր որակավորման քննության արդյունքներով, ապա հատուկ արտոնագիրը տրվում էր հատուկ ծրագրով հանձնված որակավորման քննության արդյունքներով: Ընդ որում, հատուկ ծրագրով որակավորման քննություն հանձնած փաստաբաններից հատուկ արտոնագիր տրամադրվում էր այն թվով յոթ փաստաբաններին, ովքեր փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի փակ գաղտնի քվեարկության արդյունքներով ստացել են առավելագույն ձայներ: Մինչդեռ, հավատարմագրի տրամադրման հիմքում դրվեցին այլ պայմաններ: Եթե հատուկ արտոնագրի տրամադրումը պայմանավորված էր այնպիսի գործոնով, ինչպիսին տվյալ փաստաբանի մասնագիտական պատրաստվածությունն է, ապա հավատարմագրի տրամադրումը հիմնականում պայմանավորված է այնպիսի սուբյեկտիվ գործոնով, ինչպիսին տասը փաստաբանների համաձայնությունն է,

գ/ հատուկ արտոնագիր տրամադրելու կարգն այնպիսին էր, որ առաջին տարում երաշխավորվում էր թվով 7 հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների առկայությունը, իսկ հինգերորդ տարում՝ նույնիսկ թվով 35 հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների առկայությունը (արտոնագիրը տրվում էր հինգ տարի ժամկետով, եւ տվյալ տարվա ընթացքում կարող էր տրվել առավելագույնը 7 հատուկ արտոնագիր): Մինչդեռ հավատարմագիր տրամադրելու կարգն այնպիսին է, որ չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ հավատարմագիր ունեցող փաստաբանների թիվը լինի նվազ, քան նույնիսկ 7-

ը, քանզի հնարավոր է, որ տվյալ տարում տասը փաստաբանների համաձայնություն կարողանան ապահովել 7-ից պակաս թվով փաստաբան, որոնց գործունեության ժամկետն էլ ընդամենը 13 ամիս է: Իսկ հավատարմագիր ունեցող փաստաբանների նվազ թվաքանակը սահմանափակում է վճռաբեկ դատարան դիմող՝ դատավարության կողմերի ընտրության հնարավորությունը, ինչը կարող է լրացուցիչ գործոն հանդիսանալ վճռաբեկ դատարանի մատչելիությունը սահմանափակելու հարցում:

11. Հավատարմագրված փաստաբանների՝ անկախության, փաստաբանական ծառայության մատուցման ինքնակառավարման եւ իրավահավասարության սկզբունքների իրացման խնդրի համատեքստում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաեւ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի իրավակիրառական պրակտիկային: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի 5-րդ մասով եւ «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 18.05.2007թ.) 23 հոդվածի 3-րդ մասի 4.1. կետով՝ իր 05.04.2007թ. N-12Ա հրամանով հավատարմագրել է թվով 55 փաստաբանի: Հիմք ընդունված դրույթը սահմանում էր. «ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը ... օրենքով սահմանված կարգով հավատարմագրում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում հավատարմագրման հայտ ներկայացրած փաստաբաններին կամ մերժում նրանց հավատարմագրումը, ինչպես նաեւ դադարեցված է ճանաչում հավատարմագրի գործողությունը» (այս դրույթն ավելացվել էր 21.02.2007թ. ընդունված եւ 07.04.2007թ. ուժի մեջ մտած՝ «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-94-Ն օրենքով): Նշված հրամանն ուժի մեջ է մտել 07.04.2007թ., այն է՝ փաստաբանների հավատարմագրման կարգը սահմանող՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» 21.02.2007թ. օրենքի եւ հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պայմանը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 21.02.2007թ. օրենքների ուժի մեջ մտնելու օրը: Հրամանն ընդունելիս՝ վճռաբեկ դատարանի նախագահը ղեկավարվել է «Դատարանակազմության մասին» օրենքի 23 հոդվածի 3-րդ մասի 4.1. կետով, որը, սակայն, ուժի մեջ է մտել միայն 07.04.2007թ.: Բացի դրանից, «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի նշված դրույթը սահմանում էր, որ հավատարմագրումը կատարվում է օրենքով սահմանված կարգով: Այդ կարգը սահմանվել է միայն հրամանի ընդունման օրվանից երկու օր հետո ուժի մեջ մտած «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» 21.02.2007թ. օրենքով: Ավելին, ըստ նշված կարգի՝ հավատարմագրման նպատակով վճռաբեկ դատարան փաստաբանները դիմում են յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 20-ից 30-ը:

Հետագայում, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այլ փաստաբաններ, օրենքով սահմանված կարգով,

2007թ. նոյեմբերի 20-ից 30-ը դիմել են ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին եւ հավատարմագրվել: Այդ փաստաբանները թվով 4-ն են:

2007թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը՝ հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի դրույթները, կայացրել է N-79Ա հրամանը, որով որոշվել է 2007թ. ապրիլի 7-ին ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների հավատարմագրերի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2009թ. հունվարի 10-ը: Վճռաբեկ դատարանի նախագահի այս հրամանի օրինականությունը վիճարկվել է ՀՀ վարչական դատարանում: Վերջինս 07.04.2008թ. իր վճռով մերժել է նշված հրամանն առաջին ճանաչելու վերաբերյալ պահանջը: Վճռի պատճառաբանությունը հիմնականում հանգում է նրան, որ «Դատարանը ... հիմք ընդունելով, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի համաձայն՝ փաստաբաններին հավատարմագիր տրամադրելը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունն է, գտնում է, որ հավատարմագրերի տրամադրումը որոշակի ժամկետով չի բացառում դրա գործողության ժամկետի երկարաձգումը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից»: Դատարանի նշված իրավական դիրքորոշումը վկայում է այն մասին, որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի՝ փաստաբաններին հավատարմագրեր տրամադրելու լիազորությունը մեկնաբանվել է կիրառվել է որպես հայեցողական լիազորություն: Վարչական դատարանի այս վճիռը, որի դեմ վճռաբեկ բողոքի քննության ընդունումը մերժվել է, իրավական հիմք է ստեղծում հետագայում եւս վճռաբեկ դատարանի նախագահի կողմից հավատարմագրերի գործողության ժամկետն իր հայեցողությամբ եւ ցանկացած ժամկետով երկարաձգելու համար: Նման մոտեցման արդյունքում, սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտվում են փաստաբանի ինստիտուտի գործունեության հիմքում ընկած այնպիսի կարեւորագույն սկզբունքներ, ինչպիսիք են փաստաբանի անկախության, ինքնակառավարման եւ փաստաբանների իրավահավասարության սկզբունքները:

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձեւավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում եւս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաեւ քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

Այն հանգամանքը, թե 6-րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների առկայությամբ, կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից, դիտարկվելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը (տես՝ Սիալկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով (Sialkowska v. Poland) 2007թ. մարտի 22-ի վճիռը):

ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը: Նույն հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներն ամրագրում են անձի դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքները, այդ թվում՝ նաեւ արդարադատության մատչելիության իրավունքը: Նշված սահմանադրական դրույթների համադրված մեկնաբանությունը՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո, թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող դատական պաշտպանության իրավունքը ներառում է նաեւ վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, որն իր հերթին ներառում է վճռաբեկ ատյանի մատչելիության իրավունքը, որը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը եւ վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը եւ վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները մանրամասնված են սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի ՄԴՈ-690 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանի իրավական պետության սկզբունքների եւ արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարեւորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարեւորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաեւ ողջ հանրության շահերի տեսանկյունից:

13. ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի եւ վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանադրաիրավական բնույթը սահմանադրական դատարանը նախեստաջ հարկ է համարում գնահատել քրեադատավարական եւ քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումների համատեքստում:

Այսպես, մինչեւ վերջին օրենսդրական փոփոխությունները վճռաբեկության կարգով կարող էին բողոքարկվել եւ՝ առաջին ատյանի դատարանի, եւ՝ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Ընդ որում, ուժի մեջ մտած ակտերի բողոքարկման առնչությամբ գործում էր միջնորդավորված կարգը, իսկ անմիջականորեն կարող էին բողոքարկվել վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Քրեադատավարական եւ քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումն ընթացավ այն ճանապարհով, որ ոչ միայն վերացվեց վճռաբեկ դատարան անմիջական դիմելու կարգը, այլ նաեւ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա ակտերի շրջանակն ըստ էության սահմանափակվեց միայն վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով: Ավելին, ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 28.11.2007թ. ՀՀ օրենքներով սահմանվեցին

այնպիսի դրույթներ, որոնք ոչ միայն լուրջ խոչընդոտներ ստեղծեցին վճարելի դատարան դիմելու խնդրում՝ էականորեն սահմանափակելով այդ դատարանի մատչելիությունը, այլ նաև սահմանափակեցին եռաստիճան դատական համակարգում իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները: Մասնավորապես, «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. օրենքի 66 հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածը, որի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճարելի դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Բացի դրանից, այնպիսի պայմաններում, երբ առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այլևս չեն կարող բողոքարկվել վճարելիության կարգով, խստացվել են նաև այդ դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելուն ներկայացվող պահանջները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1. հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Փաստորեն, քրեադատավարական եւ քաղաքացիադատավարական օրենսդրության համապատասխան փոփոխությունների արդյունքում ոչ միայն դատավարության մասնակիցը զրկվել է առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները՝ թեկուզ միջնորդավորված կարգով, վճարելի դատարանում բողոքարկելու հնարավորությունից, այլ նաև վերացվել է այն միակ ուղին, որով ապահովվում էր դատավարության մասնակիցների անմիջական մուտքը վճարելի դատարան (վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերն անմիջականորեն վճարելիության կարգով բողոքարկելու հնարավորությունը), ինչի արդյունքում վճարելի դատարանի մատչելիությունը դատավարության մասնակիցների համար հասցվել է նվազագույնի:

Օրենսդրական զարգացումների համատեքստում ՀՀ վճարելի դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի գոյության ազդեցությունը վճարելի դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս՝ հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով սահմանված վճարելի բողոք բերելու հիմքերը, ինչպես նաև բողոքը քննության ընդունելու պայմաններն օրենսդրական փոփոխությունների արդյունքում բավականին սեղմվել են: Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նույնիսկ հավատարմագրված փաստաբանների կողմից կազմված վճարելի բողոքների գերակշիռ մեծամասնությունը, չբավարարելով վճարելի բողոքը քննության ընդունելու բավականին սեղմ պայմանները, վերադարձվում է, ինչի արդյունքում հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելն ինքնին իմաստագրվում է:

14. Հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջի ազդեցությունը վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս սահմանադրական դատարանը կարենորում է նաեւ այն խնդիրը, թե արդյո՞ք գործող օրենսդրությունն ապահովում է վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման իրավական հնարավորությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ո՛չ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ո՛չ էլ ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերը չեն նախատեսում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրում, այն է՝ վճռաբեկ բողոք կազմելու իրավական հնարավորություն:

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ Հանրային պաշտպանի գրասենյակի 4 հավատարմագիր ունեցող հանրային պաշտպաններից երկուսի կողմից 16 դեպքում վճռաբեկ բողոքը կազմվել է անվճար հիմունքներով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ դատարաններում քննվող քրեական եւ քաղաքացիական բազմաթիվ գործերի պայմաններում խիստ աննշան է հավատարմագրված փաստաբանի կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու երաշխավորումը՝ այդպիսի կարգի եւ դեպքերի օրենսդրական հստակ ամրագրման բացակայության պայմաններում, եւ կախված է պարզապես հանրային պաշտպանի գրասենյակի «բարի կամքի» դրսեւորումից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման կարգ եւ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման որեւէ մեխանիզմ չնախատեսելու պայմաններում՝ հավատարմագրված փաստաբանների գոյությունն անհամաչափորեն սահմանափակում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը՝ այդ դատարանում իրավունքների պաշտպանությունից օգտվելու դատավարության մասնակցի հնարավորությունը գործնականում պայմանավորելով նրա ֆինանսական հնարավորություններով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում

իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաև իրավաբանների եւ իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից:

15. Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակող գործոն է նաև վճռաբեկ դատարանում փաստաբանների հավատարմագրման գործող կարգը: Մասնավորապես, վերջինս այնպիսին է, որ չի բացառվում այնպիսի իրավիճակը, երբ մի փաստաբանը չկարողանա հավաքել համապատասխան թվով ձայներ, ինչի արդյունքում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների թիվը կարող է սեղմ լինել՝ կրճատելով եւ՝ անձի ընտրության հնարավորությունը, եւ՝ ընդհանրապես վճռաբեկ դատարանի պաշտպանությունից օգտվելու հնարավորությունը: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ 2007թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետում ՀՀ վճռաբեկ դատարան է դիմել եւ հավատարմագրվել ընդամենը 4 փաստաբան: Բացի դրանից, հարկ է հաշվի առնել, որ հավատարմագրված փաստաբանն իրականացնելով ձեռնարկատիրական գործունեություն, ըստ էության ազատ է հրաժարվելու այս կամ այն գործով վճռաբեկ բողոք կազմելուց, ինչի արդյունքում դատավարության մասնակցի՝ վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունն է՝ լավելի է նվազում՝ սահմանափակելով վճռաբեկ դատարանի մատչելիությունը: Նման իրավիճակում, փաստորեն, դատարանի մատչելիության իրավունքի իրացումը պայմանավորվում է որոշակի նախապայմանով, այն է՝ փաստաբանի համաձայնությամբ, ինչի արդյունքում հնարավոր է մարդու իրավունքների եւ ազատությունների ազատ իրացման սահմանափակում:

16. Սահմանադրական դատարանը՝ հաշվի առնելով, որ հավատարմագրված փաստաբանների եւ մյուս փաստաբանների միջեւ մասնագիտական պատրաստվածության եւ փորձառության հարցում չկա որեւէ տարբերություն, որ օրենսդրությունը վճռաբեկ դատարան դիմելիս հստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, որ նույնիսկ հավատարմագրված փաստաբանների կողմից կազմված բողոքների գերակշիռ մեծամասնությունը քննության չի ընդունվում վճռաբեկ դատարանում, ինչպես նաև նկատի ունենալով հավատարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկատիրական բնույթով պայմանավորված՝ վճռաբեկ բողոք կազմելուց հրաժարվելու ազատությունը, գտնում է, որ արդարացի հավասարակշռությունը ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի եւ դրանով հետապնդվող նպատակի միջեւ, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի էությունը:

Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջով վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը համաչափ չէ իր նպատակին,

քանի որ նման սահմանափակումը թույլ չի տալիս արդյունավետորեն եւ անարգել իրացնել անձի արդար դատաքննության իրավունքը:

17. ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը հարկ է դիտարկել նաեւ ՀՀ Սահմանադրության՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության եւ խտրականությունն արգելելու սկզբունքներն ամրագրող 14.1. հոդվածի համատեքստում: Ընդ որում, այս սկզբունքներին խնդրո առարկան առնչվում է երկու տեսանկյունից՝ ե՛ւ՝ փաստաբանների շահերի տեսանկյունից, ե՛ւ՝ դատավարության մասնակիցների տեսանկյունից:

Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է, եթե առկա չէ օբյեկտիվ եւ պատճառաբանված արդարացում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրման համար օրենսդրությունը որպէս չափանիշ է սահմանել ընդամենը 10 այլ փաստաբանների կողմից հավակնորդին տրված գրավոր համաձայնությունները, որ արտոնագիր ունեցող փաստաբանների եւ ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջեւ առկա չէ մասնագիտական ունակություններով եւ փորձառությամբ պայմանավորված որեւէ օբյեկտիվ եւ իրավաչափ տարբերություն, սահմանադրական դատարանը գտնում է, որ հավատարմագիր չունեցող փաստաբաններին վճռաբեկ բողոք կազմելու հնարավորությունից զրկելը հանդիսանում է խտրական վերաբերմունք նրանց նկատմամբ:

Ինչ վերաբերում է դատավարության մասնակիցների համար օրենքի առջեւ հավասարության սկզբունքի նկատմամբ հարգանքն ապահովելուն, ապա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը վճռաբեկ բողոք կազմելու առնչությամբ չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնության տրամադրում, ինչպէս նաեւ հիմք ընդունելով այն վիճակագրությունը, որ վճռաբեկ դատարան ղիմելու միջնորդավորված կարգ սահմանելուց ի վեր կրկնակի կրճատվել է վճռաբեկ բողոքների քանակը, սահմանադրական դատարանը գտնում է, որ հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ խախտվում է նաեւ հավասարությունը դատավարության մասնակիցների միջեւ՝ պայմանավորված նրանց գույքային վիճակով:

18. Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի եւ հավատարմագիր չունեցող փաստաբանի միջեւ մասնագիտական ունակություններով եւ փորձառությամբ պայմանավորված իրավաչափ տարբերության բացակայության հանգամանքը, վճռաբեկ դատարանում փաստաբանի հավատարմագրման կարգը, հավատարմագրված փաստաբանի կողմից իրականացվող փաստաբանական գործունեության խիստ սահմանափակ լինելու հանգամանքը, հավատարմագրված փաստաբանի եւ վճռաբեկ դատարանի փոխգործակցության բնույթը միանգամայն ավելորդ են դարձնում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի գոյությունը: Ավելին, հաշվի առնելով նշված ինստիտուտի գործունեության ձեռնարկատիրական, մենաշնորհային բնույթը, դրա վրա հիմն-

ված՝ հավատարմագրված փաստաբանների կողմից ընդամենը վճռաբեկ բողոք կազմելու համար պահանջվող համեմատաբար բարձր վճարները, սահմանադրական դատարան, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու համար պաշտպանության միջոցներն սպառելու պարտադիր պահանջը, կարելի է փաստել, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտն իր գոյությամբ սահմանափակում է ոչ միայն վճռաբեկ դատարանի, այլ նաև սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մատչելիության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դեպքերի համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պայմանավորված վճռաբեկ դատարանի գործառնական առանձնահատկություններով՝ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, եթե բխում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ եւ փորձառու մասնագետների միջոցով:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից:

19. Դիմող Հ. Ռուշանյանը, ի թիվս այլոց, վիճարկում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանադրականությունը, որի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե՝ ...4) վճռաբեկ բողոք ներկայացվել է օրենքով նախատեսված կամ վճռաբեկ դատարանի սահմանած ժամկետից ուշ, եւ բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է»:

Այս դրույթը հարկ է դիտարկել ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի ՍԳՈ-754 որոշման լույսի ներքո, որով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր է ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասը (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մասը)՝ առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու իրավունքի սահմանափակման առումով:

Սահմանադրական դատարանի նշված որոշման հիմքում ընկած է այն ընդհանուր իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ քանի դեռ չի լրացել օրենքով վճռաբեկ դատարան դիմելու համար սահմանված եռամսյա ժամկետը, անձը կարող է, անկախ թերությունները շտկելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ մատնանշելու փաստից, կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել: Այ-

սինքն՝ սահմանադրական դատարանի նշված որոշման իրավական հետեւանքն այն է, որ եթե վճռաբեկ դատարանը թերությունների պատճառաբանությամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելիս դրանք շտկելու համար համապատասխան ժամկետ չի սահմանում, ապա անձը կարող է մինչեւ եռամսյա ժամկետի լրանալը կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել: Մինչդեռ, վիճարկվող դրույթի ուժով, բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ դատարանը սահմանում է վճռաբեկ բողոքը ներկայացնելու ժամկետ, որն ավելի սեղմ է, քան օրենքով սահմանված եռամսյա ժամկետը, տվյալ անձն անհավասար վիճակում է հայտնվում այն անձանց համեմատությամբ, որոնց բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ չի սահմանվել. վիճարկվող հոդվածի 4-րդ մասի անվավերության պայմաններում հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ չսահմանելու դեպքում անձը կարող է լիարժեք օգտվել եռամսյա ժամկետից, իսկ ժամկետ սահմանելու դեպքում՝ ոչ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ժամկետի խախտումը չպետք է խոչընդոտ լինի վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելուն, եթե, այնուամենայնիվ, այն ներկայացվում է օրենքով սահմանված եռամսյա ժամկետում:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 5-րդ կետերին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ կետերում ամրագրված դրույթներն արդյունավետ վճռաբեկ վարույթ իրականացնելու անհրաժեշտ պայմաններ են:

20. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-690 որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետի բ) ենթակետում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) սահմանադրականությանը, ամրագրել է. վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, մասե՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել այն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանված լինելու անհրաժեշտությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է իր որոշման պատճառաբանական մասում, մասնավորապես, որոշման 10-րդ կետում նշված է. «Ուստի վճռաբեկ դատարանի կողմից «Էական նշանակություն», «Ժանր հետեւանք» եւ «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» արտահայտությունների՝ դատական գործերի հանգամանքներից բխող բովանդակային հստակեցումը, մեկնաբանումը, պատճառաբանումը պայման է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետում եւ 231.2. հոդվածի 1-ին կետում նախանշված հիմքերին համապատասխան՝ վճռաբեկ վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը կանխատեսելի դարձնելու համար»:

«Էական նշանակություն», «ծանր հետեւանք» եւ «վճարել դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» արտահայտությունները վերաբերում են վճարել բողոքն ընդունելու երեք հիմքերին, որոնք ներկայումս ամրագրված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նոր խմբագրությամբ 234 հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերում:

Բացի դրանից, խնդրո առարկայի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր վերաբերմունքն է արտահայտել նաեւ 2008թ. մայիսի 27-ի ՄԳՈ-754 որոշման 5-րդ կետում, որտեղ, մասնավորապես, ամրագրվել է. «Սահմանադրական դատարանն իր նշված որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետում ամրագրել է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) ... վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետեւաբար, նաեւ՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»: Այսինքն՝ վճարել դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ եւ ոչ կամայական իրականացումն ապահովող կարեւոր իրավական երաշխիք պետք է հանդիսանար նաեւ վճարել բողոքը վերադարձնելու մասին վճարել դատարանի որոշման պատճառաբանման պարտադիր պայմանն օրենքով հստակ սահմանելը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական դատարանի նշված որոշման ընդունումից ի վեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների եւ լրացումների արդյունքում վերոհիշյալ իրավական երաշխիքները լիարժեքորեն չեն ապահովվել:

Այսպես՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի օրենքի 75 հոդվածի համաձայն՝ «Վճարել բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233 հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Վճարել բողոքը վերադարձնելու մասին վճարել դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճարել դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճարել բողոքը վերադարձնելու դեպքերի»: Նույնարժանիակ դրույթ է ըստ էության ամրագրված նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4-րդ մասում. վերջինս եւս վճարել բողոքը վերադարձնելու մասին վճարել դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չի տարածում այն որոշումների վրա, որոնցում վճարել բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նման բա-

ցառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կատարումը՝ խախտելով նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Իր ՄԳՈ-690 որոշման մեջ սահմանադրական դատարանը պատճառաբանվածության պարտադիր պահանջը կապում է ոչ թե վճռաբեկ բողոքի ընդունելիության այս կամ այն կոնկրետ հիմքի հետ, այլ՝ բացառապես բոլոր հիմքերի հետ: Նման պահանջն ինքնանպատակ չէ, եւ դրա նպատակն է ապահովել վճռաբեկ բողոքը վերադարձնելիս դատարանի հայեցողական լիազորության իրավաչափ եւ օրինական իրականացումը, ինչպես նաև դատական ակտի նկատմամբ անձի վստահության ապահովումը:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի նման որոշման առկայության պայմաններում ՀՀ Ազգային ժողովն օժտված չէ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որեւէ մեկը «արտոնյալ» վիճակում դնելու հայեցողությամբ, եւ չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է» ու դրա առկայության հիմնավորման կարիք չկա: Ուստի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճռաբեկ բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը եւ յուրաքանչյուրը ենթակա են պատճառաբանման:

21. Անդրադառնալով դիմողներ Բաբայանների կողմից վիճարկվող ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի դրույթների սահմանադրականության խնդրին, սահմանադրական դատարանը նշում է, որ օրենսգրքի՝ «Դատավորի անձեռնմխելիությունը» վերտառությամբ 13 հոդվածում կարելու էրաշխիքներ են նախատեսված ապահովելու համար ինչպես դատավորի անկախությունը, այնպես էլ արդարադատության արդյունավետությունը: Համանման երաշխիքներ են նախատեսված դատավորների անկախությունն ու անձեռնմխելիությունը կանոնակարգող ՀՀ օրենսդրության՝ այլ, ինչպես նաև միջազգային իրավական նորմերում: Որպես այդպիսի երաշխիք՝ օրենսգրքի վերոհիշյալ 6-րդ կետը նախատեսում է վերադատության կարգով դատական ակտի նախապես բեկանման պարտադիր սկզբունք՝ շահադիտական կամ անձնական այլ դրդումներով այդպիսի ակտ դատավորի կողմից կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում հարուցելու համար:

Սահմանադրական դատարանը հատուկ կարեւորում է վերադատության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիության ապահովումն ինչպես ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի վիճարկվող նորմում, այնպես էլ օրենսդրության՝ այլ, այդ թվում նաև քրեաիրավական նորմերում, դիտարկելով այն որպես ՀՀ Սահմանադրության 5, 94 եւ 97 հոդվածներում ամրագրված դատական իշխանության անկախության սկզբունքի իրականացման կարեւոր երաշխիք: Դատական ակտի իրավական գնահատականը կարող է տրվել միմիայն արդարադատական ընթացակարգով այն քննության առարկա դարձնելու արդյունքում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սկզբունքը չի ենթադրում, որ դատավորը ենթակա չէ պատասխանատվության, այդ

թվում քրեորեն պատժելի արարքի համար: Այդ իրավահարաբերություններն օրենսդրորեն պետք է կանոնակարգվեն ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթների շրջանակներում: Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետն իրավակիրառական պրակտիկայում չի կարող մեկնաբանվել այն բովանդակությամբ, որ նոր երեսան եկած հանգամանքների հիմքով անհնարին դարձվի դատական ակտերի բողոքարկումը դատախազության կողմից՝ ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով վերապահված լիազորության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի անկախության եւ օրենքի առջեւ դատավորի պատասխանատվության միջեւ խելամիտ հավասարակշռությունը խախտվել է մասնավորապես նաեւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2007թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքով կատարված փոփոխությունների 426.1. հոդվածով նախատեսված իրավակարգավորման արդյունքում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համանման նորմերի առնչությամբ իր իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանն արտահայտել է 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ: Այդ դիրքորոշումներն օրենսդրի կողմից հաշվի պետք է առնվեն նշված հավասարակշռությունը երաշխավորելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ 233 հոդվածի 4-րդ մասի առնչությամբ գործի վարույթը կարճել, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 27-ի ՍԴՈ-754 որոշումը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իրավական որոշակիություն է ձեռք բերում միայն օրենսգրքի 233 հոդվածի 4-րդ մասի հետ համակցության մեջ:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40 հոդվածի 2-րդ մասը, 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 231 հոդվածի 2-րդ մասը՝ հավատարմագրված փաստաբանի ինստիտուտին առնչվող մասով, 233 հոդվածի 2-րդ մասը՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ 28.11.2007թ. խմբագրությամբ, հավատարմագրված փաստաբանի միջոցով բողոք բերելու մասով, 426.2 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է

նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու կապակցությամբ դիմում ներկայացնելու՝ հավատարմագրված փաստաբանի իրավունքին, 426.5 հոդվածը՝ այն մասով, որը վերաբերում է նոր երեւան եկած հանգամանքների մասին հայտարարությունները եւ հաղորդումները հավատարմագրված փաստաբանին ուղարկելուն (1-ին մաս), ինչպես նաեւ նոր երեւան եկած հանգամանքներով վարույթ հարուցելու եւ ուսումնասիրություններ կատարելու խնդրում հավատարմագրված փաստաբանի իրավունքի մասով (4-րդ մաս), 426.6 հոդվածը՝ հավատարմագրված փաստաբանների գործողություններին վերաբերող մասով (2-րդ եւ 3-րդ մասեր), ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

4. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1., 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում:

6. ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

7. Նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմների վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթների համաձայն սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**8 հոկտեմբերի 2008 թվականի
ՍԳՈ- 765**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 301 ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ՝ փաստաբան Մ. Շուշանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Վարդան Մալխասյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Վ. Մալխասյանի՝ 26.05.2008թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործի նյութերը, սույն գործով զեկուցողների գրավոր հաղորդումը եւ կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 2003թ. ապրիլի 29-ին եւ համաձայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածը վերնագրված է «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը»: Հոդվածը սահմանում է. «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2. Ըստ գործում առկա դատական ակտերի՝ քաղ. Վ. Մալխասյանը, 2006թ. դեկտեմբերի 2-ին մասնակցելով «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հասարակական նախաձեռնության համակարգող, «Արաքս-Քուռ» վերաբնակեցման եւ զարգացման հիմնադրամի հոգաբարձու խորհրդի նախագահ Ժ. Սեֆիլյանի նախաձեռնությամբ Երեւանի պարարվեստի պետական քոլեջի դահլիճում կայացած «Հայ կամավորականների համախմբման» անդրանիկ հավաքին, ներկա գտնվող շուրջ 150 անձանց ներկայությամբ կատարել է ՀՀ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 6-ի դատավճռով դիմողը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածով եւ դատապարտվել ազատազրկման երկու տարի ժամկետով:

ՀՀ քրեական գործերով վերաքննիչ դատարանն իր 25.09.2007թ. որոշմամբ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 6-ի դատավճիռը դիմողի մասով թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր 04.05.2008թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դիսպոզիցիայի՝ «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչերը» եւ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» բառակապակցություններն առաջացնում են իրավական անորոշություն, եւ այդ հիմքով հակասում են ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 14.1, 16, 27 եւ 43-րդ հոդվածներին: Մասնավորապես, ըստ դիմող կողմի՝ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող հոդվածում «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչերը» եւ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» բառակապակցությունների իրավական անորոշության պատճառով իրավակիրառ մարմինները ճիշտ չեն մեկնաբանել հոդվածի դրույթները, ինչի հետեւանքով դիմողի արտահայտած կարծիքը դիտարկվել է որպես ՀՀ քրեական օրենսգրքի 301

հողվածով նախատեսված արարք, դրա արդյունքում, ի թիվս այլոց, սահմանափակվել է դիմողի՝ Սահմանադրության 27 հոդվածով սահմանված՝ կարծիք հայտնելու ազատության իրավունքը:

Իրավական անորոշության առնչությամբ իր փաստարկները դիմող կողմը հիմնականում հիմնավորում է նրանով, որ իշխանությունը ոչ նյութական երեւոյթ է, եւ, հետեւաբար, այն հնարավոր չէ ենթարկել նյութական երեւոյթների ազդեցությանը, ինչպիսին, ի թիվս այլոց, բռնությամբ զավթելն է: Ըստ դիմողի՝ իշխանության ընկալումը որպէս նյութական երեւոյթ, ինչպէս նաեւ «պետական իշխանություն» եւ «պետական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձ» հասկացությունների նույնականացումն ընդունված էր խորհրդային ամբողջատիրական հասարակությունում, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող հոդվածը՝ նման բովանդակությամբ, խորհրդային կարծրատիպ է, ինչն ընդունելի չէ ժողովրդավարական հասարակությունում:

Բացի վիճարկվող դրույթներում իրավական անորոշության առկայության հարցից, դիմող կողմը բարձրացնում է նաեւ իրավակարգավորման եւ օբյեկտիվ իրականության միջեւ անհամապատասխանության հարցը՝ հիմնվելով «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչերը» եւ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» բառակապակցությունների բովանդակության մեկնաբանության սեփական տարբերակների վրա: Մասնավորապէս, փաստարկելով, որ «պետական իշխանություն» եւ «ժողովրդի իշխանություն» հասկացությունները նույնանշանակ են, իսկ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է որպէս պետական իշխանություն եւ տեղական ինքնակառավարում, ինչպէս նաեւ նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրության 104 հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է, դիմող կողմն ընդհանրացնում է, որ «պետական իշխանություն» հասկացությունը նշանակում է «պետական նշանակության հարցերը սեփական պատասխանատվությամբ լուծելու Հայ ժողովրդի իրավունք ու կարողություն»: Այս ձեւակերպումից, ինչպէս նաեւ իշխանության բնույթի եւ էության վերաբերյալ իր փաստարկներից ելնելով՝ դիմող կողմը գտնում է, որ օբյեկտիվ իրականության մեջ հնարավոր չէ զավթել ժողովրդի իրավունքը եւ կարողությունը, եւ այդ կապակցությամբ վիճարկվող դրույթների ուղիղ, սովորական, տառացի մեկնաբանության դեպքում կարելի է հանգել անհեթեթության: Դիմողը գտնում է, որ «...իրականության մեջ անհնար՝ «պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն» կամ «սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն» ուղղված «հրապարակային կոչերը» հանրության համար վտանգավոր «արարքներ» չեն եւ չեն կարող լինել, դրանց արգելքը «պաշտպանություն» է գոյություն չունեցող, երեւակայական վտանգից, ապահովում է ոչ թե իրավական որոշակիությունը, մատչելիությունը եւ կանխատեսելիությունը, ... այլ ընդհակառակը, «ապահովում է» իրավական անորոշություն, կամայականություն եւ խտրականություն, ուստի հակասում է Սահմանադրությանը եւ Կոնվենցիային»:

Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի վիճարկվող դրույթների,

ինչպես նաև 300 հոդվածի եւ ՀՀ Սահմանադրության հատկապես 2, 3 եւ 5 հոդվածների փոխառնչությունները, դիմող կողմն ընդհանուր հետետություն է անում, որ վեճի առարկա դրույթների ու ընդհանրապես օրենսգրքի 11-րդ բաժնի բովանդակությունը՝ իմաստի, էության, բնույթի, ներքին տրամաբանության, արժեքային համակարգի եւ նպատակային նշանակության առումով, ՀՀ քրեական օրենսգրքը պահում են խորհրդային անցյալի քաղաքակրթական ճգնաժամի հարթությունում:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածը դիմողի հարցադրումների շրջանակում սահմանադրականության խնդիր չի առաջացնում, եւ բավարար հիմք չի տեսնում այն ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 27 եւ 43 հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչելու համար:

Պատասխանող կողմն շեշտում է, որ ՀՀ Սահմանադրության 2 հոդվածն ամրագրում է, որ իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է: Ընդ որում, «յուրացումը» կարող է կատարվել տարբեր եղանակներով՝ ինչպես բռնի, այնպես էլ ոչ բռնի: ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածում օգտագործված «զավթում» եզրույթը միանշանակ ենթադրում է բռնություն կամ բռնության սպառնալիք:

Պատասխանող կողմն գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածով նախատեսված հանցագործության անմիջական օբյեկտը կազմում են սահմանադրորեն ձեւակերպված ՀՀ սահմանադրական կարգի այն հիմունքները, որոնցում ամրագրված են պետական իշխանության ձեւավորման եւ գործունեության սկզբունքները: Այդ հոդվածով քրեորեն հետապնդելի են պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը՝ ՀՀ Սահմանադրության 47 հոդվածի 2-րդ մասի ուժով, ՀՀ Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերով եւ կարգով, նույն հոդվածի 2-րդ մասում, ինչպես նաև միջազգային իրավունքում ամրագրված՝ իրավունքը սահմանափակելու թույլատրելի սահմաններում:

Պատասխանող կողմն գտնում է նաև, որ սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կոչը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իմաստով, նշանակում է «...այնպիսի բանավոր, գրավոր կամ պատկերավոր այլ ներգործություն մարդկանց գիտակցության, կամքի կամ վարքագծի վրա, որը նպատակ ունի նրանց մոտ ձեւավորելու հակասահմանադրական եղանակով սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու հակում»: Ուստի բռնության կոչը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իմաստով, նշանակում է քաղաքական պայքարի հակասահմանադրական զինված ձեւեր, ավերիչ ուղղվածությամբ զանգվածային գործողություններ, իշխանական ինստիտուտների բռնի վերացում կամ փոփոխում եւ այլն: Ընդ որում, կոչում հնչած բռնության բնույթը կոչի բովանդակությունում պետք է արտահայտված լինի որոշակիորեն, ընդհուպ մինչեւ բռնության եղանակի ուղղակի նշումը:

Պատասխանող կողմն մատնանշում է նաև, որ պետական իշխանությունը

բռնությամբ զավթելուն, «սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչ» արտահայտությունը գործածվում է նաև այլ պետությունների, մասնավորապես՝ Շվեյցարիայի, Լիտվայի, Լատվիայի, Բուլղարիայի եւ մի շարք այլ պետությունների քրեական օրենսգրքերում: Պատասխանող կողմը հղում է կատարում նաև Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2007թ. դեկտեմբերի 17-ին տրված թիվ 542/2007 եզրակացությանը՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի՝ եվրոպական չափանիշներին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածին համապատասխանության հարցի վերաբերյալ:

Պատասխանողի կարծիքով՝ իրավական որոշակիության իմաստով ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածում նախատեսված՝ պետական իշխանության ճյուղերից ցանկացածը բռնությամբ զավթելու հրապարակային կոչն ուղղված է պետական իշխանության դեմ: Տվյալ դեպքում իրավական որոշակիությունը, մատչելիությունը եւ կանխատեսելիությունն ապահովված են:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթներում իրավական անորոշության առկայությամբ եւ դրա հետեւանքով իրավակիրառ պրակտիկայում այդ դրույթներին տրված, իր կարծիքով, սխալ մեկնաբանությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի եւ 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դրույթների սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, ինչպես նաև կիրառման պրակտիկայում դրսեւորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը:

Միեւնույն ժամանակ, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դիսպոզիցիան սահմանադրական նորմերի ու սկզբունքների տեսանկյունից հետապնդում է իրավաչափ նպատակ, եւ արդյո՞ք «բռնության գործադրմանն ուղղված հրապարակային կոչ» եւ «կարծիքի ազատ արտահայտում» հասկացությունների միջեւ առկա է ողջամիտ տարանջատվածություն:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածում «Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչերը» եւ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը» բառակապակցությունները համադրված գնահատման ենթակա արտահայտություններ են: Երկրի սահմանադրական կարգն իրենից ներկայացնում է հասարակության հիմնարար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման, անհատ-պետություն փոխհարաբերությունների սահմանադրորեն ամրագրված համա-

կարգը: Վերջինիս հիմքում դրվող արժեքների և սկզբունքների անբողջականությունն առանձնացվում է որպես երկրի սահմանադրական կարգի հիմունքներ: Հասարակության հիմնարար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման և անհատ-պետություն փոխհարաբերությունների կարգը չի կարող սահմանվել կամ փոփոխության ենթարկվել այլ կերպ ու այլ ձևերով և մեթոդներով, քան նախատեսված է Սահմանադրությամբ: Հետևաբար, վեճի առարկա դրույթների փոխհարաբերակցությունը պետք է դիտարկել այս տեսանկյունից:

Սահմանադրական իրավունքի տեսանկյունից իշխանությունը կամքը պարտադրելու իրավունք է կարողություն է: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական իշխանությունը, որպես ժողովրդի կամքը միջնորդավորված կերպով պարտադրելու իրավունք է կարողություն, պետության գործառնական կարելու բաղադրատարրերից է, որն արտահայտվում է պետության կողմից իր առաքելությունը հրապարակային և ինքնիշխան ձևով իրականացնելու կարողունակությամբ՝ համապարտադիր վարքագծի կանոններ սահմանելու և դրանց կիրառումն ապահովելու միջոցով:

Սահմանադրական մակարդակում հստակ տարբերակվում են «ժողովրդի իշխանություն» և «պետական իշխանություն» հասկացությունները: Ժողովրդավարական երկրներում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որը հանդիսանում է այդ իշխանության միակ կրողը և աղբյուրը: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 2 հոդվածը սահմանում է, որ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5 հոդվածների համալիր վերլուծությունից բխում է, որ պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձևավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ իշխանության մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Պետական իշխանությունն իրականացվում է գործառույթ - ինստիտուտ - իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրորեն նախատեսված սահմանափակումների շրջանակներում: Այդ եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթն իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակ-

ներում, որոնց արդյունքում երաշխավորվում է պետության ողջ տարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) եւ դրանց իրացման ապահովումը: Դրանցից դուրս իրականացվող գործողությունները ճանաչվում են որպես հակաիրավական: Նման հակաիրավական գործողությունների թվին են դասվում նաեւ Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանադրական ինստիտուտին վերապահված պետաիշխանական գործառույթին եւ դրա իրականացման միջոցներին բռնությամբ տիրանալը, իրեն ենթարկելը կամ այլ կերպ՝ զավթելը: ՀՀ Սահմանադրության 47 հոդվածը միանշանակ պահանջ է առաջադրում, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը, ինչպես նաեւ նույն հոդվածն արգելում է իրավունքների եւ ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այս համատեքստում սահմանադրական կարգը բռնի տապալելու նպատակով իրավունքների եւ ազատությունների օգտագործման արգելումն ունի այն սահմանադրաիրավական իմաստը, որ իրավունքների չարաշահման արգելք է նախատեսվում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են սահմանադրորեն նախատեսված իրավակարգավորումը բռնության գործադրմամբ ձախողելուն (կործանելուն, քայքայելուն, ավերելուն եւ այլն), անիրագործելի դարձնելուն:

Իրավունքների չարաշահման արգելքը նախատեսված է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 17 հոդվածով:

Պետությունը պարտավոր է իրավական երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ պահանջն իրականացնելու եւ երկրի սահմանադրական կարգի կայունությունն ապահովելու ուղղությամբ:

Վերոշարադրյալ մոտեցումները հաշվի առնելով՝ «պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր» եւ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչեր» հասկացությունները ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի սահմանադրաիրավական իմաստով պետք է հասկանալ օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության մարմինների պետաիշխանական գործառույթներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ բռնությամբ կամ դրա գործադրման անմիջական եւ իրական սպառնալիքով տիրանալու համար գործողություն պլանավորելու, կազմակերպելու, նախապատրաստելու կամ իրականացնելու նպատակով այլ անձանց մասնակից դարձնելու դիմում կամ հրավեր: Իրավակիրառական պրակտիկան եւ ցանկացած գործի փաստական հանգամանքների գնահատումը պետք է ելնի տվյալ հասկացությունների սահմանադրաիրավական այդ բովանդակությունից, առաջին հերթին նկատի ունենալով հակաիրավական (բռնի) գործողությունների միջոցով պետաիշխանական գործառույթի նկատմամբ ոտնձգություն իրականացնելու նշված հանգամանքը: Բռնության կոչերի նպատակը մեկն է՝ համախմբել մարդկանց, ուղղություն տալ նրանց բռնի գործողու-

թյուններին: Քննարկվող հանցակազմի իմաստով բռնության կոչեր չեն կարող համարվել իշխանության քննադատությունը, իշխանությունների հրաժարականի անհրաժեշտության հիմնավորումը, հրաժարականի պահանջը, ցույցեր, երթեր, հանրահավաքներ անցկացնելու կոչը կամ կազմակերպումը, փոխաբերական իմաստով արված արտահայտությունները:

Հանրային իշխանության մարմինները եւ պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամատեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Հանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ եւ ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման:

Վերոշարադրյալ մեկնաբանությունից բխում է նաեւ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իմաստով՝ «պետական իշխանություն» հասկացությունը չի կարող նույնականացվել «պաշտոնատար անձ» հասկացության հետ, եւ դա չի կարող արվել նաեւ իրավակիրառական պրակտիկայում:

Վեճի առարկա դրույթների համատեքստում իրավունքի ամեն մի չարաշահում պետք է գնահատվի միայն ու միայն վերոշարադրյալ իմաստով սահմանադրական կարգը բռնությամբ տապալելու իրական սպառնալիքի եւ դրականիսման անհրաժեշտության տեսանկյունից: Այս շրջանակներում միայն ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի դիսպոզիցիան սահմանադրական նորմերի ու սկզբունքների տեսանկյունից կարող է ունենալ իրավաչափ բնույթ:

7. ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը»:

Սահմանադրության 27 հոդվածի վերլուծությունից բխում է, որ անհատին անմիջականորեն վերաբերում են հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով սահմանված իրավունքները: Հոդվածի երրորդ եւ չորրորդ մասերով սահմանված դրույթները վերաբերում են լրատվամիջոցներին, երաշխավորում են համապատասխան ինստիտուցիոնալ եւ կազմակերպչական միջոցների առկայությունը՝ ապահովելու համար Սահմանադրության 27 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով սահմանված իրավունքների արդյունավետ իրացումը: Այդ կապակ-

ցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածը հարկ է գնահատել ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով սահմանված իրավունքների եւ դրանց սահմանափակումների տեսանկյունից:

Սահմանադրության 27 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերում ամրագրված՝ կարծիքն ազատ արտահայտելու եւ խոսքի ազատության իրավունքները կարող են սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 43 հոդվածում ամրագրված հիմքերով:

Սահմանադրության 43 հոդվածի համաձայն.

«Մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ հոդվածի դրույթները՝ իրենց իրավակարգավորման շրջանակներում, ՀՀ Սահմանադրության 27 հոդվածով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածով երաշխավորված՝ կարծիքն ազատ արտահայտելու եւ խոսքի ազատության իրավունքները սահմանափակելու առումով համահունչ են ՀՀ Սահմանադրության 43 հոդվածով եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմաններին, ինչպես նաեւ իրավունքների չարաշահման արգելմանն ուղղված՝ ՀՀ Սահմանադրության 47 եւ Կոնվենցիայի 17 հոդվածների պահանջներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր վճիռներում բազմիցս անդրադարձել է այս հարցին եւ նշել, որ ինչպես սահմանում է Կոնվենցիայի 10 հոդվածը, այդ ազատությունը ենթարկվում է բացառությունների, որոնք, սակայն, պետք է մեկնաբանվեն խիստ, եւ ցանկացած միջամտության անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով սահմանված լինի: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից բխում է, որ բռնությամբ իշխանությունը զավթելու կամ պետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կոչերը կարող են արգելվել համաձայն այն բացառությունների, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 10 հոդվածի 2-րդ կետում: Այդ հոդվածի վերլուծությունից հետեւում է, որ «հրապարակային կոչ» արտահայտությունը սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների իմաստով անորոշ չէ եւ այն, անձանց մասնավոր հաղորդակցությունից դուրս, տարբեր ձեւերով ուղղված է

հանրության անդամներին: Անորոշ չեն նաեւ «պետական իշխանությունը բռնությամբ զավթել» եւ «սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխել» արտահայտությունները, որոնք չեն ներառում օրինական կարգով իրականացվող գործողություններ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաեւ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի, ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի եւ Կոնվենցիայի 10 հոդվածի դրույթների փոխառնչությունները պետք է դիտարկել ոչ միայն Սահմանադրության 47 եւ Կոնվենցիայի 17, այլ նաեւ Սահմանադրության 29 եւ Կոնվենցիայի 11 հոդվածների տեսանկյունից: Բանն այն է, որ վերջին երկու հոդվածներում ամրագրված իրավունքները սահմանադրաիրավական առումով ճանաչվում են այդպիսին, եթե խաղաղ են ու առանց զենքի: Իսկ Կոնվենցիայի 10 հոդվածի 2-րդ մասը, նկատի ունենալով, որ արտահայտվելու իրավունքի իրականացումը կապված է նաեւ պարտավորությունների ու պատասխանատվության հետ, նախատեսում է ոչ միայն օրենքով սահմանափակումների, այլեւ պատժամիջոցների կիրառման հնարավորություն՝ իրավունքի չարաշահումը բացառելու եւ ժողովրդավարական հասարակությունում նույն այդ 10 հոդվածով թվարկված իրավաչափ նպատակներին հասնելու համար:

Նշված հոդվածների համալիր վերլուծությունից հետեւում է, որ «բռնության գործադրմանն ուղղված հրապարակային կոչ» եւ «կարծիքի ազատ արտահայտում» հասկացությունների միջեւ առկա է ողջամիտ տարանջատվածություն:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործի շրջանակներում առաջնային խնդիրը վեճի առարկա նորմի պատշաճ իրավական մեկնաբանման եւ կիրառման երաշխավորումն է: Դրա ապահովման իրավական պարտավորությունը, ՀՀ Սահմանադրությանը համապատասխան, կրում է ՀՀ վճռաբեկ դատարանը: Ի տարբերություն բազմաթիվ երկրների, ՀՀ Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու չէ սահմանադրականության տեսակետից քննության առարկա դարձնել դատական ակտերը: Սահմանադրական դատարանն իրավասու չէ նաեւ զնահատելու դատարանների կողմից քրեական պատժաչափերի կիրառման համաչափությունը, քանի որ չի կարող գնահատել կոնկրետ քրեական գործերի փաստական հանգամանքները, որոնք առիթ են տվել կիրառելու այս կամ այն պատժաչափը: Այսուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածով նախատեսված դրույթների, ինչպես նաեւ իր՝ 09.04.2007թ. ՄԴՈ-690 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում արձանագրում է, որ սույն գործին առնչվող հարցով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 04.05.2008թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ պարզապես նշելով, որ «Գործի նյութերի ուսումնասիրությունից երեւում է, որ չկան հիմքեր եզրակացնելու, որ բողոքներում բարձրացված հարցերի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունե-

նալ օրենքի միատեսակ կիրառության համար...»: Մինչդեռ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները վկայում են, որ տվյալ գործի շրջանակներում ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի եւ ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի պաշտոնական մեկնաբանումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից էական նշանակություն կարող էր ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Առավել էւս, երբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007թ. սեպտեմբերի 25-ի դատավճռում ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իրավական բովանդակության որեւէ մեկնաբանում չի տրվել, իսկ դատական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր տվյալ նորմի կիրառման պրակտիկա փաստորեն չի ձեւավորվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 301 հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**14 հոկտեմբերի 2008 թվականի
ՍԳՈ- 766**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՇՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.1 ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պոդոյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Մ. Հարությունյանի ներկայացուցիչ Հ. Ալումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Միշա Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Մ. Հարությունյանի՝ 24.07.2008թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 14.12.04թ. ՀՕ-57-Ն ՀՀ օրենքի 2 եւ 3 հոդվածներով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացվել էր համապատաս-

խանաբար 408.1 եւ 410.1 հողվածներով, որոնք սահմանում էին նոր հանգամանքների հետեւանքով գործերի նորոգման հիմքերը եւ վարույթ հարուցելու կարգը: Միաժամանակ, «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 25.05.06թ. ՀՕ-91-Ն ՀՀ օրենքով որպէս վճռաբեկ բողոք բերելու հիմք, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406 հոդվածում ամրագրվել էին նաեւ նոր հանգամանքները: «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.07թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքի 70 հոդվածով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված 408.1 եւ 410.1 հոդվածները, ի թիվս այլոց, ուժը կորցրած են ճանաչվել, եւ նշված օրենքի 81 հոդվածով օրենսգիրքը լրացվել է «Դատական ակտերի վերանայումը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով» վերտառությամբ բաժին 12.1-ով՝ սահմանելով նոր հանգամանքների եւ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման նոր իրավակարգավորում: Նույն օրենքով նաեւ փոփոխություն է կատարվել քրեական դատավարության օրենսգրքի 406 հոդվածում, որի արդյունքում նոր հանգամանքները դադարել են որպէս վճռաբեկ բողոքի հիմք հանդիսանալուց:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից 19.06.2002թ. կայացված դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 99 հոդվածի 2-րդ կետով եւ դատապարտվել ազատազրկման 10 տարի ժամկետով: Դատավճիռը բողոքարկվել է ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարան: Վերջինս 01.04.2003թ. դատավճռով առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ: Դիմողի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատն իր՝ 08.05.2003թ. որոշմամբ վերաքննիչ դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

Ներպետական պաշտպանության միջոցներն սպառելուց հետո դիմողն իր իրավունքների պաշտպանությամբ դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան. վերջինս իր՝ 28.06.2007թ. վճռով ճանաչել է, որ դիմողի նկատմամբ քրեական գործի քննության ընթացքում Հայաստանի Հանրապետությունը խախտել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը: 25.12.2007թ. դիմողը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան, խնդրելով նոր հանգամանքի՝ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա հարուցել վերանայման վարույթ, վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատի 08.05.2003թ. որոշումը, բեկանել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 19.06.2002թ. դատավճիռը, ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 01.04.2003թ. դատավճիռը: Վճռաբեկ դատարանն իր՝ 21.01.2008թ. որոշմամբ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածով, ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը նոր հան-

գամանքներով վերանայելու վերաբերյալ դիմողի դիմումը փոխանցել է Հարավային քրեական դատարան: Վերջինս 28.02.2008թ. որոշում է կայացրել նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին, իսկ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին 05.03.2008թ. որոշմամբ որոշել է «Դատական ակտը նոր հանգամանքներով վերանայման վարույթ հարուցելու՝ Միշա Էդիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քր. օր. 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով քրեական գործով նշանակել դատական քննություն...»:

2008թ. մարտի 14-ին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը, պարզաբանելով կողմերի իրավունքները, հայտարարել է, որ վերաքննիչ դատարանի կողմից Մ. Հարությունյանի նկատմամբ 01.04.2003թ. դատավճիռը, ինչպես նաև՝ այդ դատավճռի դեմ բերված վճռաբեկ բողոքները մերժելու եւ դատավճիռն անփոփոխ թողնելու մասին վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը գտնվում են ուժի մեջ: Դատարանը պարզաբանել է նաև, որ Մ. Հարությունյանն ունի ամբաստանյալի կարգավիճակ, եւ Հարավային քրեական դատարանը քննում է քրեական գործն ըստ մեղադրանքի Մ. Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով:

3. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածի, 426.8 հոդվածի 1-ին մասի եւ 426.9 հոդվածի դրույթների սահմանադրականությունը, դիմողը գտնում է, որ այդ նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասին, 6 հոդվածի 4-րդ մասին, 18 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերին, 19 հոդվածի 1-ին մասին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող հոդվածներում ամրագրված դրույթները հնարավորություն չեն տալիս անձին վերականգնելու իր խախտված իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան: Ըստ նրա՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայմանը վերաբերող նորմերը պետք է նախատեսեն դատական ակտերի վերանայման այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կընձեռեր լիարժեքորեն վերականգնել խախտված իրավունքները եւ ազատությունները: Տվյալ դեպքում, Եվրոպական դատարանի կայացրած վճռի հիման վրա իր խախտված իրավունքը լիարժեքորեն վերականգնելու միջոցը դիմողը համարում է իր նկատմամբ կայացված դատական ակտերի՝ առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճռի, վերաքննիչ դատարանի մեղադրական դատավճռի եւ այդ դատավճիռներն անփոփոխ թողնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման վերանայումը:

Մինչդեռ, ըստ վիճարկվող դրույթների, ինքը գրկված է վճռաբեկ դատարանում վերջինիս որոշման վերանայմանը եւ առաջին ատյանի դատարանի ու վերաքննիչ քրեական դատարանի մեղադրական դատավճիռների բեկանմանը հասնելու հնարավորությունից: Նույնիսկ այն դեպքում, երբ Հարավային քրեական դատարանը վերանայի Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը, միեւնույն է, իր խախտված իրավունքը չի վերականգնվի, քանի որ օրինական ուժի մեջ կմնան վերաքննիչ դատարանի դա-

տավճիռն ու վճռաբեկ դատարանի որոշումը: Վերջիններս Հարավային քրեական դատարանի կողմից բոլոր դեպքերում վերանայվել չեն կարող: Ուստի, դիմողը եզրակացնում է, որ վիճարկվող հողվածներով նախատեսված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ընթացակարգն անձի խախտված իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց չէ:

Դիմողը գտնում է նաև, որ առաջին ատյանի դատարանի կողմից դատական ակտի վերանայումն այնպիսի պայմաններում, երբ շարունակում են ուժի մեջ մնալ վերաքննիչ քրեական դատարանի մեղադրական դատավճիռը եւ վճռաբեկ դատարանի որոշումը, խախտում է նաև կողմերի հավասարության սկզբունքը:

4. Պատասխանողի ներկայացուցչի պնդմամբ՝ նոր եւ նոր երեսան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման նորովի կարգավորումը, վճռաբեկ դատարանին նոր եւ նոր երեսան եկած հանգամանքներով գործի նորոգման գործառույթից ազատելը պայմանավորված է ՀՀ վճռաբեկ դատարանի նոր սահմանադրաիրավական կարգավիճակով, որը պահանջում է այդ դատարանին վերապահել այնպիսի լիազորություններ, որոնք ուղղակիորեն կբխեն նրա կարգավիճակից եւ ուղղված կլինեն վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի կենսագործմանը:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը որեւէ կերպ չի կարելի դիտարկել որպես նոր եւ նոր երեսան եկած հանգամանքներով գործը վերանայելու իրավունքի, արդար դատաքննության իրավունքի սահմանափակում: Ավելին, գործող դատական համակարգի պայմաններում այս իրավունքների սահմանափակում կդիտվեր նոր եւ նոր երեսան եկած հանգամանքներով քննության վերապահումը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանին, քանի որ գործող վերաքննության կամ վճռաբեկության պայմաններում չէր կարելի գործի ամբողջ ծավալով եւ ըստ էության քննություն ակնկալել: Մինչդեռ առկա կարգավորման պայմաններում ողջ ծավալով ապահովվում է նաև դատական ակտերի վերանայման իրավունքը:

Պատասխանողը միաժամանակ ընդունում է, որ նոր եւ նոր երեսան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը դրա կատարելագործմանն ուղղված հետագա լրամշակում է պահանջում, որի արդյունքում այն կվերածվի մարդու իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմի: Պատասխանողը վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 09.09.2008թ. ՄԳՌ- 758 որոշումը՝ նշում է, որ օրենսդրական առկա կարգավորման պայմաններում ի հայտ եկած հակասությունների, իրավական բացերի, անհամապատասխանությունների շտկումն անհրաժեշտ է իրականացնել ամբողջ դատական համակարգի կազմակերպման եւ գործունեության համատեքստում՝ հաշվի առնելով ինչպես դատական կոնկրետ ատյանի դերն ու լիազորությունները, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները:

Ըստ պատասխանողի՝ «Նշված անհամապատասխանություններով հանդերձ, սակայն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը չի խախտում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու իրավունքներն ու ազատությունները»:

5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 426.1 հոդվածը սահմանում է.

«Դատական ակտը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայում է դատական ակտ կայացրած այն առաջին ատյանի դատարանը, որը քննել է համապատասխան գործը կամ նյութը»:

Օրենսգրքի 426.8 հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Դատական ակտը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով համապատասխան առաջին ատյանի դատարանը վերանայում է վերանայման վարույթ հարուցելու մասին որոշման հիման վրա»:

Օրենսգրքի 426.9 հոդվածը սահմանում է.

«1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ համապատասխանաբար վճռաբեկ դատարան»:

6. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի՝ 30.07.2008թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունվել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածի կապակցությամբ:

Դիմումի քննության արդյունքներով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև վիճարկվող դրույթում համապատասխան իրավակարգավորումը վերաբերում է զուգահեռաբար եւ՝ նոր երեւան եկած, եւ՝ նոր հանգամանքներին, այնուամենայնիվ, քննությունը պետք է վերաբերի դրա սահմանադրականությանը միայն այն մասով, որով դա վերաբերում է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայմանը, քանզի դիմողի նկատմամբ այդ դրույթները կիրառվել են միայն այդ մասով, եւ դիմողը նշված հոդվածների սահմանադրականությունը վիճարկում է միայն նոր հանգամանքների հիմքով դատական ակտերը վերանայելու առնչությամբ, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանը որոշումներ ընդունում է միայն դիմումում նշված առարկայի վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում պարզել նաեւ վիճարկվող դրույթի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ օրենսգրքի 426.8 հոդվածի սահմանադրականության հարցը:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԳՈ-758 որոշմամբ լուծել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող համապատասխան հոդվածների սահմանադրականության հարցը, սահմանադրական դատարանն անհ-

րաժեշտ է համարում համեմատական վերլուծություն կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սահմանադրական դատարանի նշված որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված այդ հոդվածների եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող՝ խնդրո առարկա դրույթների միջեւ:

Համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավարական երկու օրենսգրքերում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորման մեջ ընդհանրությունները հանգում են հետեւյալին.

- ինչպես քաղաքացիական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության շրջանակներում նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի միայն համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը,
- վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները նշված հիմքերով դատական ակտերի վերանայման իրավասությամբ օժտված չեն,
- ինչպես քաղաքացիական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության շրջանակներում նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերը,
- վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նշված հիմքերով վերանայման ենթակա չեն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների բովանդակային մեկնաբանությունը հնարավորություն էր տալիս պարզելու, որ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաեւ միջանկյալ դատական ակտերը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պարագայում նման մեկնաբանության հնարավորությունը բացակայում է:

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի համաձայն՝ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան: Ելնելով նշված հոդվածի պահանջից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճարկվող դրույթի կիրառման պրակտիկային:

Այսպես, դիմող Մ. Հարությունյանը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 410.1 հոդվածի հիման վրա նոր հանգամանքի հետեւանքով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը վերանայելու համար: Ի պատասխան այդ դիմումի՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2008թ. հունվարի 21-ին կայացրել է վճռաբեկ բողոքը Հարավային քրեական դատարան փոխանցելու մասին որոշում: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ դատական եւ դատավարական օրենսգրքե-

րի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները, ինչպիսին հանդիսանում է Հարավային քրեական դատարանը, վճռաբեկ գործառույթով օժտված չեն, հետևաբար, չունեն նաև վճռաբեկ բողոքի քննության իրավասություն: Չնայած նշված հանգամանքին՝ վճռաբեկ դատարանի 2008թ. հունվարի 21-ի որոշմանը հետևել է Հարավային քրեական դատարանի 2008թ. փետրվարի 28-ի որոշումը, որով վարույթ է ընդունվել քրեական գործն ըստ մեղադրանքի Մ. Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով: 2008թ. մարտի 5-ին Հարավային քրեական դատարանը կայացրել է քրեական գործը դատական քննության նշանակելու մասին որոշում: Դատարանը որոշել է. «Դատական ակտը նոր հանգամանքներով վերանայման վարույթ հարուցելու՝ Միշա Էդիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քր. օր. 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով քրեական գործով նշանակել դատական քննություն...»:

Դիմողը սահմանադրական դատարան ներկայացված իր դիմումում, ինչպես նշվեց, մասնավորապես նշում է. «14.03.2008թ. տեղի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը, պարզաբանելով կողմերի իրավունքները, հայտարարել է, որ վերաքննիչ դատարանի կողմից Միշա Հարությունյանի նկատմամբ 01.04.2003թ. դատավճիռը, ինչպես նաև՝ այդ դատավճռի դեմ բերված վճռաբեկ բողոքները մերժելու եւ դատավճիռն անփոփոխ թողնելու մասին վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը գտնվում են ուժի մեջ»:

Վերոհիշյալից բխում է, որ դիմողի դիմումի հիման վրա Հարավային քրեական դատարանում հարուցված վարույթի շրջանակներում վերանայվում է ոչ թե վճռաբեկ դատարանի որոշումը, այլ առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քանզի վճռաբեկ դատարանի որոշումը վերանայելու իրավասությամբ առաջին ատյանի դատարանն օժտված չէ. այլապես կառաջանար մեկ այլ անընդունելի իրավիճակ, երբ ստորին ատյանի դատարանը վերանայում է վերադաս դատարանի ակտը:

Ավելին, գործի հանգամանքները, մասնավորապես, Հարավային քրեական դատարանի 2008թ. փետրվարի 28-ի որոշումը, 2008թ. մարտի 5-ի որոշումը, դիմումում նշված՝ Հարավային քրեական դատարանում դիմողի գործով 14.03.2008թ. նիստում նախագահող դատավորի վերոհիշյալ հայտարարությունը, վկայում են, որ Հարավային քրեական դատարանն առաջին ատյանի դատարանի դատավճիռը վերանայում է քրեական գործն ըստ մեղադրանքի Մ. Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, կրկին քննության առնելու միջոցով: Հարկ է նկատել նաև, որ այդ վարույթում դիմողը դատարանում հանդես է գալիս ամբաստանյալի կարգավիճակով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մման մոտեցման դեպքում խախտվում է քրեական դատավարության իրավունքի այնպիսի կարեւորագույն սահմանադրական սկզբունք, ինչպիսին է *ne bis in idem* (միեւնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության մերժում) սկզբունքը:

Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում դրույթ, որն ուղղակիորեն կբացառեր նոր հանգամանքներով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների ակտերի վերանայման հնարավորությունը, այնուամենայնիվ, հաշվի առնելով առկա դատական պրակտիկան, այն հանգամանքը, որ առա-

ջին ատյանի դատարաններն օժտված չեն վերադաս դատարանի ակտը վերանայելու իրավասությամբ, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ առաջին ատյանի դատարանի կողմից վերադաս դատարանի դատական ակտի վերանայումն անթույլատրելի է՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի խնդրո առարկա հոդվածներով՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավակարգավորման առաձևահատկությունները (ինչպես քաղաքացիական դատավարության դեպքում) հանգում են նրան, որ փաստորեն վերանայման ենթակա է միայն առաջին ատյանի դատարանի ակտը եւ միայն առաջին ատյանի դատարանի կողմից:

9. Հաշվի առնելով վերոհիշյալ համեմատական վերլուծության եւ համապատասխան դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ըստ էության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումն իր հիմնական տրամաբանությամբ, առանձնահատկություններով եւ մոտեցումներով համարժեք է այն իրավակարգավորմանը, որը սահմանված էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներով: Ուստի սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հենվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող համապատասխան հոդվածների սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի՝ 09.09.2008թ. ՍԴՈ-758 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումների վրա եւ գտնում է, որ այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես վերաբերում են նաև քրեական դատավարության օրենսգրքի 426.1 եւ 426.8 հոդվածներին:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, մատնանշել ՍԴՈ-758 որոշման մեջ արտահայտված այն սկզբունքային նշանակության իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ատյանների ակտերի վերանայման հնարավորությունը, բացառելով ստորադաս ատյանի դատարանի կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում հավելել, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիարժեք եւ արդյունավետ համակարգի առկայությունն է՛լ ավելի է կարեւորվում քրեական դատավարության շրջանակներում, քանզի քրեական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն, մասնավորապես՝ հաշվի առնելով անձի

նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայության հանգամանքը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն առավել ապահովված կլինեն այն դեպքում, երբ նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու վարույթը հարուցում է այն դատարանը, որը վերջնական դատական ակտ է կայացրել տվյալ քրեական գործով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 հոդվածը եւ 426.8 հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր՝ այնքանով, որքանով դրանք վերաբերում են նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավասությունը միայն առաջին ատյանի դատարաններին վերապահելուն եւ առնչվում են միայն վերջիններիս կողմից կայացրած դատական ակտերին:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**21 հոկտեմբերի 2008 թվականի
ՍԳՈ-767**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄ ՇՄԱՎՈՆՅԱՆԻ ԳԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱՎ
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ,
«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
26-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ ՄԱՍԻ, «ԱՎԵԼԱՅՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2-ՐԳ
ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ, ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 115-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ ԵՎ 118-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ա. Շմավոնյանի ներկայացուցիչ Գ. Դավթյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արամ Շմավոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի եւ 118-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Շմավոնյանի՝ 19.05.2008թ. դիմումն է սահմանադրական դատարան: Գործի դատաքննությունը երկու անգամ հետաձգվել է՝ մի դեպքում լրացուցիչ նյութեր ուսումնասիրելու նպատակով (16.09.2008թ.), մյուս դեպքում՝ պատասխանող կողմի միջնորդության հիման վրա (18.11.2008թ.):

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա օրենսգրքերն ու օրենքները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. հուլիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997թ. մայիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 1997թ. մայիսի 30-ից:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. մայիսի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997թ. հունիսի 16-ին եւ ուժի մեջ է մտել 1997թ. հուլիսի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008թ. հունվարի 1-ից:

2. Ըստ գործի դատավարական նախապատմության՝ ՀՀ հարկային մարմինները դիմողին տուգանել են՝ առանց պետական գրանցման եւ համապատասխան լիցենզիայի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար: Տուգանք նշանակած՝ հարկային մարմնի համապատասխան ակտը դիմողի կողմից վիճարկվել է ՀՀ վարչական դատարանում: Վարչական դատարանն իր՝ 2008թ. մարտի 6-ի վճռով մերժել է ՀՀ կատավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Արտաշատի տարածքային հարկային տեսչության՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ Արտաշատի ՏՀՏ-ի՝ 11.09.2007թ. ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին դիմողի հայցը: Վերջինս վարչական դատարանի վճիռը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան, որը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231, 233 եւ 234-րդ հոդվածներով, իր՝ 2008թ. ապրիլի 7-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողն ի սկզբանե վիճարկել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերի, 4-րդ կետի 3-րդ ենթակետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115 եւ 118-րդ հոդվածների սահմանադրականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմն իր՝ 03.06.2008թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի եւ 118-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ:

4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում է. «Չեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է. «Հարկային օրենսդրության կիրառման առումով ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների անձնական գույքի (ներառյալ նաև անշարժ) եւ իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Չեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որեւէ ձեռով կատարվող հատուցման դիմաց»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ սույն օրենսգրքով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգի, հիմքերի եւ գործերի վարույթը վճռաբեկ դատարանում իրականացնելու վրա (mutatis mutandis) տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը»:

5. Դիմողը, վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին, 2-րդ, 33.1. հոդվածի 1-ին մասերին, 34 հոդվածին, 42 հոդվածի 2-րդ մասին, 45 հոդվածին, 8 հոդվածին եւ 98 հոդվածի 1-ին մասին, գտնում է, որ վիճարկվող դրույթներում ձեռնարկատիրական գործունեության սահմանումը, դրանում օգտագործվող առանձին հասկացությունների անորոշությունը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս, քանի որ չեն բացառում ցանկացած անձի գործունեությունն ինչպես ձեռնարկատիրական, այնպես էլ ոչ ձեռնարկատիրական համարելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասության առնչությամբ դիմողը փաստարկում է, որ, ի տարբերություն ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված մյուս՝ քաղաքացիական եւ քրեական դատարանների, վարչական դատարանների ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից եւ բողոքարկման են ենթակա միայն վճռաբեկության կարգով, ինչի արդյունքում, ի խախտումն ՀՀ

Սահմանադրության 14.1. հոդվածի, խտրական վերաբերմունք է դրսևորվում անձանց միջև: Դիմողը փաստարկում է նաև, որ առկա է հակասություն նաև վարչական դատավարության օրենսգրքի 115 եւ 118-րդ հոդվածների ու ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի միջև: Այս կապակցությամբ դիմողը, մասնավորապես, պնդում է, որ. «Եթե վարչական դատարանը համարվում է առաջին ատյանի դատարան, ապա ելնելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածից, այն պետք է լինի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան...»:

6. Պատասխանող կողմն ընդունելով, որ ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ` ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով տրված օրինադրույթը բովանդակում է տվյալ գործունեությունը բնութագրող սահմանափակ հատկանիշներ, ինչի արդյունքում դրա մեկնաբանությունը չի կարող ամբողջությամբ բացահայտել «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթի էությունը, միաժամանակ գտնում է, որ ձեռնարկատիրական գործունեության մասին դրույթը համակարգային առումով անհրաժեշտ է վերլուծել նաև հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ արտացոլված դրույթների շրջանակում: Մասնավորապես, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասից եւ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածից հետեւում է, որ անձի կողմից իրականացվող գործունեության բնույթը որոշելիս օրենսդիրը հստակեցրել է ձեռնարկատիրական գործունեության եւ տնտեսական գործունեության հարաբերակցության սահմանները, ինչպես նաև սահմանել է տնտեսական գործունեությունը բնութագրող պարտադիր հատկանիշները, որոնց առկայությունը բավարար հիմք կարող է համարվել հարկ վճարողին հարկային պարտավորություններ առաջադրելու համար:

Ինչ վերաբերում է «անձնական գույք» հասկացության բովանդակությանը, ապա այս կապակցությամբ ըստ պատասխանողի ներկայացուցչի` «սեփականության իրավունքով պատկանող» կամ «սեփական» գույքից «անձնական գույքի» տարբերակումը կարող է դրսևորվել անձի կողմից անձնական կարիքների համար տվյալ գույքի անմիջականորեն եւ անհատապես օգտագործման միջոցով, ինչը բխում է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ, 42-րդ եւ 45-րդ հոդվածների պահանջներից:

Վարչական դատավարության օրենսգրքի` դիմողի կողմից վիճարկվող դրույթների կապակցությամբ պատասխանողի ներկայացուցչի ճշում է, որ խտրականության դրսևորում առկա չէ, քանզի ինչպես նախկին, այնպես էլ գործող օրենսդրության մեջ կան նախադեպեր, երբ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործի շրջանակներում էական է, նախ` «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը: ՀՀ Սահմանադրության 33.1. հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով

չարգելված ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունք»։ Այս ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու անձի սահմանադրական իրավունքն է, եւ որ այդ գործունեության բովանդակությունը (հատկանիշները), իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման։ Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի համաձայն երաշխավորվում է տնտեսական գործունեության ազատությունը, սակայն այդպիսի գործունեության հասկացության նորմատիվ-իրավական բնորոշումը (հատկանիշները) ընթացիկ օրենսդրությանը լիարժեք չի հստակեցված։ Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որեւէ ձեռով կատարվող հատուցման դիմաց («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս)։ Ձեռնարկատիրական գործունեության, որպես տնտեսական առանձին գործունեության, բովանդակության իրավական բնորոշումից բխում է, որ այն անձի՝ ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունն է, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է (ՀՀ քաղ. օրենսգրքի 2-րդ հոդված)։

ՀՀ օրենսդրության վերլուծությունը միաժամանակ վկայում է, որ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակությունը բացահայտված է նաեւ «Հարկերի մասին» ՀՀ օրենքում (26-րդ հոդված)։

Նշված օրենքներում «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության վերաբերյալ դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ այդ հասկացությունն ունի հետևյալ հատկանիշները.

- հանդիսանում է տնտեսական գործունեություն,
- հետապնդում է շահույթ (եկամուտ) ստանալու նպատակ,
- իրականացվում է ինքնուրույն եւ իր ռիսկով,
- իրականացվում է որեւէ ձեռով կատարվող հատուցման դիմաց,
- ենթակա է պետական գրանցման (առանձին դեպքերում՝ նաեւ լիցենզավորման),
- չի ներառում քաղաքացիների անձնական գույքի (ներառյալ նաեւ անշարժ) եւ իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- իրականացվում է պարբերաբար։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը հնարավորինս ամրագրել է «ձեռնարկատիրական գործունեությունը» բնութագրող նվազագույն հատկանիշները՝ չբացառելով լրացուցիչ հատկանիշների ներառումը։ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներից է բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության հիմնական բնորոշման եւ այլ օրենքներում այդպիսի գործունեության առանձնահատկությունների բացահայտման իրողությունը։ Սակայն նույնպիսի մոտեցում «տնտեսական գործունեություն» հասկացության բնորոշման առնչությամբ չի դրսևորված։

Միաժամանակ, օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ

չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության եւ դրան բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, գործելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իր սահմանադրաիրավական գործառույթի, այն է՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի եւ այդ գործառույթն իրականացնելիս՝ իրավունքի զարգացմանը նպաստելու իրավասության շրջանակներում, իր թիվ 3-1161 (ՏԴ) որոշման մեջ մեկնաբանել է խնդրո առարկա հասկացության օրենսդրական բովանդակությունը՝ ըստ էության որոշակիացնելով դրա հատկանիշների շրջանակը: ՀՀ վճռաբեկ դատարանի նշված որոշման միջոցով ՀՀ օրենսդրության մեջ, մասնավորապես, դիմողի կողմից վիճարկվող օրենքների համապատասխան դրույթներում, «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացությունը միատեսակ կիրառման առումով ավելի ամբողջական եւ լիարժեք բնույթ է ստացել՝ հնարավորություն տալով համապատասխան տնտեսավարող սուբյեկտներին կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետեւանքները:

Ընդ որում, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն. «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի ... դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ ...»:

ՀՀ դատական օրենսգրքի նշված դրույթին համահունչ՝ դիմողի նկատմամբ կայացված՝ ՀՀ վարչական դատարանի 2008թ. մարտի 6-ի վճռում վարչական դատարանը դիմողի գործունեությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն գնահատելիս առաջնորդվել է ոչ միայն վիճարկվող օրենքների դրույթներով, այլ նաև վճռաբեկ դատարանի կողմից վերոհիշյալ որոշմամբ ձեռնարկատիրական գործունեության հասկացության մեկնաբանմամբ:

Ինչ վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում «պարբերաբար» բառի իրավական անորոշությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ այս բառի բովանդակությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Բացի դրանից, «գործունեություն» հասկացությունն ինքնին ենթադրում է գործողությունների շարունակական իրականացում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունն առանձին երկրների օրենսդրական պրակտիկայում նկարագրվում է նաև թվային չափանիշների միջոցով: Սակայն նման մոտեցումն ունի նաև իր բարդությունները: ՀՀ օրենսդրության մեջ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունը թվային չափանիշների միջոցով արտահայ-

տելը կատեղծի մի իրավիճակ, երբ, կախված գործի առանձնահատկություններից ու կոնկրետ հանգամանքներից, միեւնույն թվաքանակով իրականացված գործարքները մի դեպքում կարող են համարվել ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում կատարված, մյուս դեպքում՝ ոչ:

Վիճարկվող օրենսդրական դրույթների եւ դրանց իրավակիրառական պրակտիկայի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանց բովանդակությունն այնպիսին է, որ հիմնականում չի առաջացնում իրավական անորոշություն, եւ դրանք իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս իրավասուբյեկտին կանխատեսելու իր վարքագծի իրավական հետեւանքները: Այսուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովը, հաշվի առնելով նաեւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները, պետք է դատական պրակտիկան հաշվի առնելով առավել հստակություն մտցնի «ձեռնարկատիրական գործունեության» եւ «տնտեսական գործունեության» հասկացությունների՝ հատկապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առավել ամբողջական եւ միասնական օրենսդրական ձեւակերպման հարցում, հնարավորինս բացառելով տարաբնույթ մեկնաբանություններն ու կոռուպցիոն ռիսկը:

8. ՀՀ Սահմանադրության 33.1. հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունքը: Այդ իրավունքը ներառում է բոլոր իրավական հնարավորությունները, որոնք անհատի համար նախապայմաններ են ստեղծում ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու իր տնտեսական գործունեությանն առնչվող հարցերով: Այդ իրավունքը ենթադրում է արդարացի նրջակցության ազատություն, առանց սահմանափակումների տնտեսական կազմակերպություններ ձեւավորելու, իր գործունեության բնույթն ու ձեւը փոխելու, գոյություն ունեցող տնտեսական կազմակերպությունները լուծարելու, պայմանագրեր կնքելու հնարավորություններ: Ձեռնարկատիրական գործունեության իրավունքի անբաժանելի բաղադրատարրն է կազմում նաեւ ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու ցանկություն ունեցող անձի՝ առանց արհեստական խոչընդոտների շուկա մտնելու եւ, ցանկության դեպքում, այդ շուկայից դուրս գալու հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի պահանջները, որեւէ կերպ չեն կարող խոչընդոտել ձեռնարկատիրական գործունեության սահմանադրական իրավունքի իրացմանը:

9. ՀՀ դատական օրենսգրքի հիման վրա վարչական դատարանի ստեղծմամբ եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում 2008թ. հունվարի 1-ից ներդրվեց մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտը: Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ վարչական դատարանը հանդիսանում է մասնագիտացված առաջին ատյանի դատարան, որն ըստ էության քննում է ՀՀ վարչա-

կան դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը: Ի տարբերություն ՀՀ դատական օրենսգրքով ստեղծված մյուս, այսպես կոչված, մասնագիտացված՝ քրեական եւ քաղաքացիական առաջին ատյանի դատարանների, վարչական դատարանի ակտերի բողոքարկման վերաքննիչ ատյան նախատեսված չէ. վարչական դատարանի ակտերը կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով:

Վարչական դատարանում վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով եւ ՀՀ դատական օրենսգրքով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ վարչական գործերով դատավարության կարգը վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում սահմանվում է նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությամբ կիրառելի են (“mutatis mutandis”) վարչական դատավարության նկատմամբ եւ չեն հակասում վարչական դատավարության օրենսգրքին եւ վարչական դատավարության էությանը:

Վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական դատավարության սկզբունքները: Առանձին սկզբունքներ էականորեն տարբերվում են քաղաքացիական դատավարության սկզբունքներից, մասնավորապես, օրենսգրքի 6-րդ հոդվածն ամրագրում է գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքը, որը վարչական դատավարությանը բնորոշ կարեւորագույն սկզբունքներից մեկն է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործի քննությունը եւ լուծումը վարչական դատարանում» վերտառությամբ 2-րդ բաժնի 11-19-րդ գլուխներում կանոնակարգվում է վարչական դատարանում գործի քննության կարգը. նշված գլուխներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումներին հղում է կատարվում միայն 88, 89, 98, 112 եւ 117-րդ հոդվածներում, որոնք համապատասխանաբար վերաբերում են հայցի ապահովման միջոցների կիրառմանը, գործի վարույթը վերսկսելուն, գործի քննությունը հետաձգելուն, դատական ակտի կայացմանը, դատական նիստի արձանագրմանը: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանում վարչական գործերի վարույթին վերաբերում է միայն 20-րդ գլուխը՝ բաղկացած միայն 118-րդ հոդվածից, որը վարչական դատարանի դատական ակտերի եւ՝ բողոքարկման կարգի, եւ՝ հիմքերի, եւ՝ գործերի վարույթը վճռաբեկ դատարանում իրականացնելու առնչությամբ հղում է կատարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ վարույթը կանոնակարգող նորմերին: Ընդ որում, հարկ է նկատել, որ նշված գլուխը ներառված է «Գործի քննությունը եւ լուծումը վարչական դատարանում» վերտառությամբ 2-րդ բաժնում: Փաստորեն, լուրջ վերապահությամբ պետք է մոտենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով նախատեսված նպատակի իրացմանը, համաձայն որի՝ «Սույն օրենսգիրքը սահմանում է վարչական դատարանում եւ վճռաբեկ դատարանում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դատական

պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը»:

Իրականում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի իրավական բովանդակությունն ու էությունը կայանում են նրանում, որ այդ նորմն ուղղակիորեն վարչական արդարադատության ոլորտի նկատմամբ տարածում է վճռաբեկ վարույթի այն բոլոր կանոնները, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Այսինքն՝ վճռաբեկ վարույթը կարգավորող՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը նույնակերպ վերարտադրվում են վարչական դատավարության օրենսգրքում: Ինչ վերաբերում է այդ նորմում «mutatis mutandis» վերապահման կիրառմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ վերապահումը որեւէ կերպ չի փոփոխում վարչական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի կամ պայմանների, վճռաբեկ դատարանում վարչական դատարանի դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքի քննության կարգը եւ այդ կապակցությամբ վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակը:

10. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ դիմողի կողմից վիճարկվող հոդվածների, ինչպես նաև 9, 119, 120, 121 եւ 122-րդ հոդվածների, ՀՀ դատական օրենսգրքի 35, 36 եւ 39-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքները վկայում են, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման իրավակարգավորմանը բնորոշ հիմնական տարրերն են.

- վարչական դատարանի ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից եւ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն,
- վարչական դատարանի ակտերը ենթակա են բողոքարկման միայն վճռաբեկության կարգով,
- վարչական դատարանի ակտերը, վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության բացակայության պայմաններում, վճռաբեկության կարգով կարող են բողոքարկվել այն նույն հիմքերով, որոնցով բողոքարկման են ենթակա նաև քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերը,
- վարչական դատարանի ակտի դեմ ուղղված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանները նույնն են, ինչ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների ընդունելիության պայմանները,
- վճռաբեկ դատարանը վարչական դատարանի ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը քննում է նույն սահմաններում եւ այդ կապակցությամբ իրացնում է նույն լիազորությունները, ինչ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերված բողոքների պարագայում,
- վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելու եւ գործը նոր քննության վերադարձ-

նելու դեպքում վարչական դատարանը հարուցում է գործի նոր քննության վարույթ՝ այդ մասին կայացնելով միջանկյալ ակտ:

11. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարել պարզել.

- արդյո՞ք վարչական դատարանի ակտերի բողոքարկման ներկա իրավակարգավորումն ունակ է ապահովելու վարչական արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը,
- արդյո՞ք վճռաբեկ դատարանում վարույթի առնչությամբ ընդհանուր հղումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի չորոշակիացված նորմերին՝ անգամ «mutatis mutandis» վերապահումով, համապատասխանում է օրենքի որոշակիության սկզբունքին,
- արդյո՞ք օրենսդրի տարբերակված մոտեցումն առաջին ատյանի տարբեր մասնագիտացված դատարանների հանդեպ իր հիմքում ունի որոշակի օբյեկտիվ արդարացում:

12. ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԳՈ-758 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածին, մասնավորապես նշել է, որ օրենսդիրն ազատ է մասնագիտացված դատարանների պարագայում սահմանելու վերաքննիչ ատյան: Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում Սահմանադրության 92 հոդվածի նշված մեկնաբանությունը դիտարկել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներում ամրագրված՝ դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքների համատեքստում: Այս սահմանադրական դրույթների համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդրի հայեցողությանն է թողնված վարչական արդարադատության շրջանակներում վերաքննիչ ատյանի ստեղծման հարցի լուծումը, այնուամենայնիվ, օրենսդիրն իր այս հայեցողությունն իրացնելիս պետք է առաջնորդվի մարդու եւ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների եւ ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ պաշտպանության եւ այդ իրավունքի կարեւոր բաղադրիչներից մեկի՝ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետետղականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծել են, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում եւս օգտվեն 6-րդ հոդվածով նախա-

տեսված երաշխիքներից: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ Եվրոպական դատարանի կողմից կիրառվող՝ Կոնվենցիայի մեկնաբանության կարեւորագույն սկզբունքներից մեկը՝ Կոնվենցիայի արդյունավետ մեկնաբանության սկզբունքն իր հերթին պահանջում է, որ յուրաքանչյուր իրավունք մեկնաբանվի եւ կիրառվի այնպես, որ դրանք լինեն ոչ թե տեսական կամ երեւակայական, այլ գործնական եւ արդյունավետ իրավունքներ: Այս սկզբունքային դիրքորոշումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտահայտված է Եվրոպական դատարանի բազմաթիվ վճիռներում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, իր հերթին, մեծապես կարեւորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը: Վերջինս իր 4-րդ (i) կետում ամրագրում է. «Վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, գոնե կարեւոր գործերում, ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ուղղակիորեն տրվում է վերադաս ատյանին»: Հանձնարարականը նաև ամրագրում է.

- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը եւ դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,
- դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ճանաչվի յուրաքանչյուր անդամ պետությունում:

Հանձնարարականի բացատրական հուշագրում մասնավորապես նշված է, որ ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները եւ բողոքարկման մարմնի իրավագործությունը, որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին: Վարչական վարույթում վերադաս դատական ատյանի ներգրավումն էական նշանակություն ունի վարչական նախադեպային իրավունքի հետեւողականությունն ապահովելու հարցում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեւեւ նշված հանձնարարականը չի ճշգրտում երկաստիճան վարույթի բաղկացուցիչ տարրերը՝ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանների միջեւ ընտրության հարցի լուծումը թողնելով անդամ պետությունների հայեցողությանը, այնուամենայնիվ, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հետեւողականորեն կիրառվող՝ իրավունքների արդյունավետ մեկնաբանության սկզբունքը, այնպես էլ հանձնարարականի նպատակն ու առարկան ուղղված են նրան, որ վարչական արդարադատության ոլորտում դատական երկաստիճան համակարգը լինի այնքան կենսունակ եւ արդյունավետ, որ կարողանա ապահովել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը եւ նվազագույնի հասցնի դատական սխալների հավանականությունը:

13. Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի վերոհիշյալ իրավական չափորոշիչները՝ քննության առարկա գործի շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիությամբ եւ դրա արդյունավետությամբ, մասնավորապես, վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ ատյանի մատչելիությամբ եւ արդյունավետությամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում վարչական արդարադատության ոլորտում վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ ատյանի մատչելիությունն ու արդյունավետությունն առաջին հերթին գնահատել վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի եւ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանների համատեքստում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի պարագայում, երբ վերաքննիչ վարույթը բացակայում է, այս գործոնն է՛լ ավելի որոշիչ եւ էական դերակատարում է ձեռք բերում ոչ միայն վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի, այլ նաեւ մասնագիտացված վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության եւ արդյունավետության ապահովման տեսանկյունից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը, հաշվի չառնելով վարչական արդարադատության, հանրային-իրավական վեճերի լուծման առանձնահատկությունները, քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգում կիրառվող՝ վճռաբեկության ինստիտուտի իրավակարգավորման բոլոր տարրերը, այդ թվում՝ նաեւ վճռաբեկ բողոքի հիմքերն ու ընդունելիության պայմանները, ինչպես նշվեց, տարածել է վարչական դատարանի ակտերի բողոքարկման վրա: Եթե վճռաբեկ բողոք բերելու՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերն ու բողոքի ընդունելիության պայմանները, պայմանավորված վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական գործառույթներով, եռաստիճան համակարգում իրավաչափ են ու ողջամիտ, ինչպես դա ընդունել է սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ, ապա երկաստիճան համակարգի պարագայում նշված գործոնները բողոքարկման միակ՝ վճռաբեկ ատյանի մատչելիությունը եւ արդյունավետությունը սահմանափակում են այնքան, որ խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը՝ բացասաբար անդրադառնալով նաեւ վարչական արդարադատության համակարգի կենսունակ գործունեության վրա:

Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաքննիչ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ այն նույն հիմքերի եւ ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչական դատա-

րանի ակտը վճարել դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ՝ վճարել բողոքի թույլատրելիության հիմքերը, ինչպես նաև վճարել վարույթի կարգն այդ գործերով, պետք է սահմանվեն վարչական դատավարության օրենսգրքով՝ հղումներ պարունակելով այլ օրենքներին միայն այն դեպքերում, երբ դրանք դուրս չեն գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից: Նման մոտեցումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի եւ 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը ոչ միայն սահմանափակում է վճարել դատարանի մատչելիության իրավունքը, այլ նաև չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող հստակության, ճշգրտության եւ կանխատեսելիության որակները:

Միաժամանակ, ընդունելով, որ ՀՀ դատական օրենսգրքով ստեղծված տարբեր մասնագիտացված առաջին ատյանի դատարանների միջև՝ վարչական դատարանի ակտերի վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելու առումով տարբերակված մոտեցումն իր հիմքում ունի որոշակի օբյեկտիվ արդարացում, այն է՝ վարչական դատարանի քննությանը ենթակա գործերի բնույթը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման տարբերակված մոտեցումը պահանջում է նաև տարբերակված մոտեցում վարչական ակտերի վճարելիության կարգով բողոքարկման իրավակարգավորումը սահմանելիս:

14. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի անարդյունավետությունը պայմանավորող գործոն է հանդիսանում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 115-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքն իրավական հիմք է հանդիսանում այդ ակտի կատարման, այդ թվում հարկադիր կատարման գործընթաց նախաձեռնելու համար: Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական թերթ տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում: Վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտերի դեմ վճարել բողոք բերելու համար օրենքով սահմանված է եռամսյա ժամկետ: Այսինքն՝ գործնականում հնարավոր է, որ մինչև վճարել բողոք բերելը վարչական դատարանի ակտն արդեն կատարված լինի: Նման պայմաններում վճարելիության կարգով բողոքարկումը կարող է դառնալ իմաստագուրկ եւ բացառել բողոքարկող կողմի համար անդառնալի բացասական հետեւանքները կանխելու հնարավորությունը՝ դրանով իսկ պայմանավորելով վճարել դատարանի՝ որպես բողոքարկման միակ ատյանի, անարդյունավետությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ իրավունքի գերակայության բաղադրատարրերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն իր հերթին ենթադրում է *res judicata* սկզբունքի հարգում: Վերջինս էլ նշանակում է, որ որեւէ կողմ իրավասու չէ պահանջել վերջնական եւ կատարման ենթակա վճռի վերանայում պարզապես գործը կրկին քննելու եւ վեճը նորից լուծելու նպատակով: Գործը վերանայելու՝ վերադաս դատարանի իրավասությունը պետք է իրականացվի դատական սխալները եւ արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու, այլ ոչ թե նոր քննություն սկսելու նպատակով: Վերջնական եւ կատարման ենթակա դատական ակտի վիճարկումը թույլատրելի է միայն էական եւ անհետաձգելի հանգամանքների դեպքում (տես, մասնավորապես, Ռ-յաբիխն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2003թ. հուլիսի 24-ի վճիռը):

Նշված իրավական դիրքորոշմանը համահունչ կարգավորում է նախատեսված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածում, որի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանների եւ քաղաքացիական դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը կարող է ընդունվել քննության այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաեւ խախտում է իրավական որոշակիության եւ անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստագրվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու եւ դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

Սահմանադրական դատարանը որպես վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության եւ արդյունավետության վրա ազդող գործոն է դիտարկում նաեւ այն հանգամանքը, որ ի տարբերություն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի որոշման, վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշումը բողոքարկելու հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ: Այսինքն՝ այն դեպ-

քում, երբ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, անձը գրկված լինելով այն բողոքարկելու հնարավորությունից, ըստ էության ոչ միայն գրկվում է նման որոշման դեմ պաշտպանության միջոցից, այլ նաև նրա գործի քննությունը փաստացիորեն սահմանափակվում է միայն առաջին ատյանի դատարանի շրջանակներում:

15. Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԳՌ-765 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն դրույթները, որոնք թույլ էին տալիս վճռաբեկ բողոք ներկայացնել միայն վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված որոշման եզրափակիչ մասի 7-րդ կետի ուժով այդ դրույթները ժամանակավորապես պահպանում են իրենց ուժը, սահմանադրական դատարանը որպես վարչական գործերով վճռաբեկ ատյանի մատչելիությունը պայմանավորող գործոն է համարում նաև վարչական արդարադատության երկաստիճան համակարգում բողոքարկման միակ ատյան դիմելու համար հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելու պարտադիր պահանջը: Նման պահանջի առկայությունը երկաստիճան դատական համակարգում էլ ավելի է խաթարում դատական պաշտպանության արդյունավետ իրավունքի էությունը, քանզի, եթե եռաստիճան համակարգում անձը վերաքննիչ ատյանում օգտվում է անմիջական բողոքարկման հնարավորությունից, ապա վարչական արդարադատության ոլորտում անմիջական բողոքարկման հնարավորությունն ամբողջովին բացակայում է:

16. Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը եւ լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, եւ այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետեւաբար, այդ ինստիտուտի բնականոն եւ լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ դատարանի

մատչելիությամբ եւ արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարեւոր հանգամանք է նաեւ վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսեւորումը: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ դատարանում կարող է ունենալ երկու հիմնական դրսեւորում, այն է՝ գործերի քննությունը մասնագիտացված առանձին միավորի կողմից, եւ երկրորդ՝ գործերի քննության կազմակերպումը վարչական արդարադատության առանձնահատկություններին համապատասխան: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության կապակցությամբ մասնագիտացման գործոնի նշված երկու դրսեւորումներն էլ որեւէ կերպ արտահայտված չեն:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածը, մատնանշելով ՀՀ վճռաբեկ դատարանի պալատները եւ ընդհանուր գծերով սահմանելով ՀՀ վճռաբեկ դատարանի ներքին կառուցվածքը, կատարել է ոչ միայն կառուցվածքային, այլ նաեւ գործառութային տարանջատում: Վճռաբեկ դատարանի ներքին կառուցվածքի կանխորոշումը սահմանադրի կողմից՝ այդ դատարանի պալատների առանձնացումը, նշանակում է այդ պալատներից յուրաքանչյուրին արդարադատություն իրականացնելու հատուկ լիազորության տրամադրում: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգիրքը (հոդվածներ 18 եւ 53), հաշվի չառնելով այդ հանգամանքը, վճռաբեկ դատարանի պալատների լիազորություններն ու գործառույթը սահմանափակել է միայն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցի լուծմամբ: Վճռաբեկ դատարանը բողոքի կապակցությամբ ըստ էության որոշում է կայացնում լիազումար կազմով, որտեղ պալատը հանդես չի գալիս որպես մասնագիտացված միավոր. վարչական դատարանի ակտերի դեմ բերված բողոքների առնչությամբ ըստ էության որոշումներն ընդունվում են քրեական պալատի եւ քաղաքացիական ու վարչական պալատների դատավորների մասնակցությամբ: Նման պայմաններում, վճռաբեկ դատարանում վարչական գործերով արդարադատությունը զրկվում է իր առարկայական բնույթից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ: Սահմանադրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն ունենա լիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող եւ լուծող մասնագիտացված համապատասխան պալատ: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ վարույթում բացակայելու արդյունքում վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետեւաբար նաեւ՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ խաթարվում է եւ զրկվում արդյունավետությունից:

17. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտի անկատարությունը կայանում է ոչ միայն նրանում, որ մասնագիտացման գործոնը որեւէ դրսեւորում չի ունեցել վարչական դատարանի ակտերի բողոքարկման ատյա-

նում: Համակարգային անկատարությունը դրսևորվում է նաեւ օրենսգրքի 135-րդ հոդվածում:

ՀՀ Սահմանադրությունը տարբերակում է սահմանադրական եւ ընդհանուր արդարադատության գործառույթները՝ սահմանադրական արդարադատության գործառույթը 93-րդ հոդվածով ուղղակիորեն վերապահելով սահմանադրական դատարանին: Սահմանադրությամբ նախանշված նման տարանջատումը սահմանադրական եւ ընդհանուր արդարադատության գործառույթների միջեւ ապահովում է արդարադատության ողջ համակարգի գործառնական դինամիկ հավասարակշռությունը: Ընդ որում, սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված սահմանադրական արդարադատության միջոցով ապահովել ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը: Իր հերթին, վարչական արդարադատության մասնագիտացված մարմինը կոչված է ապահովելու վարչական մարմինների գործունեության օրինականությունը՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի եւ 2, 9, 19, 118, 119, 122, 123, 125, 128, 141 եւ 156-րդ հոդվածների փոխկապակցված համադրումից, ինչպես նաեւ իրավակարգավորման առարկայի առնչությամբ 1-ին, 128 եւ 135-րդ հոդվածների համադրումից ակնհայտ է դառնում, որ ոչ միայն խնդիրներ են առաջացել վարչական արդարադատության վերահսկելի եւ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից արդյունավետ ընթացակարգ սահմանելու առումով, այլեւ, հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի միանշանակ պահանջը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետով վարչական արդարադատության ոլորտ է ներառվել սահմանադրական արդարադատության առարկան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական եւ սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման եւ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաեւ ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 եւ 94-րդ հոդվածների պահանջներից եւ երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում:

Սահմանադրական դատարանը՝ նկատի ունենալով, որ այս պարագայում կիրառելի չէ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասը, ուստի կարելու է համարում, որպեսզի ՀՀ Ազգային ժողովն ուշադրություն դարձնի այս հիմնախնդրին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը եւ 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմների վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմների ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեւով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**25 նոյեմբերի 2008 թվականի
ՍԳՈ-780**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՅԻԿ ՉԱԼՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ԳԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 14 ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ա. Չալյանի ներկայացուցիչ Հ. Ալումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Գ. Մելքոնյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արայիկ Չալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Չալյանի՝ 21.08.2008թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Յ .**

1. ՀՀ դատական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածը վերնագրված է «Գատավորի անփոփոխելիությունը»: Հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Այն դեպքում, երբ տվյալ դատարանում գործը չի կարող քննվել դատավորների ինքնաբացարկները բավարարելու կամ այլ պատճառներով առաջացած դատավորների թվի ան-

բավարարության հետեւանքով, վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ նույն ատյանի դատավորը կարող է մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այդ դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ դատավորի վարույթում գտնվող գործի քննությունը չի ավարտվել մինչեւ համապատասխան գործի քննության ավարտը: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

2. Ըստ գործում առկա դատական ակտերի՝ քրեական գործն ըստ մեղադրանքի Ռազմիկ Թորգոմի Մարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով, Մուսա Արտաշի Սերոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով եւ Արայիկ Միքայելի Ջալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով 12.06.2008թ. որոշմամբ ՀՀ Հյուսիսային քրեական դատարանի կողմից (նախագահությամբ՝ դատավոր Հ. Մովսեսյանի) ընդունվել է վարույթ: ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի՝ 12.06.2008թ. թիվ 57Ա հրամանով ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի հիմքով թիվ ՀՅԲԲԴ-1/0046/01/08/ քրեական գործը քննելու համար Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Մարտին Սարոյանը եւ Արմեն Խաչատրյանը գործուղվել են ՀՀ Հյուսիսային քրեական դատարան՝ մինչեւ վերոհիշյալ գործի դատաքննության ավարտը՝ առանց Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի լիազորությունների կասեցման:

Նշված քրեական գործի դատաքննության ընթացքում ամբաստանյալներ Ռազմիկ Մարգսյանի, Մուսա Սերոբյանի եւ Արայիկ Ջալյանի պաշտպան, փաստաբան Հայկ Ալումյանը դատավորներ Մարտին Սարոյանին եւ Արմեն Խաչատրյանին է ներկայացրել ինքնաբացարկի մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ «տվյալ գործով դատարանի կազմի մեջ ընդգրկված երեք դատավորներից երկուսը՝ Մ. Սարոյանը եւ Ա. Խաչատրյանը ՀՀ Հյուսիսային քրեական դատարանի դատավորներ չեն հանդիսանում, եւ նրանց մասնակցությամբ դատարանը չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված, մինչդեռ Եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածով երաշխավորվում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի եւ հրապարակային դատաքննության իրավունք: Դատարանը, որի կազմում են գտնվում այդ դատարանի դատավորներ չհանդիսացող անձինք, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

Դատավորներ Մարտին Սարոյանը եւ Արմեն Խաչատրյանը ներկայացված ինքնաբացարկի մասին միջնորդությունը մերժել են համապատասխանաբար՝ «Պաշտպանի կողմից ներկայացված ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ» եւ «Ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը մերժելու մասին» 18.07.2008թ. որոշումներով:

Ընդ որում, դատավոր Մ. Մարոյանը, մերժելով ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը, այն պատճառաբանել է հետեւյալ կերպ. «... ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11 կետի համաձայն օրենքով սահմանված կարգով տարիների առաջ նշանակվել են առաջին ատյանի դատարանի դատավոր»։ Անդրադառնալով միջնորդության այն հատվածին, համաձայն որի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանը հակասում է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի պահանջներին, դատավոր Մ. Մարոյանը պատճառաբանել է նաեւ, որ. «... բարձրացված հարցը ինքնաբացարկի միջնորդության հետ որեւէ կապ չունի, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածում թվարկված ինքնաբացարկի հիմքերը կոնկրետ իմ նկատմամբ բացակայում է»։

Դատավոր Ա. Խաչատրյանը՝ մերժելով ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը, այն պատճառաբանել է հետեւյալ կերպ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի 1-ին մասում նշված են դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու համար նախատեսված հիմքերը, որոնցում բացակայում են սույն քրեական գործով պաշտպանի կողմից նշված հիմքերը։ Սույն քրեական գործը քննելու համար ՀՀ Հյուսիսային քրեական դատարան եւ գործուղվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ՝ 12.06.2008թ. թիվ 57Ա հրամանով, ինչը բխում է օրենքից՝ ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից եւ տվյալ նորմով է սահմանված, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ նույն ատյանի դատավորը կարող է մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այլ՝ նույն ատյանի դատարան։ Այսինքն՝ ինձ ՀՀ Հյուսիսային քրեական դատարան գործուղելը եւ տվյալ գործով դատարանի կազմում ընդգրկելը կատարվել է օրենքի հիման վրա ու չի հակասում Եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածի պահանջին, եւ իմ կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմքեր չկան»։

Ըստ վերը նշված դատական ակտերի՝ նշված որոշումները բողոքարկման ենթակա չեն։

3. Վիճարկելով ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրականությունը, դիմող կողմը գտնում է, որ այն առաջացնում է իրավական անորոշություն, դրա հետեւանքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության միջեւ հակասություն, եւ այդ հիմքերով հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 55-րդ հոդվածի 11-րդ կետին, 92-րդ հոդվածի 3-րդ մասին, 94-րդ հոդվածի 2-րդ մասին։ Մասնավորապես, ըստ դիմող կողմի՝ «...օրենքից չի հետեւում, թե ի՞նչ հանգամանքներ պետք է հաշվի առնվեն վճռաբեկ դատարանի նախագահի կողմից՝ որոշելու համար, թե դատավորներից ո՞ր մեկը պետք է գործուղվի այս կամ այն դատարան, որքա՞ն ժամանակով, արդյո՞ք գործուղվելու մասին որոշում կայացնելուց հաշվի են առնվում դատավորների մասնագիտացումը, տարիքը, նա-

խասիրությունները, կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը կամ որեւէ այլ հատկանիշներ: Արդյո՞ք գործուղումը կատարվում է մրցույթի արդյունքների կամ այլ ընտրության հիման վրա, թե որեւէ այլ չափանիշներից ելնելով, արդյո՞ք հաշվի է առնվում այդ ժամանակ դատավորի ցանկությունը: Արդյունքում օրենքը վճարեկ դատարանի նախագահին հնարավորություն է տալիս ՀՀ Հյուսիսային քրեական դատարանը ամբողջությամբ ձեւավորելու, օրինակ, վարչական դատարանի դատավորներից, կամ՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին ամբողջ կազմով տեղափոխել Հարավային քրեական դատարան, իսկ Հարավային քրեական դատարանի դատավորներին՝ վարչական դատարան եւ այլն: Օրենքի նման անորոշությունը կամայական որոշումների հնարավորություն է տալիս»:

Ըստ դիմող կողմի՝ վիճարկվող դրույթի իրավական անորոշության հետեւանքով ՀՀ վճարեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության միջեւ առաջանում է անհամապատասխանություն: Մասնավորապես, ըստ դիմող կողմի՝ վճարեկ դատարանի նախագահը, որոշում կայացնելով որոշակի քրեական գործ քննելու համար մեկ այլ դատարանից կոնկրետ դատավորներ գործուղելու մասին, ստեղծում է դատարան, որը պետք է քննի տվյալ գործը: Դատարան ստեղծելու իրավունք վճարեկ դատարանի նախագահին տալիս է վիճարկվող օրենքը: Մակայն այդ օրենքը, փաստորեն, թույլ տալով վճարեկ դատարանի նախագահին ստեղծելու դատարաններ, չի սահմանում դրանց ստեղծման կարգը եւ չափանիշները, որի արդյունքում վճարեկ դատարանի նախագահը հնարավորություն է ստացել իր բացարձակ հայեցողությամբ, կամայականորեն ստեղծելու դատարան՝ այս կամ այն գործը քննելու համար:

Նույն առյանի դատարանի դատավորի՝ նույն առյանի դատարան կամ վճարեկ դատարանի այլ պալատ գործուղվելը դիտարկելով որպես դատարանի ստեղծում, պնդելով իր այն տեսակետը, որ «Դատարան ստեղծելու իրավունք վճարեկ դատարանի նախագահին տալիս է վիճարկվող օրենքը», հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն այն մասին, որ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանող օրենքը չի կարող համարվել օրենք, դիմող կողմը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթի հիման վրա ստեղծված դատարանը չի համապատասխանում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության բովանդակությանը, քանի որ օրենքի վիճարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ուստի եւ չի կարող համարվել օրենք:

Վերլուծելով վիճարկվող դրույթի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 92 հոդվածի երրորդ մասի դրույթների փոխառնչությունները, հիմնվելով «արտակարգ դատարան» հասկացության բովանդակության

մեկնաբանության սեփական տարբերակի վրա, դիմող կողմն ընդհանուր հետեւութուն է անում, որ վիճարկվող դրույթի հիման վրա դատարանի ստեղծումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետին համապատասխան դատարանների ստեղծման կարգին, եւ վիճարկվող դրույթով սահմանված կարգով ստեղծված դատարանն արտակարգ դատարան է, որի ստեղծումն արգելված է ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի երրորդ մասով:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնում:

Պատասխանող կողմը, ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը հիմնականում վերլուծելով «օրենքի հիման վրա ստեղծված, անկախ եւ անկողմնակալ դատարանի»՝ Կոնվենցիայի չափանիշներին համապատասխանության տեսանկյունից, հղում կատարելով *Coeme and others v. Belgium* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000թ. հունիսի 22-ի վճռում արտահայտված իրավական դիրքորոշմանը, գտնում է, որ նշված իրավական դիրքորոշման մեջ արտահայտված ձեւական պահանջը ՀՀ օրենսդրությամբ լիովին պահպանված է, քանի որ «...դատական համակարգի կազմակերպման կանոնները սահմանված են բացառապես օրենքներով: Օրենքով է սահմանված նաեւ դատավորին մեկ այլ դատարան գործուղելու՝ վճռաբեկ դատարանի նախագահի իրավունքը եւ գործուղման ընթացակարգը»: Պատասխանող կողմը շեշտում է նաեւ այն հանգամանքը, որ թիվ 63486/00 գանգատի հիման վրա հարուցված՝ «Պոտխովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գանգատի քննության ընթացքում չի անդրադարձել ժողովրդական ատենակալների նշանակման դատավարական կարգին, քանի որ միայն այն հանգամանքը, որ նշանակումն իրականացվում է օրենքի հիման վրա, դատարանը բավարար է համարել ատենակալների մասնակցությամբ դատարանը «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» դիտելու համար:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասում հստակ սահմանված են դատավորներ գործուղելու մասին որոշում կայացնելու անհրաժեշտ իրավական չափանիշները, որոնք առավել հստակ ու մանրամասն են շարադրված, քան եվրոպական երկրների օրենսդրությամբ դատավորի գործուղման ընթացակարգի կանոնակարգումն է: Հիմնավոր չհամարելով դիմողի առաջարկությունն այն մասին, որ գործուղման մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել դատավորների մասնագիտացումը, տարիքը, նախասիրությունները, կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը կամ որեւէ այլ հատկանիշ՝ պատասխանող կողմը գտնում է, որ տարիքը եւ նախասիրությունները կազմակերպական բնույթի են, եւ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից կարող են հաշվի առնվել գործուղման մասին որոշում կայացնելիս, իսկ կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը դատավարական բնույթի է, եւ օրենքով նախատեսված են դրան հակազդելու համապատասխան դատավարական մեխանիզմներ, ինչպիսին, ի թիվս այլոց, դատավորին բացարկ հայտնելու՝ մեղադրյալի իրավունքն է:

Հիմնվելով «արտակարգ դատարան» հասկացության բովանդակության մեկնաբանության սեփական տարբերակի վրա՝ պատասխանող կողմը հիմնավոր չի համարում վիճարկվող դրույթներով արտակարգ դատարան ստեղծելու հնարավորության մասին դիմող կողմի տեսակետը եւ ընդհանուր հետեւություն է անում, որ «ՀՀ դատական համակարգի կազմակերպման եւ գործունեության կարգը նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով: Օրենքով են նախատեսված նաեւ դատավորներին գործուղելու մասին որոշում կայացնելու՝ վճռաբեկ դատարանի նախագահի իրավունքը եւ գործուղման պայմանները: Վճռաբեկ դատարանի նախագահը գործուղման մասին որոշում կարող է կայացնել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում: ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով գործուղվում են միայն օրենքով սահմանված կարգով նշանակված դատավորները, գործուղումն իրականացվում է բացառապես օրենքով նշված հիմքերի առկայության պայմաններում եւ կարգով, գործուղված դատավորներն արդարադատություն իրականացնում են օրենքի հիման վրա՝ ապահովելով Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված սկզբունքների կենսագործումը»:

Պատասխանող կողմը մատնանշում է նաեւ, որ դատավորի գործուղման ինստիտուտը նախատեսված է նաեւ այլ պետությունների, մասնավորապես՝ Բուլղարիայի, Լիտվայի, Լատվիայի, Սերբիայի, Խորվաթիայի, Էստոնիայի, Գերմանիայի դատարանակազմական օրենսդրությամբ:

Պատասխանող կողմն ընդունում է, որ, այնուամենայնիվ, դատավորների գործուղման ինստիտուտի կանոնակարգումը պետք է համապատասխանի ամբողջ դատական համակարգի կազմակերպման եւ գործունեության տրամաբանությանը, ինչի արդյունքում այն կդիտվի ոչ թե որպես օրինաչափություն, այլ դատական համակարգի բնականոն գործունեությունն ապահովող բացառիկ միջոց:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթում, իր կարծիքով, իրավական անորոշության առկայությամբ, դրա հետեւանքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության միջեւ հակասությամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի եւ 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարելի է համարել ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, դրա կիրառման պրակտիկայում դրսեւորված մոտեցումների գնահատման, օրենքի վիճարկվող դրույթի իրավակարգավորման ուղղվածության, խնդիրների եւ նպատակների բացահայտման անհրաժեշտությունը:

6. ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի վիճարկվող դրույթի իրավակարգավորումն ունի երկու բաղադրիչ.

ա/ դատավորի գործուղման իրավակարգավորումը տարածվում է նույն ատյանի դատավորի «այդ դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա» գործուղելու նկատմամբ,

բ/ նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Վերը նշված իրավակարգավորման վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործուղման իրավակարգավորման խնդիրը մի դատավորին մեկ այլ դատավորով ժամանակավորապես փոխարինելն է կամ դատական ծանրաբեռնվածության հաղթահարումը՝ ողջամիտ ժամկետում գործերի քննության համար, ինչը, իր հերթին, նպատակաուղղված է դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացման ապահովմանը, որով հետապնդվում է իրավաչափ նպատակ:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետը վերաբերում է դատարանների՝ որպես պետական իշխանության մարմինների կազմավորմանը: Մինչդեռ վիճարկվող դրույթը վերաբերում է բացառիկ դեպքերում, իրավաչափ նպատակով պայմանավորված օրենքի հիման վրա ստեղծված դատարանում այլ դատարանի դատավորի (դատավորների) ընդգրկմամբ դատական կազմի ձեւավորմանը: Հետեւաբար՝ նման լուծումները չեն կարող հանգեցնել դատարանի՝ որպես առանձին պետական իշխանության մարմնի ստեղծման: Տվյալ դեպքում գործուղվող դատավորի լիազորությունները դադարեցվել կամ դադարել չեն կարող, առկա չէ տվյալ դատարանի դատավորների՝ օրենքով սահմանված թվակազմի նվազում, առկա չէ դատավորի թափուր պաշտոն, հետեւաբար՝ դատարանի կազմավորման կարգով դատական կազմ ձեւավորելու պահանջ: Փոխարինվող դատավորը՝ ՀՀ Նախագահի կողմից նշանակված լինելով տվյալ դատարանի դատավոր, պարտավոր է շարունակել մնալ այդպիսին, ընդգրկված մնալ տվյալ դատարանի դատավորների՝ օրենքով սահմանված թվակազմում՝ իր լիազորությունների ողջ ծավալով, գործուղման ժամանակ գործուղված դատավորի լիազորությունների որեւէ ձեւով դադարեցում տեղի չի կարող ունենալ: Հետեւաբար, գործուղման հիման վրա ձեւավորված դատական կազմերի միջոցով գործի քննությունը միանգամայն իրավաչափ է եւ իրականացվել է դատավարական պատշաճ ընթացակարգով:

Հիմնական խնդիրն այն է, որ վեճի առարկա դրույթում «իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա» արտահայտությունը որոշակի շփոթ է առաջացրել: Անորոշ է մնացել, թե տվյալ իրավակարգավորման շրջանակներում որո՞նք են հիմնական եւ ոչ հիմնական լիազորությունները: Ի՞նչ տարբերակում է դրված «լիազորությունների իրականացման կասեցում» եւ «լիազորությունների կասեցում» հասկացությունների միջեւ: Առկա իրավակարգավորումը կարող է ենթադրել նաեւ, որ փաստորեն վճռաբեկ դատարանի նախագահը նոր, ժամանակավոր նշանակում է կատարում՝ կասեցնելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր

րի լիազորությունները, նրան ժամանակավորապես նշանակելով մասնագիտացված դատարանի դատավոր: Այնինչ, ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետը եւ 95 հոդվածը դատավորների նշանակման եւ լիազորությունների դադարեցման միանգամայն այլ ընթացակարգեր են սահմանել, եւ որեւէ բացառություն նախատեսված չէ:

ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 95 հոդվածի պահանջները հաշվի առնելով, նկատի ունենալով, որ դատավորը ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկությամբ ՀՀ Նախագահի կողմից նշանակվում է որպես կոնկրետ դատարանի դատավոր, տվյալ դատարանում նրա լիազորությունների ժամանակավոր կասեցմամբ այլ դատարան բացառիկ անհրաժեշտությունից ելնելով գործուղման խնդիրը կարող էր լուծվել միմիայն դատավորի պաշտոնում նշանակման գործընթացի տրամաբանության սահմաններում: Օրենքը չի կարող վճռաբեկ դատարանի նախագահին լիազորել կասեցնել ՀՀ Նախագահի հրամանագրի գործողությունը՝ թեկուզ ժամանակավորապես: Օրենքով նրան վերապահված մնան լիազորությունը չի բխում ՀՀ Սահմանադրության 1-ին, 6, 49, 55 եւ 95 հոդվածների դրույթներից: Իրականում մնան մոտեցում արտահայտված է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի՝ վեճի առարկա 3-րդ մասում եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 5-րդ մասում: Վերջինս նախատեսում է, որ «Այն դեպքում, երբ տվյալ դատարանում քննվող գործերի ծավալը փոքր է տվյալ դատարանում աշխատող դատավորների թվի համեմատ, այդ դատարանի դատավորը կարող է վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այլ դատարան՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ դատավորի վարույթում գտնվող գործի քննությունը չի ավարտվել մինչեւ համապատասխան գործի քննության ավարտը: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

7. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դատավորի գործուղման վերաբերյալ վիճարկվող իրավակարգավորումը դիտարկել նաեւ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով սահմանված՝ դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Դատական պաշտպանության

եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները նախատեսված են նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 եւ 13 հոդվածներով:

Պետությունը պարտավոր է համապատասխան իրավական, կազմակերպչական, ինստիտուցիոնալ երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ իրավունքներն իրականացնելու ուղղությամբ:

Նման իրավական երաշխիք է տվյալ դատարանում դատավորների թվի անբավարարության հետեւանքով գործի քննության անհնարինության դեպքում նույն ատյանի դատարանի դատավորին նույն ատյանի դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ գործուղելու իրավական հնարավորությունը՝ նախատեսված ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով:

Անդրադառնալով դատավորի գործուղման իրավաչափությանը նրա կարգավիճակից բխող գործունեության անթույլատրելիության տեսանկյունից՝ սահմանադրական դատարանը, սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, հիմք ընդունելով նաեւ ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի առաջին մասը եւ ՀՀ դատական օրենսգրքի 4 հոդվածի 2-րդ մասը, որոնց համաձայն դատավորն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքում՝ վիճարկվող դրույթի եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի այլ դրույթներով սահմանված գործուղման հնարավորության նախատեսումն ինքնին իրավաչափ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ տվյալ դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետեւանքով գործի քննության անհնարինության հետեւանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:

Այս ինստիտուտի անհրաժեշտությունը թելադրված է անձի դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների ապահովմամբ եւ հիմնավորված է նաեւ Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիայում:

Այլ խնդիր է, թե որքանով են գործուղման փաստացի իրավակարգավորումներն ու դրանից բխող իրավակիրառական պրակտիկական ապահովել արդարադատության իրականացման սահմանադրական պահանջները, այդ ոլորտում մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, դատական պաշտպանության արդյունավետությունը:

8. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում նշված խնդիրը դիտարկել նաեւ «նույն ատյան» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, ինչպես նաեւ դատավորների գործուղման գործընթացի իրավակարգավորման լիարժեքության տեսանկյուններից:

ՀՀ Սահմանադրությունը, սահմանելով ՀՀ դատական համակարգի կառուցվածքը, միեւնույն ժամանակ հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձեւավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես

նաեւ դրանց առավել բարդ իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի առավել խոր մասնագիտական մոտեցում եւ լուծումներ: ՀՀ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաեւ օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն: Սահմանադրական նորմի բովանդակության նորմատիվ տարրն է կազմում այն պահանջը, համաձայն որի՝ նման դատարանը պետք է իրականացնի արդարադատություն որոշակի իրավագործության շրջանակներում. դա այդ մարմնի բացառիկ իրավասությունն է, այլ դատարան իրավասու չէ քննել նման գործեր, ինչպես նաեւ մասնագիտացված դատարանն իրավասու չէ քննել այլ դատարանի իրավասությանը վերապահված գործեր: Նույն կերպ, մասնագիտացված դատարանի դատավորը, որն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, որպես մասնագիտացված դատարանում դատավորի պաշտոն զբաղեցնող անձ կոչված է իրականացնելու արդարադատություն՝ բացառապես իրավունքի այդ կոնկրետ բնագավառում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքով այս խնդիրը կանոնակարգելիս հետետողականություն չի դրսևտրել ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի պահանջները լիարժեք հաշվի առնելու հարցում: Այդ մասին սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաեւ 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԳՈ-758 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղծելու՝ սահմանադրական նորմի տված հնարավորության իմաստը ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է տարբեր դատարանների միջեւ, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որտեղ գործերի բաշխումը տարբեր իրավասությամբ օժտված դատարանների միջեւ կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն:

Այդ պահանջից ելնելով է, որ գործող օրենսդրությունը որոշակի տարբերակում է դրել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների միջեւ: Մասնավորապես, դա վերաբերում է թե՛ այդ դատարանների քննությանը ենթակա գործերի բնույթին ու շրջանակներին եւ թե՛ դատավորների նշանակման ու առաջխաղացման կարգերին: Օրինակ, ՀՀ դատական օրենսգրքի 22 հոդվածը սահմանել է, որ «Ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ քաղաքացիական, քրեական եւ վարչական դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»: Միարժեքորեն օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքի 22, 27, 31 եւ 35 հոդվածների 1-ին մասերով տարբերակել է ՀՀ դատական օրենսգրքով ձեւավորված մասնագիտացված դատարաններին եւ ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի շրջանակները: Դրանով իսկ այդ դատարանները գործառութային առումով չեն կարող դիտվել որպես նույն ատյանի համասեռ դատարաններ: Բացի դրանից,

ՀՀ դատական օրենսգրքի 122, 123, 126 եւ 127 հոդվածները սահմանում են ընդհանուր իրավասության դատարանների դատավորի թափուր տեղի համար թեկնածու առաջարկելու, դրանց կողմից առաջարկն ընդունելու կարգի եւ չընդունելու հետեւանքների, թափուր պաշտոնում դատավոր նշանակելու, դատավորների պաշտոնների փոխանակման այնպիսի կարգեր, որոնք նույնական չեն նույն օրենսգրքի 128, 129, 130, 131, 133 եւ 134 հոդվածներով առաջին ատյանի մասնագիտացված դատարանների դատավորների առնչությամբ նախատեսված կարգերի հետ: Ավելին, նույն օրենսգրքի 135 հոդվածը, սահմանելով դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի կազմման, դատարանի նախագահի, առաջին ատյանի մասնագիտացված, վերաքննիչ դատարանի դատավորի, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի եւ նախագահի նշանակման հետ կապված՝ քվեաթերթիկներով քվեարկության ժամանակ հաշվի առնվող հատկանիշները, այս ցանկում բնականորեն չի ներառում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորներին:

Դատական օրենսգրքի նշված եւ մի շարք այլ հոդվածների (մասնավորապես՝ 3-6-րդ գլուխների եւ 136 ու 137 հոդվածների) համալիր վերլուծությունից հետեւում է, որ իրավակարգավորման տարբեր մոտեցումներ են դրսևորվում ընդհանուր իրավասության առաջին ատյանի եւ մասնագիտացված դատարանների հանդեպ:

Նկատի պետք է ունենալ նաեւ, որ ԵԽ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին դատավորների անկախության, արդյունավետության եւ դերի մասին No. R (94) 12 հանձնարարականի՝ «Դատավորների անկախության ընդհանուր սկզբունքները» մասի 2-րդ կետի c. ենթակետի համաձայն՝ դատավորների պրոֆեսիոնալ մասնագիտացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, դատավորների ընտրությունը եւ մասնագիտացումը պետք է հիմնված լինի այն հատկանիշի վրա, որը կապված է որակավորման, ազնվության, ունակության եւ արդյունավետության հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասում «նույն ատյան» բառակապակցությունը տվյալ օրենքով նախատեսված իրավակարգավորման շրջանակներում կիրառելի է միայն կառուցակարգային եւ գործառնական նույնաբնույթ կարգավիճակ ունեցող դատարանների առնչությամբ: Դա չի կարող մեկնաբանվել այնպես, որ նույն հարթության վրա դրվեն գործառնական տարբեր իրավասություն ունեցող ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանները: Այստեղ նույնպես հիմնական խնդիրը վերաբերում է առաջին ատյանում դատարանների մասն մասնագիտացման հիմնավորվածությանը, եւ կասկած չի կարող առաջանալ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իրականացված արդարադատության իրավաչափության առումով:

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ բացառված չեն այնպիսի իրավիճակները, երբ անհրաժեշտություն առաջանա կառուցակարգային եւ գործառնական նույնաբնույթ որեւէ ատյանի դատարանի դատավորի գործուղումը նույն ատյանի մեկ այլ դատարան՝ ողջամիտ ժամկետներում եւ արդյու-

նավետ արդարադատություն իրականացնելու նպատակով: Ինչպես նշվեց, գործուղման ինստիտուտի գոյությունն ինքնին իրավաչափ է: Սակայն, մյուս կողմից, այդպիսի գործուղումները պետք է լինեն բացառություն եւ ոչ թե դառնան ընդհանուր կանոն կամ իրականացվեն գործառնական տարբեր իրավագործություն ունեցող դատարանների միջև:

ՀՀ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունից հետեւում է, որ միայն 2008թ. փետրվար-սեպտեմբեր ամիսներին Հարավային քրեական դատարան են գործուղվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների՝ 5, իսկ Հյուսիսային քրեական դատարան՝ 14 դատավոր: Վերջիններիս թիվն ավելի քան չորս անգամ գերազանցում է Հյուսիսային քրեական դատարանի դատավորների թիվը: Որպես կանոն, գործուղվել է երկուական դատավոր, եւ մասնագիտացված դատարանի մեկ դատավորի հետ ձեւավորվել է դատարան՝ դրան վերապահելով առանձնապես ծանր քրեական գործի քննության իրավասություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման վիճակի պատճառը նաեւ ոչ հիմնավոր մոտեցումն է Հյուսիսային եւ Հարավային քրեական դատարանների կազմավորմանը: Մի դեպքում՝ նախագահի եւ երեք դատավորի, մյուս դեպքում նախագահի եւ երկու դատավորի կազմով ստեղծված դատարանները փաստորեն ի սկզբանե ձեւական բնույթ են կրել: Օրինակ, Հարավային քրեական դատարանը՝ նախագահի եւ երկու դատավորի կազմով, միայն դատավորների օրինական արձակուրդի դեպքում գրեթե չորս ամիս չէր կարող դատական կազմ ձեւավորել՝ ՀՀ դատական օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի հիմքով գործ քննելու համար: Իսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է երեք դատավորի կազմով գործ քննել, ապա 4-5 ամիս անհնարին կլինի որեւէ այլ գործ քննել: Դա այն դեպքում, երբ 2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին այդ դատարանում մուտքագրվել է 202 գործ, իսկ 2007 թվականի նույն ժամանակահատվածում այդ դատարանի սպասարկման դատական տարածքում մուտքագրված է եղել 227 գործ:

Դատարանակազմական ոչ հիմնավոր լուծումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճռաբեկ դատարանի նախագահը ձեւավորել է մասնագիտացված քրեական դատարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընտրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից, իրավաչափ չէ ու նաեւ կոռուպցիոն ռիսկ է պարունակում:

10. Անդրադառնալով դատավորի գործուղման առկա իրավակարգավորումների շրջանակներում դատական պաշտպանության արդյունավետության ապահովվածությանը՝ դատավորների գործուղման գործընթացի իրավակարգավորման լիարժեքության տեսանկյունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատավորների գործուղման եւ դատարանների ձեւավորման իրավակարգավորումների խնդրին:

ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածն ամրագրել է դատավորների երկու կատեգորիա, որոնք կարող են գործուղվել այլ դատարան: Դրանք են.

ա/ գործող դատավորը (14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասեր),
բ/ ռեզերվային դատավորը (14 հոդվածի 4-րդ մաս՝ 7-րդ մասի համադրու-
թյամբ):

Կրճատված դատավորի վերաբերյալ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվա-
ծի 6-րդ մասով նախատեսված է դրույթ, սակայն նախատեսված չէ նրա գոր-
ծուղման հնարավորությունը:

ՀՀ դատական օրենսգրքի 14, 18, 24, 122, 129 հոդվածների համեմատական
վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում
է, որ.

ա/ արդարադատության արդյունավետ իրականացման առումով հիմնավոր
չէ քրեական դատարանների նման կազմերով ձեւավորումը,

բ/ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերով սահմանված
իրավակարգավորումը լիարժեք չէ այն իմաստով, որ.

- « ...նույն ատյանի դատավորը կարող է մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղ-
վել այդ դատարան...» բառակապակցության մեջ հստակեցված չէ գործառ-
նական առանձնահատկությանը վերաբերող պահանջը, որի հետեւանքով
տեղ է գտել վերը ներկայացված իրավակիրառական պրակտիկան,
- չի նախատեսում որեւէ սահմանափակում, որպեսզի դա համատարած
բնույթ չկրի,
- հստակ չէ «...իր հիմնական լիազորությունների իրականացման կասեց-
մամբ...» արտահայտությունը:

Վերջինս, փաստորեն, ենթադրում է դատավորի լիազորությունների ժամա-
նակավոր դադարեցում, որը ՄԱԿ-ի 1985թ. Դատական մարմինների անկա-
խության հիմնարար սկզբունքների համաձայն թույլատրելի է միայն իր
գործունեության շարունակման անհնարինության կոնկրետ հիմքերի դեպքում:

11. ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն.
«Վճռաբեկ դատարանի նախագահը ապահովում է վճռաբեկ դատարանի բնա-
կանոն գործունեությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն.
«Վճռաբեկ դատարանի նախագահը իրականացնում է օրենքով իրեն վերա-
պահված այլ լիազորություններ»: Նշված երկու նորմերի համադրված վերլու-
ծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ
դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով
վճռաբեկ դատարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազո-
րություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով եւ, մասնավորա-
պես, ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանի
նախագահին վերապահված մյուս լիազորություններին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14
հոդվածով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված՝ դատավորնե-
րին գործուղելու վերաբերյալ լիազորությունը չի բխում նույն հոդվածի 3-րդ մա-
սի 1-ին կետի պահանջներից:

Բացի դրանից, ՀՀ դատական օրենսգրքի 70 հոդվածի համաձայն՝ Հայաս-
տանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը եւ Դատարաննե-

րի նախագահների խորհուրդը հանդիսանում են դատական իշխանության ինքնակառավարման մարմիններ, որոնց ՀՀ դատական օրենսգրքի համապատասխանաբար՝ 71 եւ 72 հոդվածների 3-րդ մասերի 1-ին կետերով վերապահված է նաեւ դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկման իրավասություն: Դրանով հանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված նորմերում նույնպես «դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկում» բառակապակցությունը չի կարող ենթադրել «ցանկացած հարցի լուծում», առավել եւս՝ այնպիսի հարցերի, որոնք ՀՀ Սահմանադրությամբ վերապահված են պետաիշխանական լիազորություններով օժտված այլ մարմինների իրավասությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 101 հոդվածի 6-րդ կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1, 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության շրջանակներում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի, 18 հոդվածի 1-ին մասի, 55 հոդվածի 11-րդ մասի եւ 95 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 5-րդ մասը:

3. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ դատական համակարգի հետագա բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների շրջանակներում նաեւ վեճի առարկա հիմնահարցերի վերաբերյալ նախապատրաստվում են օրենսդրական բարեփոխումներ, հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց, սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին եւ 2-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 1-ը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**2 դեկտեմբերի 2008 թվականի
ՍԳՈ- 782**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՍՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԳԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14 ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչ Գ. Կուտոյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 21.11.2008թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. ՀՀ դատական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածը վերնագրված է. «Դատավորի անփոփոխելիությունը»: Հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Այն դեպքում, երբ տվ-

յալ դատարանում գործը չի կարող քննվել դատավորների ինքնաբացարկները բավարարելու կամ այլ պատճառներով առաջացած դատավորների թվի անբավարարության հետեւանքով, վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դատավորը (նույն կամ վերադասատյանի) կարող է գործուղվել այդ դատարան», իսկ համապատասխանաբար 7-րդ մասը սահմանում է. «Եթե օրենքով նախատեսվում է դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացում, ապա համապատասխան դատավորները համարվում են ռեզերվային, իսկ նրանց կարգավիճակը, այդ թվում՝ աշխատավարձը եւ հավելավճարներ ստանալու իրավունքը, ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու կամ ընդգրկված մնալու իրավունքը պահպանվում են մինչեւ Սահմանադրությամբ սահմանված՝ դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալը, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»:

2. Սկզբնապես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից վիճարկվել է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերի սահմանադրականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. դեկտեմբերի 2-ի աշխատակարգային որոշմամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի, մերժել է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի սահմանադրականությունը վիճարկելու մասով գործի քննության ընդունումը՝ նկատի ունենալով այդ նորմերի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման առկայությունը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա գործը քննության է ընդունվել ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը որոշելու մասով:

3. Վիճարկելով ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը՝ դիմող կողմը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին՝ հետեւյալ պատճառաբանությամբ: ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ դատավորին նույն ատյանի կամ վերադասատյանի դատարան գործուղելու արդյունքում ստեղծված դատարանը չի կարող համարվել դատական մարմին, քանի որ ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի 2-րդ մասի համաձայն դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ եւ օրենքներով: Մինչդեռ վճռաբեկ դատարանի նախագահի որոշման արդյունքում ձեւավորված դատարանը չի համապատասխանում «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» հասկացությանը: Բացի դրանից, վիճարկվող դրույթը, ըստ դիմողի, չի համապատասխանում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի եւ հրապարակային դատաքննության իրավունք:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Ըստ պատասխանողի՝ ռեզերվային դատավորին գործուղելու վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի վերաբերում դատարանի կազմավորման կարգով նոր դատական կազմ ձեւավորելու կամ ուղղակի դատական մարմին ստեղծելու պահանջին: Վիճարկվող դրույթը վերաբերում է ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 95 հոդվածի պահանջներին համապատասխան օրենքի հիման վրա ստեղծված դատարանում ռեզերվային դատավորի ընդգրկմամբ դատական նոր կազմի ձեւավորմանը:

ՀՀ դատական օրենսգրքը, սահմանելով վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունները, միեւնույն ժամանակ նախատեսում է նրա կողմից վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման եւ օրենքով իրեն վերապահված այլ լիազորությունների իրականացման հնարավորություն: Իսկ նույն օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը՝ 7-րդ մասի համադրությամբ, նախատեսում է ռեզերվային դատավորին գործուղելու մասին որոշում կայացնելու՝ վճռաբեկ դատարանի նախագահի իրավունքը: Ըստ պատասխանողի՝ դա նշանակում է, որ վճռաբեկ դատարանի նախագահը կարող է կայացնել այդպիսի որոշում միայն օրենքով նախատեսված հիմքերի եւ պայմանների առկայության պարագայում:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին՝ վիճարկվող դրույթի՝ դիմողի մատնանշած հակասության առնչությամբ պատասխանողը նշում է, որ սահմանադրական դատարանն իր 2008թ. դեկտեմբերի 2-ի ՍԳՈ-782 որոշմամբ արդարացիորեն իրավաչափ է համարել գործուղման հիման վրա ձեւավորված դատական կազմի միջոցով գործի քննությունը՝ դատավորի գործուղման ինստիտուտի առկայությունը պայմանավորելով հենց անձի դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների ապահովման անհրաժեշտությամբ:

5. ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածն ամրագրել է դատավորների երկու կատեգորիա, որոնք կարող են վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործուղվել այլ դատարան: Դրանք են.

ա/ գործող դատավորը (14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասեր),

բ/ ռեզերվային դատավորը (14 հոդվածի 4-րդ մաս՝ 7-րդ մասի համադրությամբ):

Սահմանադրական դատարանը գործող դատավորների գործուղման իրա-

վակարգավորումը սահմանող՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը լուծել է սահմանադրական դատարանի 2008թ. դեկտեմբերի 2-ի ՍԳՈ-782 որոշմամբ՝ այդ դրույթները ճանաչելով ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասին, 18 հոդվածի 1-ին մասին, 55 հոդվածի 11-րդ մասին եւ 95 հոդվածին հակասող եւ անվավեր: Այդ որոշման մեջ, անդրադառնալով դատավորի գործուղման իրավաչափությանը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով սահմանված՝ դատավորի գործուղման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ դատական ծանրաբեռնվածության հաղթահարումը՝ ողջամիտ ժամկետում գործերի քննության համար, ինչը, իր հերթին, նպատակաուղղված է դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների արդյունավետ իրացման ապահովմանը: Դատավորի գործուղման հնարավորության նախատեսումն ինքնին իրավաչափ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ տվյալ դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետեւանքով գործի քննության անհնարինության հետեւանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:

Նշված որոշման մեջ սահմանադրական դատարանը միաժամանակ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դատավորների գործուղումները պետք է լինեն բացառություն եւ ոչ թե դառնան ընդհանուր կանոն: Ըստ դիմողի՝ դրանք նաեւ պետք է իրականացվեն այն կարգով, որ բացառվի սահմանված կարգից դուրս՝ բացառիկ բնույթ ունեցող դատարան ձեւավորելը:

Սահմանադրական դատարանն իր նշված որոշման մեջ նաեւ նշել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով վճռաբեկ դատարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով եւ, մասնավորապես, օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին: Սահմանադրական դատարանը գտել է նաեւ, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված՝ դատավորներին գործուղելու վերաբերյալ լիազորությունը չի բխում նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից:

6. Դատական օրենսգրքի 14 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ռեզերվային դատավորների ինստիտուտը ձեւավորվում է դատարանների կամ վճռաբեկ դատարանի պալատների վերացման արդյունքում: Ռեզերվային դատավորների կարգավիճակը պահպանվում է մինչեւ Սահմանադրությամբ սահմանված՝ դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալը: Նման իրավակարգավորումը բխում է ՀՀ Սահմանադրության 96 հոդվածում ամրագրված՝ դատավորների անփոփոխելիության սկզբունքից եւ իրավական երաշխիք է այդ սկզբունքի իրացումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրճատված դատավորները, թեեւ ունեն նույն կարգավիճակը, ինչ դատարանի կամ պալա-

տի վերացման արդյունքում ձեռավորված ռեզերվային դատավորները, սակայն, ըստ նույն հոդվածի 7-րդ մասի՝ ռեզերվային դատավորներ չեն համարվում, ենթակա չեն գործուղման եւ, հետեւաբար՝ ստեղծված չեն արդարադատության իրականացմանը նրանց մասնակցությունն ապահովող մեխանիզմներ:

Դատական օրենսգրքի 14 հոդվածի վիճարկվող դրույթը՝ սահմանելով ռեզերվային դատավորին գործուղելու դեպքերը, միաժամանակ որպես ռեզերվային դատավորների գործուղման միակ չափանիշ սահմանում է գործուղվող դատավորի՝ նույն ատյանի կամ վերադաս ատյանի դատավոր լինելու պահանջը: Նման պահանջն առաջին հերթին հնարավորություն է ընձեռում գործուղման դեպքում ապահովել գործի քննությունը համապատասխան ատյանի դատավորի որակավորում ունեցող դատավորի կողմից:

7. Հինք ընդունելով այն եզրահանգումը, որ ինչպես գործուղման հնարավորության սահմանումը՝ ընդհանրապես, այնպես էլ ռեզերվային դատավորների գործուղման հնարավորության սահմանումը՝ մասնավորապես, ինքնին իրավաչափ են, միաժամանակ հաշվի առնելով, որ ռեզերվային դատավորների գործուղման կապակցությամբ իրավակիրառական պրակտիկա դեռեւս ձեռավորված չէ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ռեզերվային դատավորների գործուղման իրավաչափությունն իրավակիրառական պրակտիկայում կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ գործուղման գործընթացն իրականացվի ինչպես վերոհիշյալ, այնպես էլ սահմանադրական դատարանի ՍԴՈ-782 որոշման մեջ նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**23 դեկտեմբերի 2008 թվականի
ՍԴՈ- 786**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ	3
ՀԱՎԵԼՎԱԾ՝ ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2008թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	51
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 73 ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	51
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ (19 ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ, ՀՕ-519-Ն) 47 ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	57
ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 13-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊԻԲՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5 ՀՈԳՎԱԾԻ ԵՎ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ԶՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍՊԻԲԻ 115 ՀՈԳՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	64
ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ 2008Թ. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՑԱԾ ԽՈՉԸՆԴՈՍՆԵՐԻՆ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	79
«ԱՆԻՎ» ՀԻՄՆԱԳՐԱՍԻ ԵՎ «ՈՍԿԵ ՏԱԿԱՌ-ԱԼԿՈ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ «... ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ՊԱՐՏԱՊԱՆՆ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ՉԵ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ԵՎ 3-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ «Բ» ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	85
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի՝ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 24-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	95
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՎԻԿՏՈՐԻԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 2-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍՊԻԲԻ 76 ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	121
ՔԱՂԱՔԱՑԻ ՆԻՆԱ ՂԱՋԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊԻԲԻ 2-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 159-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ, «ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՍ ՋԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՍՍԱՍԵՐԻ	

<p>ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 94-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԱՎԱՆԴԱՏՈՒ» ԲԱՌԻՑ ՀԵՏՈ՝ ԱՄՔՈՂՁՈՒԹՅԱՄԲ, ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	126
<p>ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐՄԵՆ ՀԱՄԱՍՁՅԱՆԻ, ԱԻԴԱ ՔՈՉԱՐՅԱՆԻ, ԻՐԻՆԱ ՕԳԱՆԵՉՈՎԱՅԻ, ԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ ԱԳՆԵՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 68 ՀՈԴՎԱԾԻ 10-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 12-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	132
<p>«ԼՈՈՒՇԵՆ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 77 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	146
<p>«ՈՒԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎՈՒԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 53 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	151
<p>ՔԱՂԱՔԱՅԻ ԷՄԻԼԻՅԱ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231.1. ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ 233 ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	164
<p>ՔԱՂԱՔԱՅԻ ՍԵՐԻՆԵ ՖԼՋՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 80 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ԳՈՐԾՈՎ</p>	175
<p>ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒՇԱՆՅԱՆԻ, ԳԵՎՈՐԳ ԳՅՈՋԱԼՅԱՆԻ, ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆԻ, ՌՈՒԲԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՀՐԱՉ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼ, ՄԱՐԻԵՏՏԱ ԵՎ ՄԱԴԼԵՆԱ ԲԱԲԱԼՅԱՆՆԵՐԻ, ՀԱԿՈՔ ՌԱՖՅԱՆԻ, ՀԱՅԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 223 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 231 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 233 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-6-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 2-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, «ՓԱՏՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 29.1. ՀՈԴՎԱԾԻ, ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 404 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ (28.11.2007թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝ 404 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ) ԵՎ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 13 ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	192
<p>ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՐԴԱՆ ՍԱԽԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 301 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	220

<p>ՔԱՂԱՔԱՅԻ ՄԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.1 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	231
<p>ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄՇՄԱՎՈՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 118-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	240
<p>ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	258
<p>ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14 ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	272

